21-ՐԴ ԴԱՐ

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՆԴԵՍ

3 (67)

ԵՐԵՎԱՆ

2016

21-ՐԴ ԴԱՐ
տեղեկատվական-վերլուծական հանդես

Լույս է տեսնում 2003 թվականից **3 (67), 2016**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ալեքսանդր Գասպարիշվիլի
Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետհամալսարանի լաբորատորիայի վարիչ, փ.գ.թ. (Մոսկվա, ՌԴ)
Ալեքսանդր Կորնիլով
Նիժնի Նովգորոդի Ն.Ի. Լոբաչևսկու անվան պետական համալսարանի արտասահմանյան տարածաշրջանագիտության և տեղային պատմության ամբիոնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր (Նիժնի Նովգորոդ, ՌԴ)
Աշոտ Թավադյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր
Արամ Սաֆարյան
Բանասիրական գիտությունների թեկնածու
Արթուր Աթանեսյան
ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ, ք.գ.դ.
Բաբկեն Վարդանյան
«Հայք հաստատություն» հ/կ տնօրեն, ՀՀ պաշտպանության նախարարի ավագ խորհրդական
Գագիկ Հարությունյան *(համակարգող)*
«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.
Զավեն Եկավյան
Դոկտոր, պրոֆեսոր (Լիսաբոն, Պորտուգալիա)
Էդուարդ Լ. Դանիելյան
«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հին դարերի պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ.
Կարեն Վ.Կարապետյան
Տնտեսագիտության դոկտոր (Մոսկվա, ՌԴ)
Հրանուշ Հակոբյան
ՀՀ Սփյուռքի նախարար, ի.գ.դ.
Միհրան Դաբաղ
Դոկտոր, պրոֆեսոր, Ռուրի համալսարանի պատմության ֆակուլտետին առընթեր Սփյուռքի և Ցեղասպանության ինստիտուտի տնօրեն (Բոխում, Գերմանիա)
Մուշեղ Լալայան
ՀՀԿ փոխնախագահ
Սամվել Մանուկյան
IPSC Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի վերլուծաբան, ս.գ.թ.
Սեյրան Օհանյան
ՀՀ Պաշտպանության նախարար, գեներալ-գնդապետ
Սերգեյ Գրինյան
Ռազմավարական գնահատականների և կանխատեսումների կենտրոնի գլխավոր տնօրեն, տ.գ.դ. (Մոսկվա, ՌԴ)
Վահագն Ազլյան
«Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ
Վարդան Աթոյան
«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, տ.գ.թ., դոցենտ
Վարդան Հարությունյան
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ վարչության նախագահ-գլխավոր տնօրեն, տ.գ.թ.

21-ՐԴ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Թիվ 3 (67), 2016թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր
Գագիկ Հարությունյան

Գլխավոր խմբագրի տեղակալներ
Վահագն Ագլյան
Վարդան Աթոյան

Պատասխանատու խմբագիր
Խոնարհիկ Քարաուղլանյան

Պատասխանատու քարտուղար
Լուսինե Բաղրամյան

Աննա Ժամակոչյան
Արեստակես Սիմավորյան
Վահրամ Հովյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վարդան Աթոյան
Ուղեղային կենտրոնների գլոբալ և ազգային վարկանիշավորման միջազգային փորձը …….…...…. 4

Արման Նավասարդյան
Դիվանագետի իմացական և հոգեբանական մի քանի առանձնահատկությունների մասին ……..…...…. 17

Դավիդ Սարկիսյան
Ռուսաստանի դեմ գերմանական պատժամիջոցների քաղաքականության մոդելավորումը խաղերի տեսության միջոցով ……..……...…. 28

Արմեն Ղալեչյան
Տեղեկատվական գործողությունների առանձնահատկություններն «ապրիլյան պատերազմի» համատեքստում ……...…...…. 42

Նվարդ Մելքոնյան
ՋԼՄ զարգացման պատմական ընթացքը ……...…. 50

Արմեն Մանվելյան
Անվտանգության միջազգային համակարգերը և էներգետիկ աշխարհաքաղաքականությունը ……...…. 66

Աշոտ Մարկոսյան, Բորիս Ավագյան
Գործարար միջավայրը բնութագրող ցուցանիշները երկրների տարբեր խմբավորումների համար ……...…….... 76

Աղասի Թավադյան
ՀՀ դրամավարկային քաղաքականության ազդեցությունը առևտրային հաշվեկշռի վրա …….....…... 87

Շիրակ Թորոսյան
Կարսի մարզի միացումը Հայաստանին և Արդահանի շուրջ հայ-վրացական տարակարծությունների սկզբնավորումը ……... 95

Լևոն Մարգարյան
Երևանի քաղաքային միջավայրի փոփոխությունները նոր իրողությունների համատեքստում …...……... 113

Աշխեն Բեգլարյան
Քաղաքացիական հասարակության դերն ազգային անվտանգության ապահովման գործընթացում. իրավիճակը Հայաստանում …...……... 134

ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԳԼՈԲԱԼ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

Վարդան Աթոյան*

Բանալի բառեր ՝ուղեղային կենտրոններ, հանրային քաղաքականություն, գլոբալ վարկանիշավորում, ազգային վարկանիշավորում, վարկանիշավորման մեթոդաբանություն:

21-րդ դարում հանրային քաղաքականության տարբեր ոլորտներում մշտապես մեծանում է «փափուկ ուժի» գործիքակազմի կիրառման անհրաժեշտությունը, և այդ անհրաժեշտությամբ պայմանավորված՝ կատարելագործվում են նաև հասարակության «սրտերի և մտքերի» համար մղվող պայքարի մեթոդները: Այս համատեքստում հարկ է նշել, որ մեր օրերում ուղեղային կենտրոնները դարձել են ոչ միայն ինքնատիպ ինտելեկտուալ հարթակներ՝ նման հարցերի ուսումնասիրության և այդ ոլորտում ռազմավարական մշակումներ իրականացնելու համար, այլ նաև շատ դեպքերում վեր են ածվել ներքին ու արտաքին քաղաքականության ակտիվ դերակատարների:

Փաստ է, որ վերջին տասնամյակներն ինչպես Հայաստանում, այնպես էլ ամբողջ աշխարհում մշտապես ուղեկցվել են ուղեղային կենտրոնների (ՈւԿ) քանակական աճով և հանրային քաղաքականության մեջ վերջիններիս դերակատարության մեծացմամբ: Ժամանակակից ՈւԿ-ների գործառույթներից են հետազոտությունների, վերլուծությունների, ռազմավարական նախագծերի, նորարարական գաղափարների, երաշխավորությունների ձևաչափով ինտելեկտուալ արտադրանքի թողարկումը, խորհրդատվությունը, տարբեր թիրախային խմբերին կրթական ծառայությունների մատուցումը, ինչպես նաև հաղորդակցային գործառույթի իրականացումը՝ գիտության, կառավարության, քաղաքական վերնախավի, հասարակության և գործարար շրջանակների միջև: Պատահական չէ, որ աշխարհի բազմաթիվ երկրներում ՈւԿ-ներն ստանձնել են ազգային շահ արտադրող հաստատությունների դերակատա-

* «Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, ՀՊՏՀ քաղաքագիտության ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.:

րություն և քաղաքական համակարգում սեփական ազդեցության մեծացմանը զուգահեռ իշխանության առանձին բևեռ են ձևավորել:

Հենց վերոնշյալ հանգամանքներով պայմանավորված՝ տարեցտարի ամբողջ աշխարհում հասարակության, քաղաքական վերնախավի և ակադեմիական շրջանակներում ավելանում է ՈւԿ-ների գործունեության նկատմամբ հետաքրքրությունը: Լույս են տեսնում ՈւԿ-ների սկզբնավորման պատմությանը, զարգացման փուլերին, շարժընթացին նվիրված բազմաթիվ գիտական աշխատանքներ, որտեղ ներկայացվում են տարբեր երկրներում գործող ՈւԿ-ների ծագումը, տիպաբանությունը, կառուցվածքը, զարգացման միտումները, հետազոտությունների ուղղվածությունը, գործառույթները, գաղափարախոսությունը, պետության, հասարակության և միմյանց միջև փոխգործակցության, համագործակցության առանձնահատկությունները, դերակատարությունը հանրային քաղաքականությունում, ազդեցությունը քաղաքական վերնախավի ու հասարակության վրա և այլն: Ուսումնասիրելով այս միտումները՝ կարելի է արձանագրել, որ ժամանակակից ՈւԿ-ների գործունեությունը դարձել է քաղաքագիտական ուսումնասիրությունների կարևոր օբյեկտներից մեկը:

Ի տարբերություն արտերկրի և, առաջին հերթին, Արևմուտքի ակադեմիական և վերլուծաբանական շրջանակների՝ Հայաստանում ՈւԿ-ներին նվիրված հայրենական մասնագիտական գրականության մեծ բաց կա, իսկ հայկական ՈւԿ-ների գործունեությանը նվիրված աշխատանքներ գրեթե բացակայում են: Չնայած դրան, պետք է արձանագրել, որ ՈւԿ-ների ոլորտը Հայաստանում ևս բավական ինստենսիվ զարգանում է, և մեզանում նույնպես արդեն իսկ առկա են ձևավորված ավանդույթներ, ուրույն ձեռագիր և հանրային քաղաքականության ոլորտում հստակ դերակատարություն ստանձնած ՈւԿ-ներ:

Հարկ է նաև նշել, որ ՈւԿ-ները հանրային քաղաքականության հաստատուն միավորներ չեն և, ինչպես ցանկացած այլ քաղաքական ինստիտուտ, անընդմեջ զարգացում են ապրում: Այդ ոլորտի զարգացման շարժընթացին համակարգված կերպով հետևելու նպատակով տարբեր երկրներում հաճախ կիրառվում են վարկանիշավորման համակարգեր, որոնց արդյունքներն արտացոլվում են համապատասխան կազմակերպությունների կողմից հրապարակվող զեկույցներում: Մյուս կողմից՝ արտերկրի կամ տարբեր միջազգային կազմակերպությունների հրապարակած վարկանիշային զեկույցներն ազդե-

ցության գործուն գործիք են և երբեմն միտված են ոչ միայն կամ ոչ այնքան առկա օբյեկտիվ պատկերը ներկայացնելուն, որքան կազմակերպական կոնկրետ մոդել կամ գործունեության ձևաչափ ձևավորելուն, վարքաձև սահմանելուն, որոշ դեպքերում էլ կարող են ունենալ քողարկված գաղափարախոսական կամ քաղաքական ուղղորդումներ:

Ակնհայտ է, որ վերջին տասնամյակներում համացանցի, ինչպես նաև տեղեկատվության հավաքման, մշակման, վերլուծության և փոխանցման տեխնոլոգիաների թռիչքաձև զարգացումը թույլ է տալիս համաշխարհային մակարդակով իրականացնել տնտեսական, քաղաքական, սոցիոլոգիական ոլորտի հետազոտություններ, միաժամանակ՝ օգտագործելով առկա բաց աղբյուրների տվյալների բազաները և հայրենական ու արտերկրի փորձագետների կարողությունները:

Վերոնշյալի համատեքստում նկատենք, որ ՈւԿ-ների վարկանիշավորման գլոբալ շուկայում ամենահայտնի հաստատությունը ԱՄՆ Փենսիլվանիայի համալսարանի Լաուդերի ինստիտուտի «Ուղեղային կենտրոններ և քաղաքացիական հասարակության» ծրագիրն է, որը ղեկավարվում է ՈւԿ-ների ուսումնասիրության ոլորտի հայտնի փորձագետ Ջեյմս ՄաքԳանի (*James McGann*) կողմից:

Պետք է նշել, սակայն, որ վերոնշյալ վարկանիշավորման զեկույցը զերծ չէ մի շարք թերություններից, որոնք առանձին դեպքերում հանգեցնում են ոչ օբյեկտիվ պատկերի ձևավորմանը: Մասնավորապես, 2016թ. հունվարին հրապարակված զեկույցի համաձայն՝ Հայաստանում գործում է 14 ՈւԿ[1]: Մյուս կողմից, մեր գնահատականներով՝ Հայաստանում գործում է շուրջ 60 կազմակերպություն, որոնք այս կամ այն չափով կարելի է դասել ՈւԿ-ների շարքին: Ընդ որում, դրանցից ավելի քան 20-ը բավական ակտիվ գործունեություն է ծավալում: Նկատելի բացթողումներից է նաև այն, որ ընդհանրապես չեն հիշատակվել Հայաստանի ՈւԿ-ների ոլորտում այնպիսի կայացած կենտրոններ, ինչպիսիք են, օրինակ, ՀՀ պաշտպանության նախարարության Դրաստամատ Կանայանի անվան Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը և «Նորավանք» գիտակրթական հիմնադրամը, կամ ակտիվ գործող ոչ պետական և համալսարանական կենտրոններից՝ Միջազ-

[1] 2015 Global Go To Think Tank Index Report, p. 32.
http://repository.upenn.edu/cgi/viewcontent.cgi?article=1009&context=think_tanks

գային և անվտանգության հարցերի հայկական ինստիտուտը, Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոնը, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնը և այլն:

Բացի այդ, չնայած ըստ զեկույցի հեղինակների՝ վերոնշյալ զեկույցի մեթոդաբանությունն ամեն տարի կատարելագործվում է, սակայն վերջինիս թերություններին պարբերաբար անդրադառնում են բազմաթիվ մասնագետներ: Այսպես, ոլորտի ճանաչված փորձագետ, պերուացի Է.Մենդիզաբալը (*Enrique Mendizabal*), ի թիվս տարբեր թերությունների, նշում է, որ առանցքային խնդիր է մնում զեկույցի հեղինակների կողմից ՈւԿ սահմանման խնդիրը, քանի որ զեկույցում արտացոլվում են այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են *Amnesty International*-ը և *Transparency International*-ը, որոնք կարելի է բնութագրել որպես միջազգային ոչ կառավարական կազմակերպություններ, բայց ոչ ՈւԿ: Ավելին, նրա կարծիքով՝ նման մեթոդով իրականացվող վարկանիշավորումը վտանգավոր է, քանի որ վերջինս խթանում է ներդրումներ իրականացնելուն առավելապես ՈւԿ տեսանելիության բարձրացման և պրոֆիլի զարգացման, քան բուն հետազոտության և հետազոտական ներուժի ուղղությամբ[1]:

Այս կապակցությամբ հետաքրքրական է նաև ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կրտսեր փորձագետ Շ.Մովսիսյանի դիտարկումը.

- վերոնշյալ զեկույցում ՈւԿ-ներին բավական լայն սահմանում է տրվում, ինչի արդյունքում որոշ կազմակերպություններ, որոնք փաստացի վերլուծական կենտրոն չեն, ներառվում են վարկանիշավորման տվյալների բազայում, իսկ որոշ ՈւԿ-ներ դուրս են մնում այդ ցուցակից: Օրինակ, «Համալսարանին կից գործող լավագույն ուղեղային կենտրոններ» կատեգորիայում ընդգրկված է Միջազգային հարաբերությունների Մոսկվայի պետական ինստիտուտ (*MGIMO*) համալսարանը: «Կրթական քաղաքականության ոլորտում լավագույն վերլուծական կենտրոն» կատեգորիայում ներկայացված Կրթության և վերապատրաստման բաժինը[2] (*Education and Training Unit* (*Armenia*), ըստ էության, Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի (*ICHD*) մի ստորաբաժանում է:

[1] *Mendizabal Enrique*. Another year, another ranking of think tanks (and surprise surprise, Brookings is still the best), (21/01/2011). http://onthinktanks.org/2011/01/21/another-year-another-ranking-of-think-tanks-and-surprise-surprise-brookings-is-still-the-best/

[2] 2016թ. հունվարին հրապարակված զեկույցում այս կազմակերպությունը տեղ է գտել «Կրթական քաղաքականության ուղեղային կենտրոն» կատեգորիայի 44-րդ տեղում:

- Չկան կենտրոնների գնահատման քանակական չափորոշիչներ. զեկույցում ներկայացվում է 28 չափանիշ, որոնցով փորձագիտական խորհրդի անդամները պետք է առաջնորդվեն վարկանիշավորում իրականացնելիս: Տվյալ չափորոշիչների մեծ մասը օբյեկտիվ գնահատման ենթակա չէ (օրինակ, «քաղաքական իշխանության և հասարակության միջև խզումը հաղթահարելու կենտրոնի ունակությունը»): Բացակայում են խորհուրդներում փորձագետների ընդգրկման հստակ չափորոշիչներ. փորձագետների ընտրությունը կատարվում է վերլուծական կենտրոնների առաջարկությամբ:
- Յուրաքանչյուր կատեգորիայի համար փորձագետների առանձին խորհուրդ է կազմվում, արդյունքում՝ նույն կենտրոնը զեկույցի տարբեր կատեգորիաներում երբեմն ստանում է իրար հակասող գնահատականներ: Օրինակ, 2014թ. Վրաստանի «Խաղաղության, ժողովրդավարության և զարգացման կովկասյան ինստիտուտը» (*Caucasus Institute for Peace, Democracy and Development* (*CIPDD*) աշխարհի լավագույն ուղեղային կենտրոնների շարքում զբաղեցնում է 150-րդ տեղը, այն դեպքում, երբ «Կենտրոնական Ասիայի առաջատար ուղեղային կենտրոններ» կատեգորիայում հետ է մնում լավագույն կենտրոնների ցանկում չներառված մի շարք այլ կենտրոններից, օրինակ, հայաստանյան «Արմատ» ժողովրդավարության և քաղաքացիական զարգացման կենտրոնից:
- Գնահատվում են ոչ թե որոշակի ժամանակահատվածում (օրինակ, 2014թ.) վերլուծական կենտրոնների գործունեության արդյունքները, այլ դրանց գործունեությունն ընդհանրապես: Վարկանիշավորման աղյուսակում նախորդ տարվա համեմատությամբ ավելի բարձր դիրքեր զբաղեցնելն ուղղակիորեն չի բխում տվյալ ժամանակահատվածում ավելի լավ արդյունքներ ցուցաբերելուց[1]:

Այնուամենայնիվ, մեր կարծիքով, զեկույցում հայտնաբերված բացթողումներն առավելապես պայմանավորված են ոչ այնքան վարկանիշավորման հիմքում ընկած մեթոդաբանությամբ, թեև վերջինս նույնպես կատարելագործման կարիք ունի, որքան վարկանիշավորմանը մասնակցող փորձագետների գնահատման սուբյեկտիվությամբ և, հատկապես, տեղեկատվու-

[1] *Մովսիսյան Շ.*, Վերլուծական կենտրոնների վարկանիշավորման մեթոդաբանական հարցեր (Մայիս, 2015), էջ 2-3: http://media.asue.am/upload/TTmethodology.pdf

թյան հավաքման ու մշակման գործընթացում առկա թերություններով: Ինչ վերաբերում է կոնկրետ զեկույցի պատրաստման համար կիրառված մեթոդաբանությանը, ապա վերջինիս հիմքում ընկած են հետևյալ չափանիշները.

- *ՈւԿ-ների ղեկավարության որակավորում և հանձնառություն.* կազմակերպության առաքելության և ծրագրերի արդյունավետ կառավարում, առաքելության իրագործման համար անհրաժեշտ մարդկային և ֆինանսական ռեսուրսների համախմբում և որակի մշտադիտարկում, կազմակերպության անկախություն և ազդեցություն:
- *ՈւԿ-ների աշխատակազմի որակավորում և հեղինակություն.* համապատասխան հետազոտության ասպարեզում կայացած, ճանաչված, փորձառու, բարձրակարգ և արտադրունակ գիտնականների, վերլուծաբանների և փորձագետների հավաքագրման կարողություն:
- *Կատարած հետազոտության և վերլուծության որակ և հեղինակություն.* քաղաքականություն մշակողների, մամուլի և հանրության համար հասանելի՝ բարձրորակ, ճշգրիտ, քաղաքականության կոնկրետ ոլորտի վրա կենտրոնացած հետազոտություն իրականացնելու կարողություն:
- *Բարձրակարգ գիտնականներ և վերլուծաբաններ ներգրավելու կարողություն:*
- *Ակադեմիական գործունեություն և հեղինակություն.* իրականացվող հետազոտություններում ակադեմիական խստապահանջություն, գիտական հրապարակումների քանակ և տեսակ (գրքեր, թերթեր, կոնֆերանսի փաստաթղթեր, տարբեր մասնագիտական հանդիպումների ընթացքում ներկայացված զեկուցումներ և այլ գիտնականների աշխատանքներում տվյալ ՈւԿ մասնագետների հրապարակումներին արված հղումներ):
- *Հրապարակումների որակ, քանակ և հասանելիություն:*
- *ՈւԿ-ների հետազոտությունների և ծրագրերի ազդեցությունը քաղաքականություն մշակողների և քաղաքականության այլ դերակատարների վրա.* քաղաքականության երաշխավորություններ, որոնք դիտարկվել կամ պարզապես ընդունվել են քաղաքականություն մշակողների, քաղաքացիական հասարակության կամ քաղաքականության ոլորտի այլ դերակատարների կողմից:
- *Քաղաքականություն մշակողների շրջանում ունեցած հեղինակություն.* որևէ կոնկրետ հարցի կամ ծրագրերի առումով ճանաչելիություն, քա-

ղաքական համառոտագրերի, «սպիտակ գրքերի», ճեպազրույցների և գործադիր ու օրենսդիր մարմիններում պաշտոնական ընդունելությունների պարբերականություն և այլն:

- *Անկախ հետազոտություն և վերլուծություն իրականացնելու հանձնառության ցուցաբերում.* ճշգրիտ փաստերի վրա հիմնված հետազոտությունների և վերլուծությունների իրականացում, որոնք տեղադրվում և վերահսկվում են կազմակերպության, հետազոտական թիմերի և անհատ հետազոտողների կողմից: Սա նաև ընդգրկում է շահերի բախման բացահայտումը (ֆինանսական, ինստիտուցիոնալ կամ միջանձնային), ապակուսակցական հանձնառության և հասարակագիտական ոլորտում հետազոտության իրականացման համար մասնագիտական չափանիշները:
- *Մուտքի հնարավորություն դեպի առանցքային կառույցներ.* կապեր հաստատելու կարողություն և մուտք դեպի առանցքային լսարաններ ու աշխատակազմեր, ինչպիսիք են՝ պետական պաշտոնյաներ (ընտրովի և նշանակովի), քաղաքացիական հասարակություն, ԶԼՄ և ակադեմիական հաստատություններ:
- *Քաղաքական դերակատարներին հրավիրելու, ինչպես նաև վերջիններիս և այլ ՈւԿ-ների հետ արդյունավետ ցանցեր ու համագործակցություն հաստատելու կարողություն*:
- *Կազմակերպության գործունեության ընդհանուր արդյունք.* քաղաքականության շուրջ առաջարկներ, ճեպազրույցներ, հրատարակումներ, հարցազրույցներ, կոնֆերանսներ, պետական և քաղաքական պաշտոններում նշանակումներ և այլն:
- *Հետազոտությունների, քաղաքականության շուրջ առաջարկների և այլ արդյունքների կիրառում.* Քաղաքականություն մշակողների և քաղաքական հանրության կողմից համապատասխան համառոտագրերի, զեկույցների, քաղաքական երաշխավորությունների փոխանցում և կիրառում: ՈւԿ աշխատակազմի ներկայացուցիչների կողմից նախկինում խորհրդատվական պաշտոններ զբաղեցնողների թվաքանակ, գիտական նվաճումների կամ հանրային ծառայությունների համար գիտնականներին տրված պարգևատրումներ:
- *Հանրության հետ հաղորդակցության հարցում կազմակերպության տրամադրած տեղեկատվության օգտակարություն.* շահապաշտպան

գործունեություն, օրինագծերի պատրաստում, ակադեմիական փաստաթղթերի կամ զեկուցումների պատրաստում, հետազոտությունների իրականացում կամ ուսուցում:

- *Հետազոտության լսարանի հետ հաղորդակցվելու և հետազոտություն իրականացնելու համար էլեկտրոնային, տպագիր և մամուլի ժամանակակից միջոցներ կիրառելու ունակություն:*
- *Մամուլում ունեցած հեղինակություն.* մամուլում հայտնվելու պարբերականություն, հարցազրույցներ, մեջբերումներ:
- *Քաղաքականություն մշակողների, լրագրողների և հանրության հետ հաղորդակցվելու համար համացանցի և սոցիալական կայքերի գործիքների կիրառման ունակություն:*
- *Ցանցային և թվային ներկայություն.* կազմակերպության հասանելի, որակյալ և արդյունավետ ցանցային ներկայություն, այդ թվում՝ օգտվելու համար պաշտոնական կայքի հարմարավետություն, օգտատերերի այցելությունների, էջերի դիտումների, կայքում անցկացված ժամանակի, «հավանումների» և գրանցված «հետևորդների» թվաքանակ:
- *Ֆինանսավորման բազմազանություն և կայունություն.* գործունեության կայունության ապահովման նպատակով՝ կազմակերպության կողմից անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներ համախմբելու կարողություն (նվիրատվություններ, անդամավճարներ, պետական և մասնավոր պատվերներից եկամուտներ, շահույթ):
- *Ֆինանսական և մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարում և բաշխում.* բարձրորակ ինտելեկտուալ արտադրանք թողարկելու և առավելագույն ազդեցություն ստանալու նպատակով ՈւԿ-ի կողմից իրենց գումարն ու աշխատակազմն արդյունավետ կառավարելու կարողություն:
- *Կազմակերպության ունակությունն արդյունավետ իրականացնելու՝ կառավարության, անհատների, կորպորացիաների և այլ հիմնադրամների կողմից ստացված նվիրատվությունների, դրամաշնորհների և կնքված պայմանագրերի պայմանները:*
- *Կազմակերպությունների կարողությունը՝ ստեղծելու նոր գիտելիք, քաղաքականության նորարարական առաջարկություններ կամ այլընտրանքային գաղափարներ:*

- *Ակադեմիական և քաղաքականություն մշակող հանրությունների միջև առկա բացը կամրջելու ունակություն:*
- *Քաղաքականության ձևավորման գործընթացում «նոր ձայների» ներառման ունակություն:*
- *Քաղաքականության ձևավորման ցանցերի և տարբեր հարցերում ներգրավվելու կարողություն:*
- *Քաղաքականություն մշակողների ավանդական մտածողությանը մարտահրավեր նետելու նպատակով քաղաքականության նորարարական գաղափարների և ծրագրերի առաջքաշում:*
- *Հանրության վրա ունեցած ազդեցություն.* ուղիղ կապ կազմակերպության որևէ ասպարեզում ջանքերի գործադրման և հասարակական արժեքներում նշանակալի դրական փոփոխության միջև, ինչպիսին է, օրինակ, կյանքի որակը (քաղաքացիներին հասանելի ապրանքներ և ծառայություններ, ֆիզիկական և մտավոր առողջություն, շրջակա միջավայր, իրավունքներ և այլն)[1]:

Հարկ է նշել, որ գլոբալ վարկանիշավորման համակարգի առկայության հետ մեկտեղ, որոշ երկրներ փորձ են անում ստեղծել վարկանիշավորման ազգային համակարգեր: Այսպես, 2006թ. Չինաստանում առաջին անգամ հրապարակվեց իրենց երկրի ՈւԿ-ների վարկանիշավորումը, որտեղ ներկայացված էին երկրի լավագույն 10 կենտրոնները[2]: Թեև կիրառվող մեթոդաբանության և վարկանիշավորման գործընթացի մասին տեղեկատվությունը բացակայում է, սակայն ազգային վարկանիշավորման համակարգի ստեղծման փորձն ինքնին խոսուն է:

Հետխորհրդային երկրներից վարկանիշավորման ազգային համակարգ ներդնելու փորձ 2015թ. իրականացվել է Բելառուսում: Այսպես, *Pact* միջազգային ոչ առևտրային կազմակերպության աջակցությամբ Բելառուսի հետազոտական խորհուրդը (ԲՀԽ) իրականացրել է երկրում գործող ՈւԿ-ների վարկանիշավորում: Նշենք, որ ԲՀԽ-ն վերլուծական, հետազոտական կենտրոնների և դոնորների ցանց է, որոնք Բելառուսում աջակցում են հետազոտական նախագծերին:

[1] Տե՛ս 2015 Global Go To Think Tank Index Report. PP. 26-28. http://repository.upenn.edu/cgi/viewcontent.cgi?article=1009&context=think_tanks

[2] Տե՛ս *Cheng Li*, China's New Think Tanks: Where Officials, Enterpreneurs, and Scolars Interact. China Leadership Monitor N 29. P. 6. http://www.hoover.org/sites/default/files/uploads/documents/CLM29CL.pdf

ԲՀԽ-ի կողմից իրականացված վարկանիշավորման մեթոդաբանությունը հիմնված է վերը հիշատակված ԱՄՆ Փենսիլվանիայի համալսարանի Լաուդերի ինստիտուտի «Ուղեղային կենտրոններ և քաղաքացիական հասարակության» ծրագրի և աշխարհի ՈւԿ-ների վարկանիշավորման մեկ այլ համակարգի՝ Գլոբալ զարգացման կենտրոնի *Index of Public Profile*[1] փորձի ուսումնասիրության վրա: Վարկանիշավորման համակարգը մշակողների խոսքով՝ հիմքում ընկած մեթոդաբանությունը կիրառական է ինչպես խոշոր կենտրոնների, այնպես էլ հետազոտական նախաձեռնությունների գործունեության գնահատման համար: Հետազոտության մասնակիցները ներկայացնում են տվյալներ իրենց հետազոտական կենտրոնների տեխնիկական և մեթոդական ներուժի, տեղեկատվական ընդգրկման և վերլուծական-հետազոտական գործունեության վերաբերյալ: Ստացված տեղեկատվությունը մշակվում և գնահատվում է բալերով՝ կիրառելով միասնական սանդղակ: Հետազոտական կենտրոնների տրամադրած տվյալների մշակման և գնահատման աշխատանքներն իրականացվում են անկախ արտաքին մասնագետի կողմից, այնուհետև բոլոր տվյալները ստուգվում և վարկանիշավորման արդյունքները հաստատվում են բելառուսական և միջազգային անկախ փորձագետներից ձևավորված կոմիտեի կողմից[2]:

Ամփոփելով նշենք, որ 21-րդ դարում ՈւԿ-ների ոլորտն իրավամբ համարվում է ազգային անվտանգության համակարգի կարևոր բաղադրիչներից մեկը: Հաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաև այն, որ վերջին տասնամյակներին Հայաստանում վերընթաց զարգացում ապրող ՈւԿ-ների ոլորտը հատուկ ուսումնասիրության, մշտադիտարկման և մասնագիտական գնահատման անհրաժեշտություն ունի, հրատապ խնդիր է դառնում այլ երկրների օրինակով և միջազգային փորձի հիման վրա Հայաստանում ազգային վարկանիշավորման համակարգի ստեղծումը, համապատասխան մեթոդաբանության մշակումը և որևէ անկախ կազմակերպության կողմից նման հետազոտության անցկացումը՝ հիմքում ունենալով հանրային քաղաքականությունում ՈւԿ-ների ոչ այնքան ներկայանալիության կամ տեսանելիության, որքան վերջիններիս գործունեության և ներուժի բազմակողմ ու բովանդակային գնահատ-

[1] Տե՛ս *Alan Gelb*, *Anna Diofasi*, *Nabil Hashmi*, *Lauren Post*. Measuring Think Tank Performance: Updated with 2014 Data. http://www.cgdev.org/publication/ft/measuring-think-tank-performance-updated-2014-data

[2] «В Беларуси впервые проведен рейтинг исследовательских центров» (01/10/2015). http://thinktanks.by/publication/2015/10/01/v-belarusi-vpervye-proveden-reyting-issledovatelskih-tsentrov.html

ման իրականացումը: Նման համակարգի ստեղծումը կարող է նպաստել ինչպես Հայաստանի ՈւԿ-ների կողմից թողարկվող ինտելեկտուալ արտադրանքի որակի բարձրացման ուղղությամբ իրականացվող քայլերի խթանմանը, այնպես էլ ՈւԿ-ների գործունեության վերաբերյալ պետական մարմինների, ակադեմիական շրջանակների և հասարակության տեղեկացվածության բարձրացմանը: Բացի այդ, ՈւԿ-ների վարկանիշավորման արդյունքները, ստացված փաստական տվյալները և քանակական ցուցանիշները կարող են պետական կառավարման ոլորտի համապատասխան մասնագետների և ակադեմիական շրջանակների կողմից կիրառվել որպես տվյալների բազաներ հետագա առավել նեղ և խոր ուսումնասիրությունների համար, ինչպես նաև թույլ տալ առավել հիմնավորված պատկերացնել հայրենական ՈւԿ-ների առանձնահատկությունները, ոլորտի զարգացման շարժընթացը, ինտելեկտուալ, կազմակերպական և ֆինանսական ներուժն ու միտումները: Բնական է, որ նման գործընթաց իրականացնելու համար անհրաժեշտ կլինի ոչ միայն մշակել համապատասխան մեթոդաբանություն, այլ նաև ապահովել քանակական վիճակագրական և որակական փորձագիտական գնահատականներ, ինչի նպատակով տարբեր թիրախային խմբերում կարող է կիրառվել մասնագիտական հարցումների մեթոդը՝ ներառելով փորձագետներ, քաղաքական գործիչներ, պետական պաշտոնյաներ, լրագրողներ և այլն:

Մայիս, 2016թ.

ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԳԼՈԲԱԼ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

Վարդան Աթոյան

Ամփոփագիր

Ժամանակակից ուղեղային կենտրոնների գործունեությունը դարձել է քաղաքագիտական ուսումնասիրությունների կարևոր օբյեկտներից մեկը: Բացի այդ, վերջին տասնամյակներում համացանցի, ինչպես նաև տեղեկատվության հավաքման, մշակման, վերլուծության և փոխանցման տեխնոլոգիաների թռիչքաձև զարգացումը թույլ է տալիս ոչ միայն ազգային, այլև համաշխարհային մակարդակով իրականացնել տնտեսական, քաղաքական, սոցիոլոգիական ոլորտի հետազոտություններ, միաժամանակ՝ օգտագործելով առկա բաց աղբյուրների տվյալների բազաները և հայրենական ու արտերկրի փորձագետների կարողությունները:

Վերոնշյալ գործընթացները հանգեցրել են գլոբալ և ազգային մակարդակով վարկանիշավորում իրականացնող տարբեր կազմակերպությունների ի հայտ գալուն: Մյուս կողմից, գլոբալ վարկանիշավորում իրականացնող կազմակերպությունների զեկույցների հիմքում ընկած մեթոդաբանությունը և զեկույցի պատրաստման գործում ներգրավված փորձագետների թերացումները և մի շարք այլ սուբյեկտիվ պատճառներ երբեմն հանգեցնում են ոչ օբյեկտիվ պատկերի ձևավորմանը: Հաշվի առնելով խնդրի կարևորությունը, այդ թվում Հայաստանում վերընթաց զարգացում ապրող ուղեղային կենտրոնների ոլորտի ուսումնասիրության, մշտադիտարկման և մասնագիտական գնահատման անհրաժեշտությունը, ինչպես նաև այն, որ 21-րդ դարում ՈւԿ-ների ոլորտը համարվում է ազգային անվտանգության համակարգի կարևոր բաղադրիչներից մեկը, հրատապ խնդիր է դառնում Հայաստանում միջազգային փորձի հիման վրա ազգային վարկանիշավորման համակարգի ստեղծումը:

Աշխատանքում քննարկվում են նման համակարգերի ստեղծման միջազգային փորձը, հրապարակվող զեկույցների հիմքում ընկած մեթոդաբանությունները, թերությունները և Հայաստանում վարկանիշավորման ազգային համակարգի ստեղծման անհրաժեշտությունը:

МЕЖДУНАРОДНЫЙ ОПЫТ ГЛОБАЛЬНОГО И НАЦИОНАЛЬНОГО РЕЙТИНГА МОЗГОВЫХ ЦЕНТРОВ

Вардан Атоян

Резюме

Современные мозговые центры стали одним из важных объектов политологических исследований. В последние десятилетия быстрое развитие интернета, а также технологий сбора, обработки, анализа и передачи данных позволяют проводить экономические, политические, социологические исследования не только на национальном, но и на международном уровне, используя открытые базы данных и вовлекая местных и зарубежных экспертов.

Данные процессы способствовали появлению глобальных и национальных рейтингов, которые составляются различными организациями. Важно отметить, что методология составления глобальных рейтингов, а также недоработки участвующих в подготовке докладов специалистов и ряд других субъективных причин иногда приводят к формированию искаженных результатов. Учитывая актуальность и важность этого вопроса, в том числе необходимость постоянных исследований, мониторинга, профессиональной оценки деятельности мозговых центров Армении, а также тот факт, что в XXI веке мозговые центры является важным компонентом системы национальной безопасности, возникает необходимость на примере других стран и на основе международного опыта разработать национальную систему рейтингования отечественных мозговых центров.

В данной работе автор обсуждает международный опыт создания глобальных и национальных рейтинговых систем, а также лежащие в основе подобных докладов методологии, недостатки и необходимость создания национальной рейтинговой системы.

INTERNATIONAL PRACTICE IN GLOBAL AND NATIONAL RANKING OF THINK THANKS

Vardan Atoyan

Resume

Modern think thank activities have become one of the most important subjects of political science research. In addition, rapid development of the Internet, technologies for collecting, processing, analyzing and transmitting information provides an opportunity to implement research in economic, political, sociological areas not only at national, but also international levels, by using open source databases and capacities of domestic and international experts.

The above mentioned processes have led to emergence of various ranking organizations that perform ranking at international and national levels. On the other hand, the methodology applied in the reports by organizations that implement global ranking and faults of specialists involved in preparation of reports, as well as some other subjective reasons sometimes bring to forming a picture that is not objective. Emphasizing the importance of this issue, including the necessity of research, monitoring and professional evaluation of rapidly developing think thanks in Armenia, as well as considering that think thanks are considered one of the main components of national security system, the establishment of a national ranking system based on the international practices has become a pressing matter.

The article discusses international practice of establishing such systems, methodology and shortcomings of published reports, necessity of having a national ranking system in Armenia.

ԴԻՎԱՆԱԳԵՏԻ ԻՄԱՑԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արման Նավասարդյան*

Բանալի բառեր՝ պետության միջազգային իմիջ, դրական իմիջ, բացասական իմիջ, երկրի հեղինակություն, դիվանագիտական պաշտոնական և միջանձնային հարաբերություններ:

Դիվանագիտության դերը պետության իմիջի ապահովման գործում

Անցյալ դարի վերջերին - այս դարի սկզբներին քաղաքագիտական բառաֆոնդը հարստացավ ևս մեկ՝ «պետության միջազգային իմիջ» բառակապակցությամբ (իմիջ եզրը՝ անգլերեն *«image»* - «կերպար», «պատկեր», մեր կարծիքով՝ նպատակահարմար է հայերենում թողնել անփոփոխ, երբ այն օգտագործվում է քաղաքական ենթատեքստում): «Իմիջը սոցիալական օբյեկտի (անձի, կազմակերպության, ընկերության) զգայական երանգավորում ունեցող ընդհանրացված կերպար է հասարակության կամ անհատի գիտակցության մեջ» [1]: Իմիջը սկզբում վերաբերվել է մարդկանց՝ բնութագրելու համար նրանց վարվելաձը, պահվածքը հասարակության մեջ, հագնվածքը, հետո նոր միայն տարածվել է վերացական հասկացությունների և երևույթների վրա: Չլինելով նյութական առարկա՝ իմիջն ստեղծում է պատճառահետևանքային կապի մի ողջ համակարգ, որն, իր հերթին, առաջացնում է նյութական ներուժի և հնարավորությունների մեխանիզմ այն տիրապետողի և կրողի համար [2]: Խոր գլոբալիզացիայի, ներքին և արտաքին քաղաքականությունների միահյուսման պայմաններում միջազգային իմիջը համալրում է քաղաքացիական դիվանագիտության (*citizen diplomacy*) ներուժը՝ դառնալով «փափուկ ուժի» (*«soft power»*) կարևոր միջոցներից մեկը[1]:

---

* Ռուս-հայկական համալսարանի համաշխարհային քաղաքականության և միջազգային հարաբերությունների ամբիոնի վարիչ, Արտակարգ և լիազոր դեսպան:

[1] Վերջերս ավելի հաճախ է օգտագործվում *«citizen diplomacy»* բառակապակցությունը *«public diplomacy»*-ի փոխարեն, որը հանդիպում էր խորհրդային տարիների դիվանագիտական գրականության մեջ:

Պետության դրական իմիջը երբեմն ավելի հեշտությամբ կարող է լուծել դիվանագիտական խնդիրները, քան ռազմական ուժն ու ագրեսիվ գործողությունները: Սակայն պետության իմիջը միատարր չէ: Այն լինում է ներքին և արտաքին: Ներքին իմիջն ընկալվում է տվյալ երկրի ներսում, իսկ արտաքինն ուղղված է օտար պետություններին և մշակույթներին՝ «իմիջակիր» երկիրը հնարավորինս դրական լույսով ներկայացնելու և արտաքին քաղաքականության խնդիրների լուծման նպատակով: Ներքին և արտաքին իմիջը կարող է լինել դրական կամ բացասական: Ընդ որում՝ այդ որակները պայմանավորված են միմյանցով: Դժվար է պատկերացնել, որ երկրի ներքաղաքական իմիջը լինի բացասական, չվայելի իր քաղաքացիների վստահությունը և համակրանքը, իսկ օտարների կողմից ընկալվի դրականորեն՝ նպաստի միջպետական հարաբերությունների զարգացմանը: Ներկա գլոբալ տեղեկատվական թափանցիկության, ներքաղաքական և արտաքին քաղաքական սերտաճման պայմաններում, անգամ բռնապետական, «երկաթյա վարագույրով» մեկուսացված պետություններն ի զորու չեն թաքցնել աշխարհից իրենց համակարգի իսկական «դեմքն» ու էությունը, հետևաբար՝ իմիջի նկատմամբ ձևավորված գնահատականը երկրի ներսում և դրսում: Միջազգային իմիջը պայմանավորված է մշտական և ժամանակավոր չափանիշներով: Մշտական չափանիշներն են՝ երկրի աշխարհագրական դիրքը, պատմությունը, կրոնը, բնական ռեսուրսները, իսկ ժամանակավոր չափանիշներին են վերաբերում նրա քաղաքական կառուցվածքը, իշխանության բնույթը, հասարակական հարաբերությունները, ներքին և արտաքին քաղաքականությունը, արժեքային համակարգը: Եթե մշտական իմիջը գործում է պետությունից անկախ, ապա ժամանակավոր իմիջի կայացումը և պահպանումը մեծապես կախված են մարդկանցից, որոնք որոշում են ներքին իմիջի և քաղաքական մշակույթի մակարդակը, արտաքին քաղաքական ուղղվածությունը, միջազգային հանրության վրա ունեցած զգայական-հոգեբանական ներգործությունը, գաղափարախոսական-տեղեկատվական մեխանիզմների հմտությունը և ճկունությունը: Ավելորդ է նշել, որ այս ամենի մեջ առաջատար դեր է հատկացված պետությունների դիվանագիտական ծառայություններին: Պետության դրական իմիջը կարևոր միջոց է միջազգային հարաբերություններում նրա ազգային շահերի պաշտպանության, դիվանագիտական խնդիրների լուծման և բանակցային գործընթացներում առավելություն, արդյունք ձեռք բերելու ուղղությամբ: Հետևաբար, իմիջը դառնում է արտաքին

սպառնալիքների թիրախ և տեղեկատվական հակամարտությունների օբյեկտ: Իմիջը երկսայրի սուր է պետության ձեռքում, որի օգնությամբ, մի կողմից, փորձում է բարձր մակարդակի վրա պահել իր երկրի հեղինակությունը, մյուս կողմից՝ ստեղծել բացասական իմիջ այն պետության և ժողովրդի նկատմամբ, որի դեմ հյուսում է քաղաքական, ռազմական և նվաճողական որոգայթներ: Հայերի և այլ ազգերի նկատմամբ նման քաղաքականությանն իր հիմնարար մենագրությունում անդրադառնում է անվանի հոգեբան Ալբերտ Նալչաջյանը. «Մեր աչքի առաջ է այդ մեխանիզմը՝ զոհին վերագրել (ատրիբուցիա) հանցագործ զանցանքներ կամ նման արարքներ, որը լայնորեն կիրառվում է թուրքերի կողմից հայերի նկատմամբ: Այն բանի կապակցությամբ, որ էթնոցիդի հիմնախնդիրը, սկսած 1998 թվականից, դարձավ Հայաստանի արտաքին քաղաքականության բաղադրիչը, ինչպես նաև ճանաչման լույսի ներքո այն ընդունվեց մի շարք պետությունների բարձրագույն օրգանների կողմից, թուրքերն անհանգստացած (իսկ տագնապը ֆրուստրացիայի և նոր անախորժ իրադարձությունների սպասումների համոզիչ կանխանշան է) սկսեցին շատ հաճախ օգտագործել այդ մեխանիզմը (ատրիբուցիան- *Ա.Ն.*), որը հատուկ է անազնիվ մարդկանց հոգեկան ակտիվությանը և վարքագծին: Նրանք (թուրքերը- *Ա.Ն.*) իրենց ղեկավարների բերանով պնդում են, որ իբր հայերը կազմակերպել են թուրքերի եղեռն: Այդ գործիչների իռացիոնալիզմը հասնում է այնտեղ, որ նրանք կազմակերպում են արշավներ Թուրքիայի արևելյան շրջաններում՝ նպատակ ունենալով հայտնաբերել հայերի կողմից սպանված թուրքերի եղբայրական գերեզմաններ: Ագրեսորը և մարդասպանը փորձում են դնել զոհի դիմակ…» [3]:

Միջազգային իմիջը ենթակա է փոփոխության՝ կախված ներքին և արտաքին ազդակներից, պատմական ժամանակահատվածից, միջազգային դրությունից: 1917թ. պետական հեղաշրջումից հետո Ռուսաստանը շատ երկրների համար ներկայացավ որպես ժողովրդի դարերով երազած հավասարության և բարեկամության հասարակության ստեղծման ռահվիրա: Սակայն շատ շուտով արտաքին քաղաքականության և ստալինյան բռնապետական ռեժիմի պատճառով սովետներն աշխարհին ներկայացան ամենամռայլ գունային իմիջով: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ԽՍՀՄ-ը որպես հաղթանակած երկիր կրկին ձեռք բերեց միջազգային դրական իմիջ, որն ամրապնդվեց Խորհրդային կայսրության փլուզումով և Սառը պատե-

բազմի ավարտով: Ներկայումս ԽՍՀՄ գլխավոր իրավահաջորդ Ռուսաստանի միջազգային իմիջը կարծես թե աստիճանաբար թեքվում է դեպի բացասական նշանակետը, մասնավորապես՝ ուկրաինական դեպքերի հետնախորշում: Այս գործընթացը, մեր կարծիքով, մասամբ է պայմանավորված Ռուսաստանի ներկա քաղաքական գծով: Նրա բացասական իմիջն օբյեկտիվորեն արդյունք է միջազգային հարաբերություններում տեղի ունեցող համակարգային խոր փոփոխությունների և Միացյալ Նահանգների համառ ջանքերի՝ հավերժացնելու երկրագնդում «առաջինը» լինելու տիտղոսը և իր կամքը թելադրելու մենաշնորհը: Այս քաղաքականությունը, վերջին հաշվով, հանգեցնում է ամերիկյան բացասական իմիջի ձևավորմանը, հատկապես արաբական աշխարհում: ԱՄՆ-ը իր մերձավորարևելյան քաղաքականության մեջ ակտիվորեն օգտագործել և այսօր էլ շահարկում է սեփական իմիջի գերազանցությունը՝ հիմնված դեմոկրատիայի և մարդու իրավունքների պաշտպանի հնամաշ մոդելի սկզբունքների վրա, ստեղծելով ողջ տարածաշրջանի ժողովուրդների ընկալման մեջ հիմնականում բացասական իմիջ: Այդ քաղաքականության կորագծի բարձրագույն կետը հանդիսացավ Վաշինգտոնի ագրեսիան Իրաքի դեմ՝ զանգվածային ոչնչացման զենք հայտնաբերելու պատրվակով: «Սադամ Հուսեյնը Միացյալ Նահանգներին պատճառում էր ոչ միայն անախորժություն (վերջին հաշվով, այդ տիպի ուրիշ մարդիկ էլ կան), սակայն նա տագնապ էր առաջացնում՝ սպառնալով Մերձավոր Արևելքի կայունությանը երկու հարցում՝ Իսրայելի գոյատևման և նավթային քաղաքականության հիմնահարցի, որոնք առաջնային նշանակություն ունեն Միացյալ Նահանգների համար»,- գրում է անգլիացի անվանի քաղաքագետ Փիթեր Կալվոկորեսին և եզրակացնում, որ «քաղաքական առումով ամերիկացիների պլանները չարդարացան» [4]: Ավելացնենք, որ մի քանի տարի հետո կանաչ լույս վառվեց արաբական գարնան համար, որը քաղաքական և ռազմական քառսի սկիզբ հանդիսացավ այդ տարածաշրջանում և հասավ կրիտիկական կետի Իրաքում և Սիրիայում ԻԼԻՊ-ի («Իսլամական պետություն») ագրեսիվ-հանցավոր գործողություններով, որին հետևեցին ամերիկյան օդային հարվածները՝ անարդյունք և անկանխատեսելի հետևանքներով: Միջազգային բացասական իմիջի ստեղծումը նախորդում է ռազմական գործողությունների մեկնարկին, որի նպատակն այդ երկրի վատաբանումն ու պարսավանքն է՝ արդարացնելու համար նախապատրաստվող ագրեսիան:

Օտար պետության վրա հարձակվելուց առաջ այն ծրագրող պետության պրոպագանդիստական մեքենան և տեղեկատվական գործակալություններն իրագործում են հատուկ աշխատանք (ֆաշիստական Գերմանիան՝ Երկրորդ համաշխարհայինից առաջ, ՆԱՏՕ-ն՝ Հարավսլավիայի վրա հարձակվելուց, ԱՄՆ-ը՝ Իրաք մտնելուց առաջ և այլն):

Իմիջը կարևոր նշանակություն ունի ցանկացած պետության արտաքին քաղաքականության հաջողության համար, սակայն առանձնակի կարևորություն է ստանում փոքր պետությունների դիվանագիտության համար, քանզի նրանք, որպես կանոն, զուրկ են ռազմաքաղաքական և տնտեսական ներուժից միջազգային հարաբերություններում ուժեղների հետ հավասար դիրքերից հանդես գալու համար: Այս գործընթացում մեծ նշանակություն ունեն նորանշանակ դեսպանի հեղինակությունը, նրա կենսագրությունը, սոցիալական դիրքը, դիվանագիտական աշխատանքի փորձը: Սրանք արժեքներ են, որոնք դյուրացնում են նրա մուտքը դեսպանընկալ երկրի քաղաքական-հասարակական բարձր ոլորտ և դիվանագիտական կորպուս: Երբ պետությունը որևէ երկրում դեսպան նշանակում է հայտնի և հարգանք վայելող մարդու, ապա դա հաճելի է լինում այդ երկրի կառավարող ընտրանու և նրա ժողովրդի համար, քանի որ ընկալվում է որպես այն երկրի ղեկավարության հարգալից վերաբերմունքի նշան, որն ուղարկել է նման դիվանագետի: Այս հանգամանքը հատկապես պետք է հաշվի առնվի փոքր երկրների դիվանագետների նշանակման ժամանակ, որոնք իրենց պետությունների թույլ կողմերը պետք է փոխարինեն պրոֆեսիոնալ բարձր մակարդակով և անթերի կատարողականությամբ: Նրանց առաքելությունը դժվարանում է նաև իրենց գլխավորած ներկայացուցչության օպերատիվ-դիվանագիտական անձնակազմի սակավաթվությամբ (հաճախ մեկ կամ երկու դիվանագետ) և միջոցների սղությամբ: Աշխատանքային նշված ռեժիմի պայմաններում փոքր պետությունների դիվանագետների հաջողությունը կախված է նրանց հմտությունից, փորձառությունից, դեսպանընկալ երկրում և դիվանագիտական կորպուսում նրանց հաստատած կապերից: Բարձրակարգ կարիերային դիվանագետներն իրենց նպատակին հասնելու համար օգտագործում են տվյալ երկրի, անգամ տարածաշրջանի ներուժի բոլոր սպեկտրները՝ պետական և հասարակական կազմակերպությունները, ԶԼՄ-ն, սփյուռքը, պետական և անձնական կապերը և այլն:

Դիվանագիտական պաշտոնական և միջանձնային հարաբերությունների կորելյացիան

Ամենօրյա դիտումների և սոցիոմետրիկ ուսումնասիրությունների հիման վրա սոցիալական հոգեբանության բնագավառում կատարված հետազոտությունները պարզել են, որ մարդկանց փոխհարաբերությունները լինում են առնվազն երկու աստիճանի կամ մակարդակի. 1) առաջնային հարաբերությունների մակարդակ, որին հատուկ են մտերմությունը, հուզականությունը, ինչ-որ չափով նաև ինքնանպատակ՝ ոչ գործառական (ոչ ֆունկցիոնալ) բնույթը, 2) երկրորդային հարաբերությունների մակարդակ, որոնք զուտ ֆունկցիոնալ են, առանց մտերմության և հուզականության: Հարաբերությունների այս երկու մակարդակները դիտվում են մարդկանց վարքում, իսկ ավելի մեծ չափով՝ գիտական փոքր սոցիալական խմբերում, որոնց անդամների թիվը սկսվում է երկուսից և չի անցնում հիսունը: Երկրորդային հարաբերությունների մակարդակում փոխհարաբերությունների մեջ մտած մարդկանց անձնային գծերը կամ բոլորովին չեն բացահայտվում, կամ ի հայտ են գալիս նվազագույն չափով: Այդ հարաբերությունները բնութագրվում են զսպվածությամբ, սառնությամբ, գործնականությամբ: Այդպիսիք են, օրինակ, երկու անձնավորությունների հարաբերությունները, որոնց սոցիալական դիրքերը խիստ տարբեր են, կազմակերպության դեպքում՝ ըստ ուղղահայաց աստիճանների: Այդպիսիք կարող են լինել նույն երկրում հավատարմագրված տարբեր պետությունների դեսպանների հարաբերությունները, հատկապես այն դեպքում, երբ այդ պետությունների միջև գոյություն ունեն ոչ բարեկամական, առավել ևս՝ թշնամական հարաբերություններ: Երկրորդ աստիճանը, ինչպես ասացինք, անձնական, անմիջական, ոչ ձևական հարաբերությունների մակարդակն է: Այդպիսի հարաբերությունները բնորոշ են ընկերներին, իսկ կազմակերպությունների ներսում՝ հավասար դիրքեր ունեցող անձանց: Նման հարաբերությունների մեջ գտնվող անձինք ազատ դրսևորում են իրենց հակումներն ու բնավորությունը, վստահում են միմյանց, կիսում են գաղտնիքները, համակրում են միմյանց, միասին են անցկացնում ազատ ժամանակը և այլն: Առաջնային հարաբերությունների յուրահատկություններից է նաև ֆիզիկական շփումների հնարավորությունը: Այս պարզ և հասկանալի սոցիալ-հոգեբանական գիտելիքները դիվանագիտության մեջ կիրառելու փորձ կատարելիս ծագում է մի հարց, որը, համոզված ենք, գոյանում է յուրա-

քանչյուր դիվանագետի գիտակցության մեջ, երբ նա հայտնվում է օտար երկրում. որքանո՞վ է իրեն թույլատրվում ոչ պաշտոնական, մոտ հարաբերություններ հաստատել այդ երկրի դիվանագետների, քաղաքական գործիչների, մշակույթի և գիտության տարբեր բնագավառների ներկայացուցիչների, ինչպես նաև շարքային քաղաքացիների հետ: Վ.Ի. Պոպովը, Վ.Վ. Սամոյլենկոն, Օ.Սակունը և ուրիշ հեղինակներ գտնում են, որ այդ հարցին կարելի է դրական պատասխան տալ, քանի որ միայն մոտ, փոխվստահելի հարաբերություններ հաստատելու դեպքում դիվանագետը կարող է ստանալ ստույգ և վստահելի տեղեկատվություն երկրի ներքին և արտաքին քաղաքականության վերաբերյալ, որը նրա առաքելության հիմնական խնդիրներից մեկն է: «Ակնհայտ է, որ իշխանությամբ և ազդեցիկությամբ օժտված և քաղաքական որոշումներ կայացնող մարդկանց հետ անձնական շփումները, ովքեր լավ գիտեն տեղական «քաղաքական խոհանոցը» և կարևոր ինֆորմացիա կրողներ են, դիվանագիտական ինֆորմացիա ստանալու ամենակարևոր ուղին են: Ասվածը ևս մեկ անգամ գալիս է հաստատելու այն իրողությունը, որ տեղեկատվական տեխնոլոգիաների և գլոբալ կապերի մեր ժամանակներում, երբ տեղեկատվության պասիվ միջոցները կարող են մատչելի լինել նաև անմիջականորեն Ռուսաստանից, դիվանագիտական աշխատանքում, այնուամենայնիվ, առաջին տեղում են անձնական կապերը, մարդկային հանդիպումները, փոխադարձ վստահության վրա հիմնված հարաբերությունները, որոնք ոչնչով փոխարինվել չեն կարող» [5]: Սակայն փոխադարձ վստահելի և կոնֆիդենցիալ կապերի հաստատումը, հատկապես տեղեկատվության փոխանակումը, երկկողմանի երևույթ են: Կարիերային դիվանագետը երբեք հենց այնպես չի բաժանվի իր ունեցած ինֆորմացիայից, եթե դրա դիմաց չի ստանում մեկ այլ ինֆորմացիա: Դիվանագիտության հիմքում ընկած է առևտրի սկզբունքը. տուր, որ ստանաս: Այս հանգամանքը որոշ դժվարություն է հարուցում փոքր պետության դիվանագետների աշխատանքում, քանի որ նրանց երկրներին վերաբերող տեղեկատվությունը միշտ չէ, որ հետաքրքրություն է ներկայացնում մեծ երկրների դիվանագետների համար: Այդ բացը փոքր երկրների դիվանագետները լրացնում են այն կարևոր ինֆորմացիայով, որը նրանք քաղում են տեղական իշխանությունների և դիվանագիտական կորպուսում իրենց ունեցած կապերի շնորհիվ, որոնք կարող են լինել արժեքավոր և կարևոր: Փոքր պետությունների դեսպանները, որոնք զրկված են մեծ

երկրների դեսպանությունների հնարավորություններից (օպերատիվ-դիվանագիտական մեծ անձնակազմ, դեսպանընկալ երկրում գտնվող տարբեր ներկայացուցչություններ, արտաքին և ռազմական հետախուզություններ և այլն), գործի են դնում անձնական կապերն ինչպես երկրի պետական և մասնավոր կառույցներում, այնպես էլ դիվանագիտական կորպուսում, որոնց հաջողությունը կախված է նրանց պրոֆեսիոնալիզմից, դիվանագիտական հմտություններից և անձնական հատկանիշներից ու հմայքից:

Իդեալական դիվանագետի մի քանի հատկանիշների մասին

Դիվանագետից պահանջվող պրոֆեսիոնալ կարողությունների և մարդկային հատկանիշների մասին գրականությունն աղքատիկ է, սակայն դրանում կան փոքրաթիվ հեղինակներ, որոնց ոչ մեծաթիվ, բայց չգերազանցված աշխատասիրությունները դարձել են դիվանագետների ուղեցույցը, քրեստոմատիկ դասագրքեր, որոնցով դաստիարակվում և դեռ կդաստիարակվեն սերունդներ: Նկատի ունենք Ֆրանսուա Կալյերի «Ինչպես բանակցել տիրակալների հետ», Հարոլդ Նիքոլսոնի «Դիվանագիտություն» և «Դիվանագիտական արվեստ», Ժյուլ Կամբոնի «Դիվանագիտություն», Էռնեստ Սատոուի «Դիվանագիտական պրակտիկայի ձեռնարկ», Վիկտոր Պոպովի «Ժամանակակից դիվանագիտություն» և Հենրի Քիսինջերի «Դիվանագիտություն» գրքերը (տե՛ս նաև *Արման Նավասարդյան,* «Դիվանագիտություն»): Նշված հեղինակների կարծիքով՝ դիվանագետը պետք է ունենա խոր գիտելիքներ և իր ընտրած ոլորտում աշխատելու մեծ փորձ, պրոֆեսիոնալների համայնքին (կորպորացիա) պատկանելու զգացում: Լինել ազնիվ այնքան, որքան մատչելի է գործունեության տվյալ բնագավառում: Խորապես ուսումնասիրել հավատարմագրված երկիրը՝ հատուկ ուշադրություն դարձնելով տեղի ժողովրդի սովորույթներին, ավանդույթներին, առանձնահատկություններին և հոգեբանությանը: Խուսափել առանձին, չկապակցված փաստերի ու դիտարկումների հիման վրա լայն ընդհանրացումներ կատարելուց: Չլինել սուբյեկտիվ և տեղի չտալ զգացմունքների առջև: Ունենալ ինքնատիրապետման զարգացած, սեփական իրադրական հույզերը ճնշելու ընդունակություն, քանզի դրանք կարող են վնաս պատճառել այն գործին, հանուն որի նա գտնվում է տվյալ երկրում: Դիվանագետից, ըստ մեր հիշատակած հեղինակների, պահանջվում է լինել կարգապահ, ունենալ բնավորության զարգացած կամային գծեր, բնավորության «ամրություն»:

Տարբեր հեղինակների (որոնց, ինչպես նշվեց, դժբախտաբար կարելի է մի ձեռքի մատների վրա հաշվել)՝ դիվանագետների հատկանիշների վերաբերյալ նշած սկզբունքներից, այնուամենայնիվ, կառանձնացնեինք XVII դարի խոշոր դիվանագետ Ֆրանսուա Կալյերին, որի «Ինչպես բանակցել տիրակալների հետ» աշխատությունը համարվում է բոլոր ժամանակների ամենաճանաչված քրեստոմատիան, դաստիարակել է սերունդներ և իրեն չի սպառել: Նա մի ամբողջական փայլուն համակարգ ունի իդեալական դիվանագետի հատկանիշների վերաբերյալ, որոնցից մի քանիսը կներկայացնենք ստորև.

- Իդեալական դիվանագետը պետք է ունենա սուր դիտողականություն և լինի ջանասեր: Նրա դատողությունները պետք է լինեն սթափ՝ իրականությունը տեսնելու, դեպի նպատակակետ ամենակարճ ու ամենահարմար ճանապարհով գնալու և այլ իրավիճակներում չմոլորվելու համար:
- Իդեալական դիվանագետը պետք է լինի խորաթափանց, որը կօգնի նրան գուշակել զրուցակցի մտքերն ամենաանշան դիմախաղից անգամ:
- Իդեալական դիվանագետը պետք է կարողանա արագ կողմնորոշվել, ուշադիր լսել, լինել քաղաքավարի, սիրալիր ու հավասարակշռված:
- Իդեալական դիվանագետը պետք է կարողանա զսպել ասելիքը, քանի դեռ բավարար չափով ծանր ու թեթև չի արել այն: Նա կսխալվի, եթե չհասկանա, որ խորհրդավորության մթնոլորտը, որտեղ գաղտնիքները «սարքվում» են ոչնչից, իսկ աննշան մանրուքները ներկայացվում են որպես պետական կարևոր գործեր, ոչ այլ ինչ է, եթե ոչ անհեռատես մտքերի արգասիք:
- Իդեալական դիվանագետը պետք է կարողանա պահել արժանապատվությունն անգամ այն դեպքում, երբ դա շատ դժվար է: Քաջությունը նույնպես կարևոր հատկանիշ է, քանի, որ երկչոտ մարդը երբեք հաջողության չի հասնի գաղտնի բանակցություններում:
- Իդեալական դիվանագետը պետք է ունենա հանգիստ բնավորություն, բարեմտորեն ընդունի անգամ հիմարներին, խուսափի բարկության պոռթկումներից, երբեք չտրվի հարբեցողության և խաղամոլության: Նրան պետք է խորթ լինեն դատարկ ժամանցներն ու թեթևսոլիկությունը: Նա պետք է լինի կնամեծար, բայց ոչ կնամոլ [6]:

Մայիս, 2016թ.

Աղբյուրներ և գրականություն

1. Новая российская энциклопедия, Т., VI, М., Изд. «Энциклопедия», с. 288.
2. *Галумов Э.А.,* Международный имидж России, М., 2008.
3. *Налчаджян А.А.,* Этническая виктимология и психоистория этноцида, Ереван, Авторское издание, 2011, с. 261.
4. *Кальвакоресси Питер,* Мировая политика 1945-2000, Книга 1, М., Изд. Международные отношения, 2003, с. 565.
5. *Самойленко В.В.,* Дипломатическая служба, Москва, Изд-во «Норма», 2011, с. 194.
6. *De Callieres F.,* On the Manner of Negotiating wihe Princes, թարգմ. ֆրանսերենից, Kingston, 1963.

ԴԻՎԱՆԱԳԵՏԻ ԻՄԱՑԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արման Նավասարդյան

Ամփոփագիր

Դասական դիվանագիտությունը և այն լրացնող «քաղաքացիական» դիվանագիտությունը մեծ դեր են խաղում արտաքին աշխարհում պետության իմիջի ստեղծման գործում, որը կարևոր միջոց է միջազգային հարաբերություններում ազգային շահերի և հետաքրքրությունների պաշտպանության համար։ Հոդվածում քննարկվում են դիվանագետների պաշտոնական և միջանձնային հարաբերությունների և շփումների առանձնահատկություններն արտասահմանյան գործուղումների ընթացքում, ինչպես նաև տեղեկատվության փոխանակման հնարավորություններն ու դժվարությունները, հատկապես փոքր պետությունների դիվանագիտական ծառայությունների համար։ Հեղինակն անդրադառնում է դիվանագիտության մեկ այլ գրեթե չուսումնասիրված ոլորտի՝ իդեալական դիվանագետի հատկանիշներից մի քանիսին՝ հենվելով դիվանագիտական տեսության անվանի հեղինակների ուսումնասիրությունների վրա։

О НЕКОТОРЫХ ПОЗНАВАТЕЛЬНЫХ И ПСИХОЛОГИЧЕСКИХ КАЧЕСТВАХ ДИПЛОМАТА

Арман Навасардян

Резюме

Классическая и дополняющая ее «гражданская» дипломатия играют важную роль в создании имиджа государства на мировой арене. А имидж является важным средством защиты национальных интересов в системе международных отношений. В статье рассматриваются особенности официальных и межличностных отношений и контактов дипломатов во время зарубежных командировок, а также возможности и трудности при обмене информацией, особенно в случае дипломатических служб малых государств. Автор обращается и к другой сфере дипломатии, также практически не изученной, а именно: к некоторым качествам идеального дипломата. При этом он ссылается на исследовательские труды признанных специалистов в области теории дипломатии.

SOME COGNITIVE AND PSYCHOLOGICAL CHARACTERISTICS OF A DIPLOMAT

Arman Navasardian

Resume

Classic diplomacy and its supplement, the so-called civic diplomacy, have a great role in shaping the country's image in international relations. It is an important means to defend its national interests in foreign affairs. The article discusses the peculiarities of a diplomat's formal and interpersonal communications and relationships during overseas business trips, as well as the possibilities and difficulties in sharing information, especially for diplomatic services of small countries. Based on the studies of outstanding authors of diplomacy theory, the author refers to another almost unstudied field of diplomacy, that is, some of the traits of a perfect diplomat.

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԵՄ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄԸ ԽԱՂԵՐԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Դավիդ Սարկիսյան[*]

Բանալի բառեր՝ խաղերի տեսություն, տնտեսական պատժամիջոցներ, Գերմանիա, Ռուսաստան, մոդելավորում, ուկրաինական ճգնաժամ:

Ներածություն

Տնտեսական պատժամիջոցների երևույթը համաշխարհային քաղաքականության մեջ սովորաբար դիտարկվում է հզոր պետության (կամ դրա կոալիցիայի) և միջազգային որևէ նորմից կամ այդ պետության համար ցանկալի քաղաքական կուրսից շեղվող ու իր ռազմական և տնտեսական ներուժով զգալիորեն ավելի թույլ պետության փոխհարաբերությունների մեջ: Սակայն հետսառըպատերազմյան շրջանի երկու աշխարհաքաղաքական կենտրոնների կողմից սահմանված փոխադարձ տնտեսական պատժամիջոցները 21-րդ դարի միջազգային հարաբերություններում որոշակիորեն նոր և հետաքրքիր երևույթ են հանդիսանում հետազոտության համար:

Տնտեսական պատժամիջոցների վերաբերյալ հարուստ գրականությունը՝ սկսած 1960-ական [1] և 1970-ական թթ. [2, 3] սկզբնական գործերից մինչև 1980-ական թթ. [4] և 1990թ. [5] հրատարակված հիմնարար աշխատություններն ու 1990-ական թթ. լույս տեսած դրանց քննադատությունը [6, pp.90-136; 7, pp. 66-77], մեծապես պատասխանել են այն հարցին, թե արդյոք դրանք արդյունավետ են, և երբ է դրանց կիրառման հավանականությունն ամենաբարձրը: Այնուամենայնիվ, համեմատաբար քիչ ուշադրություն է դարձվել պատժամիջոցներ կիրառելու որոշմանը հանգեցնող ներքին քաղաքական դրդապատճառներին պատժամիջոցներ կիրառող երկրում:

[*] ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի ասպիրանտ:

Սույն հոդվածում փորձ է արվել վերլուծել Գերմանիայի՝ ՌԴ-ի դեմ տնտեսական պատժամիջոցներ կիրառելու որոշման վրա ազդող գործոնները: Մասնավորապես, փորձել ենք ֆորմալ մեթոդների միջոցով ներկայացնել կողմերի պատկերացումները պատժամիջոցների կիրառման/չկիրառման և դրանց կիրառումից հետո ենթարկվելու/չենթարկվելու դեպքերում հակառակ կողմի պատասխան քայլերի ու սեփական շահերի մասին Գերմանիայի և Ռուսաստանի պատկերացումները: Հիմնվելով այդ պատկերացումների վրա՝ վերարտադրվել են կողմերի կատարած քաղաքական կանխատեսումները և վերլուծվել այդ կանխատեսումների համատեքստում նրանց որոշման վրա ազդող գործոնները:

Խաղի մոդելները

Ավելի կոնկրետ և մաթեմատիկորեն ճշգրիտ կերպով հասկանալու համար կողմերի շահերը, շարժառիթներն ու փոխազդեցության բնույթը տնտեսական և ոչ տնտեսական պատժամիջոցների կիրառման հարցում՝ մենք կիրառել ենք խաղերի տեսության շարունակական, վերջավոր կրկնվող և անվերջ կրկնվող խաղերի մոդելները:

Առաջին վերջավոր շարունակական խաղի մեջ վերլուծվում է պատժամիջոցների պոտենցիալ արդյունավետությունն ուկրաինական ճգնաժամի հարցում Ռուսաստանին ստատուս քվոյին վերադառնալ ստիպելու գործում: Խաղի ծառը պատկերված է *Նկ. 1*-ում:

Ի տարբերություն պատժամիջոցների կիրառման քաղաքականությունը վերլուծող նախորդ մոդելների [8], մենք բացառել ենք այսպես կոչված «պոտենտ» (կարող, ունակ) պատժամիջոցների ընտրության տարբերակը կիրառող երկրի համար: Պոտենտ պատժամիջոցները, ըստ հեղինակների, թեպետ պատճառում են մեծ տնտեսական վնասներ կիրառող պետությանը ևս, սակայն այնքան հզոր տնտեսական հարված են հասցնում թիրախ երկրին, որ այն չի կարող չենթարկվել պատժամիջոցներ կիրառող կողմի պահանջներին: Փորձը ցույց է տվել, որ նույնիսկ ՀՆԱ 48%-ի վնաս հասցնելու դեպքում, ինչպես Իրաքի պարագայում էր [6, p. 106], թիրախ երկիրը կարող է շարունակել չենթարկվել:

Նկ. 1

Պատժամիջոցների շարունակական մոդելի խաղի ծառը



Այդ պատճառով այս խաղի մեջ, որը սկսում է Գերմանիան (այսուհետ Գերմանիան և ԵՄ-ը օգտագործվելու են փոխարինման կարգով, քանի որ, չնայած որոշ տարակարծություններին ԵՄ անդամների միջև, գերմանական որոշումները պատժամիջոցների վերաբերյալ ընդունվում են ԵՄ-ի կողմից[1] [9]), առաջին որոշման կետում ընտրություն է կատարվում պատժամիջոցներ սահմանելու (S_1) կամ չսահմանելու (N) միջև: Երկրորդ որոշման կետում Ռուսաստանը որոշում է ենթարկվել (C), թե չենթարկվել (N): Եթե Ռուսաստանը ենթարկվում է, խաղն ավարտվում է: Հակառակ դեպքում Գերմանիան հաջորդ որոշման կետում ընտրում է պատժամիջոցների գործող մակարդակը պահպանելու (S_1), հաջորդ՝ ավելի բարձր մակարդակի անցնելու (S_n) կամ դրանք վերացնելու (N) միջև: Գերմանիայի՝ հաջորդ մակարդակին անցնելու դեպքում Ռուսաստանը կրկին ընտրում է ենթարկվելու (C) և չենթարկվելու (N) միջև: Եթե Ռուսաստանը կրկին չի ենթարկվում, խաղը կրկնվում է նույն հերթականությամբ մինչև որոշակի n մակարդակի հասնելը, որը պատկերացվում է որպես իրատեսական սցենարի

[1] Տե՛ս *Boehnke, O.* View from Berlin: Germany Leads the EU on Russia Sanctions. 2015. http://www.ecfr.eu/article/commentary_germany_leads_the_eu_on_russia_sanctions311313, հասանելի է առ 13.03.2016թ.:

դեպքում պատժամիջոցների հնարավոր ամենաբարձր մակարդակ: Կողմերի շահույթի ֆունկցիաները կազմող գործոնները հետևյալն են.

1. Ռուսաստանի համար. B_v՝ ստատուս քվոյի փոփոխությունից ստացված ռազմավարական շահույթը, A_{0R}, A_{1R}, A_{nR}՝ խաղի յուրաքանչյուր փուլի համար լսարանային ծախսերը (*audience costs*), որոնք կարող են ընդունել դրական և բացասական արժեքներ: $A_{nR(N)}$ n-րդ փուլից հետո լսարանային ծախսերն է Ռուսաստանի չենթարկվելու դեպքում, իսկ $A_{nR(C)}$ n-րդ փուլից հետո լսարանային ծախսերն է Ռուսաստանի ենթարկվելու դեպքում: C_{S_1R}, C_{S_nR} պատժամիջոցների հասցրած տնտեսական ծախսերն են (կարևոր է սրանք տարբերել հասցրած իրական տնտեսական վնասից, քանի որ տնտեսական ծախսեր տերմինը ցույց է տալիս, թե որքան կարևոր է իրական վնասը գնահատում տվյալ վարչակարգը): t_1, t_n – ցույց են տալիս պատժամիջոցների կիրառման ժամանակամիջոցները:

2. Գերմանիայի համար. $-C_V$ ստատուս քվոյի փոփոխությունից ստացված ռազմավարական վնասն է, A_{0G} լսարանային ծախսերն է ստատուս քվոյի փոփոխությունից հետո պատժամիջոցներ չմտցնելու դեպքում, $A_{1G(C)}$, $A_{nG(C)}$ լսարանային ծախսերն են համապատասխանաբար պատժամիջոցների առաջին և n-րդ փուլից հետո Ռուսաստանի ենթարկվելու դեպքում, $A_{1G(N)}$, $A_{nG(N)}$ լսարանային ծախսերն են համապատասխանաբար պատժամիջոցների առաջին և n-րդ փուլից հետո Ռուսաստանի չենթարկվելու դեպքում, C_{S_1G}, C_{S_nG} պատժամիջոցների հասցրած տնտեսական ծախսերն են Գերմանիայի համար, t_1 t_n ցույց են տալիս պատժամիջոցների կիրառման ժամանակամիջոցները:

Կրեմլի առաջնորդների պատկերացմամբ՝ այս ռազմավարական փոխազդեցությունը վերջավոր կրկնվող խաղ է այն դեպքում, եթե նրանք մտածում են, որ Գերմանիայի քաղաքական ղեկավարությունը, լինելով տնտեսապես ռացիոնալ, կվերացնի պատժամիջոցները որոշակի t_n ժամանակ

հետո այն դեպքում, եթե պրոգրեսիվ աճող ուժգնության պատժամիջոցներ կիրառելուց հետո չտեսնի որևէ արդյունք:

Այս դեպքում վերջնական որոշման կետում Ռուսաստանն ընտրում է $A_{nCR} - t_n C_{S_n R}$ և $B_v + A_{nNR} - t_n C_{S_n R}$ շահույթների միջև: Կարելի է մտածել, որ Ռուսաստանի ենթարկվելու դեպքում t ժամանակամիջոցը, որի ընթացքում պետք է գործեն սահմանված պատժամիջոցները, պետք է լինի հավասար 0-ի, այսինքն՝ պատժամիջոցները պետք է միանգամից վերացվեն: Կարելի է նաև պնդել, որ այդ ժամանակամիջոցը պետք է առնվազն զգալիորեն կարճ լինի պատժամիջոցների գործելու ժամանակամիջոցից՝ այն դեպքում, երբ Ռուսաստանը չի ենթարկվում: Սակայն պատժամիջոցները մինչ օրս սահմանվել են կոնկրետ ֆիքսված ժամանակամիջոցների համար (օր.՝ 6 ամիս), և դրանց ավարտին է, որ կրկին քննարկվել է դրանց երկարաձգման հարցը: Հնարավոր է, որ պատժամիջոցները վերացվեն սահմանված ժամանակամիջոցի կեսից, եթե տեղի ունենա շրջադարձային զիջում Ռուսաստանի կողմից: Եվ այնուամենայնիվ, քիչ հավանական է, որ նույնիսկ իր քաղաքական կուրսից նահանջի դեպքում Ռուսաստանը դա կանի կտրուկ, քանի որ ավտորիտար ռեժիմները, ինչպես ցույց է տալիս պատմությունը, սովորաբար կիրառում են «դեմքը փրկելու» քաղաքականությունը և զիջումները կատարում են աստիճանաբար: Միևնույն ժամանակ, գերմանական/եվրոպական կողմը հայտարարել է, որ միայն Մինսկի համաձայնության բոլոր դրույթների իրականացման դեպքում կվերացվեն պատժամիջոցները: Տեղի չի ունենալու պատժամիջոցների աստիճանական վերացում Մինսկի դրույթների աստիճանական իրականացմանը զուգընթաց: Ուստի և մեզ նպատակահարմար է թվում վերոնշյալ t ժամանակամիջոցներն ընդունել որպես մոտավորապես հավասար երկու դեպքերի համար էլ:

Այսպիսով, կարող ենք բանաձևի տեսքով սահմանել Ռուսաստանի քաղաքական ղեկավարության համար չենթարկվելու գործողությունը՝ որպես ռացիոնալ[1] որոշում ընտրելու պայմանը.

[1] Ռացիոնալ բառը կիրառվում է տվյալ խաղացողի, այսինքն՝ այս դեպքում ՌԴ ղեկավարության կողմից այս կամ այն գործոնին տրված սուբյեկտիվ կարևորության պայմաններում օպտիմալ որոշումն ընդունելու իմաստով: Այլ խաղացողի համար, որը նույն գործոնին տալիս է սուբյեկտիվ կարևորություն, այդ որոշումը կարող է լինել իռռացիոնալ:

$$A_{nR(C)} - t_n C_{S_n R} \langle B_v + A_{nR(N)} - t_n C_{S_n R}$$

Այս անհավասարումը պարզեցնելով՝ կարող ենք այն բերել հետևյալ տեսքի.

$$A_{nR(C)} \langle B_v + A_{nR(N)},$$

ինչը նշանակում է, որ վերջնական որոշման կետում Ռուսաստանի ղեկավարության որոշման վրա չեն ազդում այնպիսի գործոններ, ինչպիսիք են պատժամիջոցների ուժգնությունն ($C_{S_n R}$) ու դրանց սահմանման ժամկետը կամ տևողությունը (t_n), այն դեպքում, երբ նրանք կարծում են, որ պատժամիջոցները վերացվելու են ապագայում որոշակի ժամանակ, եթե Ռուսաստանը չփոխի իր քաղաքական կուրսն ուկրաինական ճգնաժամի հարցում և չվերադառնա ստատուս քվոյին:

Ավելին, Ռուսաստանն ընտրելու է չենթարկվելու գործողությունը որոշման վերջնական կետում: Անհավասարման աջ կողմում մենք ունենք դրական թիվ, քանի որ B_v դրական է իր սահմանման համաձայն, իսկ $A_{nR(N)}$ ևս դրական է եղել Վ.Պուտինի պաշտոնավարման ողջ ընթացքում: Ինչպես ցույց է տվել Թրեյսմանը[1] [10], ՌԴ նախագահի վարկանիշը բարձրացել է ամեն անգամ, երբ կատարվել է հայրենասիրական/ազգայնական քայլ՝ անկախ դրա տնտեսական հետևանքներից: Միևնույն ժամանակ, կարելի է պնդել, որ $A_{nR(C)}$ բացասական արժեք ունի՝ կապված ռուսական հասարակության մեջ տնտեսական հարցերի նկատմամբ երկրի՝ հզոր տերության կարգավիճակին տրվող ավելի մեծ կարևորության հետ, ինչի մասին փաստում են սոցհարցումների տվյալները:

Ուկրաինական ճգնաժամի ընթացքում երկրի նախագահ Վլադիմիր Պուտինի վարկանիշը փոփոխվել է հետևյալ դինամիկայով. 2013թ. նոյեմբերին նրան սատարում էր հարցվածների 61%-ը, մինչդեռ 2014թ. մարտին՝ Ղրիմի միացումից հետո, այդ թիվը հասավ 80%-ի: 2014թ. հուլիսին՝ տնտեսական պատժամիջոցներ մտցնելուց առաջ, նրա վարկանիշը 85% էր, սակայն պատժամիջոցների մտցվելուց, նավթի գների անկումից և ռուբլու

[1] Տե՛ս *Treisman, D. Putin's Popularity:* Why did Support for the Kremlin Plunge, then Stabilize? 2014. http://www.sscnet.ucla.edu/polisci/faculty/treisman/PAPERS_NEW/Putins%20popularity%20draft%20Jan%202014%203.pdf, հասանելի է առ 13.03.2016թ.:

արժեզրկումից հետո էլ այն չնվազեց՝ 2015թ. հունիսին հասնելով 89%-ի: Լևադա կենտրոնի վերջին տվյալների համաձայն՝ 2016թ. փետրվարին այն կազմել է 81%[1] [11]:

Ինչ վերաբերում է ՌԴ բնակչության դիրքորոշմանը երկրի քաղաքական կուրսի ուղղության նկատմամբ, ապա, պատասխանելով հետևյալ հարցին՝ «Արդյո՞ք Ռուսաստանը շարժվում է ճիշտ ուղղությամբ, թե՞ ընտրած կուրսը փակուղային է», 2013թ. նոյեմբերին հարցվածների միայն 40%-ն է հավանության արժանացրել երկրի քաղաքական կուրսը: Սակայն 2014թ. մարտին այդ թիվը կտրուկ աճում է՝ հասնելով 60%-ի: 2014թ. հուլիսին ցուցանիշը կայունացել էր 55%-ի շրջանում, և չնայած հաջորդած տնտեսական դժվարություններին՝ այն չի իջել 54%-ից մինչև 2015թ. ավարտը՝ առավելագույն արժեքը գրանցելով 2014թ. օգոստոսին և 2015թ. հունիսին՝ հասնելով 64%-ի:

Վերն առաջարկված մոդելը կանխատեսում է իրադարձությունների զարգացումը վերջավոր կրկնվող խաղի պայմաններում, այսինքն՝ այն ենթադրությամբ, որ Ռուսաստանի ղեկավարությունը կարծում է, թե պատժամիջոցները կվերացվեն որոշ ժամանակ անց, եթե դրանք չբերեն ՌԴ քաղաքական կուրսի փոփոխության: Այժմ փորձենք կառուցել խաղի մոդել նաև այն դեպքի համար, երբ այս ենթադրությունը սխալ է: Այսպիսով, Գերմանիա-Ռուսաստան փոխազդեցությունը պատժամիջոցների հարցում կարող է ներկայացվել անվերջ կրկնվող խաղի տեսքով, որտեղ պատժամիջոցների ուժգնությունն ընդունում ենք S, որը հավասար է ներկայիս պատժամիջոցների ուժգնությանը: Հետաքրքրական է, որ ճգնաժամի սկզբնական փուլում պատժամիջոցների աստիճանական աճը կանգնեց, և ԵՄ-ն անցավ նույն պատժամիջոցների վերահաստատման քաղաքականությանը: Այդ պատճառով S ընդունվում է որպես հաստատուն:

Անվերջ կրկնվող խաղի պայմաններում Ռուսաստանը կընտրի ենթարկվելու գործողությունը միայն և միայն այն դեպքում, երբ ենթարկվելուց ստացած շահույթն ավելի բարձր լինի, քան չենթարկվելու և պատժամիջոցների ծախսերն անվերջ կրելու դեպքում: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ որոշակի n որոշման կետում Կրեմլն ունի ապագայում

[1] Տե՛ս *Levada-Center, Indices.* 2015. http://www.levada.ru/eng/indexes-0, հասանելի է առ 13.03.2016թ.:

պատժամիջոցներից կրած վնասի մասին «զեղչված» պատկերացում, որը մաթեմատիկորեն արտահայտվում է δ զեղչման գործակցի միջոցով [12]: Այժմ վերացնենք նաև այն ենթադրությունը, թե Ռուսաստանի ենթարկվելու դեպքում ևս պատժամիջոցները պահպանվելու են որոշակի ժամանակամիջոցի ընթացքում: Այսպիսով, ենթարկվելու պայմանը կարելի է արտահայտել հետևյալ բանաձևի միջոցով.

$$A_{R(C)} \rangle B_v + A_{R(N)} - S - S\delta/(1-\delta),$$

որտեղ $A_{R(C)} \langle 0$, $B_v \rangle 0$, $A_{R(N)} \rangle 0$, $S \rangle 0$:

Լուծելով այս անհավասարումը՝ կարող ենք դուրս բերել δ-ի սահմանային արժեքը, որը որոշիչ է յուրաքանչյուր n որոշման կետում: Այդ արժեքն է.

$$\delta \rangle \left(B_v + A_{R(N)} - A_{R(C)} - S\right) / \left(B_v + A_{R(N)} - A_{R(C)}\right) = 1 - S / \left(B_v + A_{R(N)} - A_{R(C)}\right)$$

Վերջին անհավասարումը ցույց է տալիս, որ՝ 1. ենթարկվելու և 2. չենթարկվելու ու պատժամիջոցների պատճառած ծախսերն անվերջ[1] կրելու տարբերակների միջև ընտրելու որոշումը պայմանավորված է ներկայիս պատժամիջոցների ծախսերի (S) և ստատուս քվոյի փոփոխությունից ստացված ռազմավարական շահույթի ու լսարանային ծախսերի բացարձակ դրական արժեքի գումարի հարաբերակցությամբ: Սա վկայում է այն մասին, որ եթե որոշման ընդունման տվյալ պահին այդ հարաբերակցությունը բավական փոքր է, ղեկավարությունը հաշվի չի առնի պատժամիջոցների՝ երկարատև հեռանկարում հասցվելիք պոտենցիալ վնասը, որը կարող է նույնիսկ գերազանցել ստատուս քվոյի փոփոխության B_v ռազմավարական շահույթի և վարկանիշի բարձրացման մասին տվյալ ղեկավարության սուբյեկտիվ պատկերացումները:

[1] Խաղերի տեսության մեջ անվերջությունը կարող է ընկալվել այն իմաստով, որ խաղի յուրաքանչյուր փուլից հետո կա զրոյից տարբեր որոշակի հավանականություն, որ խաղարկվելու է ևս մեկ փուլ: Մեր դեպքում սա նշանակում է, որ ռուսաստանյան ղեկավարությունը կարծում է, թե պատժամիջոցների յուրաքանչյուր փուլին կարող է հետևել պատժամիջոցների ևս մեկ ժամանակամիջոց:

Հարկ է նշել, որ նույն եզրահանգման ենք գալիս նաև այն դեպքում, երբ պահպանում ենք ենթադրությունն այն մասին, թե պատժամիջոցները պահպանվելու են նախօրոք սահմանված որոշակի ժամանակամիջոցի ընթացքում Ռուսաստանի ենթարկվելու դեպքում: Այս դեպքի համար կստանանք հետևյալ բանաձևը.

$$A_{R(C)} - S \rangle B_V + A_{R(N)} - S - S\,\delta / (1-\delta),$$

որտեղից դուրս բերելով δ-ի սահմանային արժեքը՝ ստանում ենք.

$$\delta \rangle \left(B_v + A_{R(N)} - A_{R(C)}\right) / \left(B_v + A_{R(N)} - A_{R(C)} + S\right)$$

Այս բանաձևը ևս վկայում է այն մասին, որ՝ 1. ենթարկվելու և 2. չենթարկվելու ու պատժամիջոցների պատճառած ծախսերն անվերջ կրելու տարբերակների միջև ընտրելու որոշումը կրկին պայմանավորված է ներկայիս պատժամիջոցների ծախսերի (S) և ստատուս քվոյի փոփոխությունից ստացված ռազմավարական շահույթի ու լսարանային ծախսերի բացարձակ դրական արժեքի գումարի հարաբերակցությամբ:

Այս երկու դեպքերի համար դուրս բերված բանաձևերը բացատրում են ոչ միայն ռուսաստանյան ղեկավարության որոշումները, այլև ունեն շատ ավելի ունիվերսալ բացատրական պոտենցիալ նմանատիպ ճգնաժամերը մոդելավորելու համար: Դրանք բացատրում են նաև, թե ինչու պատժամիջոցները մեծ մասամբ անարդյունավետ են անցնում պետության վարքագիծը փոփոխելու տեսանկյունից, ինչպես փաստում է Փեյփը [6, pp. 90-136; 7, pp. 66-77], չնայած որ երկարատև հեռանկարում պետությանը երբեմն պատճառում են ավելի մեծ ռազմավարական վնաս, քան այն ստացել էր որոշակի ստատուս քվոյի փոփոխությունից, որի արդյունքում էլ մտցվել են պատժամիջոցները:

Այժմ վերադառնանք վերը ներկայացված շարունակական խաղի ծառին: Վերջնական որոշման կետում Ռուսաստանի կատարելիք քայլը պարզելուց հետո կարող ենք հետադարձ ինդուկցիայի միջոցով դուրս բերել ռացիոնալ գերմանական ղեկավարության համար խաղի սկզբում պատժամիջոցներ կիրառելու որոշումն ընդունելու համար անհրաժեշտ պայմանները: Եթե Բեռլինը հրաժարվի պատժամիջոցներ կիրառել, նրա շահույթը կլինի $-C_v + A_{0G}$, որտեղ $-C_v$ ներկայացնում է գերմանական ղեկավարության՝

ստատուս քվոյի փոփոխությունից ռազմավարական վնասի մասին սուբյեկտիվ պատկերացումը, իսկ A_{0G}՝ լսարանային ծախսերն է: A_{0G} բացասական արժեքը բացատրվում է նրանով, որ հասարակության առնվազն մի մասը դժգոհ կլինի ճգնաժամի կարգավորման հարցում կառավարության անգործությունից: Որպես օրինակ կարող է ծառայել Օբամայի վարկանիշի կտրուկ անկումը Ղրիմի միացումից հետո: Թեպետ գերմանական լսարանի պարագայում անկումը կարող էր այդքան կտրուկ չլինել, բայց, այնուամենայնիվ, A_{0G} կունենար որոշակի բացասական արժեք:

Մյուս կողմից, եթե Բեռլինն ընտրի պատժամիջոցներ կիրառելու գործողությունը խաղի սկզբում, նա կունենա $\left(-C_v + A_{nG(N)} - t_n C_{S_n G}\right)$ շահույթը (քանի որ Ռուսաստանն ընտրում է չենթարկվելու գործողությունը, ինչպես ցույց է տրվել վերևում), որտեղ $t_n C_{S_n G}$ ներկայացնում է պատժամիջոցների ծախսերը Գերմանիայի համար ($C_{S_n G}$)՝ բազմապատկած դրանց կիրառման t_n ժամանակամիջոցով: $A_{nG(N)}$ լսարանային ծախսերը (շահույթն է գերմանական ղեկավարության համար այն դեպքում, երբ Գերմանիան կիրառում է պատժամիջոցներ, իսկ ՌԴ-ն չի ենթարկվում): Կարելի է պնդել, որ $A_{nG(N)}$ -ի արժեքը մեծ է A_{0G} -ի արժեքից, քանի որ հասարակության այն խմբերը, որոնք պահանջում են որոշակի գործողությունների կիրառում ճգնաժամի կարգավորման հարցում, մասամբ բավարարված կլինեն պատժամիջոցների որոշակի n մակարդակով:

Այսպիսով, ռացիոնալ գերմանական ղեկավարության համար պատժամիջոցներ կիրառելու պայմանը հետևյալն է.

$$-C_v + A_{0G} \langle -C_v + A_{nG(N)} - t_n C_{S_n G}$$

Այս անհավասարումը կարող է բերվել հետևյալ տեսքի.

$$A_{nG(N)} \rangle t_n C_{S_n G} + A_{0G},$$

որտեղ A_{0G} բացասական թիվ է: Վերջին անհավասարումը ցույց է տալիս, որ պատժամիջոցներ կիրառելու որոշումն ուղղակիորեն կախված չէ

ստատուս քվոյի փոփոխման աստիճանից (C_v), այլ կախված է հանրային կարծիքից ու լսարանային ծախսերից: Միևնույն ժամանակ, այդ որոշումը կարող է *անուղղակիորեն* կախված լինել ստատուս քվոյի փոփոխման աստիճանից, քանի որ ավելի մեծ փոփոխությունը կարող է հանգեցնել գերմանական հանրային կարծիքի ավելի արմատական փոփոխության: Այսպիսով, կարող ենք դուրս բերել պատժամիջոցների կիրառման քաղաքականության վրա ազդող ևս մեկ գործոնի մասին հետևյալ վարկածը. *Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցները մտցվում են այն ժամանակ, երբ պատժամիջոցներ կիրառելուն հակված գերմանական հասարակության կրիտիկական ընտրազանգվածից ստացած քաղաքական կապիտալը գերազանցում է ղեկավարության կողմից գնահատված պատժամիջոցների՝ Գերմանիային հասցված վնասի արժեքի և պատժամիջոցներ չմտցնելու դեպքում լսարանային ծախսերի բացարձակ արժեքի տարբերությունը:*

Վարկածի ստուգումն իրականացնենք գործընթացային վերլուծության միջոցով: Կարող ենք տեսնել, որ տնտեսական թիրախային պատժամիջոցներ չմտցվեցին Ղրիմի միացումից անմիջապես հետո: Այս փաստը տեղավորվում է մոդելի կանխատեսումների տրամաբանության մեջ: *YouGov* ընկերության անցկացրած սոցիոլոգիական հարցման համաձայն[1] [13]՝ 2014թ. մարտի 24-25-ին գերմանացիների միայն 43%-ն է իր աջակցությունը հայտնել դրան: Դրան հակառակ, 2014թ. հուլիսի 21-22-ին արդեն գերմանացիների 53%-ն էր կողմ տնտեսական թիրախային պատժամիջոցների կիրառմանը, ինչը և տեղի ունեցավ հուլիսի 31-ին: Համապատասխանաբար՝ մարտի 24-25-ին և հուլիսի 21-22-ին գերմանական հասարակության 42% և 53%-ն էին կողմ ֆինանսական ակտիվների սառեցմանը[2] [13]: Ավելին, նույն աղբյուրի համաձայն, պատասխանելով հետևյալ հարցին. «Մտածելով Ռուսաստանի և Ուկրաինայի միջև ստեղծված իրավիճակի մասին՝ Դուք կարծում եք, որ Գերմանիայի կառավարության պատասխանը…»՝ գերմանացիների 42%-ն ընտրել է «պետք է լինի ավելի կոշտ» տարբերակը, 20%-ը՝ «հիմնականում ճիշտ էր» և միայն 18%-ն է պատասխանել. «պետք է լիներ ավելի քիչ ագրեսիվ»: Մեկ այլ

[1] Տե՛ս *Jordan, W.*, Majority of Germans now Back Sanctions, Asset Freezes against Russia. 2014, https://yougov.co.uk/news/2014/07/23/most-germans-now-back-sanctions-asset-freezes-agai/, հասանելի է առ 13.03.2016թ.:

[2] Նույն տեղում:

հարցման համաձայն[1], որն անցկացրել է Ինֆրաթեստ կազմակերպությունը, հարցվածների կեսը սատարում էր Ռուսաստանի դեմ մտցված պատժամիջոցներին՝ չնայած գերմանական տնտեսության ու աշխատատեղերի վրա հնարավոր բացասական ազդեցությանը: Հարցվածների միայն 43%-ն էր դեմ պատժամիջոցներին:

Եզրակացություն

Այսպիսով, վերլուծելով Ռուսաստանի և Գերմանիայի միջև ռազմավարական բնույթի փոխազդեցությունն ուկրաինական ճգնաժամի արդյունքում մտցված պատժամիջոցների քաղաքականության հարցում՝ դիտարկվել է այնպիսի գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են ստատուս քվոյի փոփոխությունից ստացած ռազմավարական շահույթն ու վնասը, պատժամիջոցների հասցրած տնտեսական վնասի մասին պատկերացումները երկու կողմերի ղեկավարությունների կողմից և լսարանային ծախսերի դինամիկան խաղի յուրաքանչյուր ելքի համար, որն արտահայտում է ղեկավարության քաղաքական վարկանիշի փոփոխությունը՝ կախված բնակչության մասնաբաժինների տատանումներից, որոնք սատարում են տվյալ քաղաքական կուրսին: Կատարված մոդելավորման հիման վրա կարող ենք անել հետևյալ եզրակացությունները:

Գերմանական կառավարությունը վստահ է, որ Ռուսաստանը չի վերադառնալու ստատուս քվոյին ուկրաինական ճգնաժամի հարցում նույնիսկ պատժամիջոցների ճնշման տակ: Միևնույն ժամանակ, պատժամիջոցների կիրառման որոշումն ընդունելու վրա ազդող գործոնների թվում կարելի է առանձնացնել գերմանական հասարակության դիրքորոշումն այս հարցում: Ուստի, տրամաբանական է պատժամիջոցների տևողությունը և հետագա ճակատագիրը պայմանավորել, այլ գործոնների հետ մեկտեղ, նաև գերմանական էլեկտորատի դիրքորոշման կայունությամբ:

Հաջորդ հետևությունը վերաբերում է ռուսական հասարակության դիրքորոշմանն ուկրաինական ճգնաժամի հարցում երկրի արտաքին քաղաքականության նկատմամբ: Երկրի ամենահեղինակավոր սոցիոլոգիական կենտրոններից մեկի՝ Լևադա կենտրոնի տվյալներով, որը նաև մեծ վստահություն է վայելում Արևմուտքում, երկրի բնակչության ճնշող մեծամասնու-

[1] Տե՛ս *Strempel, M., Hofmann, F. & Gothe, H.,* ARD DeutschlandTREND: Mai 2014. https://www.tagesschau.de/inland/deutschlandtrend2238.pdf, հասանելի է առ 13.03.2016թ.:

թյունն ավելի է կարևորում «հայրենասիրական» որակվող քայլերը, քան տնտեսական դժվարությունները: Այս գործոնը ևս իր ազդեցությունն է ունենում երկրի ղեկավարության որոշման վրա:

Հետաքրքրական է նաև այն հանգամանքը, որ թե՛ այն դեպքում, երբ Ռուսաստանի ղեկավարությունը կարծում է, թե պատժամիջոցները վերացվելու են ապագայում որոշակի մի ժամանակ, և թե՛ այն դեպքում, երբ նման վստահություն չկա, երկու ֆորմալ մոդելները կանխատեսում են, որ Ռուսաստանն ուկրաինական ճգնաժամի հարցում չի վերադառնալու ստատուս քվոյին:

Դուրս են բերվել հետևություններից յուրաքանչյուրը հավաստող բանաձևեր:

Մարտ, 2016թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Galtung, J.,* On the Effects of International Economic Sanctions: With Examples from the Case of Rhodesia. *World Politics*, 19(3), 1967, pp. 378-416.
2. *Doxey, M.P.,* Economic Sanctions and International Enforcement, New York: Oxford University Press, 1971.
3. *Losman, D.L.,* International Economic Sanctions: The Case of Cuba, Israe and Rhodesia, Albuquerque: University of New Mexico Press, 1979.
4. *Hufbauer, G.C., Schott, J.J. & Elliot, K.A.,* Economic Sanctions Reconsidered: History and Current Policy. Washington, D.C.: Institute for International Economics, 1985.
5. *Hufbauer, G.C., Schott, J.J. & Elliot, K.A.,* Economic Sanctions Reconsidered: History and Current Policy, 2nd ed. Washington, D.C.: Institute for Internaitonal Economics, 1990.
6. *Pape, R.A.,* Why Economic Sanctions Do Not Work. *International Security*, 22(2), 1997, pp. 90-136.
7. *Pape, R.A.,* Why Economic Sanctions Still Do Not Work. *International Security*, 23(1), 1998, pp. 66-77.
8. *Hovi, J., Huseby, R. & Sprinz, D.F.,* When Do (Imposed) Economic Sanctions Work?. World Politics, Volume 57, 2005, pp. 479-499.
9. *Boehnke, O.,* View from Berlin: Germany Leads the EU on Russia Sanctions, 2015. http://www.ecfr.eu/article/commentary_germany_leads_the_eu_on_russia_sanctions311313
10. *Treisman, D.,* Putin's Popularity: Why did Support for the Kremlin Plunge, then Stabilize? 2014. http://www.sscnet.ucla.edu/polisci/faculty/treisman/PAPERS_NEW/Putins%20popularity%20draft%20Jan%202014%203.pdf
11. Levada-Center, *Indices.* 2015. http://www.levada.ru/eng/indexes-0
12. https://www.tagesschau.de/inland/deutschlandtrend2238.pdf
13. *Osborne, M.J.,* An Introduction to Game Theory, Oxford University Press, 2003.

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԵՄ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄԸ ԽԱՂԵՐԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Դավիդ Սարկիսյան

Ամփոփագիր

Սույն հոդվածում ուսումնասիրվել են ուկրաինական ճգնաժամի սկզբնավորումից հետո Ռուսաստանի դեմ կիրառված տնտեսական պատժամիջոցները՝ որպես ռուս-գերմանական հարաբերությունների առանձին ասպեկտ: Ռազմավարական փոխազդեցության բազմակողմանի վերլուծության համար կիրառվել են շարունակական, վերջավոր և անվերջ կրկնվող խաղերի մոդելները: Հետազոտվել է երկու երկրներում ներքին, տնտեսական և աշխարհաքաղաքական գործոնների ազդեցությունը որոշումների կայացման գործընթացի վրա: Մոդելավորված կանխատեսումների հիման վրա կառուցվել են հնարավոր զարգացման սցենարներ:

МОДЕЛИРОВАНИЕ САНКЦИОННОЙ ПОЛИТИКИ ГЕРМАНИИ ПРОТИВ РОССИИ МЕТОДОМ ТЕОРИИ ИГР

Давид Саркисян

Резюме

В данной статье проанализирован аспект экономических санкций в отношениях Германии и России после начала украинского кризиса. Модели динамических, конечно и бесконечно повторяющихся игр были применены для многостороннего анализа данного стратегического взаимодействия. Исследовано влияние внутренних, экономических и геополитических факторов на процесс принятия решений в обеих странах. На основе смоделированных прогнозов были сконструированы возможные сценарии развития.

GAME THEORY MODELING OF THE GERMAN POLICY OF SANCTIONS AGAINST RUSSIA

David Sarkisyan

Resume

The paper analyses the aspect of economic sanctions in the relations between Germany and Russia in the aftermath of the outbreak of the Ukrainian crisis. Models for dynamic, finitely and infinitely repeated games were applied for comprehensive analysis of the strategic interaction. The influence of domestic, economic and geopolitical factors on the decision-making process in both countries was considered. Based on the predictions of the models, possible development scenarios were constructed.

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ «ԱՊՐԻԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ» ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Արմեն Ղալեյան*

Բանալի բառեր՝ տեղեկատվական պատերազմ, տեղեկատվական ներազդում, բիհևիորիստական գործողություններ, փափուկ ուժ, ուշադրության գրավման մոդելներ։

Այսօր ռազմի դաշտում մղվող պատերազմին համընթաց իրականացվում է նաև տեղեկատվական պատերազմ, որի նպատակը հաղթանակն է տեղեկատվական ոլորտում: Այդ տիրույթում առկա առաջընթացը մեծապես ազդում է վերջնական հաղթանակի ձեռքբերման վրա: *Ներկայումս ամենուր ընդունված է այն գաղափարը, որ միայն պատերազմի դաշտում տարած հաղթանակը բավարար չէ և պետք է հաղթանակ տանել նաև տեղեկատվական դաշտում:* Ուստի, անհրաժեշտ է մշտապես վերլուծել այդ ոլորտում առկա բացթողումները, վերանայել, վերամշակել և փոփոխել տեղեկատվության մատուցման ձևերը, մեթոդներն ու սկզբունքները:

Տեղեկատվական պատերազմի հիմքում ընկած են տեղեկատվական ներազդման գործունեությունն ու տեղեկատվական գործողությունները (օպերացիաները):

Տեղեկատվական գործողություններն ուղղված են համապատասխան մասնագետների կողմից գործողությունների, արտահայտչամիջոցների, ազդանշանների և ուղերձների (մեսիջների) օգնությամբ թիրախային լսարանի տեղեկացմանը, ներազդմանն ու համոզմանը: Ներազդում են ոչ միայն խոսքի, այլ նաև սիմվոլների և գույների միջոցով[1]:

---

* ՀՀ ԶՈՒ ԳՇ ռազմավարական պլանավորման վարչության տեղեկատվական հակապայքարի բաժնի պետ, գնդապետ:

[1] Օրինակ՝ «Ալ-Քաիդան» իր առցանց քարոզչությունում ակտիվ օգտագործում է Ղուրանը տարբեր երանգներով: Սև գույնն ասոցացվում է ջիհադի հետ և այլն:

Տեղեկատվական ներազդման գործունեությունը վերնագրերի, ուղերձների, գործողությունների սինքրոնացման միջոցով որոշակի տեղեկատվական հնարավորությունների ինտեգրումն է՝ հասարակությունների տեղեկացման, թիրախային լսարանների վրա ազդեցության, ինչպես նաև հակառակորդի և թշնամու որոշումների ընդունման վրա ներգործման նպատակով:

Տեղեկատվական գործողություններն, ի տարբերություն պարզունակ տեղեկատվական ներազդման գործունեության, ունեն կառուցման բարդ սխեմա, որի մշակումը պահանջում է բազմակողմ և խոր մասնագիտական գիտելիքներ և մոտեցումներ: Մինչդեռ տեղեկատվական ներազդման գործունեության իրականացմանը մասնակցում են նաև տեղեկատվական ոլորտում մասնագիտական գիտելիքներ չունեցող անձինք, օրինակ՝ բլոգերները, սոցիալական խմբերը և այլն:

Ներկայումս իրականանում է տեղեկատվական գործողություններից բիհևիորիստական[1] գործողությունների: Բիհևիորիզմի նկատմամբ այս ուշադրությունը համընկավ պատերազմի այսպես կոչված հումանիտարացմանը՝ ուշադրություն դարձնելով կլանող (գրավող) տեղեկատվության կազմակերպման ձևերին և մեթոդներին:

Տեղեկատվական պատերազմն այլ կերպ անվանում են նաև «փափուկ ուժ» [1]: «Փափուկ ուժը», ինչպես պնդում են ոլորտի մասնագետները, կարող է ոչ միայն գայթակղել, այլ նաև պարտադրել: Գայթակղությունն իր հերթին կարող է հիմնավորվել ինչպես բանական, այնպես էլ հուզական, մշակութային և քաղաքական բաղադրիչներով: Այդպիսի անհատական և խմբային ցանկությունների և հույզերի մեջ կարող են ընդգրկվել ժողովրդավարության և ազատության արժեքները:

Նշմարվում է շատ կարևոր տարբերություն «փափուկ» և «կոշտ» ուժերի միջև. *եթե «կոշտ ուժը» պատկանում է պետությանը, ապա «փափուկ ուժը» պետության մենաշնորհը չէ: «Փափուկ ուժի» ռեսուրսները պատկանում են զարգացած հասարակությանը:* Հետևաբար, որքան ուժեղ լինի հասարակության դինամիկան, այդքան ավելի հավանական է, որ նոր մշակութային արտադրանքները կարող են ձևափոխվել մյուսների համար հետաքրքիր «փափուկ ուժի»:

[1] Բիհևիորիզմ՝ հոգեբանական ուղղություն է մարդու և կենդանիների մոտ, բառացիորեն՝ գիտություն վարքի վերաբերյալ:

Ժամանակակից մարդն այսօր գտնվում է բարդ իրավիճակում. տեղեկատվական համատեքստերը փոփոխվում են այնպիսի արագությամբ, որ անձը դրանք երբեմն նույնիսկ չի հասցնում ընկալել և վերամշակել: Համացանցն այսօր կորցրել է իր կողմից հրամցվող տեղեկատվության գրավչությունն ու կարևորությունը, քանի որ այն ստեղծում է նույնատիպ «պրոդուկտ» նույնատիպ ընկալմամբ մարդկանց համար: Միևնույն ժամանակ, նույն խնդրի վերաբերյալ տեղեկատվությունն այնքան շատ է, որ նույնիսկ նշված թեմայով որակյալ «պրոդուկտը», ներմուծվելով համացանց, ընկալման ժամանակի սղության պատճառով համարժեք չի ընկալվում ընթերցողի կողմից, նույնացվում է նախորդ նույնատիպ նյութերի հետ՝ թողնելով նույնանման ազդեցություն: Օրինակ՝ ապրիլյան քառօրյա պատերազմի ընթացքում Ադրբեջանի ԶՈՒ-ի կողմից ԻՊ վարձկանների մասնակցության վերաբերյալ «Նորավանք» հիմնադրամի՝ իրենց կայքում տպագրված վերլուծական նյութը գրեթե նույնացվեց սոցցանցերում տեղադրված ոչ մասնագիտական և ավելի հակիրճ ներկայացված տեղեկույթի հետ: Այս և շատ այլ օրինակներ ցույց տվեցին, որ սոցցանցերի տեղեկատվությունն ավելի օպերատիվ և ազդեցիկ է, քան ԶԼՄ պաշտոնական տեղեկատվությունը: Հարկավոր է շեշտել, որ հաճախ պաշտոնական կայքերի տեղեկատվությունը ոչ արդյունավետ կազմակերպման հետևանքով ժամանակավրեպ է լինում: Հետևաբար, տեղեկատվության մատուցման ձևերի, մեթոդների և սկզբունքների վերափոխման խնդիրն առաջնահերթ է դառնում տեղեկատվական ոլորտի մասնագետների համար:

Տեղեկատվության մատուցման արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ է փոփոխել վերջինիս մշակման տեխնիկական կարգը: Օրինակ, քառօրյա պատերազմի ժամանակ ՏՏ ոլորտի փորձագետ Ս.Մարտիրոսյանի կողմից մշակվեց հայկական և ադրբեջանական կայքերի տարանջատման ծրագիր, որը հուշում էր՝ որոնք են «կասկածելի» կայքերը, որոնց հրամցրած տեղեկատվությանը պետք չէ անվերապահ հավատալ:

Ներազդման լսարանների ծավալման հետևանքով աճում է նաև հետաքրքրությունը սոցցանցերի նկատմամբ, քանի որ խմբային դրսևորումներն ու հակազդումներն ավելի կանխատեսելի են, քան անհատինը [2]: Խմբային գործընթացները ավելի արագ են տարածվում, հետևապես խմբի վրա ներազդելն առավել արդյունավետ է, քան առանձին անհատի: Սոցիալական ցանցերի նկատմամբ հատուկ հետաքրքրություն են ցուցաբերում հատկապես հա-

մակարգչային կողմնորոշում ունեցող մասնագետները, ովքեր ձգտում են առավել մեծ լսարաններ հավաքագրել: Իսկ այս պարագայում առաջնահերթ է դառնում ընթերցողի ուշադրության ներգրավման խնդիրը: Նախկինում, երբ տեղեկատվությունը սահմանափակ էր, ուշադրության գրավման խնդիրն այդքան էլ արդի չէր: Իսկ այսօր, տեղեկատվական ծավալուն հոսքերի առկայության պայմաններում, «ուշադրության գրավումը» կանխորոշիչ է դարձել: Ուստի, հարկ է կրթել նոր մասնագետներ, ովքեր կմշակեն «ուշադրության գրավման մոդելներ»՝ խմբի վրա արդյունավետ ներազդում ապահովելու համար:

Տեղեկատվական գործողությունների կառուցման հայտնի երեք մոդելները

Գրականության մեջ տարբերակվում է տեղեկատվական գործողությունների կառուցման երեք հիմնական մոդել: Լայնորեն տարածված է տեղեկատվական գործողությունների իրականացման ամերիկյան ձևը, այն ակտիվ կիրառվում է համաշխարհային պրակտիկայում և պատերազմների ժամանակ: Բրիտանական ձևն ավելի քիչ է տարածված, քանի որ այնչափ տեսական և գործնական կիրառում չի ունեցել, որքան ամերիկյան ձևը: Այս երկու մոդելները միմյանցից տարբերվում են բազային հաշվարկային կետի ընտրությամբ: Ամերիկյան մոդելի առաջացման հիմքում գովազդների և *փիառի* կառուցման մոդելն է, որի դեպքում կարևորվում է օբյեկտի նկատմամբ վերաբերմունքի փոփոխությունը: Օրինակ, իրականացնելով գրագետ տեղեկատվական գործողություն՝ ամերիկյան մասնագետները տարածել են այն միտքը, որ Սադամ Հուսեյնը բռնակալ է, ճնշում է իր ժողովրդին, վտանգի աղբյուր է տարածաշրջանի պետությունների համար, ներազդել են Սադամ Հուսեյնի հանդեպ համաշխարհային հանրության վերաբերմունքի վրա և պատերազմի միջոցով չեզոքացրել Իրաքի ղեկավարին: Նմանատիպ գործողություն իրականացվել է նաև Քադաֆիի նկատմամբ:

Իսկ բրիտանական մոդելը շեշտադրում է ոչ թե վերաբերմունքի, այլ վարքի փոփոխությունը, քանի որ ոչ միշտ է վերաբերմունքի փոփոխությունը բերում վարքի ցանկալի փոփոխության: Նույնիսկ օբյեկտի նկատմամբ դրական վերաբերմունքի պարագայում կան դեպքեր, երբ, այնուամենայնիվ, իրականացվում են բացասական գործողություններ[1]:

[1] Օրինակ, աֆղան երիտասարդները փող վաստակելու նպատակով տեղադրում են ականներ անգլիական զինվորականների դեմ, որպեսզի այդ վաստակած գումարներով մեկնեն հենց Անգլիա՝ սովորելու:

Տեղեկատվական գործողությունների կառուցման երրորդ՝ ռուսական մոդելը ստացել է ռեֆլեքսիվ անվանումը: Այս մոդելը շեշտադրում է իր պետության, զինված ուժերի, զինտեխնիկայի հզորությունը՝ փորձելով վախի մթնոլորտ սերմանել հակառակորդի շրջանում: Բավական է հիշել հայտնի ռուսական ասույթը. «Ռուսաստանի դաշնակիցներն են իր բանակն ու նավատորմը»: Եթե ամերիկյան և բրիտանական ձևերի վերաբերյալ կարելի է հաստատապես ասել, որ դրանք միայն տեսություն չեն և կիրառվում են գործնականում, ապա ռուսական ձևի մասին այդպիսի պնդում անել չենք կարող: Ռուսական մոդելի կիրառման օրինակ կարելի է համարել մի դեպքում ռուս-վրացական, մյուս դեպքում՝ ռուս-ուկրաինական հակամարտությունը: Ռեֆլեքսիվ ղեկավարում կիրառվել է Ղրիմի հիմնահարցի դեպքում. մասնավորապես՝ ներազդեցության օբյեկտ են եղել երեք թիրախային լսարաններ՝ Ղրիմի ղեկավարությունը, ուկրաինական իշխանությունը, միջազգային կառույցները, հատկապես ԵՄ-ը և ՆԱՏՕ-ն: Կանխատեսվել էին դրանց հավանական դրսևորումները, պահվածքի փոփոխությունը: Ռուսաստանյան մասնագետների նպատակակետը հակառակորդի ապակազմակերպումն է, որն իր հերթին բերում է տեղեկատվական առավելություն:

Ռեֆլեքսիվ ղեկավարմամբ ընթացող պատերազմներում ամենից շատ «ռեֆլեքսիվ» որակական հատկանիշներ ունեցող կողմն ունենում է հաղթելու ավելի լայն հնարավորություն: «Ռեֆլեքսիայի» որակը կախված է տարբեր գործոններից. առավել կարևորներն են՝ հակառակորդի վերաբերյալ ունեցած, բազմակողմանի գիտելիքներն ու փորձն այդ ոլորտներում (օրինակ՝ Ղարաբաղյան պատերազմի ժամանակ մեր հրամանատարները կիրառեցին գիտելիքները և փորձը հակառակորդի հոգեբանական որակների, հնարավոր գործողությունների, հակազդումների վերաբերյալ):

Որոշումների ընդունման կենտրոնական կետը (թիրախակետը) կարևոր բաղադրիչ է բոլոր այդ երեք մոտեցումներում: Հարցը միայն թիրախային լսարանի [3] որակային գիտելիքների, նրա հակազդեցության մակարդակի աստիճանի և այլ տեսակետի որոշման ընդունման հնարավորությունների մեջ է: Այս ամենը հանգեցնում է այն բանին, որ առաջնայնանում են հենց լսարանների հետազոտությունները:

Անհրաժեշտ է սահմանազատել ներազդման գործողությունները հոգեբանական գործողություններից, որոնք հաճախ լրացնում են միմյանց: Հոգեբանական գործողությունը ներազդման գործողության մի մասն է:

Հակառակորդի նկատմամբ ռեֆլեկտիվային վերահսկողությունն այն է, որ հակառակորդն ընդունի կոմունիկատորի տեսանկյունից ճիշտ որոշում, որն անհրաժեշտ է ոչ թե հակառակորդին, այլ կոմունիկատորին:

Եզրակացություն

Ամփոփելով ապրիլյան մարտական գործողությունների օրերին տեղեկատվական դաշտի վերլուծությունը՝ տեսնում ենք, որ մեր տեղեկատվական ոլորտի մասնագետների գրագետ գործողությունների և իրականացված տեղեկատվական գործողության (տեղեկատվական ակցիաների շարքի) շնորհիվ առաջին օրերին հակառակորդի լրատվական դաշտը շոկային վիճակում էր՝ լրատվամիջոցները հիմնականում լռում էին, դրանց տրամադրած ինֆորմացիան համակարգված չէր և ընդամենը մեր ներկայացրածի արձագանքն էր: Հակառակորդի քարոզչամեքենան կտրված էր սահմանում տիրող իրավիճակից և այդ բացը լրացնելու նպատակով, նախապլանավորած «սցենարին» համաձայն, ապատեղեկատվություն էր տարածում իրենց բանակի հաջողությունների վերաբերյալ՝ չհասկանալով, որ «կայծակնային պատերազմի» (բլիցկրիգի) իր պլանները ձախողվել են: Հայկական կողմը հենց սկզբից գրագետ ձևով իրականացրեց տեղեկատվական հակապայքարի (գործողությունների) հիմնական սկզբունքները՝ ապահովելով ակտիվություն, նպատակաուղղվածություն, տարատեսակություն և նախականխում: Հատուկ շեշտենք, որ խստորեն պահպանվեց գործողությունների գաղտնիությունը:

Իրականացվեց արդյունավետ համագործակցություն ԶԼՄ-ի, տեղեկատվական ոլորտի անհատ մասնագետների, «Նորավանք» հիմնադրամի, «Լեգեոն» տեղեկատվական խմբի, ինչպես նաև բազմաթիվ համացանցային կայքերի հետ:

Մյուս կողմից՝ ի հայտ եկան նաև բացեր, որոնց ճիշտ ընկալումն ու համապատասխան դասերը հնարավորություն կընձեռեն հետագայում սպասվելիք տեղեկատվական գործողությունների ժամանակ ջանքերը նպատակաուղղել ոչ թե ընթացիկ հարցերի կարգավորմանը, այլ ավելի երկարաժամկետ՝ ռազմավարական բնույթի խնդիրների լուծմանը: Այս խնդիրը պահան-

ջում է ինչպես տեղեկատվական բնագավառում ներգրավված անձանց գիտելիքների և հմտությունների շարունակական կատարելագործում ու տեխնիկական հնարավորությունների ընդլայնում, այնպես էլ ավելի համակարգված ու նպատակամետ քաղաքականության մշակում:

Ապրիլ, 2016թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Ю.Давидов,* Понятие «жесткой» «мягкой» силы в теории международных отношений, Журнал теории международных отношений и мировой политики, «Международные процессы», http://www.intertrends.ru/four/006.htm
2. *Pentland A.,* Social physics, New York, 2014.
3. *Ա.Ղալեչյան,* Տեղեկատվական գործողությունների նշանակության և արդյունավետության գնահատման մեխանիզմների կարևորությունը արդի զինված ուժերում, «Նորավանք» ԳԿՀ, «21-րդ ԴԱՐ», #1, 2016, էջ 96:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ «ԱՊՐԻԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ» ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Արմեն Ղալեչյան

Ամփոփագիր

Ապրիլյան «քառօրյա պատերազմի» օրերին տեղեկատվական դաշտի վերլուծությունը ցույց տվեց, որ հայկական կողմի տեղեկատվական ոլորտի մասնագետների գրագետ գործողությունների և իրականացված տեղեկատվական գործողության շնորհիվ առաջին օրերին հակառակորդի լրատվական դաշտը շոկային վիճակում էր. լրատվամիջոցները հիմնականում լռում էին, դրանց տրամադրած տեղեկությունները ընդամենը հայկական կողմի արձագանքն էին: Հակառակորդի քարոզչամեքենան կտրված էր սահմանում տիրող իրավիճակից և ապատեղեկատվություն էր տարածում իր բանակի հաջողությունների վերաբերյալ: Հայկական կողմն իրականացրեց տեղեկատվական հակապայքար՝ ապահովելով ակտիվություն, նպատակաուղղվածություն, տարատեսակություն և նախականխում: Խստորեն պահպանվեց գործողությունների գաղտնիությունը:

ОСОБЕННОСТИ ИНФОРМАЦИОННЫХ ОПЕРАЦИЙ В КОНТЕКСТЕ «АПРЕЛЬСКОЙ ВОЙНЫ»

Армен Галечян

Резюме

Анализ информационного пространства в ходе четырехдневной апрельской войны показал, что благодаря грамотным действиям наших специалистов информационной сферы и осуществленным ими информационным операциям в первые дни информационное пространство противника оказалось в коллапсе: СМИ в основном молчали, предоставленные ими сведения были лишь реакцией на наши материалы. Пропагандистская машина противника была оторвана от ситуации на границе и распространяла дезинформацию об успехах своей армии. Армянская сторона предприняла информационную контратаку, обеспечив активность, целенаправленность, разнообразие своих действий и упреждение шагов противника, при этом со строгим соблюдением секретности.

SOME PECULIARITIES OF INFORMATION OPERATIONS IN THE CONTEXT OF THE “APRIL WAR”

Armen Ghalechyan

Resume

The analysis of information environment during the four-day April war indicates that thanks to savvy actions of our IT specialists and the executed information operation, the adversary’s information environment was shocked in the first days thereafter: most media just kept silence or merely responded to our information. The adversary’s propaganda machine was disconnected from the ongoing situation at the frontline and spread disinformation about “successes” of their armed forces. The Armenian side carried out an information counterstrike, ensuring active, targeted, diverse and preventive actions. The confidentiality of operations was strictly enforced.

ԶԼՄ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Նվարդ Մելքոնյան[*]

Բանալի բառեր՝ ԶԼՄ, մեդիա, տեղեկատվության արտադրում և տարածում, քարոզչություն, մեդիա-ազդեցություն, սոցիալական ցանցեր։

Զանգվածային լրատվամիջոցներն արդի հասարակության կարևոր ինստիտուտներից են: Դրանք լուրջ դեր են խաղում հասարակական գիտակցության ձևավորման գործում: Տեղի ունեցող կարևոր երևույթների և իրադարձությունների մեկնաբանությունն ու ընկալումը կատարվում են ԶԼՄ-ի միջոցով: Այս հանգամանքներն ավելի մեծ արդիականություն և նշանակություն են ձեռք բերում քաղաքական ոլորտում. զանգվածային լրատվամիջոցները քաղաքական գործընթացների իրականացման կարևոր գործիքներից մեկն են դառնում:

ԶԼՄ զարգացման պատմությունն ավանդաբար ընդունված է դիտարկել տեխնոլոգիական և սոցիալական նորարարությունների համատեքստում: Զանգվածային հաղորդակցության առանձին միջոցների և դրանց համակարգերի ձևավորումը տեղի է ունեցել երկու գործոնների փոխազդեցության պատմական գործընթացում.

1. սոցիալական՝ որպես արդյունք տեղեկատվական պահանջմունքների ընդլայնման և բարդացման,
2. գիտատեխնիկական՝ որպես արդյունք տեղեկատվության փոխանցման և զանգվածային լսարանի հետ կապի նոր միջոցների տիրապետման:

Ի.Գուտենբերգի կողմից տպագրասարքի հայտնագործումը՝ որպես տեխնոլոգիական ինովացիա, կարևորեց գրավոր խոսքի դերը: Գրահրատարակչության զարգացումը պայմանավորեց առաջին թերթերի ի հայտ գալը 16-րդ դարի վերջին: Վենետիկում 1565 թվականից լույս տեսնող նորությունների թերթիկներն արժեին մեկ արծաթե դրամ՝ «գազետա», ինչից հետո աշխարհի

[*] ԵՊՀ, Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ, սոց.գ.թ.։

շատ լեզուներում թերթին մնաց այդ դրամի անվանումը՝ «գազետա»: «Գազետաները» լայն տարածում գտան Եվրոպայում: Մամուլի՝ որպես սոցիալական ինստիտուտի, հայրենիք կարելի է համարել Արևմտյան Եվրոպան. առաջին թերթերը տպագրվեցին 1605թ. (Լրաթերթերի համաշխարհային ասոցիացիան (*World Association of Newspapers*) 2005թ. ընդունեց, որ Ստրասբուրգում Յոհան Կառոլուսը *Relation* թերթը հրատարակել է 1605թ. սկզբին): Շատ հետազոտողներ վկայակոչում են նաև նույն թվականին Բելգիայում լույս տեսած *«Nieuwe Tijdinghen»*-ի («Նոր լուրեր») մասին, որը լույս է տեսել Անտվերպենում՝ Աբրահամ Վերհոևենի տպագրատանը[1]: 1702թ. մարտից Լոնդոնում լույս տեսավ առաջին օրաթերթը՝ *«Daily Courant»* («Օրվա լրատու») անունով:

«Journal» (ֆրանս.՝ ամսագիր) բառը սկզբում գործածվում էր որպես «օրագիր» հասկացության հոմանիշ: Ֆրանսիայում առաջին ամսագիրը 1665թ. լույս տեսած *«Le journal des savants»*-ն էր: Փաստորեն, ամսագրերի հրատարակումն սկսվել է թերթերից մոտ 100 տարի հետո:

Սոցիալական ազդեցության տեսանկյունից տպագիր մամուլի ստեղծումն ու դրա հանդեպ հասարակության ուշադրության ուժգնացումը 18-րդ դարում պայմանավորված էին սոցիալ-քաղաքական տիրույթում նոր դասակարգի՝ բուրժուազիայի զարգացմամբ: Մամուլը բուրժուազիայի համար դարձավ տնտեսական, քաղաքական և մշակութային նպատակների իրականացման միջոց: Եվրոպական երկրների բուրժուական հեղափոխությունների ժամանակ քաղաքացիների ըմբոստ վարքը, սոցիալական արդարության պահանջը, սոցիալական բողոքը, ըստ ուկրաինացի գիտնական Գ.Պոչեպցովի, արտահայտվում և ձևավորվում էին տպագիր մամուլի միջոցով, որը հեղափոխության գաղափարակիրներին և ժողովրդին կապող միակ և հիմնական ազդեցության գործիքն էր [1, c. 223.]: Հենց այդ ժամանակ էլ կիրառվեց «չորրորդ իշխանություն» կապակցությունը (անգլիացի վիպասան Գ.Ֆիլդինգի և փիլիսոփա Է.Բյորկինի կողմից): Արդյունքում՝ մամուլը դարձավ տնտեսական և քաղաքական փոխազդեցության և կոնֆլիկտների դրսևորման ու կառավարման հիմնական գործիք, ազատական տնտեսության և սահմանադրական ժողովրդավարության, ինչպես նաև բյուրոկրատական տնտեսության, ավտորիտար և տոտալիտար քաղաքական վարչակարգերի կայացման

[1] http://www.exlibris.ru/media/publications/detail/iz_istorii_informatsionnykh_voyn_perioda_vooruzhennykh_stolknoveniy/#26

անհրաժեշտ նախապայման [2, c. 18-20]:

Տպագիր մամուլի՝ որպես զանգվածային լրատվամիջոցի, գործառումն ուներ սոցիալական և քաղաքական հզոր նշանակություն: Շնորհիվ մամուլի ձևավորվեց «հասարակական կարծիք» երևույթը, առանց որի հետ հաշվի նստելու այսօր չեն կարող զարգանալ ո՛չ քաղաքականությունը, ո՛չ էլ բիզնեսը: Մամուլը դարձավ սոցիալական ինտեգրման և ազգային գիտակցության ձևավորման կարևոր մեխանիզմ:

Հաջորդ տեխնոլոգիական նորարարական ձեռքբերումը տեսաձայնային (աուդիո-վիզուալ) ԶԼՄ-ի՝ ռադիոյի և հեռուստատեսության առաջացումն էր, որը տեղեկատվության տարածման և ընկալման տիրույթում ստեղծեց հեղափոխական նորույթ՝ ընձեռելով ձայնի և պատկերի փոխանցման հնարավորություն: Ի տարբերություն տպագիր լրատվամիջոցների, որոնք առաջացել էին որպես տեղեկատվության տարածման միջոց, աուդիո-վիզուալ մեդիան սկզբում գործառում էր որպես կապի միջոց: 19-րդ դարի վերջին Գ.Մարկոնիի և Ա.Պոպովի անլար հեռագրման արդյունավետ գիտափորձերը, ռադիոընդունիչի ստեղծումը (Պոպովը 1900թ. Փարիզի համաշխարհային ցուցահանդեսում արժանացավ ոսկե մեդալի, իսկ Մարկոնին, Բրաունի հետ միասին, 1909թ.՝ Նոբելյան մրցանակի), վկայում են փայլուն և հեռանկարային կապի միջոցի հայտնագործման մասին, որն ակտիվորեն սկսեց կիրառվել պատերազմական գործընթացներում:

Ռադիոկապը թույլ է տալիս անմիջապես ինֆորմացիա փոխանցել անսահմանափակ տարածության վրա, իսկ ազդանշանի ստացումը տեղի է ունենում հենց փոխանցման պահին: Ռադիոյի համար բնութագրական է ոչ վիզուալ հեռարձակումը, ինչն առաջին հայացքից թերություն է թվում, սակայն դա թույլ է տալիս առավելագույն չափով իրացնել ձայնի հնարավորությունները, ինչը հնարավոր չէ հեռուստատեսության դեպքում: Ռադիոն փոխանցում է ոչ միայն խոսքային հաղորդագրություններ, այլև երաժշտություն, աղմուկ և այլն:

Ռադիոն դարձավ քարոզչության կարևոր գործիքներից մեկը, որն օգտագործվում էր թե՛ արտաքին լսարանի վրա ազդեցության (հատկապես պատերազմական իրավիճակներում քարոզչություն իրականացնելու համար, քանի որ հնարավորություն էր տալիս առանց ֆիզիկական ներկայության

տեղեկատվություն փոխանցել մեծ տարածությունների վրա), թե՛ ներքին լսարանին տարբեր գաղափարների շուրջ համախմբելու նպատակով:

Առաջին անգամ ռադիոյի միջոցով այլ երկրների բնակչության վրա տեղեկատվական ազդեցություն են գործել գերմանացիները 1915թ.: Հետագայում նմանատիպ հեռարձակում իրականացվեց ԱՄՆ-ում, որտեղ 1924թ. «Պանամերիկյան միություն» անվան տակ հեռարձակում իրականացվեց Լատինական Ամերիկայի երկրների ուղղությամբ: 1930-ական թթ. երկրորդ կեսին ամերիկացի միլիոնատեր Ռոքֆելերի միջոցներով հիմնվեց Համաշխարհային ռադիոհեռարձակման ֆոնդը, որը պարբերաբար հեռարձակում էր կատարում լատինաամերիկյան և եվրոպական լսարանների համար [3, c. 292.]:

Արտաքին լսարանների համար ռադիոհեռարձակումներ իրականացնող երկրներից էր նաև ԽՍՀՄ-ը, որտեղ 1927-1930թթ. ռադիոհաղորդումներ էին պատրաստում 58 լեզուներով: 1938թ. Մոսկվայում տեղադրվեց ռադիոհեռարձակիչ կայան, որի հեռարձակումները կարելի էր լսել հինգ մայրցամաքներում միաժամանակ:

Ինչպես նշվեց, ռադիոն նաև ներքին լսարանին ուղղված քարոզչության արդյունավետ միջոց է: Ըստ կանադացի հանրահայտ գիտնական Մարշալ ՄքԼուհանի՝ Հիտլերն իր քաղաքական կեցությամբ մեծապես պարտավոր է նախ և առաջ ռադիոյին: Այս կարծիքն արտահայտել էին նաև Ֆրանկֆուրտի դպրոցի սոցիոլոգները, որոնք համարում էին, որ Հիտլերին իշխանության բերեցին լրատվամիջոցները, մասնավորապես՝ ռադիոն: Նրանց հայացքների համաձայն՝ մեդիան զանգվածային գիտակցության վրա ազդեցության շնորհիվ ժողովրդավարության վերացման և տոտալիտար դիկտատուրայի ձևավորման նախապայմաններ է ապահովում՝ անհատականության ճնշում, զանգվածային մշակույթի գերակայում, առանձնահատուկ ավտորիտար անձի ձևավորում [4]:

Ամերիկյան քարոզչության արդյունավետությունը, ըստ մասնագետների, «սոցիալական քարոզչության» ուղղվածության մեջ է: Դա անհրաժեշտ քարոզչական ազդեցության իրագործումն էր սոցիալական ոլորտի խնդիրների լուսաբանման միջոցով՝ առանց քաղաքական փաստարկներին անդրադառնալու: Նման քարոզչության նպատակը համապատասխան զգացումների ներշնչումն ու դրանց կառավարումն էր: Հիմնականում իրականացվում էր Արևմուտքի բարեկեցության գաղափարի քարոզի միջոցով: Մինչդեռ խորհրդային քարոզչությունը շեշտը դնում էր «լուսավորության քարոզչության»

վրա, որը ենթադրում էր տրամաբանական համոզում խորհրդային կարգերի առավելության վերաբերյալ, ինչի հիմքը նպատակակետի գիտակցությունն էր, ոչ թե զգացումների[1]:

Ռադիոյի ազդեցության հիմնական կրողն, ըստ էության, միջին խավն է, որի համար այն հանդիսանում է առավել վստահելի, օպերատիվ և արդյունավետ լրատվամիջոց:

1900թ. Փարիզում, Միջազգային էլեկտրատեխնիկական կոնգրեսում, ռուս ինժեներ Կ.Պարսկին առաջին անգամ օգտագործեց «հեռուստատեսություն» (*«television»,* հունարեն *tele*՝ «հեռու» և լատիներեն *viseo*՝ «տեսնել») եզրույթը, որը կիրառություն ունի առ այսօր:

1902թ. Ա.Պոլումորդվինովը պատենտավորում է հեռուստացույցի նախատիպը հանդիսացող պատկերների փոխանցման ապարատը և ձայնի միաժամանակյա փոխանցման հետ կապված միջոցը[2]: 1907թ. Հ.Ադամյանը պատենտավորեց արդեն երկգույն հեռուստացույցի ապարատը (*հեռատեսը*), որը թույլ էր տալիս փոխանցել պատկերները լարերով 600 կմ հեռավորության վրա:

Հեռուստատեսությունը մեր կյանք լիարժեք մուտք է գործել 20-րդ դարի 30-ական թթ. (ԽՍՀՄ-ում 1931թ. ապրիլի 29-ին կայացավ առաջին փորձնական հեռուստասեանսը: 1935թ. հեռուստահեռարձակումը սկսվեց Գերմանիայում և Ֆրանսիայում, Բրիտանիայում՝ 1936-ին), իսկ 60-ականներին արդեն դարձել է ԶԼՄ լիիրավ անդամ:

Հեռուստատեսությունը՝ որպես լրատվամիջոց, ամենազանգվածայինն է բոլոր մեդիաներից, քանի որ ընդգրկում է բնակչության նաև այն շերտերը, որոնք դուրս են մնում այլ լրատվամիջոցների ազդեցության շրջանակներից: Հեռուստատեսության այս յուրօրինակությունը բացատրվում է տեղեկատվության ստեղծման, փոխանցման և ընկալման առանձնահատկություններով՝ տրամադրվող տեղեկատվության երկակի (ձայնի և պատկերի միջոցով) բնույթով, ինչը տեղեկատվությունն ավելի մատչելի ու պարզ է դարձնում լայն զանգվածների համար:

Հեռուստատեսության յուրօրինակ էությունը բխում է ռադիոհեռարձակման և կինեմատոգրաֆիկայի սպեցիֆիկ առանձնահատկություններից: Հե-

[1] *Վ.Միրաքյան,* Ռադիոն որպես ազդեցության գործոն, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=4178

[2] Аппарат для передачи изображения и способы этой передачи с одновременной передачей звука.

ռուստատեսությունը հնարավորություն ունի ռադիոալիքների միջոցով ազդանշանները փոխանցել հեռավոր տարածություններում: Այդ ազդանշանները միաժամանակ ունեն ձայնա- և տեսատեղեկատվություն, որը հեռուստացույցի էկրանին, կախված փոխանցման բնույթից, կրում է արտահայտված կինեմատոգրաֆիկ բնույթ[1]:

Հեռուստատեսությունը ոչ միայն ամենաազդեցիկ, այլև ամենահասանելի լրատվամիջոցն է: Հեռուստացույցը ժամանակակից մարդու առօրյայի նշանակալի մասն է, որը փորձում է խիստ որոշակի կերպով շրջանակել ու պատկերել այդ առօրեականությունը[2]: Ըստ հայտնի ֆրանսիացի սոցիոլոգ Պ.Բուրդյեի՝ «Հեռուստատեսությունը կարող է, որքան էլ պարադոքսալ հնչի, ցուցադրելով թաքցնել փաստերը կամ դրանք ներկայացնել այնպես, որ այդ փաստերը կորցնեն իրենց նշանակությունը կամ իրականությանը չհամապատասխանող նշանակություն ստանան»[3]:

Հեռուստատեսային հաղորդակցության տեսաձայնային բնույթն ուժգնանում է տեղեկատվության անձնավորմամբ, քանի որ հեռուստատեսությունը մեծ մասամբ ենթադրում է հեղինակի, վարողի կամ տեղեկատվությունը հաղորդող մասնակիցների և հեռուստադիտողի միջև անձնային կապեր: Հեռուստատեսությունն ունակ է տեսաձայնային ձևաչափով գործողությունների մասին տեղեկացնել հենց դրանց կատարման պահին (ուղիղ եթեր): Իրադարձության և դրա ներկայացման միաժամանակայնությունը հեռուստացույցի էկրանին (սիմուլտանտություն), երևի թե, հեռուստատեսության յուրօրինակ առանձնահատկությունն է: Սիմուլտանտությունը հեռուստատեսային հաղորդումներում մշտապես առկա չէ, սակայն մեծ նշանակություն ունի հեռուստադիտողի ընկալման համար հոգեբանական տեսանկյունից, քանի որ կարծես հաստատում է էկրանին տեղի ունեցող իրադարձությունների հավաստիությունն ու իրավացիությունը[4]:

---

[1] *Науменко Т.В.,* СМИ и журналистика: Конспект по журналистике (основы), 2010, http://sci-book.com/smi-jurnalistika/televidenie-39911.html

[2] *Դիանա Գալստյան, Սոնա Մանուսյան, Աննա Ժամակոչյան,* Հեռուստատեսության բովանդակությունը. ծրագրային ուղղվածությունները և բովանդակության ձևավորման գործոնները, 24.06.2013, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=7147

[3] *Бурдье П.,* О телевидении, http://bourdieu.name/content/bourdieu-o-televidenii

[4] *Кузнецов Г.В., Цвик В.Л., Юровский А.Я.,* Телевизионная журналистика: Учебник. 4-е издание // Т. 31, М., Изд-во «Высшая школа», 2002.
http://uchebnik.biz/book/260-televizionnaya-zhurnalistika/8-specifika-televideniya.html

Սակայն հեռուստատեսային իրականությունը միշտ չէ, որ համընկնում է օբյեկտիվ իրականության հետ: Փորձագետների կարծիքով՝ հեռուստացույց շատ դիտող մարդկանց պատկերացումներն իրականության վերաբերյալ մոտ են հեռուստատեսային իրականությանը: Այս երևույթն անվանում են *իրականության սոցիալական կառուցում:* Սա *կուլտիվացիայի* (մեդիա-ազդեցության տարատեսակ) կողմերից մեկն է: Սրա վառ օրինակներից է այն, որ հեռուստացույցի դիմաց երկար ժամանակ անցկացնող մարդիկ ավելի հավանական են համարում, օրինակ, ավիավթարի արդյունքում կամ հանցագործների ձեռքով մահանալու հավանականությունը, քան նրանք, ովքեր քիչ ժամանակ են տրամադրում ժամանցի այս ձևին [5]: Մ.ՄքԼուհանի կարծիքով՝ հեռուստատեսությունն ազդում է անկախ իր բովանդակությունից: «Հեռուստատեսության ազդեցությունը շատ դժվար է գիտակցել, որովհետև այն ազդել է մեր կյանքի բոլոր՝ անձնական, սոցիալական, քաղաքական ոլորտների վրա» [6, c. 14]:

Բրիտանացի սոցիոլոգ Էնթոնի Գիդենսի կարծիքով՝ 1980-ականների վերջերին Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրների հակասոցիալիստական ընդվզումները, ըստ էության, «հեռուստատեսային հեղափոխություններ» էին: Գիդենսը կարևորում էր հեռուստատեսության մեծ դերն այդ հեղափոխություններում [7, c. 31]: Ժամանակակից հեռուստատեսությունը, ինչպես և նորագույն այլ տեխնիկական միջոցները, թույլ են տալիս ներխուժել այլ երկրների տեղեկատվական տարածություն և ազդել տեղի հանրային կարծիքի վրա: Ազատ տեղեկատվական հոսքերն, առաջին հայացքից, բոլոր երկրներին հավասար հնարավորություններ են ընձեռում աշխարհի ցանկացած կետ տեղեկատվություն տարածելու համար: Սակայն իրականում «ազատ տեղեկատվական» հոսքերի հնարավորություններից կարող են օգտվել միայն գերհզոր տերությունները, որոնք էլ դառնում են այլ երկրներ գաղափարախոսության և արժեքների քարոզչության արտահանող[1]:

Տպագիր մամուլի գերակայությունը տևեց 320 տարի, էլեկտրոնային ԶԼՄ-ն՝ ռադիոն և հեռուստատեսությունը, գերիշխեցին 65 տարի, իսկ 20-րդ դարի 80-ական թթ., սրընթաց գլոբալիզացիոն և մասշտաբային փոխակերպումների պայմաններում, մեդիա-դաշտ ներխուժեց նորագույն զանգվածային լրատվամիջոցը՝ ցանցային էլեկտրոնային ԶԼՄ-ն:

[1] *Վ.Միրաքյան,* Հեռուստատեսության ազդեցության հնարավորությունները, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=4646

1968թ. Ամերիկյան հեռանկարային հետազոտությունների գործակալությունը (*Advanced Research Projects Agency*) ԱՄՆ պաշտպանության նախարարության պատվերով սկսեց մշակել համակարգչային ցանց, որը պետք է ապահովեր երկրի արդյունավետ կառավարումը ծայրահեղ վիճակներում: 1969թ. ցանցին միացված էր ընդամենը 4 համակարգիչ, իսկ 1972-ին համակարգիչների թիվն արդեն 37 էր: Սակայն տեղեկատվության փոխանցման նպատակով էլեկտրոնային ցանցերի օգտագործման հնարավորություն ստեղծվեց 1980-ականներին: 1985թ. ստեղծվեց դոմենների համակարգ, որը թույլ է տալիս տարանջատել տեղեկատվական հոսքերի փոխանցումն ու պահպանումը: Առաջին 6 դոմեններն էին՝ mil (ռազմական կազմակերպությունների ցանց), edu (համալսարանների ցանց), com (կոմերցիոն կազմակերպությունների ցանց), org (հասարակական կազմակերպությունների ցանց), net (այնպիսի կազմակերպությունների ցանց, որոնք պատասխանատու են հենց համացանցի գործառման համար)[1]: Հետագայում առաջ եկան տարածքային դոմեններ, որոնք տեղեկատվությունը բաշխում են ըստ պետությունների: Օրինակ՝ ՌԴ - .ru, ԱՄՆ - .us, Ավստրալիա - .au, Հայաստան - .am և այլն:

1991թ. Թիմ Բարնես-Լին (*Tim Berners-Lee*) ձևակերպեց հիմնական սկզբունքները, որոնց հիման վրա ձևավորվեց համաշխարհային համացանցը՝ *World Wide Web*-ը. 1992-ը հայտարարվեց WWW դարաշրջան, իսկ կայքերի թիվն այդ ժամանակ արդեն հասել էր 1 միլիոնի:

Այսօր մենք նոր երևույթի՝ համացանցի սրընթաց զարգացման ու տարածման ժամանակակիցներն ենք: Համացանցը հաղորդակցման նոր տեխնիկական միջոց է, որը զգալիորեն գերազանցում է մինչ այդ հայտնագործված միջոցները տեղեկատվության փոխանցման արագության ու հնարավորությունների առումով:

Ըստ ՄԱԿ Միջազգային էլեկտրոնային կապի միության տվյալների՝ այսօր աշխարհում համացանցից օգտվողների թիվը հասնում է 3 մլրդ 200 մլն-ի, որը Երկրի բնակչության գրեթե կեսն է: Վերջին 15 տարիներին համացանցի օգտատերերի տեսակարար կշիռն ավելացել է գրեթե 7 անգամ՝ աշխարհի բնակչության 6,5%-ից հասնելով 43%-ի[2]:

[1] *А.Акопов,* “Средства массовой информации во времени и пространстве: тенденции развития и трансформаций”, №14 [212] 15.09.2010, http://www.relga.ru/Environ/WebObjects/tgu-www.woa/wa/Main?textid=2742&level1=main&level2=articles.

[2] ՄԱԿ Միջազգային էլեկտրոնային կապի միության մամուլի հաղորդագրությունը, http://www.itu.int/net/pressoffice/press_releases/2015/pdf/17-ru.pdf:

Համացանցի զարգացումը պայմանավորված է տեղեկատվության ստեղծման և սպառման ծավալների աճով, լայն զանգվածներին ուղղված տեղեկատվության, այսինքն՝ այդ գործընթացներում բնակչության ավելի լայն զանգվածների ներգրավմամբ: Ցանցային հաղորդակցական տեխնոլոգիաները խթանում են սոցիալական բազմաթիվ գործընթացներ՝ այս կամ այն չափով ներազդելով հասարակական կյանքի բոլոր ոլորտների վրա:

Ցանցային հաղորդակցման միջոցները՝ որպես սոցիալական գոյացություն, փաստորեն, մարդկանց փոխազդեցության ապահովման նորագույն ձևեր են, որոնք երկակի բնույթ ունեն: Ընդլայնելով անհատների փոխազդեցության ծավալն ու բովանդակությունը՝ ցանցային հաղորդակցման միջոցները միաժամանակ ավելի են բարդացնում սոցիումը՝ նվազեցնելով սոցիալական հաղորդակցությունների և սոցիալական համակարգի կայունությունը:

Համացանցը, որպես մեդիա հաստատվելուց հետո, արտահայտվեց 3 հիմնական ձևով՝ 1. տեղեկատվական որոնողական համակարգեր, 2. տպագիր հրատարակչությունների ցանցային տարբերակներ, 3. ցանցային թերթեր և ամսագրեր: 2000-2001թթ. համացանցում հայտնվեցին և՛ ռադիոն, և՛ հեռուստատեսությունը: Թվային տեխնոլոգիաները հնարավորություն ընձեռեցին ոչ միայն որակապես նոր բովանդակություն (*content*) ձևավորել, այլև ԶԼՄ-ի համար ստեղծեցին նոր մեդիա-միջավայր:

Այսպես կոչված մուլտիմեդիային հեղափոխությունից հետո թվում էր, թե լրատվամիջոցների տիրույթում գործառնական բնույթի փոփոխություններ այլևս չեն ակնկալվում: Սակայն համացանցը՝ որպես նոր սերնդի զանգվածային լրատվության միջոց, դարձյալ մեդիա-միջավայր ներմուծեց յուրահատուկ բնութագրիչներ: Եվ եթե անցյալ դարի վերջին համացանցային լրատվամիջոցներն ավանդական մեդիայի էլեկտրոնային տարբերակներ էին, ապա նոր հազարամյակի սկզբում որակական բեկում տեղի ունեցավ: Մասնագիտական գրականությունում այդ երևույթը ստացավ Web 2.0 հայեցակարգ անվանումը[1]:

Web 2.0 տեխնոլոգիաների հիմնական առանձնահատկությունն այն է, որ համացանցի օգտագործումը ոչ միայն հաղորդակցական միջավայր է, այլև հարթակ:

[1] http://newsroom.fb.com/Key-Facts

Այսպիսով, Web 2.0-ն 1990-ականների համացանցից տարբերվում է առավել արտահայտված ճկունությամբ, ինտերակտիվությամբ և օգտվողների ակտիվ ներգրավմամբ:

Web 2.0 տեխնոլոգիաներին հատուկ են սոցիալական ցանցերի լայն տարածումը, հաճախորդների կողմից կայքերի բովանդակության ձևավորումը և զարգացումը, կոնտեքստային գովազդի կիրառումը, տեսա- և ձայնահոսքերի լիարժեք օգտագործումը և այլ տեխնոլոգիաներ, որոնք տարբերում են Web 2.0-ն իր «նախնուց»՝ 1990-ականների համացանցից, որն ասոցիացվում է ստատիկ կայքի՝ Web–բրոշյուրի հետ:

Web 2.0-ի ակնառու ձեռքբերումը սոցիալական մեդիայի ստեղծումն էր, որտեղ բովանդակության հիմնական չափաբաժինը պատկանում էր օգտատերերին: Ըստ Մ.Բուդոլակի սահմանման՝ «սոցիալական մեդիան էլեկտրոնային ԶԼՄ նոր տեսակ է, որտեղ համացանցից յուրաքանչյուր օգտվող կարող է մասնակցել սոցիալապես արժեքավոր, լայն լսարանին հասցեագրված, պարբերաբար տեղեկատվություն ստեղծելու, պահպանելու և տարածելու գործընթացներին» [8, c. 18]:

Ըստ Դ. Բրեքենրիջի, «սոցիալական մեդիան ցանկացած ծառայություն է, որը համացանցն օգտագործում է մարդկանց շփումն ուժգնացնելու նպատակով» [9]: Սոցիալական մեդիայի կամ ցանցերի առավել արտահայտված տեսակներն են՝ *Facebook, YouTube, Myspace, Twitter, Google+* և այլն:

Սոցիալական մեդիան այսօր արդեն ավանդական ԶԼՄ լուրջ մրցակիցն է: Եվ եթե ռադիոյին 38 տարի պահանջվեց, 50 մլն օգտվող ներգրավելու համար, հեռուստատեսությանը՝ 13, ինտերնետին՝ 4, իսկ I-pod-ին՝ 3 տարի, ապա *Facebook*-ը 50 մլն օգտվող ուներ արդեն 3 ամսում, իսկ մեկ տարուց ավելի քիչ ժամանակահատվածում՝ 200 մլն օգտատեր:

Web 2.0 փուլում համացանցից օգտվողների համար ստեղծվում է բովանդակությունն ինքնուրույն ձևավորելու հնարավորություն:

Սոցիալական ցանցերի հանրաճանաչությունը բացատրվում է նրանով, որ դրանք թույլ են տալիս ազատել հաղորդակցությունները սոցիալական ինստիտուտների «վերահսկողությունից» և լայնացնում են չինստիտուցիոնալացված փոխազդեցությունների պրակտիկան:

Համացանցը շարունակում է փոխել աշխարհը: Այդ գործընթացները թե՛ դրական են և թե՛ բացասական:

Համացանցի զարգացմամբ պայմանավորված դրական փոփոխություններից առաջինն այն է, որ աճել է տեղեկատվական ռեսուրսների հասանելիությունը բնակչության լայն զանգվածների համար: Բացասական փոփոխություններից են տեղեկատվական անհավասարության տարածումը, գիտակցության կարծրատիպացումը, մանիպուլյացիոն տեխնիկաների կիրառման հնարավորությունների ավելացումը: Չի կարելի անտեսել նաև այն փաստը, որ մեր հասարակությանը բնորոշ բացասական միտումները հաճախ իրենց արտացոլումն են գտնում նաև համացանցում: Թեպետ տեղեկատվական պատերազմները, տեղեկատվական ահաբեկչությունը, համացանցային սադրանքները, դիվերսիաները և հանցագործությունները, հոգեբանական կախվածությունը համացանցի ծնունդ չեն, սակայն վերջինս դրանց կենսական նոր ուժ է հաղորդում: Համացանցը նաև խորացնում է իրական կյանքում առկա սոցիալական հակասությունները: Ինչպես հայտնի է, համակարգի ցանկացած բարդացում խարխլում է դրա կայունությունը: Այսինքն՝ արդիական են դառնում տեղեկատվական անվտանգության հիմնահարցերը:

Ըստ Մարշալ ՄքԼուհանի՝ հաղորդակցության միջոցն է պայմանավորում հաղորդակցության բնույթն ու բովանդակությունը. համացանցի պարագայում ևս այս դրույթը ճշմարիտ է:

Յուրաքանչյուր զանգվածային լրատվամիջոցի առանձնահատուկ հատկանիշներով են պայմանավորված նրա բազում գործառութային, կառուցվածքային, արտահայտչական, էսթետիկ առանձնահատկություններն ու հնարավորությունները: Հնարավորությունների առկայությունը սահմանում է նաև այն գործառույթները, որոնք իրականացնում են լրատվամիջոցները ժամանակակից աշխարհում:

Տեսաբաններն անդրադառնում են զանգվածային լրատվամիջոցների չորս հիմնական գործառույթներին՝ տեղեկատվական, մեկնաբանության, վերահսկողության և կապի: Առաջինը ենթադրում է կարևոր տեղեկատվության մատուցում հանրությանը, որի շնորհիվ մարդիկ կարող են հստակեցնել իրենց գիտելիքները և տեղեկացվածությունը որևէ հարցում: Բացի տեղեկացնելուց, լրատվամիջոցները պետք է նաև մեկնաբանեն տեղեկատվությունը՝ հանդես գալով իբրև հասարակության համահավաք շահերի կամ բոլորովին անկախ շահերի ներկայացուցիչ: Վերահսկողության գործառույթը լրատվամիջոցներն իրականացնում են՝ իրենց «աչքը պահելով» քաղաքական գործիչ-

ների վրա, այլ կերպ ասած՝ հասարակության դատին ներկայացնելով նրանց գործողությունները: Կապի գործառույթը երկրի քաղաքական, արհմիութենական և հասարակական կազմակերպությունների ներքին և միմյանց միջև հաղորդակցության ապահովումն է [10, էջ 12-15]:

Կ.Նորդենսթրենգն առանձնացնում է քաղաքացիների կարծիքի ձևավորմանը նպաստող երեք հիմնական գործառույթ. 1. տեղեկատվական գործառույթն ապահովում է սեփական տեսակետի ազատ և անկախ ձևավորումը, 2. վերահսկման գործառույթ՝ հասարակական ուժերի հանդեպ դիտարկման և վերահսկողության ապահովում, 3. «ֆորումի» գործառույթն ապահովում է տարբեր տեսակետների ներկայացվածությունն ու հանրայնացումը [11, p. 18]:

Ըստ սոցիոլոգ Վ.Յադովի՝ լրատվամիջոցները, իրականացնելով իրենց գործառույթները սոցիալական նույնականացման մեխանիզմի շնորհիվ (այն է՝ «տարբեր սոցիալական հանրույթներին սեփական պատկանելության գիտակցում, զգացմունքներ), նպաստում են հանրույթների աջակցմանը [12, c. 590-591]: Այդ թվում նաև այնպիսի հանրույթների՝ միկրոհանրույթների (համազգային կամ ազգային և դրան համապատասխանող ինքնություն), որոնք ուշադրության կենտրոնում հայտնվեցին վերջին տասնամյակներում՝ կապված գլոբալիզացիոն միտումների աճի հետ:

Հաճախ առանձնակի կարևորություն է տրվում ժամանցի գործառույթին, երբ մարդիկ ԶԼՄ արտադրանքն օգտագործում են զուտ հաճույք ստանալու նպատակով[1]: Պարասոցիալական փոխազդեցությունը, որը ևս դասվում է ԶԼՄ գործառույթների շարքին, հիմնված է այն գաղափարի վրա, որ հաճախ առնչվելով մեդիա-կերպարների (օրինակ, հեռուստաաստղերի) հետ, լսարանի ներկայացուցիչներին թվում է, թե իրենք անձամբ ծանոթ են այդ մարդկանց հետ[2]: Իրականությունից հեռանալը մեկ այլ գործառույթ է, որի էությունն այն է, որ ԶԼՄ-ի միջոցով անձը մոռանում է առօրյա հոգսերը: Այս գործառույթի տարատեսակ է տագնապի նվազեցման և խաղի գործառույթը, որը լսարանին օգնում է մոռանալ դժվարությունները, վերանալ իրական աշխարհից և հայտնվել ԶԼՄ ստեղծած երևակայական աշխարհում [5]:

[1] *Wright, C.R.,* Functional analysis and mass communication. Public Opinion Quarterly, 1974, http://goo.gl/w4a4of

[2] *Horton, D. & Wohl, R.R.,* Mass communication and para-social interaction. Psychiatry, 1956, http://goo.gl/OlYUuh

Կարելի է նաև տարբերակել ԶԼՄ հետևյալ գործառույթները՝ հաղորդակցական, տեղեկատվական, արժեհամակարգի կարգավորման, սոցիալ-կազմակերպական, սոցիալական մասնակցության և հոգեբանական կարգավորման [13, c. 39-114]:

ԶԼՄ *հաղորդակցական* գործառույթն արտահայտվում է դրանց՝ մարդկանց իրենց ժամանակակիցների հետ ծանոթացնելու կարողությամբ: ԶԼՄ-ի միջոցով մարդիկ ստանում են իրենց անհրաժեշտ տեղեկատվությունը, որն էլ իր հերթին հիմք է ծառայում հետագա հաղորդակցության համար [14, c. 176-197]: Սոցիալական հաղորդակցությունների հզոր միջոց լինելով՝ լրատվամիջոցները կարող են ապահովել թե՛ *ուղղահայաց* (իշխանություններ-հասարակություն), թե՛ *հորիզոնական* (հասարակության տարբեր մասերի միջև) հաղորդակցություն: Դրանք կարող են գործել միակողմանի կամ երկկողմանի (մասնակի երկկողմանի) ռեժիմով՝ այդպիսով լսարանին ներգրավելով տեղեկատվության ստեղծման մեջ՝ թույլ տալով կամ թույլ չտալով վերջինիս՝ ազդեցություն ունենալ այդ տեղեկատվության վրա: Միաժամանակ լրատվամիջոցներն այնպես են ստեղծված, որ լրագրողները և լսարանը միմյանց նկատմամբ ոչ սիմետրիկ դիրքերում են գտնվում և լիարժեք երկկողմանի փոխազդեցությունն ու հաղորդակցությունն անիրական են. լրագրողները միշտ պահպանում են տեղեկատվությունն իրենց հայեցողությամբ ֆիլտրելու և ներկայացնելու հնարավորությունը:

ԶԼՄ տեղեկատվական գործառույթը, ըստ էության, անբաժանելի է հաղորդակցական գործառույթից, քանի որ լրատվամիջոցները սոցիալական հաղորդակցության մաս են կազմում՝ գործելով որպես տեղեկատվության փոխանակման միջոց՝ ալիք: Այս գործառույթը ենթադրում է տեղեկատվության արտադրություն և տարածում՝ մարդկանց համատեղ գործունեությունն ապահովելու նպատակով [13, c. 39-114]:

Լրատվամիջոցներն էական դեր ունեն նաև արժեհամակարգի կարգավորման հարցում:

Գիտնականներին հետաքրքրել է, թե ԶԼՄ-ում տեղ գտած բռնություն, սեռական բաց տեսարաններ, վախեցնող, անհանգստացնող, գովազդային կամ քարոզչական ուղերձներ պարունակող տեղեկատվությունն ինչ արձագանք է ստանում լսարանի կողմից [5]:

Մեր օրերում մարդիկ ավելի հաճախ են բախվում ԶԼՄ-ի կողմից տարածվող մշակույթների և ենթամշակույթների հետ: Եթե ընտանիքը, դպրոցը, աշխատանքային կոլեկտիվը, ընկերական խմբերն անձի կյանքի որոշակի հատվածում են հանդես գալիս որպես սոցիալականացման միջոցներ, ապա լրատվամիջոցներն այդպիսին են ամբողջ կյանքի ընթացքում [13, c. 39-114]:

Անդրադառնալով ԶԼՄ *սոցիալ-կազմակերպչական* գործառույթին՝ նշենք, որ դրանք, լինելով մարդկանց միմյանց կապելու միջոցներ, կարող են ապահովել նրանց համատեղ գոյությունը, այսինքն՝ սոցիալական հանրույթները [15]:

Սոցիալական մասնակցության արտահայտությունը վերաբերում է ողջ հասարակական ոլորտին, որտեղ բախվում են բազմաթիվ անհատների շահեր, որտեղ առանձին մարդիկ հանդես են գալիս տարբեր ոլորտներում՝ որպես կանայք և տղամարդիկ, ձեռնարկատերեր և աշխատողներ, դասախոսներ և ուսանողներ և այլն: Սակայն ավելի կարևոր է քաղաքացիական մասնակցությունը, երբ անձինք հանդես են գալիս որպես պետության քաղաքացիներ [16]:

ԶԼՄ-ին բնորոշ է նաև ազդեցությունը լսարանի *հոգեկանի* վրա: Ազդեցությունն իրականացվում է բովանդակության մատուցման, դիզայնի, տեղեկատվություն ընտրելիս առաջնահերթություններ սահմանելու, թողարկումների կամ հրապարակումների հաճախականության միջոցով [17]:

Զանգվածային լրատվամիջոցների գործառույթները բազմաթիվ են և բազմազան, դրանց գործառութային առանձնահատկությունների վերաբերյալ տեսակետներն ու ընկալումները տարբեր են և ժամանակի ընթացքում պարբերաբար փոփոխվել են: Այսօր հասարակական նոր մարտահրավերների, աշխարհաքաղաքական նոր իրողությունների, բարձր տեխնոլոգիաների սրընթաց զարգացման պայմաններում կենսունակությունն ու ազդեցության լծակները պահպանելու համար մեդիան կանգնած է գործառնության նոր ռազմավարություն մշակելու անհրաժեշտության առջև:

Հունվար, 2016թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Почепцов Г.*, Психологические войны, Рефл-бук, Киев, 2002.
2. *Черных А.,* Мир современных медиа, Издательский дом «Территория будущего», Москва, 2007.

3. *Беспалова А.Г., Корнилов Е.А., Короченский А.П., Лучинский Ю.В., Станько А.И,* История мировой журналистики, Старые русские, Ростов на-Дону, 2000.
4. *Adorno T., Frenkel-Brunswick E., Levinson D.J., Sanford R.N.* The authoritarian Personality, New York, Harper and Row, 1950.
5. *Брайант Дж., Томпсон С.,* Основы воздействия СМИ, Москва, Санкт-Петербург, Киев, 2004.
6. *Маклюэн Г.М.,* Понимание Медиа: Внешние расширения человека / Пер. с англ. В.Николаева; Закл. ст. М.Вавилова, М., Жуковский "КАНОН-пресс-Ц", Кучково поле, 2003.
7. *Энтони Гидденс,* Ускользающий мир: как глобализация меняет нашу жизнь, Москва, 2004.
8. *Будолак М.С.*, Понятие «социальные медиа» // Петербургская школа PR: от теории к практике. Вып. 7 / СПб.: Роза мира, 2009.
9. *D. Breakenridge,* PR 2.0: new media, new tools, new audiences. - N.Y.: FT Press, 2008, P. XVIII.
10. *Ֆիլտելիուս Է.,* Լրագրության 10 ոսկե պատվիրան, Ինտերնյուզ, Երևան, 2001:
11. *Nordenstreng K.,* The Citizen Moves from the Audience to the Arena, Nordicom Review, 1997.
12. *Ядов В.А.,* Социальные и социально-психологические механизмы формирования идентичности личности, В.А. Ядов // Психология самосознания, Самара, 2000.
13. *Фомичева, И.Д.,* Социология СМИ, «Аспект Пресс», Москва, 2007.
14. Социология журналистики, под ред. Корконосенко С.Г., Аспект Пресс, М., 2004.
15. *Фомичева И.Д.,* Целевое программирование в журналистике, М., 1985.
16. *Кин Дж.,* Средства массовой информации и демократия: Пер. с англ. М., 2001.
17. *Матвеева Л.В., Аникеева Т.Я., Мочалова Ю.В.,* Психология телевизионной коммуникации, М., 2004.

ԶԼՄ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Նվարդ Մելքոնյան

Ամփոփագիր

Արդի աշխարհում տեղի ունեցող գլոբալիզացիոն և մասշտաբային փոխակերպումների գործընթացները, հաղորդակցային տեխնոլոգիաների ինտենսիվ զարգացումը, հասարակության կյանքում տեղեկատվության աճող դերը պայմանավորում են զանգվածային լրատվամիջոցների գործառույթների պատմական և սոցիալական տարբերակման, հասարակական գործընթացներում դրանց տեղի և դերի, գործառնության հիմնարար փոփոխությունների հետազոտության անհրաժեշտությունը:

Հոդվածում դիտարկվել են ԶԼՄ յուրաքանչյուր տեսակի ստեղծման նախադրյալները և պատճառները, դրանց վրա սոցիալական և քաղաքական տարբեր գործոնների ազդեցությունը: Հիմնական շեշտադրումը կատարվում է պատմական գործընթացում ԶԼՄ առանձին տեսակների գործառնական դերի մեծացման և բարդացման վրա՝ որպես երկու հիմնական գործոնի փոխազդեցության արդյունք. սո-

ցիալական (հասարակության տեղեկատվական պահանջմունքների ընդլայնում և բարդացում) և գիտատեխնոլոգիական (տեղեկատվության փոխանցման և տարբեր լսարանների հետ կապի նոր միջոցների զարգացում):

ИСТОРИЯ РАЗВИТИЯ СРЕДСТВ МАССОВОЙ ИНФОРМАЦИИ

Нвард Мелконян

Резюме

Происходящие в современном мире процессы глобализации и масштабных трансформаций, интенсивное развитие технологий коммуникаций, всевозрастающая роль информации в жизни общества обусловливают актуальность исследования исторической и социальной дифференциации функций средств массовой информации, их места и роли в общественных процессах, фундаментальных изменениях в функционировании.

В статье рассмотрены предпосылки и причины возникновения каждого вида СМИ, влияние на это различных социальных и политических факторов. При этом основной акцент ставится на увеличении и усложнении функциональной роли отдельных видов СМИ в историческом процессе как результате взаимовлияния двух основных факторов: социальных (расширение и усложнение информационных потребностей общества) и научно-технологических (развитие новых способов передачи информации и связи с различными аудиториями).

THE EVOLUTION HISTORY OF THE MASS MEDIA

Nvard Melkonyan

Resume

The processes of globalization and massive transformation occurring in the modern world, and the increasing role of information in the life of the society create a pressing need to study the historical and social differentiation of the mass media functions, their significance and role in social processes, and fundamental changes in their functioning.

The article examines the prerequisites and causes of emergence of each mass media type, as well as the influence of various social and political factors on that. The main focus is on the increase and complexity of the public and technological need for information, and development of ways to communicate information to various audiences.

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Արմեն Մանվելյան*

Բանալի բառեր ՝ էներգետիկ անվտանգություն, էներգետիկ աշխարհաքաղաքականություն, էներգետիկ գործոն, գնագոյացման քաղաքականություն, էներգետիկ շահեր։

Մյունխենում անվտանգության խնդիրների վերաբերյալ հերթական գագաթաժողովը մեկ անգամ ևս վկայեց, որ անվտանգությունը, հատկապես մեր օրերում, ամենաարդիական հարցն է միջազգային հարաբերությունների օրակարգում։ Առանց այդ խնդրի՝ անվտանգության հարցի կարգավորման, խոսել լիարժեք հարաբերությունների ու ռազմավարական զարգացման մասին անհնար է։ Հետևաբար, իզուր չէ, որ աշխարհի հզորագույն պետությունները նույնպես կարիք ունեն անվտանգության գործոն և լիարժեք համակարգերի, որոնք կայունություն և խաղաղություն կբերեն ոչ միայն այդ երկրներին և նրանց դաշնակիցներին, այլև ամբողջական տարածաշրջանների։

Սակայն ներկայումս անվտանգության ցանկացած համակարգ կարող է գործոն համարվել, եթե այնտեղ լիարժեք հաշվառված է էներգետիկ բաղկացուցիչը։ Էներգետիկ գործոնի ազդեցությունն անվտանգության համակարգերի վրա ամբողջապես ուսումնասիրված չէ, չնայած առաջին հետազոտություններն այս հարցում սկսվել էին դեռևս անցած դարի 70-ական թվականներին, սակայն այդ խնդիրը շարունակում է մնալ առաջնային և ուսումնասիրության կարոտ։

Անվտանգային համակարգերը լիարժեք էին համարվում, եթե այնտեղ հաշվառված էր էներգետիկ գործոնը, և եթե սկզբնական շրջանում կարևորվում էր էներգետիկ աղբյուրների բազմազանեցումը, ապա հետագայում զուգահեռաբար սկսեց դիտարկվել նաև էներգետիկ ուղիների բազմազանեցման

* Պատմական գիտությունների թեկնածու, անվտանգության և էներգետիկ աշխարհաքաղաքականության մասնագետ, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող։

սկզբունքը: Այսինքն՝ էներգետիկ անվտանգության համակարգերը լիարժեք էին համարվում թե՛ աղբյուրների և թե՛ ուղիների բազմազանեցման պարագայում, հակառակ դեպքում դրանք թերի էին և ոչ լիարժեք:

Էներգետիկ անվտանգության հիմնախնդիրն այն աստիճան կարևորվեց, որ նույնիսկ Հյուսիսատլանտյան ռազմական դաշինքը սկսեց հատուկ ուշադրություն դարձնել այդ թեմային՝ իր հետազոտական ինստիտուտներում բացելով այդ խնդրով զբաղվող հատուկ գիտաուսումնական կենտրոններ: Միաժամանակ, ՆԱՏՕ-ն սկսեց ակտիվորեն զբաղվել նաև էներգակիրների տեղափոխման ուղիների անվտանգության և վերահսկման կարևորագույն գործով:

Այս թեմայի շուրջ հետազոտությունների արդյունքում հետագայում շեշտվեց, որ էներգետիկ անվտանգությունը բազմաշերտ և բազմափուլ համակարգ է՝ պայմանավորված էներգակիրների բազմազանությամբ՝ նավթ, գազ, միջուկային վառելիք և այլն, և ամեն գործոնի դեպքում պետք է մշակել անվտանգության յուրահատուկ համակարգ՝ ապահովելու համար տվյալ էներգակրի կայուն ներմուծումը և արտահանումը:

Էներգետիկ անվտանգության համակարգը կարող է լիարժեք լինել միայն համընդգրկուն համագործակցության և այսպես կոչված մատչելիության սկզբունքի կիրառման դեպքում: Լոկալ՝ առանձնացված համակարգերը թերի են, և էներգետիկ անվտանգությունը պետք է ու կարող է գործել միայն ընդհանուր միջազգային մակարդակի վրա: Մատչելիություն հասկացողության հիմքում դրվում էր այն գաղափարը, որ նավթի և գազի արդյունահանման ցանկացած կենտրոն, անկախ նրա գտնվելու վայրից, պետք է մատչելի լինի միջազգային՝ անդրազգային էներգետիկ ընկերությունների համար՝ այդ հումքի արդյունահանման և տեղափոխման գործին մասնակցելու գործում:

Այսինքն՝ անվտանգության լիարժեք համակարգը կարող է գործել էներգետիկ շուկայի ազատականացման պայմաններում միայն: Էներգետիկ անվտանգության շուրջ մշակումների արդյունքում որոշվեց, որ այդ համակարգը գործում է միայն ազատականացված շուկայի գոյության պայմաններում, և դա առաջին հերթին վերաբերում է նավթի արդյունահանմանը, որն անցած դարի երկրորդ կեսից սկսած՝ ընդհանուր էներգետիկ շուկայի 60%-ն էր կազմում, և հետազոտություններն առաջին հերթին վերաբերում էին հենց այդ էներգակրին: Անդրազգային նավթային ընկերություններին վերագրվեց նաև էներգետիկ անվտանգության ապահովման կարևորագույն գործոնը ևս. պարտադրվում էր,

որ այդ ընկերությունները տեղական ընկերությունների հետ միասին համատեղ մշակեն նավթի պաշարները և արտահանեն դրանք միջազգային շուկա:

Էներգետիկ անվտանգության լիարժեքության հաջորդ կարևոր պայմանը գնագոյացման քաղաքականությունն է, որը պետք է լինի թափանցիկ և հասկանալի այդ շուկայում գործող բոլոր սուբյեկտների՝ թե՛ արդյունահանողների և թե՛ սպառողների համար: Եվ եթե նավթի դեպքում գնագոյացումը հասկանալի է՝ պայմանավորված այն բանով, որ այդ հումքը բորսային ապրանք է, ապա նույնը հնարավոր չէ ասել գազի մասին, քանի որ վերջինիս գինը ձևավորվում է միջպետական հարաբերությունների արդյունքում: Այս երևույթը հատկապես պարզ երևում է Եվրամիության օրինակով, որի անդամ պետությունները գազը գնում են տարբեր գներով. օրինակ, Արևելյան Եվրոպայում ռուսական գազը մոտ 30%-ով ավելի թանկ է, քան Արևմտյան Եվրոպայում: Գնագոյացման այս մեխանիզմն է պատճառը, որ Ռուսաստանը գազը կարող է օգտագործել իր քաղաքական շահերի համար, իսկ նավթը՝ ոչ, քանի որ վերջինիս գինը ձևավորվում է շուկայական հարաբերությունների արդյունքում[1]:

Այսպիսով, էներգետիկ անվտանգության գլոբալ համակարգը լիարժեք կարող է լինել թափանցիկ գնագոյացման, ազատական շուկայական հարաբերությունների և անդրազգային էներգետիկ ընկերությունների ակտիվ ներգրավման պայմաններում:

Էներգետիկ անվտանգություն և էներգետիկ աշխարհաքաղաքականություն եզրույթները

Էներգետիկ անվտանգություն և էներգետիկ աշխարհաքաղաքականություն տերմինները գիտական ակտիվ շրջանառության մեջ մտան անցած դարի 70-ական թվականներին: 1973թ. հայտնի Էմբարգոյից հետո ԱՄՆ-ը և նավթ սպառող այլ պետություններ 1974թ. նոյեմբերի 18-ին ստեղծեցին Միջազգային էներգետիկ գործակալությունը[2], որը սկսեց մշակել «էներգետիկ անվտանգության» առաջին համակարգերը:

Էներգետիկ անվտանգության մասնագետներ Կարլոս Պասկուալը և Ջոնաթան Էքինդն իրենց աշխատությունում այդ երևույթը նկարագրում են

[1] Ընդհանրապես, նավթի գնի ձևավորումը բավական բարդ գործընթաց է՝ պայմանավորված ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական գործընթացներով, և այս հարցին կարելի է անդրադառնալ առանձին հոդվածով:

[2] International Energy Agency, http://www.iea.org/aboutus/history/

որպես անընդհատ ընտրություն, որը մենք կատարում ենք տնտեսական զարգացման, ազգային անվտանգության և միջավայրի պաշտպանության միջև [1]: Ըստ նրանց՝ շատերի համար էներգետիկ անվտանգություն և էներգետիկ անկախություն արտահայտությունները հոմանիշներ են, դրանք ակտիվ կերպով օգտագործվում են այս թեմայի շուրջ ծավալվող բանավեճում: Հեղինակները համարում են, որ երկարաժամկետ միտումով էներգետիկ անվտանգությունը ածխաջրածնից կախվածության նվազեցումն է, իսկ ապագայում՝ հրաժարումն ընդհանրապես:

Սակայն կարճաժամկետ հեռանկարում, ինչպես արդեն նշեցինք, էներգետիկ անվտանգությունը սպառող պետությունների համար շարունակում է մնալ բազմազան աղբյուրներից և տարբեր ուղիներով կայուն մատակարարման սկզբունքը: Միաժամանակ, էներգետիկ անվտանգությունն արդի աշխարհում տնտեսական, բնակլիմայական և աշխարհաքաղաքական իրավիճակների համադրությունն է, որոնց կայունությունն ու էներգակիրների նկատմամբ հասանելիությունն էլ ապահովում են էներգետիկ ընդհանուր շուկայի անվտանգ, վստահելի և անխափան աշխատանքը:

Էներգետիկ աշխարհաքաղաքականության սկզբունքը սկսեց մշակվել ԱՄՆ-ում, որը Միջազգային էներգետիկ գործակալության (ՄԷԳ) անդամ էր: Սակայն, հաշվի առնելով ԱՄՆ աշխարհաքաղաքական և աշխարհառազմավարական ազդեցությունն ու հետաքրքրությունն էներգետիկ գործոնի նկատմամբ, էներգետիկ անվտանգություն հասկացության (որպես միայն ներքին սպառման անվտանգության միջոցի) կողքին, միջազգային էներգետիկ գործակալությունից անկախ, ամերիկյան գիտնականները սկսեցին մշակել և ներկայացնել մեկ այլ համակարգ, որն անվանվեց *էներգետիկ աշխարհաքաղաքականություն:*

Քաղաքագիտական այս նոր ուղղության մշակմամբ ԱՄՆ էներգետիկայի նախարարությանը զուգահեռ սկսեց ակտիվորեն զբաղվել ԱՄՆ պաշտպանական գերատեսչությունը: Պենտագոնի նմանատիպ մոտեցումը փորձագետները բացատրում էին երկու պատճառով. նախ՝ ռազմական գերատեսչության հետաքրքրությամբ կայուն էներգամատակարարում ապահովելու խնդրով (Պենտագոնը ԱՄՆ էներգակիրներ սպառող ամենախոշոր դաշնային կառույցն է, մոտ 80%), երկրորդ՝ էներգակիրներով հարուստ տարածաշրջանների նկատմամբ ամերիկյան աշխարհառազմավարական հետաքրքրության կտրուկ ակտիվացմամբ:

ԱՄՆ ռազմական գերատեսչությունը մինչև օրս էլ համարվում է աշխարհի ամենախոշոր նավթ սպառող կառույցներից մեկը: Ըստ ֆրանսիացի գիտնական Սոհբեթ Կարբուզի՝ աշխարհում ԱՄՆ պատշպանական գերատեսչությունից ավելի շատ նավթ է սպառում միայն 35 պետություն, իսկ մեկ շնչի հաշվարկով նավթի սպառման ծավալով այդ գերատեսչությունից առաջ է միայն 3 պետություն [2]:

Էներգետիկ աշխարհաքաղաքականության հայտնի մասնագետ, ամերիկյան Մասաչուսեթս համալսարանի պրոֆեսոր Մայքլ Քլարն իր «Արյուն և նավթ» աշխատությունում անդրադառնալով ԱՄՆ էներգետիկ քաղաքականությանը՝ այն համարում է միահյուսված պետության ռազմական շահերի հետ: «Եվ եթե մենք շարունակենք ապավինել մեր ռազմական ուժերին՝ լուծելու համար մեր էներգետիկ պաշարների խնդիրը, ապա մեզ սպասվում է շատ արյունալի և վտանգավոր դարաշրջան»,- նշում է հեղինակը [3]: Այսինքն՝ ԱՄՆ աշխարհաքաղաքական շահերը զուգորդվում են նաև նրա էներգետիկ շահերի հետ, և այն տարածաշրջանները, որոնք հարուստ են էներգակիրներով, ԱՄՆ-ի համար դառնում են հետաքրքրությունների առանձնահատուկ գոտիներ:

ԱՄՆ-ում հրատարակվող մի շարք աշխատություններում փորձում են սահմանել *էներգետիկ աշխարհաքաղաքականություն* տերմինը՝ այն նկարագրելով որպես էներգետիկ հումքով պայմանավորված աշխարհագրական որոշակի տարածքների նկատմամբ մեծ տերությունների աշխարհառազմավարական հետաքրքրությունների աճ:

Մասնավորապես, էներգետիկ աշխարհաքաղաքականություն տերմինն ամերիկացի մասնագետներ Մալվին Քոնանտը և Ֆարն Գոլդը նկարագրում են որպես ավելի ընդարձակ գործոն: Վերջիններս շեշտում են, որ էներգետիկ աշխարհաքաղաքականությունն ավելին է, քան ինչ-որ տարածքում էներգետիկ հումքի առկայությունը, այն ամբողջական գործընթաց է, որը ներառում է նաև այդ հումքի արդյունահանման, վերամշակման և տեղափոխման գործընթացի նկատմամբ ամբողջական վերահսկման հաստատումը [4]:

Էներգետիկ աշխարհաքաղաքականությունը նաև հարաբերությունների նոր որակ է, երբ գերիզոր պետությունները, որոնք, որպես կանոն, այդ հումքի հիմնական սպառողներն են, վերանայում են իրենց հարաբերությունները պետության կամ պետությունների նկատմամբ՝ պայմանավորված վերջիններիս տարածքում էներգակիրների պաշարների առկայությամբ: Այս քաղաքա-

կանության պայմաններում ի հայտ են գալիս նոր դաշինքներ, որոնք գերիզոր պետությանն ապահովում են նոր աղբյուրներից էներգակիրների կայուն և անխափան մատակարարումներով, իսկ տեղական պետությանը կամ պետություններին տալիս են տնտեսական, քաղաքական և, որպես կանոն, անվտանգային նոր երաշխիքներ:

Սակայն էներգետիկ աշխարհաքաղաքականությունը փոփոխական է՝ պայմանավորված միջազգային շուկայում պահանջարկի և առաջարկի փոփոխմամբ, ինչը կարող է արտահայտվել տնտեսական, բնակլիմայական, քաղաքական և անվտանգային միջավայրի փոփոխությամբ, որոնք որոշակիորեն ազդում են էներգետիկ աշխարհաքաղաքականության վրա: Մասնավորապես, էներգակիրներով հարուստ պետություններն էներգետիկ շուկայում տեղի ունեցող փոփոխությունների արդյունքում, օրինակ՝ նավթի գնի անկման շրջանում, կարող են դուրս մնալ *էներգետիկ աշխարհաքաղաքականության* գործընթացից՝ զրկվելով նաև այստեղից բխող բոլոր առավելություններից:

Սա գործընթաց է, որն այսօր տեղի է ունենում մեր աչքի առջև, երբ նավթի գնի անկումը հանգեցնում է ոչ միայն առանձին պետությունների, այլև ամբողջական տարածաշրջանների դերի նվազմանը՝ էներգետիկ աշխարհաքաղաքականության ընդհանուր համակարգում հանգեցնելով անվտանգային ընդհանուր դինամիկայի նվազման և ռազմական բախումների:

Էներգետիկ աշխարհառազմավարական կենտրոն հասկացությունը

Նավթի և գազի պաշարները հավասարաչափ բաշխված չեն Երկիր մոլորակի վրա, և դրանց կենտրոնացումն աշխարհի այս կամ այն շրջանում այդ տարածքներին հատուկ կարգավիճակ է հաղորդում, որոնք կոչվում են էներգետիկ աշխարհառազմավարական կենտրոններ: Այդ կենտրոնները, սակայն, կայուն չեն և կարող են «տեղաշարժվել»՝ պայմանավորված էներգետիկ շուկայում այս կամ այն էներգակրի կարևորության փոփոխմամբ կամ գների անկմամբ:

Օրինակ, եթե նախկինում կարևոր էր նավթի գործոնը, որը դեռևս 2000թ. զբաղեցնում էր ընդհանուր էներգետիկ շուկայի 60%-ը, ապա ներկայումս կարևոր է գազը, որն ավելացրել է իր բաժինն էներգետիկ շուկայում՝ ի հաշիվ նավթի[1]: Հետևաբար, հենց այսօր մենք ականատեսն ենք նավթով

[1] 2010թ. տվյալներով՝ գազի չափաբաժինն էներգետիկ ընդհանուր շուկայում կրկնակի աճել է՝ կազմելով մոտ 24%, այն դեպքում, երբ նավթը նվազել է՝ հասնելով 40%-ի:

հարուստ տարածաշրջանների ռազմավարական նշանակության անկմանը և գազով հարուստ պետությունների ու տարածաշրջանների դերի բարձրացմանը: Եվ եթե դեռ մի քանի տարի առաջ Մերձավոր Արևելքում ցանկացած լարվածություն, քաղաքացիական բախում, առավել ևս՝ պատերազմ կհանգեցներ նավթի գնի բարձրացմանը, ապա այսօր ականատեսն ենք հակառակ երևույթին, երբ ընթացող և խորացող պատերազմի պայմաններում նավթի գինն անկում է ապրում, ինչն էլ այդ տարածաշրջանի աշխարհառազմավարական դերի նվազման ապացույցն է:

Այսինքն՝ *էներգետիկ աշխարհառազմավարական կենտրոն ասելով հասկանում ենք այն պետությունը, պետությունների խումբը, տարածաշրջանը, որը, շնորհիվ էներգակիրների խոշոր պաշարների, դրանց արդյունահանման և արտահանման, ձեռք է բերում համաշխարհային քաղաքական, տնտեսական և այլ գործընթացների վրա էական ազդեցություն գործելու կարողություն* [5]:

Ռազմավարական-անվտանգային այն փոփոխությունները, որոնց ականատեսն ենք Միջին Արևելքում և նաև մասամբ Հարավային Կովկասում, պայմանավորված են էներգետիկ աշխարհառազմավարական կենտրոնի տեղաշարժերով: Այս տարածաշրջանների անվտանգային կարևոր ռեսուրսը՝ էներգետիկ գործոնը, նավթի գների անկման պայմաններում, դառնում է խոցելի՝ կորցնելով այնտեղ կայունություն պահպանելու իր նշանակությունը:

Նավթի գների անկման նկատմամբ զգայուն են նաև էներգետիկ պաշարներով և տարանցիկ ուղիներով հարուստ տարածաշրջանները, որոնցից մեկը Հարավկովկասյանն է: Հետևաբար, էներգետիկ աշխարհառազմավարական կենտրոնի տեղաշարժով պայմանավորված՝ անվտանգային միջավայրի փոփոխություն է տեղի ունենում, ինչը պետք է հաշվի առնվի տարածաշրջանի անվտանգային միջավայրը գնահատելիս:

Հարավկովկասյան տարածաշրջանի անվտանգային միջավայրի վրա այդ փոփոխությունների ազդեցությունը որոշելու համար առաջին հերթին պետք է ուշադրություն դարձնել հետևյալ գործոններին.

- նավթի համաշխարհային շուկայում գների անկումը և դրա ազդեցությունը պետությունների ու տարածաշրջանների անվտանգային համակարգերի վրա,

- Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ համաձայնագրի կնքումը և Իրանի դերի մեծացումը էներգետիկ համաշխարհային շուկայում ու տարածաշրջանում,
- Կասպից ծովից մինչև Եվրոպա ձգվելիք գազամուղների կառուցման ասպարեզում մրցակցության սրումը:

Բացի վերը նշվածից, Հարավային Կովկասի անվտանգային դինամիկայի վրա ազդում են նաև Կասպից ծովի անվտանգության ապահովման համար շարունակվող պայքարը, Կենտրոնական Ասիայում ԱՄՆ-ի և Եվրամիության վարած քաղաքականությունը, Ռուսաստանի ու Չինաստանի հետ նրանց հակասությունների սրումը, այդ թվում՝ Եվրամիության էներգետիկ շուկայում Ռուսաստանի դերի նվազմանն ուղղված Բրյուսելի քաղաքականությունը, Միջին Արևելքում Իրանի և Պարսից ծոցի արաբական պետությունների միջև հակասությունների շարունակական խորացումը և այլն:

2004թ. սկսված թերթաքարային գազի, ապա նավթի արդյունահանման կտրուկ աճը, որն էներգետիկ աշխարհառազմավարության առումով հանգեցրեց ԱՄՆ դերի աճին, նպաստեց էներգետիկ շուկայում նավթի գնանկմանը: Հիշեցնենք, որ եթե 2010թ. ԱՄՆ-ը ապահովում էր նավթի իր ներքին պահանջարկի միայն 66%-ը, ապա 2014թ. այդ թիվը հասցրեց 96%-ի: Այս փոփոխությունը հանգեցրեց ԱՄՆ դերակատարության կտրուկ աճի էներգետիկ շուկայում՝ նպաստելով իր աշխարհառազմավարական նշանակության մեծացմանն ի հաշիվ Մերձավոր Արևելքի:

Էներգետիկ գլոբալ շուկայում ԱՄՆ դերի մեծացմանը նպաստեց նաև Կոնգրեսի 2015թ. դեկտեմբերի որոշումը՝ վերացնել հում նավթի արտահանման արգելքը և հնարավորություն տալով ամերիկյան նավթային ընկերություններին՝ սկսել նավթ մատակարարել միջազգային շուկա:

Այսինքն՝ էներգետիկ աշխարհառազմավարական կենտրոնի տեղաշարժը՝ Մերձավոր Արևելքից դեպի հյուսիսային Ամերիկա, հանգեցրել է նաև աշխարհառազմավարական գլոբալ փոփոխությունների: Մեծ Մերձավոր Արևելքը մասամբ կորցրել է էներգետիկ շուկայի, հետևաբար նաև էներգետիկ աշխարհաքաղաքականության վրա ազդելու իր ռեսուրսը, ինչը հանգեցրել է նրան, որ ԱՄՆ-ը և ՆԱՏՕ-ն չունեն նախկին հետաքրքրությունն այդ տարածաշրջանում խաղաղության պահպանման գործում, քանի որ այն այլևս չունի

նախկին ազդությունը նավթի գնագոյացման քաղաքականության վրա:

Հետևաբար, նավթի ցածր գների պայմաններում պատերազմը Մերձավոր Արևելքում դեռ երկար կշարունակվի՝ իր շրջապտույտի մեջ ներառելով հարևան պետություններին:

Փետրվար, 2016թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Carlos Pascual, Jonathan Elkind,* Energy Security: Economics, Politics, Strategies, and Implications, brookings institution press, Washington, D.C. Copyright © 2010.
2. *Sohbet Karbuz,* U.S. Military Energy Consumption, Geopolitics, and Energy Security, http://karbuz.blogspot.com/2007/05/us-military-energy-consumption-facts.html
3. *Michael T. Klare,* Blood And Oil, https://www.mediaed.org/assets/products/124/ press-kit_124.pdf
4. *Malvin A. Conant,* Farn Racine Gold, The Geopolitics of Energy, Westview press, Boulder, Colorado, 1978.
5. *Մանվելյան Ա.,* Էներգետիկ աշխարհառազմավարական փոփոխությունների ազդեցությունը Հարավային Կովկասի անվտանգային դինամիկայի վրա և ՀՀ պաշտպանության ռազմավարական վերանայման գործընթացում դրանց հաշվառման կարևորությունը, http://www.psaa.am/am/activity/publications/armen-manvelyan/157-armen-manvelyan-impact-of-changing-energy-geostrategy-on-the-south-caucasus-security-dynamics-and-its-relevance-in-the-ra-strategic-defense-review

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Արմեն Մանվելյան

Ամփոփագիր

Անվտանգությունը, հատկապես մեր օրերում, ամենաարդիական հարցն է միջազգային հարաբերությունների օրակարգում: Առանց անվտանգության հարցի կարգավորման խոսել լիարժեք հարաբերությունների ու ռազմավարական զարգացման մասին անհնար է: Իզուր չէ, որ աշխարհի հզորագույն պետությունները նույնպես կարիք ունեն անվտանգության գործուն ու լիարժեք համակարգերի, որոնք կայունություն և խաղաղություն են ապահովում:

Այսօր անվտանգության ցանկացած համակարգ կարող է գործուն համարվել, եթե այնտեղ հաշվառված է նաև էներգետիկ բաղկացուցիչը: Էներգետիկ գործոնի ազդեցությունը անվտանգության համակարգերի վրա լիովին ուսումնասիրված չէ: Այս համատեքստում հոդվածագիրն անդրադառնում է էներգետիկ անվտանգություն և էներգետիկ աշխարհաքաղաքականություն եզրույթներին:

МЕЖДУНАРОДНЫЕ СИСТЕМЫ БЕЗОПАСНОСТИ И ЭНЕРГЕТИЧЕСКАЯ ГЕОПОЛИТИКА

Армен Манвелян

Резюме

Безопасность, особенно в наши дни, наиболее актуальный вопрос повестки международных отношений. Невозможно говорить о полноценных отношениях и стратегическом развитии без урегулирования вопроса безопасности. Не случайно, мощнейшие государства мира также нуждаются в действенных и полноценных системах безопасности, обеспечивающих мир и стабильность. Сегодня любая система безопасности может считаться действенной, если в ней учтен и энергетический компонент. Влияние энергетического компонента на системы безопасности до конца не изучено. В этом контексте автор статьи рассматривает термины «энергетическая безопасность» и «энергетическая геополитика».

INTERNATIONAL SECURITY SYSTEMS AND ENERGY GEOPOLITICS

Armen Manvelyan

Resume

Security, especially in modern time, is the most urgent issue in the agenda of international relations. Full-fledged relations and strategic development are hard to imagine without security. Unsurprisingly, the most powerful countries in the world also need effective and full security systems that ensure stability and peace. Currently the security systems may be considered effective only if the energy component is incorporated in them. Impact of the energy factor on security systems is not studied well. In this context the author deliberates on the terms of energy security and energy geopolitics.

ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՐԿՐՆԵՐԻ ՏԱՐԲԵՐ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Աշոտ Մարկոսյան**, *Բորիս Ավագյան**

Բանալի բառեր ՝բնութագրիչ ցուցանիշներ, ցածր և միջին եկամուտներով երկրներ, գործարար միջավայր, երկրների ցուցանիշների համեմատական վերլուծություն:

Յուրաքանչյուր երկրում տնտեսվարող սուբյեկտների գործունեության համար ստեղծված պայմանների պատկերն ունենալու համար կարևոր է նրանց գործունեության միջավայրը բնութագրող կարևոր ցուցանիշների համակարգի ընտրությունը, ինչպես նաև այդ ցուցանիշների բարելավման կամ վատացման հետազոտումը:

Աշխարհում և ըստ եկամուտների խմբավորված երկրների խմբերի համար գործարար միջավայրին վերաբերող *«Doing Business»*-ի ցուցանիշների[1] ուսումնասիրությունը բացահայտում է մի շարք օրինաչափություններ, որոնցից հիմնականներն են.

- ցածր եկամուտներով երկրները բոլոր ցուցանիշներով հետ են մնում աշխարհի (միջին) ցուցանիշից,
- միջին եկամուտներով երկրներում նկատվում է աշխարհի (միջին) ցուցանիշների մոտարկում (նույնիսկ ավելի լավ ցուցանիշ է գրանցվել «Էներգետիկ համակարգին միանալու հնարավորության» օրերի և գործարարություն սկսելու ծախսերի, ինչպես նաև գույքի (սեփականության իրավունքի) գրանցման պահանջվող ժամանակի տեսակետից),
- ցածր և միջին եկամուտներով երկրների բոլոր ցուցանիշները, որպես կանոն, զիջում են (և միայն եզակի դեպքերում են հավասար) աշխարհի բոլոր երկրների համար միջինացված ցուցանիշներին,

* ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի տեղակալ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր:
** Փորձագետ, տնտեսագիտության թեկնածու:

[1] World Development Indicators 2015, The World Bank, http://wdi.worldbank.org/table/5.3:

- ակնհայտ է բարձր եկամուտներով երկրների ցուցանիշների գերազանցումն աշխարհի (միջին) ցուցանիշներից:

Նման ձևով կատարված վերլուծությունը ցույց է տալիս այն «ճանապարհային քարտեզը», որի օգնությամբ պետք է շարժվեն ցածր և միջին եկամուտներով երկրներն իրենց գործարար միջավայրի բարելավման համար: Ըստ էության, գործարար միջավայրի բոլոր այն ուղղությունները, որոնցում ցածր և միջին եկամուտներով երկրները հետ են մնում, այն «տեղամասերը» կամ ռեզերվներն են, որոնք այդ խումբ երկրներում պետք է դառնան ոլորտի բարեփոխումների ուղղություններ:

Ցածր և միջին եկամուտներով երկրներում գործարար միջավայրի բարելավման կողմնացույցի դեր կարող են խաղալ ՏՀԶԿ և Եվրամիության երկրները: Միաժամանակ նկատենք, որ ՏՀԶԿ երկրներում առկա են միջերկրային ցուցանիշների զգալի տարբերություններ. օրինակ, գործարարություն սկսելու ընթացակարգերի քանակը կամ գործարար միավոր գրանցելու համար պահանջվող գործողությունների թիվը (նոր ստեղծվող կազմակերպությունների գործունեությունը ծավալելու համար անհրաժեշտ գործողություններն են, ներառյալ այնպիսիք, որոնք անհրաժեշտ են համաձայնություններ, թույլտվություններ, լիցենզիաներ, հաստատումներ ստանալու և գործունեություն սկսելու մասին ծանուցումների համար): Տվյալները ներկայացված են այն գործարար միավորների համար, որոնք ունեն սեփականության ձևի, չափերի և արտադրության հստակ բնութագրիչներ: Գործարար միավոր գրանցելու համար պահանջվող գործողությունների թիվը Գերմանիայում կազմել է 9, Ավստրալիայում, Չեխիայի Հանրապետությունում, Ճապոնիայում, Թուրքիայում՝ 8, իսկ Նոր Զելանդիայում՝ 1: ԵՄ երկրների միջին ցուցանիշը 2015թ. կազմել է 4.9:

Գործարարություն սկսելու համար պահանջվող ժամանակը (օրացուցային օրերի քանակն է, որոնք անհրաժեշտ են իրավական դաշտում գործունեություն ծավալելու նպատակով պահանջվող գործողություններն ավարտելու համար) նույնպես կարևոր բնութագիր է գործարարների համար: Ավելին, եթե որևէ գործողություն արագ իրականացնելու համար սահմանված է լրացուցիչ վճար, ապա, անկախ դրա վճարովի լինելու հանգամանքից, ընտր-

ված է տվյալ գործողության ամենակարճ ժամկետը[1]: Ավստրիայում այս ցուցանիշը կազմում է 22 օր (ՏՀԶԿ երկրների միջին ցուցանիշը 8.2 օր է), իսկ Նոր Զելանդիայում՝ 0.5 օր, Կանադայում՝ 1.5 օր: ԵՄ երկրներում գործարարություն սկսելու համար պահանջվող միջին ժամանակը (օր) ավելի շատ է (10.2 օր), քան ՏՀԶԿ երկրների միջինն է (8.2 օր):

Գործարարություն սկսելու արժեքը (%-ով մեկ շնչի հաշվով եկամտի նկատմամբ) գործարար միավոր (կազմակերպություն) գրանցելու համար պահանջվող ծախսերն են, որոնց համադրելիությունն ապահովելու համար դրանք ներկայացվում են տվյալ երկրի մեկ շնչի հաշվով համախառն ազգային եկամտի նկատմամբ: 2015թ. ՏՀԶԿ երկրներում միջին ցուցանիշը կազմել է 4.0, ԵՄ-ում՝ 3.6: Ընդ որում, եթե ՏՀԶԿ երկրներում այդ ցուցանիշը տատանվում է 0-ից (Սլովենիա) մինչև 17.9-ի (Մեքսիկա) միջակայքում, ապա ԵՄ-ում՝ 0-ից (Սլովենիա) 13.8-ի (Իտալիա) սահմաններում:

Գործարար միջավայրի ինստիտուտների տեղի և դրանց հետագա կատարելագործման առարկա են նախկին Խորհրդային Միության երկրների ցուցանիշների ուսումնասիրությունը և վերլուծությունը: Այս խումբ երկրներին բնորոշ է իրենց ոչ վաղ անցյալի քաղաքական և տնտեսական միությունը, երբ նրանք միևնույն պետության մեջ մտնող հանրապետություններ էին: Համայնավարությունից անցումը շուկայական հարաբերությունների այդ երկրների անցած շուրջ քառորդդարյա պատմության ուղեկիցն է եղել, և այս առումով կարելի է պարզել երկրների այս խմբի ու նրանցից յուրաքանչյուրի ձեռքբերումն այդ ճանապարհին: Նկատենք նաև, որ ժամանակակից պատկերացումների տեսանկյունից նախկին Խորհրդային Միությունում զարգացած և առավել տարածված էր պետական ձեռնարկատիրությունը (գործարարությունը)՝ պետական ձեռնարկությունների և կազմակերպությունների գրեթե 100%-ոց կարգավիճակով (գոյություն ուներ նաև կոլտնտեսային-կոոպերատիվ հատված, որի տեսակարար կշիռը հատկապես թողարկվող արդյունաբերական արտադրանքի կազմում մեծ չէր):

Բացի այդ, նախկին խորհրդային հանրապետություններում գործարար միջավայրի ցուցանիշների օգնությամբ կարելի է մեծ չափով պատկերացում

[1] Այս և ստորև բերվող մյուս ցուցանիշների մեկնաբանությունները տրված են Doing Business 2016: Measuring Regulatory Quality and Efficiency, World Bank Group flagship publication–ում (http://www.doingbusiness.org): Ընդ որում՝ տվյալները վերաբերում են ոչ թե ժողովածուի հրապարակման տարվան, այլ համապատասխան հետազոտությունների իրականացման տարիներին:

կազմել այդ երկրներում շուկայական բարեփոխումների ինտենսիվության և որակի մասին. ի վերջո, չէ՞ որ շուկայական հարաբերությունները կարող են ձևավորվել և զարգանալ բարենպաստ գործարար միջավայր և պայմաններ ունեցող երկրներում: Այստեղ կարևոր է նկատել, որ առանձին նախկին խորհրդային հանրապետությունների զարգացման պայմանները եղել են տարբեր, ինչը հատկապես ակնառու երևում է ՀՀ օրինակով, որն անկախություն ձեռք բերելուց հետո հարևան երկրի հետ հակամարտության պատճառով հայտնվեց անսովոր (պատերազմական) իրավիճակում, ինչը նկատելիորեն և զգալիորեն դժվարացրեց և դանդաղեցրեց շուկայական հարաբերությունների ձևավորումը: Սակայն միջերկրային համեմատություններում այս հանգամանքը միշտ չէ, որ հաշվի է առնվում. համեմատվում են թվեր (ցուցանիշներ)՝ առանց խորանալու դրանց ձեռքբերման դժվարությունների «գնի» մեջ:

Աղյուսակ 1-ում բերված ցուցանիշները վկայում են, որ, օրինակ, գործարարություն սկսելու ընթացակարգերի քանակն այդ երկրների միջինում կազմել է 3.4, ըստ որում՝ ՀՀ-ում, Ադրբեջանում, Վրաստանում, Լիտվայում այդ ցուցանիշը 2 է, մինչդեռ մնացած բոլոր հանրապետությունները գերազանցել են այդ ցուցանիշը (այն ամենաբարձրն է Ուզբեկստանում՝ 5): Գործարարություն սկսելու համար պահանջվող ժամանակն ամենացածրը Վրաստանում է (2), իսկ ամենաբարձրը՝ Տաջիկստանում (11 օր), ինչը կրկնակի գերազանցում է այդ երկրների միջին ցուցանիշը (5.5):

Աղյուսակ 1

Գործարար միջավայրին վերաբերող Doing Business-ի ցուցանիշները 2015թ. նախկին Խորհրդային Միության երկրներում

Հ/Հ	Երկրները	Գործարարություն սկսելը			Գույքի (սեփականության) գրանցումը		Շինարարության թույլտվությունների ձեռքբերումը		Էներգետիկ համակարգին միանալու հնարավորությունը	Պայմանագրերի կիրարկումը		Ներդրողների պաշտպանվածությունը	Անվճարունակության լուծումը
		Ընթացակարգերի քանակը	Դահանջվող ժամանակը, օր	Արժեքը (ծախսերը), %-ով մեկ շնչի հաշվով եկամտի նկատմամբ	Ընթացակարգերի քանակը	Դահանջվող ժամանակը, օր	Առևտրային շինություն կառուցելու համար պահանջվող ընթացակարգերի քանակը	Առևտրային շինություն կառուցելու համար պահանջվող ժամանակը, օր	Դահանջվող ժամանակը, օր	Ընթացակարգերի քանակը	Դահանջվող ժամանակը, օր	Բացատրան ցուցանիշը, 0-ից 10-ը (բացատրության աստիճանն ավելի է, երբ ցուցանիշը ձգտում է 10-ի)	Դահանջվող ժամանակը, տարի
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1	Հայաստան	2	3	1	3	7	18	84	180	..	570	5	1.9
2	Ադրբեջան	2	3	1.2	3	8.5	18	203	87	..	277	10	1.5
3	Բելառուս	3	3	0.9	2	3	16	115	112	..	275	7	3
4	Էստոնիա	3	3.5	1.3	3	17.5	10	102	91	..	425	8	3
5	Վրաստան	2	2	3.1	1	1	7	48	71	..	285	9	2
6	Ղազախստան	4	5	0.1	3	4.5	24	154	83	..	370	9	1.5
7	Ղրղզստան	4	10	2.1	3	3.5	11	142	125	..	410	7	1.5
8	Լատվիա	4	5.5	1.5	4	16.5	12	165	107	..	469	5	1.5
9	Լիտվա	2	3.5	0.6	3	2.5	12	103	95	..	300	7	2.3
10	Մոլդովա	4	4	4.3	5	5.5	27	276	113	..	585	7	2.8
11	Ռուսաստանի Դաշնություն	4	10.5	1.1	3	15	19	263.5	161	..	307	6	2
12	Տաջիկստան	4	11	21.5	6	37	27	242	133	..	430	8	1.7
13	Թուրքմենստան	..	..	..	..	..	..	..	..	..	..	..	..
14	Ուկրաինա	4	7	0.6	7	23	10	67	263	..	378	4	2.9
15	Ուզբեկստան	5	6.5	3.4	9	46	23	176	89	..	225	7	2
	Երկրների միջին ցուցանիշը	**3.4**	**5.5**	**3.1**	**3.9**	**13.6**	**16.7**	**152.9**	**122.1**	**-**	**379.0**	**7.1**	**2.1**

Աղբյուրը կազմվել և հաշվարկվել է World Development Indicators 2015, The World Bank, http://wdi.worldbank.org/table/5.3-ի տվյալների հիման վրա:

Այդ ցուցանիշը բարձր է նաև Ռուսաստանի Դաշնությունում (10.5) և Ղրղզստանում (10): Գործարարությունը սկսելու արժեքը (ծախսերը) (մեկ շնչի հաշվով եկամտի նկատմամբ, %-ով) այս խումբ երկրների միջինում կազմել է 3.1, որը զգալիորեն գերազանցում են Տաջիկստանը (21.5), Մոլդովան (4.3) և Ուզբեկստանը (3.4): Այդ ցուցանիշն ամենացածրը Ղազախստանում է (0.1), Լիտվայում (0.6) և Բելառուսում (0.9), Հարավային Կովկասի երկրներում այդ ցուցանիշը ամենացածրը ՀՀ-ում է (1.0), մինչդեռ Վրաստանում այն կազմել է 3.1: Գույքի (սեփականության) գրանցման ընթացակարգերն ամենաքիչը Վրաստանում են (1), իսկ ամենաբարձրը՝ Ուզբեկստանում (9), իսկ երկրների միջին ցուցանիշի (136 օր) համեմատությամբ ցածր է շուրջ 2 անգամ: Առևտրային շինություն կառուցելու համար պահանջվող ընթացակարգերի քանակը Վրաստանում ամենաքիչն է (7), իսկ ամենաշատը Մոլդովայում և Տաջիկստանում է (27): Այդպիսի շինություններ կառուցելու համար պահանջվող ժամանակը նախկին Խորհրդային Միության հանրապետություններում կազմել է 152.9 օր: Այդ ցուցանիշն ամենացածրն է Վրաստանում (48), իսկ ամենաբարձրը Ռուսաստանի Դաշնությունում է (263.5 օր), ինչը գերազանցում է ՀՀ ցուցանիշն ավելի քան 3 անգամ: 2015թ. էներգետիկ համակարգին միանալու պահանջվող ժամանակը (օրերով) ամենացածրը Վրաստանում է (71 օր), իսկ ամենաբարձրը՝ ՀՀ-ում (180 օր), իսկ երկրների միջին ցուցանիշը կազմել է 122.1 օր:

Պայմանագրերի կիրարկումն ապահովող ժամանակն ամենաբարձրը Մոլդովայում է (585 օր), երկրորդը ՀՀ-ում է (570 օր), իսկ ամենացածրը Ադրբեջանում է (առավելագույնը՝ 10), ամենացածրն Ուկրաինայում (4) և Հայաստանում է (5): Անվճարունակության լուծման համար պահանջվող ժամանակն ամենաշատն Ուկրաինայում (2.9 տարի) և Մոլդովայում (2.8 տարի) է: ՀՀ-ում այդ ցուցանիշը կազմում է 1.9 տարի, ինչը բավական մոտ է նախկին Խորհրդային Միության երկրների միջին ցուցանիշին (2.1): Նախկին Խորհրդային Միության երկրների գործարար միջավայրի ցուցանիշների ուսումնասիրությունը բացահայտում է այդ երկրների ինչպես «առաջապահներին», այնպես էլ «հետնապահերին»՝ միաժամանակ ցույց տալով այդ ոլորտի ցուցանիշների բարելավման անհրաժեշտությունը և բարեփոխումների ուղղությունները:

Նախկին համայնավարական երկրների (դրանց թիվը 28-ն է) գործարար միջավայրին վերաբերող ցուցանիշների ուսումնասիրությունն ավելի է ամ-

բողջացնում *Աղյուսակ 1*-ում բերված տվյալների շարքը, այն առումով, որ «ոչ խորհրդային» երկրները նույնպես գտնվել են համայնավարական համակարգում և իրենց զարգացման և ձեռք բերված ցուցանիշների մի մասով միմյանցից էապես չեն տարբերվում, նույնիսկ այն պարագայում, երբ նրանց մի մասը ներկայումս Եվրամիության անդամ է: Օրինակ, գործարարություն սկսելու ընթացակարգերի քանակը Չեխիայի Հանրապետությունում (ԵՄ անդամ է) 8 է, ՀՀ-ում և Վրաստանում՝ 2, կամ գույքի (սեփականության) գրանցման համար Չեխիայի Հանրապետությունում պահանջվում է 31 օր, ՀՀ-ում՝ 7 օր, իսկ Վրաստանում՝ 1 օր: Այսինքն՝ անկախ այն հանգամանքից, թե որ տնտեսական միության կազմում է գտնվում այս կամ այն երկիրը, հիմնականում այդ երկրում իրականացված բարեփոխումների խորությամբ և բովանդակությամբ է պայմանավորված երկրի գործարար միջավայրի վիճակը (նկատենք նաև, որ թե՛ Վրաստանը և թե՛ Հայաստանն «անցել» են կամ դեռևս շարունակում են մնալ պատերազմական կամ կիսապատերազմական իրավիճակում):

Գործարար միջավայրի ցուցանիշների ուսումնասիրությունը լիարժեք չի լինի, եթե այդ բնագավառի ցուցանիշների վերլուծություն չկատարենք ՀՀ-ի ու հարևան երկրների և ԵԱՏՄ երկրների համար: Նման վերլուծության համար կառաջնորդվենք առանձին երկրների և դրանց խմբի միջինի նկատմամբ համեմատություններով, ինչի արդյունքում հնարավոր կլինի կատարել որոշակի եզրակացություններ: Այսպես, գործարարություն սկսելու ընթացակարգերի քանակը ՀՀ-ում և հարևան երկրների միջինում կազմում է 4.4, ՀՀ-ում՝ 2, իսկ Իրանում և Թուրքիայում՝ 8: Գործարարություն սկսելու համար պահանջվող միջին ժամանակը 6.1 օր է, այդ ցուցանիշը ՀՀ-ում 3 օր է, Վրաստանում՝ 2 օր, Իրանում՝ 15, Թուրքիայում՝ 7.5 օր: ՀՀ-ում տվյալ խմբի միջինից բարձր ցուցանիշներ են գրանցվել առևտրային շինություն կառուցելու համար պահանջվող ընթացակարգերի քանակի, էներգետիկ համակարգին միանալու հնարավորության ապահովման ժամանակի (այս ցուցանիշով ՀՀ-ն տարածաշրջանի հարևան երկրների միջին ցուցանիշը գերազանցում է շուրջ 2 անգամ), պայմանագրերի կիրարկումը պահանջող ժամանակի (570 օր, 443.4 օր միջինի դեպքում) ցուցանիշների գծով: Հետևաբար, նաև դրանք գործարար միջավայրի այն ցուցանիշներն են, որոնց բարելավման համար պետք է իրականացվեն համապատասխան միջոցառումներ և քայլեր:

Համանման ձևով, եթե մոտենալու լինենք ԵԱՏՄ-ի մեջ մտնող երկրների գործարար միջավայրի հիմնական ցուցանիշների գնահատմանը, ապա պարզ կդառնա, որ ՀՀ-ն այս միության մեջ մտնող երկրների համեմատությամբ անելիքներ ունի գույքի (սեփականության) գրանցման համար պահանջվող ժամանակի հարցում (ԵԱՏՄ-ում այս ցուցանիշով Հայաստանը զիջում է բոլոր երկրներին, բացի ՌԴ-ից), գույքի (սեփականության) գրանցման ընթացակարգերի քանակի, առևտրային շինություն կառուցելու համար պահանջվող ընթացակարգերի քանակի, էներգետիկ համակարգին միանալու պահանջվող ժամանակի և պայմանագրերի կիրարկումը պահանջող ժամանակի հարցերում:

Ըստ երկրների տարբեր խմբավորումների՝ գործարար միջավայրին վերաբերող *Doing Business*-ի 2015թ. ցուցանիշների ընդհանրական պատկերը բերված է *Աղյուսակ 2*-ում: Աղյուսակի տվյալներից հետևում է, որ ԵԱՏՄ երկրների միջին ցուցանիշները նախորդ 5 խմբերի համեմատությամբ զիջում են միայն առևտրային շինություն կառուցելու համար պահանջվող ժամանակի և էներգետիկ համակարգին միանալու համար պահանջվող ժամանակի ցուցանիշներին: Ինչ վերաբերում է ԵԱՏՄ ու ՀՀ և հարևան երկրների խմբավորումների գործարար միջավայրի ցուցանիշների համեմատությանը, ապա ԵԱՏՄ երկրները 7 ցուցանիշների գծով գերազանցում են ՀՀ և հարևան երկրների համապատասխան ցուցանիշները, իսկ 4-ի մասով՝ զիջում: Ասվածից հետևում է, որ Հայաստանը, գտնվելով ԵԱՏՄ կազմում, ունի բոլոր հնարավորությունները՝ ձեռք բերելու առաջատարի դերակատարում և նշված ցուցանիշներով դառնալու լավագույնը ինչպես ԵԱՏՄ-ում, այնպես էլ տարածաշրջանում:

Փետրվար, 2016թ.

Աղյուսակ 2

Գործարար միջավայրին վերաբերող Doing Business-ի ցուցանիշները 2015թ. ըստ երկրների տարբեր խմբավորումների

Հ/Հ	Երկրների խմբերը	Գործարարություն սկսելը			Գույքի (սեփականության) գրանցումը		Շինարարության թույլտվությունների ձեռքբերումը		Էներգետիկ համակարգին միանալու հնարավորությունը	Պայմանագրերի կիրարկումը		Ներդրողների պաշտպանվածությունը	Անվճարունակության լուծումը
		Ընթացակարգերի քանակը	Դահանջվող ժամանակը, օր	Արժեքը (ծախսերը), %-ով մեկ շնչի հաշվով եկամտի նկատմամբ	Ընթացակարգերի քանակը	Դահանջվող ժամանակը, օր	Առնտրային շինության կառուցելու համար պահանջվող ընթացակարգերի քանակը	Առնտրային շինության կառուցելու համար պահանջվող ժամանակը, օր	Դահանջվող ժամանակը, օր	Ընթացակարգերի քանակը	Դահանջվող ժամանակը, օր	Բացության ցուցանիշը, 0-ից 10-ը (բացության առավելագույն աստիճանն ավելի է, երբ ցուցանիշը ձգտում է 10-ի)	Դահանջվող ժամանակը, տարի
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1	Աշխարհ	7	20.4	26.1	6	48.3	14	160.5	97	..	630	6	2.6
2	ՏՀԶԿ երկրների միջին ցուցանիշը	4.8	8.2	4.0	4.8	22.6	12.5	148.7	77.3	-	535.1	6.5	1.8
3	Եվրամիության երկրների միջին ցուցանիշը	4.9	10.2	3.6	5.0	23.0	12.6	176.5	92.6	-	589.8	6.2	2.0
4	Նախկին համայնավարական երկրների միջին ցուցանիշը	4.3	10.2	4.1	4.8	21.1	16.4	168.8	124.3	-	490.5	6.3	2.4
5	Նախկին ԽՍՀՄ երկրների միջին ցուցանիշը	3.4	5.5	3.1	3.9	13.6	16.7	152.9	122.1	-	379.0	7.1	2.1
6	ԵԱՏՄ երկրների միջին ցուցանիշը	3.4	6.3	1.0	2.8	6.6	17.6	151.7	132.2	-	386.4	6.8	2.0
7	Հայաստանի և հարևան երկրների միջին ցուցանիշը	4.4	6.1	4.9	4.2	7.1	15.2	107.0	95.6	-	443.4	8.0	2.9

Աղբյուրը կազմվել և հաշվարկվել է World Development Indicators 2015, The World Bank, http://wdi.worldbank.org/table/5.3-ի տվյալների հիման վրա:

ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՐԿՐՆԵՐԻ ՏԱՐԲԵՐ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Աշոտ Մարկոսյան, Բորիս Ավագյան

Ամփոփագիր

Գործարար միջավայրի ցուցանիշները ներկայումս հանդիսանում են ինչպես առանձին երկրների, այնպես էլ տարբեր սկզբունքներով խմբավորված երկրների միջև համեմատություններ կատարելու և այդ երկր(ներ)ում շուկայական հարաբերությունների զարգացածության մասին պատկերացում կազմելու միջոց: Ավելին, համաշխարհային շուկաներում ընթացող «կատաղի» մրցակցության պայմաններում բարենպաստ գործարար միջավայրը ներդրումներ կատարելու և գործարարությամբ զբաղվելու հիմնական «մագնիսն» է:

Հեղինակները, ելնելով ներկայումս լայնորեն օգտագործվող *«Doing Business»*-ի գործարար միջավայրի ցուցանիշների ուսումնասիրությունից, իրականացրել են տարբեր խմբավորումներով՝ ըստ եկամուտների մակարդակի, ՏՀԶԿ, ԵՄ, նախկին Խորհրդային Միության, նախկին համայնավարական, ԵԱՏՄ, ՀՀ և հարևան երկրների ցուցանիշների համեմատական վերլուծություն, իսկ ստացված արդյունքները բերված են աշխատանքում: Հեղինակների կարևոր եզրահանգումներից մեկն այն է, որ գործարար միջավայրի բարելավման համար այնքան կարևոր չէ, թե երկրների որ խմբավորման մեջ է գտնվում այս կամ այն երկիրը, որքան տվյալ երկրի իշխանությունների (և հիմնականում՝ կառավարության) կամքը և կառավարման որակը:

ИНДИКАТОРЫ, ХАРАКТЕРИЗУЮЩИЕ СОСТОЯНИЕ ПРЕДПРИНИМАТЕЛЬСКОЙ СРЕДЫ В РАЗЛИЧНЫХ ГРУППАХ СТРАН

Ашот Маркосян, Борис Авакян

Резюме

Для сравнения развитости рыночных институтов разных, в основном переходных стран с состоянием таких же институтов в странах с развитыми рыночными отношениями в настоящее время все чаще используются показатели, характеризующие предпринимательскую среду. Те же показатели используются и при сравнениях различных групп стран, в основе которых лежит либо уровень доходов, либо географическая близость. Более того, в условиях «ожесточенной» конкуренции благоприятная предпринимательская среда является тем «магнитом», который притягивает инвестиции.

Исходя из исследований, проведенных в рамках *Doing Business*, авторы осуществили собственный сравнительный анализ агрегатных показателей для стран, сгруппированных как по уровню доходов, членству в различных организациях (таких как ОЭСР, Евросоюз, страны бывшего Советского Союза, все постсоветские страны, ЕврАзЭс), так и по территориальной близости (Армения и соседние страны). Полученные результаты кратко сформулированы в статье. Один из основных выводов исследования: для улучшения предпринимательской среды не столь важно, к какой группе относится та или иная страна. Для достижения поставленной цели важнее политическая воля правительств стран, а также качество управления страной.

INDICATORS CHARACTERIZING THE BUSINESS ENVIRONMENT IN THE DIFFERENT GROUPS OF COUNTRIES

Ashot Markosyan, Boris Avagyan

Resume

For comparison of market institutions development in different (mainly countries in transition with the state of the institutions in countries with developed market) groups of countries indicators characterizing the business environment are now increasingly used. These indicators are used when comparing different groups of countries, which are based on either income level or geographic proximity. Moreover, under the fierce competition, a favorable business environment is the "magnet" that attracts investments.

Based on a research carried out in the framework of *Doing Business*, the authors conducted their own comparative analysis of aggregate indicators for countries grouped in terms of income, membership in various organizations (such as the OECD, the European Union, countries of the former Soviet Union, all the post-communist countries, EAEC) and in geographical proximity (for example Armenia and neighboring countries). The results obtained are briefly summarized in the article. One of the most important conclusions made by the authors is that for improving the business environment it is not so important in which group a country is included. What is more important in achieving this goal, is the political will of governments, as well as the quality of governance in the country.

ՀՀ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻ ՎՐԱ

Աղասի Թավադյան*

Բանալի բառեր՝ դրամավարկային քաղաքականություն, փոխարժեք, առևտրային հաշվեկշիռ, տնտեսական մրցունակություն, գնաճ, իրական վերաֆինանսավորման տոկոսադրույք:

Մակրոտնտեսական ցուցանիշները փոխկապակցված են, և անհրաժեշտ է դրանք դիտարկել համակարգված: Միայն մեկ առանձին ցուցանիշի՝ որպես հիմնական նպատակի իրագործման խնդրի լուծումը չի կարող ապահովել համակարգի օպտիմալացման խնդրի լուծումը:

Նպատակահարմար է համակարգված դիտարկել ՀՀ մակրոտնտեսական դաշտը: ՀՀ մակրոտնտեսական դաշտի դիտարկման հրամայականը և արդյունքը պետք է լինեն կայուն տնտեսական աճն ու առևտրային հաշվեկշռի լավարկման ապահովումը: Այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է իրականացնել արտադրության և արտահանման խթանման համապատասխան մակրոտնտեսական քաղաքականություն, քանզի հստակ առկա է բացասական առևտրային հաշվեկշռի և գործազրկության խնդիրը:

Արտահանման, ներմուծման և ՀՀ արժույթի փոխարժեքի փոփոխության կապը հստակ է, քանզի դրամի նկատմամբ այլ արժույթի տատանումը կարող է փոփոխել արտահանվող ապրանքի արժեքն արտարժույթով, և հակառակը՝ ազդել ներմուծվող ապրանքի գնի վրա՝ բերելով ներմուծման գնաճի, նաև փոփոխելով ներմուծման ծավալները: Պարզ է, որ ՀՀ-ում արտադրված, դրամային ինքնարժեք կրող ապրանքի գինն արտասահմանում դրամի արժևորման պարագայում արտարժույթով կբարձրանա, կկորցնի մրցունակությունը, և հակառակը՝ արժեզրկման դեպքում կլինի ավելի մրցունակ՝ խթանելով արտահանումը: Սակայն դա չպետք է ուղեկցվի փոխարժեքի կտրուկ փոփոխությամբ, որը կարող է բերել էական գնաճի և անորոշություն առաջացնել շուկայում:

* ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի փորձագետ, տ.գ.թ.:

Դիտարկելով արժույթների դինամիկան՝ նկատելի է, որ 2014թ. սկսած՝ ՀՀ դրամն արժեզրկվել է դոլարի նկատմամբ և, ըստ էության, արժևորվել է տարածաշրջանի այլ արժույթների, ինչպես նաև եվրոյի նկատմամբ, որը բացասաբար է անդրադառնում Հայաստանի արտաքին առևտրի փոփոխության վրա, հատկապես դեպի Ռուսաստան և Եվրամիության երկրներ[1]:

Գծապատկեր 1

ՀՀ արտահանման և ներմուծման դինամիկան ($մլն)



Ըստ ՀՀ ԿԲ-ի մասին օրենքի 14-րդ հոդվածի՝ Կենտրոնական բանկը պետք է ապահովի իր խնդիրներն իրականացնելու հնարավորությունը, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների պատշաճ կառավարումը և հայկական դրամի փոխարժեքի կարգավորումը[2]: Փոխարժեքի փոփոխության դինամիկան էական կարևորություն ունի հատկապես առևտրային հաշվեկշռի անհամաչափություն ունեցող երկրներում: Նշենք որ, մինչև 2015թ. Հայաստանի Հանրապետությունում երկար ժամանակ ներմուծումը գերազան-

[1] *Աղ.Ա. Թավադյան,* «Դրամավարկային քաղաքականությունը տնտեսական անվտանգության տեսանկյունից», «21-րդ ԴԱՐ, N6, 2015, էջ 80:

[2] ՀՀ օրենքը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին:

ցում էր արտահանումը գրեթե 3 անգամ (տե՛ս *Գծապատկեր 1*): Առկա առևտրային հաշվեկշիռը բացասական է, և ՀՀ-ն փաստացի հանդիսանում է ներմուծող երկիր, որը վտանգավոր է ներմուծվող գնաճով՝ ինչպես արտասահմանյան ապրանքների գնի բարձրացման, այնպես էլ արտասահմանյան արժույթների՝ դրամի հանդեպ արժևորման դեպքում: Փաստացի, այս երևույթը ներքին մակրոտնտեսական ցուցանիշների կարգավորման համակարգից դուրս է: Այս պարագայում գնաճն էական կախվածություն ունի փոխարժեքից: Բացասական առևտրային հաշվեկշիռը վտանգավոր է նաև նրանով, որ ներմուծվող ապրանքները կարող են դրսևորել զգալի մրցակցություն ներքին արտադրության համար՝ խոչընդոտելով դրա մրցունակության բարձրացմանը:

2015թ. նկատվեց առևտրային հաշվեկշռի զուտ ցուցանիշային լավարկում, որը պայմանավորված էր ոչ թե մրցունակությունը բարձրացնող արտադրության և, հետևապես, արտահանման դրական աճով, այլ ներմուծման զգալի նվազմամբ: Ըստ ՀՀ մաքսային ծառայության տվյալների՝ 2015թ. Հայաստանի արտահանումը կրճատվել է մոտ 3%, իսկ ներմուծումը 24%-ով[1]: Նշենք, որ 2015թ. դոլարային արտահայտությամբ Հայաստանի Հանրապետությունն ավելի քիչ ապրանք է ներմուծել, քան նույնիսկ 2010թ.: Ներմուծման էական կրճատման հանգամանքը և 2014 թվականից տարածաշրջանի արժույթների հանդեպ դրամի արժևորումն առաջին հայացքից իրար հակասում են, քանզի արժույթի արժեզրկումը պետք է բարձրացներ արտասահմանից եկող ապրանքի մրցունակությունը: Հարցի համակարգային դիտարկման պարագայում այս հանգամանքը բացատրվում է դեպի Հայաստանի Հանրապետություն արժութային հոսքերի կրճատումով՝ պայմանավորված հիմնականում փոխարժեքների փոփոխության արդյունքում տրանսֆերտների կրճատմամբ: Նշենք նաև, որ մեր հիմնական առևտրային գործընկեր Ռուսաստանից ներմուծման ծավալը գրեթե չի կրճատվել: Սակայն, ի տարբերություն ֆիզիկական ծավալների, ռուսական ռուբլու փոխարժեքի էական նվազման պատճառով դոլարային արտահայտությամբ արտահանումը Ռուսաստան 2015թ. նվազել է 21%-ով: Եթե ընդհանուր արտահանումը Հայաստանից գրեթե չի նվազել, իսկ ներմուծումը զգալիորեն նվազել է, ապա Ռուսաստանի Դաշնության առևտրաշրջանառության դեպքում պատկերը հակառակն է[2]:

[1] http://www.customs.am/

[2] ՀՀ մաքսային ծառայություն, ՀՀ արտաքին առևտուրն առանձին երկրների կտրվածքով (2014-2015թթ.):

Փաստացի, ՀՀ տնտեսությունն, առևտրաշրջանառության զսպմամբ պայմանավորված, գտնվում է որոշակի ստագնացիայի մեջ: Սա, իհարկե, բացասաբար է անդրադառնում երկրի տնտեսական աշխուժության և մրցունակության վրա, սակայն դրամավարկային քաղաքականության ճիշտ ուղղորդման պարագայում կարող է որոշակի խթան հանդիսանալ ՀՀ բիզնեսի լավարկման և արտահանման աճի համար: Հայաստանն ունի արտահանման բարելավման, բազմատեսակացման, հավասարակշռման, աճի և հատկապես ԵԱՏՄ շուկայում իր տեղը գտնելու խնդիր:

Կարևոր է արևելյան արագ զարգացող տնտեսությունների փորձը, որոնց ինդուստրիալ զարգացումը և որակային տնտեսական աճը հիմնված են առաջին հերթին արտադրության և արտահանման աճի վրա: Դրամավարկային քաղաքականությունները շեշտը դնում են արտահանման վրա:

Որպես ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացման և լավարկման առաջնահերթ միջոց առաջարկում ենք իջեցնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը և պահուստավորման նորմը, որն իր հերթին կիջեցնի անհիմն բարձր իրական վերաֆինանսավորման տոկոսադրույքը Հայաստանի Հանրապետությունում:

Իրական վերաֆինանսավորման տոկոսադրույքն անվանական տոկոսադրույքի և գնաճի տարբերությունն է: Իրական տոկոսադրույքը շուկայի իրական ակտիվությունը բնութագրող ցուցանիշ է: Եթե իրական տոկոսադրույքը համեմատաբար մեծ է, ապա դրամավարկային գործիքների ազդեցությունը շուկայի մասնակիցների վրա հիմնականում զսպող է, այս դեպքում դրամավարկային քաղաքականության ուղղվածությունն ավելի շուտ ունի շուկայական հարաբերությունները զսպող, քան գնաճը կարգավորող բնույթ: Պետությունը սովորաբար ապահովում է երկարաժամկետ տնտեսության խթանում և զարգացում, երբ իրական վերաֆինանսավորման տոկոսադրույքը չի գերազանցում 2%-ը, հաճախ ձգտում է զրոյի կամ նույնիսկ բացասական է: Բարձր իրական վերաֆինանսավորման տոկոսադրույքը վկայում է այն մասին, որ դրամավարկային քաղաքականություն իրականացնող մարմինը, դե-յուրե որպես հիմնական նպատակ ունենալով գների և ֆինանսական կայունության ապահովումը, դե-ֆակտո կարող է ձևավորել շահույթ հետապնդելու նպատակ, որը չի նպաստում տնտեսության զարգացմանը և երկրի մրցունակության բարձրացմանը:

Նշենք, որ ՀՀ-ում իրական տոկոսադրույքն ամենաբարձրն է ոչ միայն ԵՄ, այլ նաև ԵԱՏՄ տնտեսությունների համեմատ, և հետևապես՝ այս պարագայում տնտեսությունը բանկային համակարգից հնարավորություն ունի հիմնականում ստանալ փոխառու միջոցներ չարդարացված բարձր տոկոսադրույքներով:

Վերաֆինանսավորման տոկոսադրույքի իջեցումն, իհարկե, կարող է հանգեցնել որոշակի գնաճային երևույթների, սակայն, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, 2015թ. հոկտեմբերին վերաֆինանսավորման տոկոսադրույքի իջեցումը 10.25%-ից մինչև 8.5%-ի ոչ միայն էական ազդեցություն չունեցավ գնաճի վրա, այլև 2015թ. վերջի դրությամբ Հայաստանում գրանցվեց 0.1% գնանկում, իսկ 12-ամսյա գնաճի ցուցանիշը 2016թ. ապրիլին գրանցել է 2% գնանկում, որը մտահոգիչ է: Ինչ վերաբերում է ներմուծվող գնաճին, ապա ներմուծում-արտահանում հարաբերությունը կրճատվել է, ինչն իր հերթին էլ ավելի է իջեցրել դրամի փոխարժեքի արժեզրկման դեպքում առաջացող ներմուծվող գնաճի ռիսկը:

Նշենք, որ տնտեսության զարգացման տեսանկյունից ակնհայտ արդյունավետ չէ 0.1% և 2% գնանկման պարագայում ունենալ 8.75% վերաֆինանսավորման տոկոսադրույք, փաստացի իրական վերաֆինանսավորման տոկոսադրույքը բավական մեծ է, և այս հանգամանքը կրում է տնտեսության աճը զսպող բնույթ: ՀՀ վերաֆինանսավորման տոկոսադրույքի, գնաճի, ինչպես նաև իրական վերաֆինանսավորման տոկոսադրույքի դինամիկան ցույց է տրված *Գծապատկեր 2*-ում: Այսպիսով, տնտեսության խթանման և մրցունակության բարելավման տեսանկյունից հրամայական է վերաֆինանսավորման տոկոսադրույքի և գնաճի ցուցանիշների մոտեցումը: Ըստ ՀՀ պետական բյուջեի մասին օրենքի՝ գնաճը պետք է լինի 2.5% և 5.5% միջակայքում[1]: Ներքին շեմը չի կատարվում, այսինքն՝ օրենքի պահանջը չի իրականացվում: Ինչ վերաբերում է վերին սահմանին, ապա այն ընդունելի ցուցանիշ է տրանսֆորմացվող երկրի զարգացման համար: Վերաֆինանսավորման տոկոսադրույքի իջեցումը և պահուստավորման նորմի աստիճանական նվազումը կնպաստեն ՀՀ տնտեսության խթանմանը և արտահանման աճին, որը կլավարկի ապրանքային հաշվեկշիռը: Այս միջոցառումները կնպաստեն ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացմանը և արտահանման աճին:

[1] «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» օրենք, հոդված 4; «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» օրենք, հոդված 4:

Գծապատկեր 2

Վերաֆինանսավորման տոկոսադրույքի և գնաճի դինամիկան ՀՀ-ում



Վերաֆինանսավորման տոկոսադրույքի իջեցումը և պահուստավորման նորմի աստիճանական նվազումը կարող են հանգեցնել փոխարժեքի իջեցման, որն իր հերթին, հաշվի առնելով այն, որ ներմուծումն էապես գերազանցում է արտահանումը, կարող է հանգեցնել որոշակի գնաճի, սակայն, դրա հետ մեկտեղ, դա նպաստավոր է արտահանման և առևտրային հաշվեկշռի համար: Չափավոր և կայուն գնաճը նպաստավոր է տրանսֆորմացվող երկրի տնտեսության աշխուժացման համար:

Այսպիսով, ՀՀ տնտեսության համար հրամայական է այնպիսի դրամավարկային քաղաքականության իրականացումը, որը կլավարկի ՀՀ առևտրային հաշվեկշիռը և կբարձրացնի ՀՀ մրցունակությունը և՛ ԵԱՏՄ տարածաշրջանում, և՛ նաև այլ երկրներում:

Մայիս, 2016թ.

ՀՀ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻ ՎՐԱ

Աղասի Թավադյան

Ամփոփագիր

Ելնելով առևտրային հաշվեկշռի ներկա իրավիճակից՝ Հայաստանի Հանրապետությունում առկա է վերջինիս լավարկան և մրցունակության բարձրացման հստակ հիմնախնդիր: Իրական տոկոսադրույքի համեմատաբար մեծ լինելու դեպքում դրամավարկային գործիքների ազդեցությունը շուկայի մասնակիցների վրա հիմնականում զսպող է: Այս դեպքում դրամավարկային քաղաքականության ուղղվածությունն ունի ավելի շուտ շուկայական հարաբերությունները զսպող, քան գնաճը կարգավորող բնույթ: Տնտեսության զարգացման և առևտրային հաշվեկշռի լավարկման համար նպատակահարմար է, որ իրական վերաֆինանսավորման տոկոսադրույքը չգերազանցի 2%-ը: Վերաֆինանսավորման տոկոսադրույքի և պահուստավորման նորմի աստիճանական իջեցումը նպաստավոր է ՀՀ տնտեսության աճի և մրցունակության բարձրացման համար:

ВЛИЯНИЕ НА ТОРГОВЫЙ БАЛАНС ДЕНЕЖНО-КРЕДИТНОЙ ПОЛИТИКИ РА

Агаси Тавадян

Резюме

Исходя из структуры торгового баланса, перед Арменией стоит проблема его существенного улучшения и повышения уровня конкурентоспособности. При сравнительно высокой реальной ставке рефинансирования влияние денежно-кредитных инструментов на рынок в основном носит ограничительный характер. В этом случае денежно-

кредитная политика фактически больше сдерживает рост экономики, чем регулирует инфляцию. Для роста экономики и для улучшения состояния торгового баланса целесообразно, чтобы реальная ставка рефинансирования не превышала 2%. Поэтапное снижение ставки рефинансирования и нормы обязательного резервирования способствует росту экономики и повышению конкурентоспособности РА.

THE IMPACT OF MONETARY POLICY ON THE TRADE BALANCE OF THE REPUBLIC OF ARMENIA

Aghasi Tavadyan

Resume

With the current structure of the trade balance, Armenia faces the problem of trade balance optimization and needs to increase its competiveness. With a relatively high real refinance rate, the monetary instruments have a mostly curtailing effect on the market. In this case, the monetary policy in fact holds back the economic growth instead of regulating the inflation. For the economic growth and optimization of the trade balance it would be prudent if the real refinancing rate would not exceed 2%. Gradual reduction of the refinancing rate and reserve requirements would contribute to economic growth and increase the competiveness of the Armenian economy.

ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԵՎ ԱՐԴԱՀԱՆԻ ՇՈՒՐՋ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ (1919Թ. ՀՈՒՆՎԱՐ-ԱՊՐԻԼ)

Շիրակ Թորոսյան*

Բանալի բառեր ՝ հայ-վրացական հարաբերություններ, Կարսի մարզ, Արդահանի գավառ, հայ-վրացական տարակարծություններ, բրիտանական օկուպացիոն իշխանություններ, մահմեդական շուրա:

Հոդվածում անդրադառնում ենք հայ-վրացական տարակարծությունների ծագմանը և դրանց պատճառներին:

Բանն այն է, որ Վրաստանի մենշևիկյան կառավարությունը հավակնում էր ոչ միայն Արդահանի, այլ նաև Կարսի մարզի մեկ այլ՝ Օլթիի գավառին, ինչպես նաև Էրզրումի վիլայեթի՝ Օլթիին հարակից Սպերի, Թորթոմի, Բաբերդի գավառներին [1]:

Եթե ուշադիր հետևենք քարտեզին, ապա կտեսնենք, որ Արդահանի գավառը Հայաստանի համար հանդիսանում է մերձսևծովյան տարածքներով դեպի Սև ծով դուրս գալու միակ դարպասը: Քանի դեռ Կարսի մարզի Օլթիի գավառը և Էրզրումի վիլայեթը գտնվում էին թուրքերի ձեռքին, վրացիներն ապահով էին, քանի որ Հայաստանի ծովային ելքը «հուսալիորեն» ձախողված էր: Սակայն, երբ Կարսի մարզը միացվեց Հայաստանին և Փարիզի վեհաժողովում սկսեց քննարկվել նաև Էրզրումը հանձնելու հարցը, անհանգստացած վրաց մենշևիկ կառավարիչները, «պատմական իրավունքի» վրա հիմնվելով, պահանջեցին Արդահանից հարավ-արևմուտք գտնվող Օլթիի գավառը, այստեղից ուղիղ գծով դեպի արևմուտք՝ Էրզրումի նահանգի՝ Թորթումի, Սպերի և Բաբերդի գավառները, ապա դեպի հյուսիս-արևմուտք՝ Տրապիզոնի վիլայեթի Գյումուշխանեի գավառը և ուղիղ գծով հյուսիս՝ մինչև Տրապիզոնի նավահանգիստը [1, էջ 3]: Նույնիսկ անզեն աչքով է տեսանելի, որ եթե անգամ Կարսի մարզի

* Պ.գ.թ., ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դասախոս, «Ջավախք» հայրենակցական միության նախագահ, ՀՀ ԱԺ պատգամավոր:

մնացած գավառները (Կարս, Կաղզվան) և Էրզրումի վիլայեթի մյուս տարածքները (Էրզրում, Դերջան, Երզնկա և այլն) մաս կազմեին Հայաստանին, ապա, միևնույն է, վերջինս զրկված էր լինելու ծովային ելքից: Սակայն, չնայած այս բոլորին, քանի որ հիմնական իրադարձությունները տեղի են ունեցել Արդահանի շուրջը, մենք գլխավորապես կկենտրոնանանք այս խնդրի վրա:

Ցանկացած վիճելի տարածքի նկատմամբ դրսևորվող հավակնությունների հիմքում հիմնականում ընկած է տվյալ պետության ռազմավարական շահը, սակայն կողմերը, որպես կանոն, աշխատում են այդ հավակնությունները հիմնավորել պատմական իրավունքի կամ ազգագրական իրավիճակի փաստարկներով: Ուստի, պետք է համադրել հայ և վրաց պատմագրությունների տեսակետներն այս խնդրի շուրջ, վերլուծել դրանք և հասկանալ, թե ում օգտին են խոսում փաստերը:

Արդահանը Մեծ Հայքի Գուգարք նահանգի հիմնական ինը գավառներից (Զորոփոր, Կողբոփոր, Ծոբոփոր, Տաշիր, Թռեղք, Կանգարք, Կղարջք, Վերին Ջավախք, Արտահան) մեկն է[1]: Արդահանի մասին հնագույն ժամանակաշրջանում առանձին տեղեկություններ գրեթե չկան, հետևաբար նրա պատմությունը հիմնականում դիտարկվում է Գուգարք նահանգի պատմության համատեքստում: Ք.ա. 2-րդ հազարամյակում Արդահանը, ինչպես նաև Գուգարքի այլ գավառներ, հավանաբար, մաս են կազմել այդ ժամանակաշրջանում գոյություն ունեցած հայկական հնագույն պետական կազմավորումներից Դայա-Դիաուխիին (Տայք) կամ Էթիունիին: Հետագայում Վանի թագավորության արքա Արգիշտի 1-ինը Ք.ա. 785-784թթ. գրավում է Դիաուխին և մի շարք այլ երկրներ: Երվանդունիների ժամանակաշրջանում՝ մոտավորապես Ք.ա. 3-րդ դարում, ձևավորվում է Գուգարքի բդեշխությունը, որի մեջ, բնականաբար, մտնում էր նաև Արդահանի տարածքը [2, էջ 154]:

Ք.ա. 3-2-րդ դարերում հայ և վրաց թագավորությունները պայքար են մղել Գուգարքի համար: Ինչպես հայտնի է «վրացական տարեգրության» (ქართლის ცხოვრება) մի տեղեկությամբ, վրացիներն Արտաշեսի դեմ պայքարում դուրս են բերել օսերին (ալաններին): Սկզբում վրաց-օսական ուժերը հաջողություն են արձանագրում՝ ներխուժելով Սոմխիթ (Հայաստան),

[1] *Երեմյան Ս.,* Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 110: Տ.Սահակյանը թվարկում է Գուգարք նահանգի 16 գավառ: Տե՛ս *Սահակյան Տ.,* Գուգարք-Գոդերձական տարածաշրջանի քաղաքական և հոգևոր-մշակութային ճակատագիրն ի սկզբանե մինչև 1980-ական թվականները, Երևան, 2004, էջ 6-7:

և Ցելի (Չլդր) լճի շրջակայքում գերի են վերցնում հայոց արքայազն Զարեհին: Սակայն շուտով Արտաշեսի որդիներ Արտավազդն ու Տիգրանը հայոց զորքով Թռեղքում հասնում են թշնամուն և ստիպում հաշտություն կնքել, որով գերությունից ազատվում է Զարեհը, և Գուգարքն ամբողջությամբ վերադարձվում է Մեծ Հայքին[1]: Ինչպես հայտնի է, Ցելի կամ Չլդր լիճը գտնվում է Արդահանի շրջանում:

Արտաշեսյանների և Արշակունիների կառավարման ժամանակաշրջանում Գուգարքը եղել է Հայաստանի կազմում՝ որպես հյուսիսային սահմանապահ բդեշխություն: Արշակունյաց հարստության կործանումից հետո Գուգարքի բդեշխությունը միացվում է Սասանյան Պարսկաստանից կախյալ վրաց թագավորությանը (մարզպանությանը):

Արաբներն իրենց տիրապետության ժամանակաշրջանում հիմնականում պահպանեցին Սասանյանների վարչական բաժանումը, որի հետևանքով Գուգարքը Վիրքի մարզպանության կազմում մտավ երկրորդ Արմինիայի մեջ:

Բագրատունիների կառավարման շրջանը վճռորոշ ժամանակահատված է Արդահանի պատկանելության շուրջ հայ-վրացական վեճի առումով, և քանի որ այս ընթացքում թե՛ Հայաստանում և թե՛ Վրաստանում իշխում էին Բագրատունիները, հետևաբար հայ և վրաց պատմագրության մեջ տարածքային վեճն անուղղակիորեն վերածվում է Բագրատունիների ծագումնաբանության վեճի՝ այն է. նրանք հայկակա՞ն, թե՞ վրացական ծագում ունեն, որով և հեշտ կլինի հիմնավորել Արդահանի և այլ վիճելի տարածքների պատկանելության հարցը:

Պատմական աղբյուրներում հիշատակվում է Բագրատունիների հրեական ծագման մասին:

Սակայն հայկական պատմական ավանդությունը Բագրատունիներին համարում է Հայկ նահապետի, իսկ վրացական ավանդությունը՝ վրաց Փառնավազյան արքայատոհմի սերունդներից [3]:

Ըստ էության, Բագրատունիները հայ քաղաքական կյանքում նշանակալի դերակատարում են ունեցել առնվազն Ք.ա. 3-րդ դարից սկսած [2, էջ 148-151], իսկ համաձայն վրաց պատմագրության, Վրաստանի քաղաքական ասպարեզում նրանք հանդես են եկել միայն 6-րդ դարում [4], այստեղից կարելի

[1] Տե՛ս ქართული მატიანე, ტ. 1, თბილისი, 1955, გვ. 48-49 (Վրացական տարեգրություն, հ. 1, Թբիլիսի, 1955, էջ 48-49):

է եզրակացնել, որ Բագրատունիների հայկական ծագումն ավելի հավաստի է:

Խորհրդային պատմաբան Վ.Ստեպանենկոն, տուրք տալով վրաց պատմագրության վարկածներին, նշում է, որ Տաո-Կլարջեթիի (Տայք-Կղարջք) իշխանապետության մեջ մտնում էին Կլարջեթին (Կղարջք), Շավշեթին (Շավշք), Իսպիրը (Սպեր), (այլ աղբյուրներում՝ նաև Թորթումը և Բաբերդը), Տաոն (Տայք) և Կուրի վերին հոսանքներում՝ Կոլան (Կող), Արդահանը, Սամցխեն և Ջավախեթին (Ջավախք)[1]: Պարզից էլ պարզ է, որ այս փաստը չի համապատասխանում պատմական իրականությանը, քանի որ Տայքը և Կղարջքը եղել են առանձին իշխանապետություններ, իսկ Արդահանը հայ Բագրատունիների թագավորության մաս է կազմել [5]:

Սպեր գավառը եղել է Բագրատունիների ժառանգական տիրույթը [6]: Այն Բարձր Հայքի գավառներից մեկն էր [7], որը հետագայում մտավ Էրզրումի վիլայեթի մեջ: Առաջին հայացքից թվում է, թե վրաց պատմագրությունը Սպերը տեղադրում է Տաո-Կլարջեթիի թագավորության կազմում՝ ելնելով նրա Բագրատունիների ժառանգական տիրույթ լինելու հանգամանքից: Սակայն Էրզրումի նահանգի՝ Օլթիին հարակից Սպերի, Թորթումի և Բաբերդի գավառների նկատմամբ վրաց հավակնությունները հեռուն տանող նպատակներ են հետապնդում, որին արդեն անդրադարձել ենք:

Անիի Բագրատունիների անկումից հետո Արդահանը գտնվել է տարբեր տիրապետությունների ներքո: 1578թ. այն գրավում են թուրքերը և մտցնում Չլդրի վիլայեթի մեջ: Ըստ «Գյուրջիստանի վիլայեթի մեծ դավթարի», վերջինս ունեցել է 9 գավառ՝ լիվա, որոնցից էին Մեծ Արտահանի և Օլթիի գավառները[2]: Մեծ Արտահանի գավառում հայերը բացարձակ մեծամասնություն են կազմել: Այնտեղ գտնվող Փարականի բերդի հարկ վճարողների ցուցակներում հիշատակվում են Մկրտիչ Անտոնի, Խաչատուր Ասվատուրի, Մելիք, նրա եղբայր Կիրակոս, Գրիգորի թոռ, Հայրապետի թոռ, Վարդան Տղապարոնի անունները, Դուդունա գյուղում՝ Տեր Հակոբ, Խաչիկ, Մարգար և այլ հայկական անուններ[3]:

Թուրքական տիրապետությունն Արդահանում տևեց մինչև 1878թ., երբ Սան Ստեֆանոյի պայմանագրով այն անցավ Ռուսաստանին և Կարսի մար-

[1] Այս մասին և Տաո-Կլարջեթիին առնչվող այլ մանրամասները տե՛ս *Степаненко В.П.,* Политическая обстановка в Закавказье в первой половине XIв., Свердловск, 1975, стр. 124-131.

[2] Տե՛ս გიურჯისტანის ვილაიეთის დიდი დავთარი, წიგნი 2, თბილისი, 1941, გვ. 7 (Գյուրջիստանի վիլայեթի մեծ դավթարը, գիրք 2, Թբիլիսի, 1941, էջ 7):

[3] Նույն տեղում, էջ 403:

զի մաս կազմեց: Արդահանի գավառը բաղկացած էր չորս ոստիկանական տեղամասերից. հյուսիսում Փոցխովի տեղամասը՝ Դիգուր կենտրոնով, կենտրոնում՝ Արդահանի տեղամասը՝ Արդահան կենտրոնով, արևելքում՝ Չլդրի տեղամասը՝ Զուրզունա կենտրոնով և հարավ-արևմուտքում՝ Գյոլի (Կող, Կոլա) տեղամասը՝ Օկամ կենտրոնով [1, էջ 4]: Կարսի մարզը, այդ թվում նաև Արդահանը, վերստին Թուրքիային անցան 1918թ. մարտի 3-ին կնքված Բրեստ-Լիտովսկի պայմանագրով, իսկ հունիսի 4-ին կնքված Բաթումի պայմանագրով կրկին ամրագրվեց Թուրքիայի կազմում:

Ահա այսպիսին էր Արդահանի գավառի և նրա նկատմամբ հայերի ու վրացիների ունեցած հավակնությունների պատմական հիմնավորումների համառոտ նկարագիրը, երբ ձևավորվեցին Հայաստանի և Վրաստանի առաջին հանրապետությունները, և Արդահանը դարձավ այս նորաստեղծ հանրապետությունների տարածքային վեճի առարկաներից մեկը:

Առաջին Հանրապետության գոյության ընթացքում վրացական հավակնություններն Արդահանի նկատմամբ դրսևորվեցին 1918թ. դեկտեմբերին: Այդ ժամանակ Վրաստանի ոչ պաշտոնական ներկայացուցիչներ Զուրաբ Ավալովը (Ավալաշվիլի) և Դավիթ Գամբաշիձեն Լոնդոնում շրջանառության մեջ դրեցին փաստաթղթեր, որոնցում սահմանում էին Վրաստանի Հանրապետության տարածքները, ներառյալ այն շրջանները, որոնք դեռևս իրենց կառավարության իրավասության տակ չէին մտնում, այդ թվում նաև Օլթին և Արդահանը: Նրանք մերժում էին Հայաստանի իրավունքը Կարսի մարզի հյուսիսային կեսի նկատմամբ [8, էջ 312]: 1919թ. մարտին վրաց պաշտոնական ներկայացուցիչներ Նիկոլայ Չխեիձեն և Իրակլի Ծերեթելին Կ.Պոլսից հասան Փարիզ և մարտի 14-ին Հաշտության վեհաժողովին ներկայացրին Վրաստանի նախնական հուշագիրը, որով թվարկում էին Վրաստանի տարածքները՝ Թիֆլիսի, Քութաիսի և Բաթումի նահանգներն ամբողջությամբ, Սուխումի, Զաքաթալայի, Օլթիի և Արդահանի շրջանները և Տրապիզոնի վիլայեթի մի ընդարձակ մասը (ներառյալ Լազիստանը) [9]: Մինչ այդ՝ փետրվարի 12-ին, հայկական զույգ պատվիրակությունների ղեկավարներ Ավետիս Ահարոնյանը և Պողոս Նուբար փաշան Փարիզի խաղաղության վեհաժողովին էին ներկայացրել հայկական պահանջները, որոնցում մասնավորապես նշվում էր, որ մեծ Հայաստանի կազմի մեջ պետք է մտնի բացի արևմտահայկական նահանգներից նաև Կովկասի Հայկական հանրապետու-

թյան ամբողջ տարածքը, որը պարունակում է Երևանի ամբողջ գավառը, նախկին Թիֆլիսի նահանգի հարավային մասը, Գանձակի նահանգի հարավ-արևմտյան մասը, Կարսի մարզը՝ բացի Արդահանից հյուսիս ընկած շրջանից [10]: Ինչպես տեսնում ենք, Կարսի մարզի հյուսիսային երկու գավառներին՝ Օլթիին և Արդահանին հավակնում էին վրացիները, իսկ հայերը՝ ամբողջ մարզին, բացի Արդահանի գավառում Կուրից հյուսիս ընկած հատվածից (Արդահանի տեղամասի հյուսիսային մասը և Փոցխովի տեղամասը): Անտեղի չէ այստեղ նշել, որ մինչև Առաջին աշխարհամարտը Կարսի մարզն իր չորս գավառներով՝ Կարս, Կաղզվան, Օլթի և Արդահան, ունեցել է 404 հազ. բնակիչ, որից 123.170-ը՝ հայ, 4226-ը՝ վրացի, 102.860-ը՝ թուրք-թաթար, 54.931-ը՝ քուրդ, 118.000-ը՝ ռուսներ, հույներ, բոշաներ, դարափափախներ և այլն [11]: Առավել հայաշատ էին Կարսի և Կաղզվանի գավառները՝ համապատասխանաբար 81 հազ. և 35 հազ. հայ [8, էջ 217]: Բերված թվերն ակնհայտորեն ցույց են տալիս, որ հայերը մարզում կազմել են հարաբերական մեծամասնություն:

Սակայն թե՛ Հայաստանի և թե՛ Վրաստանի համար դեռ վաղ էր երազել՝ տիրանալ Կարսի մարզում իրենց հավակնած տարածքներին: Ի դեպ, նշենք, որ դեռևս Տրապիզոնի խորհրդաժողովում՝ 1918թ. մարտին, ինչպես գրում է Հովհ. Քաջազնունին, վրացիները շահագրգռված էին հատկապես Բաթումի հարցով և այն փրկելու համար պատրաստ էին թուրքերին զիջել Կարսն ու Արդահանը [12]: Իսկ երբ Բրեստ-Լիտովսկի պայմանագիրն ուժը կորցրեց, վրաց մենշևիկները նոր միայն հավակնություն ցուցաբերեցին Արդահանի նկատմամբ:

Ըստ Մուդրոսի զինադադարի պայմանագրի 11-րդ հոդվածի՝ թուրքական զորքերն ստացել էին Անդրկովկասի մի մասից տարհանվելու հրաման, իսկ մնացած զորքերը կհեռացվեին, եթե տեղերում իրադրությունն ուսումնասիրելուց հետո դաշնակիցները ներկայացնեին այդպիսի պահանջ [13]: Իսկ այդ մնացած մասը, որտեղից թուրքերը չէին հեռացել, Կարսի մարզն էր և Բաթումի մարզի մի մասը [8, էջ 217]: Սակայն արդեն նոյեմբերի 11-ին Միջերկրական ծովում բրիտանական ուժերի գլխավոր հրամանատար, փոխծովակալ Գոֆ-Քալթրոպը Թուրքիայի մեծ վեզիր Ահմեդ Իզզեթ փաշային ուղարկեց մի հաղորդագրություն, որով բրիտանական կառավարության անունից պահանջում էր զորքերը հետ քաշել ռուս-թուրքական նախապատերազմյան սահմանից այն կողմ, իսկ նոյեմբերի 24-ին օսմանյան գլխավոր սպայակույտը տեղեկացավ, որ Կարսից, Արդահանից և Բաթումից թուրքական զորքերի

դուրսբերումը պահանջող որոշումն ընդունվել է դաշնակիցների գերագույն ռազմական խորհրդի կողմից [8, էջ 218]:

Անգլիացի գեներալ-մայոր Ջ.Թ. Ֆորեստիր-Ուոքերի վրա էր դրված արևմտյան Անդրկովկասից օսմանյան զորքերի դուրսբերման պատասխանատվությունը: Նա 1919թ. հունվարի 7-ին մտավ Կարսի մարզ և իր գնացքում թուրքական հրամանատար Յակուբ Շևքի փաշային տվեց ցուցումներ, որոնցով, մասնավորապես, նախատեսվում էր մինչև հունվարի 25-ը թուրքական զորքերը դուրս բերել Կարսից: Հաջորդ օրը՝ հունվարի 8-ին, Ջ.Ֆորեստիր-Ուոքերն Ալեքսանդրապոլում համաձայնագիր կնքեց Հայաստանի արտգործնախարար Սիրական Տիգրանյանի հետ, համաձայն որի՝ թեպետ Կարսում հաստատվելու էր անգլիական զինվորական նահանգապետություն, սակայն բոլոր քաղաքացիական պաշտոնյաները նշանակվելու էին Հայաստանի կառավարության կողմից [14, էջ 23]: Հայ պաշտոնյաները պետք է պատրաստ լինեին Կարս մեկնել հունվարի 12-ին [15]: Այս համաձայնագրի ստորագրումից հետո գեներալ Ջ.Ֆորեստիր-Ուոքերը կապիտան Քլայվ Թեմփրլիին նշանակեց Կարսի զինվորական նահանգապետ, իսկ Հայաստանի կառավարությունը՝ Ստեփան Ղորղանյանին՝ որպես քաղաքացիական նահանգապետ [8, էջ 220-223]: Այս ամենից ելնելով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հունվարի 14-ին ընդունեց Կարսի մարզը Հայաստանին միացնելու մասին որոշումը, ըստ որի՝ կազմակերպվում էին նահանգի և շրջանների քաղաքացիական վարչությունը, միլիցիան և ժանդարմերիան՝ 400 հոգուց բաղկացած և համապատասխան սպայական կազմով, երկաթուղու Կարս-Ալեքսանդրապոլ գծի վարչությունն ու ծառայողների հաստիքացուցակը[1]: Սակայն Կարսի և Արդահանի մահմեդականները որոշել էին չհնազանդվել: Թուրքական 9-րդ բանակի հրամանատար Յ.Շևքի փաշան հայտարարեց, որ ոչ վրացիները և ոչ էլ հայերն այդ տարածքին տիրանալու իրավունք չունեն, քանի որ, ըստ նրա, նրանցից որևէ մեկի Կարսի նահանգ մտնելուն կհետևեր բազմաթիվ անմեղ մարդկանց լիակատար ոչնչացումը [8, էջ 219]:

Դեռևս 1918թ. նոյեմբերի 5-ին Կարսում, Յ.Շևքի փաշայի աջակցությամբ հրավիրված մարզի մահմեդական առաջնորդների համաժողովում, կազմվեց Կարսի մահմեդական խորհուրդը, իսկ դեկտեմբերին այն փոխարինվեց ազգային մահմեդական խորհուրդով (շուրա): Իսկ 1919թ. հունվարի 17-18-ին

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 206, ց. 1, գ. 27, թ. 21:

Կարսում համաժողովի հավաքվեցին մահմեդականների 100-ից ավելի պատվիրակներ և հռչակեցին «Հարավարևմտյան կովկասյան հանրապետություն»՝ Կարս և «Արաքսյան հանրապետություն»՝ Նախիջևան կենտրոններով [16] և կազմեցին այդ ինքնահռչակ «հանրապետության» ժամանակավոր կառավարություն՝ շուրա [17, էջ 175]: Կարսի շուրան տրամադրված էր ամրապնդելու իր իշխանությունը և պաշտպանելու Թուրքիայի շահերը նահանգում: Եվ երբ Կարսի զինվորական նահանգապետ Թեմփրլին և քաղաքացիական նահանգապետ Ղորղանյանը նորանշանակ հայ պաշտոնյաների հետ բրիտանական մեկ հրաձգային վաշտի ուղեկցությամբ մեկնեցին Կարս, հարյուրավոր զինված մահմեդականներ փակեցին նրանց ճանապարհը և պահանջեցին հայերից՝ հեռանալ: Տեսնելով մահմեդականների այս ընդվզումը՝ Թեմփրլին հրահանգեց հայ պաշտոնյաներին հեռանալ Կարսից և ոչ պաշտոնապես ճանաչեց մահմեդական շուրան [18]: Փաստորեն, բրիտանական հրամանատարությունը կտրուկ փոխեց վերաբերմունքը շուրայի նկատմամբ և սկսեց համագործակցել վերջինիս հետ: Ավելին, Ջ.Ֆորեստիր-Ուոքերը հունվարի 21-ին ՀՀ արտգործնախարար Ս.Տիգրանյանին գրած նամակով հետ կանգնեց հունվարի 8-ին կնքված համաձայնագրից[1]: Այս կապակցությամբ Վրաստանում Հայաստանի պատվիրակության ղեկավար Մ.Հարությունյանը բողոքի նամակ է հղում Թիֆլիսում դաշնակիցների հրամանատարությանը, որում նշում է, որ գեներալ Ջ.Ֆորեստիր-Ուոքերը հրաժարվում է Կարսի նահանգում հայկական վարչություն հաստատել, որն անհրաժեշտ է: Հակառակ դեպքում մուսուլմանական ժողովրդի կողմից կարող են տեղի ունենալ ցավալի հետևանքներ[2]:

Կարսի հարցում բրիտանական հրամանատարության հակահայ քաղաքականությունն իր պատճառներն ուներ, որը սերտորեն առնչվում էր Ռուսաստանի հետ: Ճիշտ է, դաշնակիցներն ու Ռուսաստանի հարավի կամավորական բանակն ընդհանուր շահեր ունեին բոլշևիկների դեմ պայքարում, սակայն գեներալ Դենիկինի դեպի հարավ ծավալումն ու Ռուսական կայսրության վերականգնման ձգտումները չէին ներդաշնակվում Համաձայնության երկրների աշխարհաքաղաքական ընկալումներին: Եվ քանի որ հայերը համարվում էին անուղղելի ռուսասերներ, ուստի, դաշնակիցների

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 92, մաս I, թ. 77ա:
[2] Նույն տեղում, գ. 150, թ. 183ա:

պատկերացմամբ, տալ Հայաստանին որևէ տարածք՝ նույնն է, թե տալ Ռուսաստանին: Սակայն Հայաստանի կառավարությունն ու խորհրդարանը շարունակում էին Կարսի մարզը Հայաստանին միացնելու քաղաքականությունը և այդ կապակցությամբ տարբեր որոշումներ ու օրենքներ էին ընդունում: Օրինակ, 1919թ. փետրվարի 4-ին խորհրդարանը քննարկում և ընդունում է «Կարսի մարզում երեք հաշտարար և երեք քննիչ բաժանմունք բանալու մասին» օրենքը, ըստ որի՝ բացվում են Կարսի, Կաղզվանի և Արդահան-Օլթիի հաշտարար և քննիչ բաժանմունքները՝ համապատասխանաբար Կարս, Կաղզվան և Արդահան քաղաքներում[1]: Այս ամենը դրությունը չփրկեց:

Ստեղծված իրավիճակից հմտորեն օգտվեցին թուրքերը: Վերջիններս փորձեցին Բաթումի և Կարսի նահանգների նկատմամբ գեներալ Դենիկինի ձգտումները հակադրել Անգլիայի հակառուսական քաղաքականությանը: Թուրքերը խորամանկորեն հայտարարեցին, որ եթե Կարսի նահանգում թուրքական իշխանություն չի լինելու, ապա իրենք կընդունեն միայն ռուսական իշխանությունը [19, стр. 211]:

Փաստորեն, ստեղծվել էր բացառիկ իրավիճակ, երբ թուրք-ռուսական շահերը համընկնում էին, իսկ անգլիացիները, տուրք տալով իրենց բնորոշ ռուսատյացությանը, ակամա ջուր էին լցնում թուրքերի ջրաղացին, որի արդյունքում տուժում էր նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունը: Սակայն թուրքերի անգլիական զինվորական իշխանություններին չենթարկվելու կամայական վարքագիծը, ինչպես նաև բացահայտ շեշտադրված ռուսասիրությունն ի վերջո սթափեցրին անգլիացիներին, և վերջիններս, արդեն մարտի վերջին, վերստին որդեգրեցին Կարսի մարզը Հայաստանին հանձնելու քաղաքականությունը:

Բայց, մինչ դրան անդրադառնալը, քննարկենք Կարսի մարզի նկատմամբ Վրաստանի հավակնությունների հարցը: 1919թ. հունվարի կեսերին, երբ անգլիացիների աջակցությամբ նախապատրաստվում էին Կարսի մարզում հայկական վարչություն հաստատելու գործողությունները, գեներալ Ֆորեստիր-Ուոքերը, տուրք տալով Վրաստանի հավակնություններին, հայտարարեց, թե որևէ արգելք չի տեսնում վրացիների կողմից Փոցխովը գրավելու հարցում, բայց երբ գեներալ Կվինիտաձեի վրացական զորքերը ձեռնամուխ եղան այդ տեղամասի գրավմանը, դա առաջացրեց մահմեդականների զինված դիմա-

[1] Նույն տեղում, ֆ. 198, ց. 1, գ. 15, թ. 105:

դրությունը, և Կարսի նահանգապետը հայտարարեց, որ վրացիների հարձակումը կդիտվի հարձակում՝ ուղղված Մեծ Բրիտանիայի դեմ [19, стр. 212]: Պետք է նշել, որ վրացիների կողմից Փոցխովի տեղամասը գրավելու Ուոքերի համաձայնությունը տեղավորվում էր հայկական զույգ պատվիրակությունների կողմից Փարիզի վեհաժողովին ներկայացված տարածքային պահանջների տրամաբանության մեջ, սակայն անգլիացիների դիրքորոշման կտրուկ փոփոխությունը և վրացիներին Արդահանի գավառի Փոցխովի տեղամասի գրավումն արգելելը, ըստ էության, բխում էին նույն թուրքասիրության գործոնից: Բացի դրանից, կար նաև այլ հանգամանք. անգլիացիները, ելնելով նրանից, որ հայերը չեն հավակնում Արդահանի գավառի հյուսիսարևմտյան հատվածին (Արդահանի տեղամասի՝ Արդահան քաղաքից հյուսիս ընկած տարածքը և Փոցխովի տեղամասը), մտադիր էին առավելապես մուսուլմանաբնակ այդ տարածքը միացնել Բաթումի մարզին: Այդ է վկայում նաև ՀՀ արտգործնախարար Սիրական Տիգրանյանի 1919թ. հունվարի 13-ի նամակը Փարիզում ՀՀ պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոնյանին, որտեղ մասնավորապես կարդում ենք. «…Կարսի ողջ նահանգը (անգլիացիները- *Շ.Թ.*) Հայաստանի բաժին են համարում և միայն արևմտյան զուտ մուսուլմանաբնակ մասը հնարավոր են գտնում զատելու (և կցելու Բաթումին)…»[1]: Այստեղ արժե հիշատակել, որ անգլիացիները Բաթումի մարզում, մինչև այն Վրաստանին հանձնելը, չթույլատրեցին վրացական վարչություն հաստատել: Դա պայմանավորված էր Բաթումի ռազմավարական նշանակությամբ, որը բրիտանական հրամանատարությունը շատ էր կարևորում: Բաթումի մարզի հետ կապված՝ անգլիացիները, ինչպես արդեն նշել ենք, հեռուն գնացող նպատակներ ունեին: Այս կապակցությամբ ՀՀ արտգործնախարար Ս.Տիգրանյանի վերը նշված նամակում կարդում ենք հետևյալը. «…ամբողջ նահանգում (Կարսի- *Շ.Թ.*) ընդունում են (անգլիացիները– *Շ.Թ.*), որ լինի մեր ադմինիստրացիան, Հայաստանի ներքին գործերի մինիստրից կարգված, և մեր ժանդարմերիան մեր զորական մինիստրությունից կախված. այս բոլորը չի լինելու Բաթումի նահանգում Վրաստանի նկատմամբ: …Բաթումի նահանգում միակ տերն ու տնօրենը նույն շրջանի բրիտանական զորական կառավարիչն է՝ առանց վրաց կառավարության որևէ միջամտությամբ…»[2]:

[1] Տե՛ս ԳԱԹ, ՀՅԴ արխիվ, Բոստոն, թիվ 4063, նաև՝ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, մաս I, թ. 26, նաև՝ նույն տեղում, ց. 2, գ. 65, թ. 3:

[2] ԳԱԹ, ՀՅԴ արխիվ, Բոստոն, թիվ 4063:

Փոցխովի գրավումը հիմնավորելու և անգլիացիների մոտ արդարանալու նպատակով վրացիները դիմեցին հայերին զրպարտելու հին ու փորձված մեթոդին՝ վերջիններիս ներկայացնելով իբրև մոլի ռուսասերներ, և քաջ գիտակցելով, որ դա անգլիացիներին հայերի դեմ տրամադրելու արդյունավետ միջոց կարող է լինել: Ստորև բերված փաստաթղթերում անգլիացիների քաղաքականության վերլուծությունն ակնհայտ է դարձնում վրացիների վերոնշյալ վարքագծի իսկությունը: 1919թ. հունվարի 13-ին Խատիսյանի կողմից Փարիզ, Ա.Ահարոնյանին հղված նամակից տեղեկանում ենք, որ վերջինիս և գեներալ Ֆորեստիր-Ուոքերի միջև Ալեքսանդրապոլում տեղի ունեցած հանդիպման ժամանակ անգլիացի գեներալը հետաքրքրվել է, թե «արդյոք ճիշտ է, որ Հայաստանի կառավարությունը համաձայնության է եկել գեներալ Դենիկինի հետ («Կամավորական բանակ») Վրաստանի անկախությունը ճնշելու… Ես իհարկե հանգստացրի անգլիացի գեներալին, որ թեև մենք լավագույն հարաբերություններ ունենք «Կամավորական բանակի» հետ, բայց ոչ մի համաձայնություն չունենք… Եվ լիովին հարգել ենք և հարգում ենք Վրաստանի անկախությունը, վրաց կառավարությունն էր, որը ոտնահարեց անկախ Հայաստանի տերիտորիալ իրավունքները Ախալքալաքում ու Բորչալուում, զորական ուժով գրավելով այդ երկրները և հարկադրելով իրեն հպատակվել դրանց հայ բնակչությանը, որը Հայաստանի քաղաքացի է ուզում լինել ու մնալ…»[1]: 1919 թվականի փետրվարի 9-ին Թիֆլիսի հայկական դիվանագիտական առաքելության խորհրդական Թումանովի՝ ՀՀ արտգործնախարար Ս.Տիգրանյանին գրած նամակում կարդում ենք. «…Վրացական շրջանակներն աշխատում են անգլիացիներին համոզել, որ հայերը ցանկանում են ռուսների վերադարձը Կովկաս և անբավական են անգլիական քաղաքականությունից…»[2]: Թիֆլիսից Ս.Տիգրանյանին ուղարկված 1919 թվականի հունվարի 27-ի թվագիր մեկ այլ զեկուցագրում նշված է. «…Վրացիները ձգտում են համոզել անգլիացիներին, որ Հայաստանը միայն երազում է Ռուսաստանի հետ վերամիավորվելու մասին: Սրանից երեք օր առաջ Վրաստանի կառավարության անդամներից մեկն ինձ հավաստիացրեց, որ օրերս Երևանում դաշնակցության ժողովի ժամանակ առաջ է քաշվել քաղաքական բնույթի մի բանաձև, որով պահանջվել է Անդրկովկասյան Հայաստանի վերամիավորումը միասնական Ռուսաստանին…»[3]: Չնայած

[1] ՀԱԱ ֆ 200, ց. 2, գ. 65, թ. 1, նաև՝ ԳԱԹ, ՀՅԴ արխիվ, Բոստոն, N 4063:
[2] Նույն տեղում, ց. 1, գ. 181,մաս I, թ. 36:
[3] Նույն տեղում, գ. 193,մաս I, թ. 35, երես II:

նրան, որ այս զրպարտությունները չնպաստեցին Արդահանի գավառի նկատմամբ վրացիների հավակնությունների կենսագործմանը, սակայն ավելի խորացրին բրիտանական կառավարության կասկածները հայերի ռուսասիրության հարցում և բացասական ազդեցություն ունեցան Կարսի մարզը հայերին հանձնելու գործում:

Օգտվելով անգլիացիների բացահայտ աջակցությունից (Արևմտյան Անդրկովկասի բրիտանական զինվորական կառավարիչ Ֆորեստիր-Ուոքերի և Կարսի մարզի բրիտանական զինվորական նահանգապետ Ք.Թեմփրլիի հստակ թուրքամետ գործողություններից)՝ 1919թ. փետրվար-մարտ ամիսներին Հարավարևմտյան կովկասյան կառավարությունը (շուրա) կարողացավ ուժ հավաքել և հզորանալ: Վերջինս նույնիսկ սկսեց ոտնձգություններ իրականացնել հարևան տարածքների նկատմամբ: Եվ եթե հունվար ամսին վրացիներն էին ձգտում գրավել Արդահանը, ապա արդեն փետրվարի սկզբին շուրան իր գործակալական ցանցով ապստամբություններ հրահրեց Ախալքալաքի և Ախալցխայի գավառների մահմեդականների շրջանում և, աջակցելով նրանց, այդ գավառներից վտարեց վրացական կայազորները՝ տարածաշրջանում հաստատելով իր տիրապետությունը (1919թ. հունվարին հայ-վրացական հաշտության խորհրդաժողովում դաշնակիցների ճնշման ներքո Ախալքալաքի գավառն անցել էր Վրաստանին): Բաքվի ինֆորմացիոն բյուրոյի նախագահ Ա.Մալխազովի 1919թ. փետրվարի 7-ի թվակիր զեկույցում կարդում ենք հետևյալը. «…Ներկայումս ձևավորվել է իրեն «Հարավարևմտյան» կոչող նոր կառավարություն, որը ներառում է Ղարսի, Բաթումի և Արդահանի գավառները և հավակնում է Ախալցխայի վրա: Հաստատվում է, որ այդ կառավարությանը գաղտնի աջակցություն է ցուցաբերում անգլիական կառավարությունը: Դրա նպատակն է անմիջական սպառնալիքի ստեղծումը Վրաստանին, ուր Ախալցխայում արդեն բախումներ են տեղի ունենում, և լիակատար կախվածության մեջ դնել նրան դաշնակիցներից, ինչպես Հայաստանին և Ադրբեջանին»[1]: Ինչպես տեսնում ենք, անգլիացիների թողտվության և շուրայի ագրեսիվ վարքագծի արդյունքում Վրաստանը ևս կանգնեց լուրջ խնդիրների առջև: Այդ էր պատճառը, որ Վրաստանն աջակցեց Հայաստանին՝ պայքարի մեջ մտնելով հարևանությամբ ձևավորված նոր թշնամական պետության հետ: Վրաստանի վարչապետ Նոյ Ժորդանիան սուր քննադատության ենթարկեց բրիտանական

[1] Նույն տեղում, ֆ. 223, ց. 1, գ. 75, թ. 21:

քաղաքականությունը, որը պատճառ դարձավ վրացական տարածքում խռովությունների տարածմանը: Ավելին, Ժորդանիան վրդովեցուցիչ է համարում Ֆորեստիր-Ուոքերի հանդուրժողականությունը Կարսի մահմեդական խայտառակ շուրայի նկատմամբ, մի նահանգի, որն իրավացիորեն և ի բնե հայկական էր [8, էջ 230]: Վրաստանի ղեկավարության այս դիրքորոշումն իր արտացոլումը գտավ վրացական մամուլում: Թերթերը հատկապես դրական էին վերաբերվում այն հանգամանքին, որ հայերն իրենց ուշադրությունը հյուսիսից տեղափոխել են արևմուտք՝ դեպի Կարս և Թուրքահայաստան՝ պատմականորեն ճիշտ և բնական ուղղությամբ: Միաժամանակ, վրացական վերլուծաբանները, պաշտպանելով Հայաստանի հավակնությունները Կարսի մարզի նկատմամբ, հայտարարում էին մարզի հյուսիսային շրջանների, մասնավորապես Արդահանի գավառի նկատմամբ Վրաստանի իրավունքի մասին [20]: Սա վրացիների ավանդական քաղաքականությունն էր. շեղել Հայաստանը հայ-վրացական վիճելի տարածքների նկատմամբ հավակնություններից (Ջավախք, Լոռի), ուղղորդել վերջինիս դեպի արևմուտք՝ Թուրքահայաստան՝ հիմնավորելով, թե Անտանտի տերությունները Փարիզի վեհաժողովում թուրքահայկական վիլայեթների հաշվին մեծ Հայաստան են ստեղծելու, հետևաբար Հայաստանը տարածքների կարիք չի ունենա: Բայց երբ խոսքը վերաբերում էր դեպի Սև ծով Հայաստանին կենսականորեն այնքան անհրաժեշտ ելքին, ապա վրացիները հնարավոր ու անհնարին բոլոր խոչընդոտները հարուցում էին՝ ծովային ելքից հայերին զրկելու համար:

Կարսի շուրայի լկտի և ամբարտավան պահվածքը, ինչպես վերևում նշեցինք, լցրեց անգլիացիների համբերության բաժակը, և 1919թ. մարտի 2-ին Կարսի բրիտանական զինվորական նոր նահանգապետ նշանակված գեներալ Վերնի Ասերը ձեռնամուխ եղավ շուրայի սանձերը ձգելուն: Սակայն շուրան լիովին անկառավարելի էր դարձել, և Կարսից այդ մասին հավաստող զեկուցագրերը համոզեցին Կովկասում բրիտանական զորքերի հրամանատար, գեներալ Թոմսոնին, որ հայկական և վրացական զորքերին պետք է արտոնել գրավել մարզը՝ Կարսում տեղակայված անգլիական 27-րդ զորաբաժնի աջակցությամբ: Մարտի 14-ին Թոմսոնը հրավիրում է հայ և վրաց պաշտոնատար անձանց՝ վերջիներիս ծանոթացնելու իր տեսակետին և համոզելու երկու երկրներին՝ վերացնելու իրենց տարաձայնությունները: Ըստ նրա առաջարկի, Հայաստանին պետք է անցնեին Կարսի և Կաղզվանի շրջանները,

Վրաստանին՝ Արդահանի հյուսիսային կեսը, իսկ Օլթիի գավառը և Արդահանի մնացած մասը պետք է անցներ Բաթումի բրիտանական զինվորական նահանգապետի կառավարմանը: Բացի սրանից, գեներալ Թոմսոնն առաջարկում էր նաև, որ Հայաստանը Վրաստանին զիջեր Ախալքալաքը և Լոռու հյուսիսային մասը, ներառյալ Ալավերդի գյուղն ու հանքերը, իսկ Վրաստանը ճանաչեր Հայաստանի իրավասությունը մնացյալ Լոռու վրա, ներառյալ Սանահին գյուղն ու կայարանը: Հայոց ներկայացուցիչները, հրապուրվելով Կարսի և Կաղզվանի գավառների վերաբերյալ առաջարկությունից, ոչ մի առարկություն չարեցին հյուսիսային Արդահանում վրացական կառավարման դեմ (հատկապես որ այդ տարածքի նկատմամբ Հայաստանն ի սկզբանե հավակնություն չէր էլ ցուցաբերել), բայց հմտորեն շրջանցեցին Ախալքալաքի և Լոռու շուրջ վեճի՝ Թոմսոնի անընդունելի լուծումը [8, էջ 232][1]: Հայ-վրացական վիճելի տարածքների հարցը, ըստ հայերի, պետք է լուծվեր Փարիզի վեհաժողովի շրջանակներում, եթե երկկողմ համաձայնություն ձեռք չբերվեր:

Գեներալ Թոմսոնը, ինչպես նաև նրա վերադաս, Սևծովյան բրիտանական բանակի գլխավոր հրամանատար, գեներալ Միլնը, գտնում էին, որ շուրային կարգի հրավիրելու համար անհրաժեշտ է ուժեղացնել Կարսի անգլիական կայազորը, սակայն դա հակասում էր բրիտանական կառավարության փետրվարի 15-ի որոշմանը, ըստ որի՝ Կարսից և այլ վայրերից, որոնք հեռու էին ընկած Բաթում-Թիֆլիս-Բաքու երկաթուղուց, բրիտանական զորքերը պետք է հետ քաշվեին, հենց որ ավարտվեր թուրքական բանակի դուրսբերումը Կովկասից: Սակայն շուրայի խռովարար գործունեությունը և իթթիհատական հակվածությունը ստիպեցին Միլնին և Թոմսոնին, ապրիլի 2-ին և 3-ին Բաթումում երկարատև խորհրդակցությունից հետո, շուրան տապալելու որոշում կայացնել՝ թարմ զորքեր տեղակայելով Կարսում [8, էջ 233- 234]: Ելնելով ընդունված որոշումից՝ գեներալ Թոմսոնը ապրիլի 10-ին հայտարարեց Հարավարևմտյան Կովկասյան ժամանակավոր կառավարության լուծարման մասին: Ապրիլի 12-ին գեներալ Ասերին փոխարինած զնդապետ Փրեսթոնը, մասնակցելով շուրայի հերթական նիստին, ձերբակալեց նրա ղեկավարներին և լուծարեց շուրան [8, էջ 239]: Երեք ամսվա գոյությունից հետո Հարավարև-

[1] Հայ-վրացական տարածքային վեճերը ժամանակավորապես լուծելու Թոմսոնի առաջարկը տե՛ս նաև՝ Գ.Գալոյանի և Վ.Ղազախեցյանի կազմմամբ, Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ. (Քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2000, էջ 99: Այստեղ, սակայն, փաստաթուղթը թվագրված է ապրիլի 14-ով, որը հավանաբար վրիպակ է:

մտյան կովկասյան հանրապետությունը խորտակվեց: Ադրբեջանը և Կոնստանդնուպոլսի սուլթանական կառավարությունը դատապարտեցին շուրայի տապալումը, սակայն Վրաստանը ողջունեց վերջինիս վախճանը, մանավանդ որ այն Թիֆլիսի ձեռքից խլել էր Ախալքալաքի և Ախալցխայի նկատմամբ վերահսկողությունը: Եկել էր պատասխան հարված տալու ժամանակը, հատկապես որ գեներալ Թոմսոնը Վրաստանին արտոնել էր մի փոքրաքանակ զորաջոկատ Ախալցխայից մտցնել Արդահանի հյուսիսային մաս [8, էջ 241]:

Տարածաշրջանի բրիտանական զինվորական իշխանությունները վերջապես կայացրին Կարսի մարզը Հայաստանին հանձնելու արդարացի որոշումը: Ապրիլի 19-ին Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանյանը և իր վարչությունը մտան Կարս: Երկու օր անց մարզ մտավ նաև գեներալ Հարություն Հովսեփյանի (Օսիպով) զորաջոկատը, իսկ ապրիլի 24-ին վերջինս մուտք գործեց Կարս քաղաք [8, էջ 242-243]: Այս կարևոր իրադարձությունների ժամանակագրության հետ կապված՝ մեր պատմագրության մեջ կան որոշ տարակարծություններ: Ավելի հավաստի է պրոֆեսոր Գ.Պետրոսյանը, որը, հղում տալով արխիվային փաստաթղթերին, նշում է, որ հայկական զորքերը Կարս մուտք են գործել ապրիլի 23-ին, իսկ հայկական վարչությունը՝ հաջորդ օրը [14, էջ 195]: Փաստորեն, ապրիլի 23-24-ի դրությամբ, ողջ Կարսի մարզը միացավ Հայաստանին՝ բացառությամբ հյուսիսային Արդահանի և Օլթիի, որոնցից առաջինն անցավ Վրաստանին, իսկ երկրորդը գործնականում մնաց թուրքերի տիրապետության տակ, թեպետ անգլիացիները, մինչև Կարսի մարզից հեռանալը, մտադիր էին Օլթին միացնել Բաթումի մարզին:

Սակայն վրաց մենշևիկյան կառավարությունը, չբավարարվելով Հյուսիսային Արդահանով, շարունակ ոտնձգություններ էր կատարում Արդահանի շրջանի հարավային հատվածի նկատմամբ: Այսպիսով, հայ-վրացական հարաբերություններում Արդահանի գավառի շուրջ ծայր առավ մի նոր հակասություն, որը շարունակվեց մինչև հանրապետությունների կործանումը:

Մարտ, 2016թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Թորոսյան Շ.,* Արդահանի խնդիրը հայ-վրացական հարաբերություններում (1920թ. հունվար-օգոստոս), Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, 2014, թիվ 2:
2. *Մովսես Խորենացի,* Հայոց պատմություն, Երևան, 1981, էջ 154:
3. Грузия и европейские страны: очерки истории взаимоотношений XIII-XIX века, Москва, 2005, том 2, стр. 827.

4. *Сумбат Давитис-Дзе,* История и повествование о Баградионах, пер., введ. и примеч. М.Д. Лордкипанидзе, Тбилиси, 1979, стр. 14.
5. *Եղիազարյան Ա.,* Հայ Բագրատունիների տերությունը (885-908թթ.), Երևան, 2011:
6. *Джанашия С. Н.,* Об одном примере искажения исторической правды, Тбилиси, 1946, стр. 19-20.
7. *Հարությունյան Բ.,* Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 2001, էջ 57:
8. *Հովհաննիսյան Ռ.Գ.,* Հայաստանի Հանրապետություն: Վերսալից Լոնդոն, 1919-1920, հատոր II, Երևան, 2014, էջ 312:
9. *Ованисян Р.Г.,* Международные отношения Республики Армения 1918-1920гг., Ереван, 2007, стр. 73.
10. *Ղազարյան Հ.,* Սևրի պայմանագիրը և Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը Հայաստան-Թուրքիա սահմանաբաժանման վերաբերյալ, երկու գրքով, գիրք առաջին, Երևան, 2012, էջ 231, 253:
11. *Խատիսյան Ա.,* Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 155:
12. *Քաջազնունի Հովհ.,* Հ. Յ. Դաշնակցությունը անելիք չունի այլևս, Երևան, 1994, էջ 19:
13. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923թթ.), Ջ.Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972, էջ 538:
14. *Պետրոսյան Գ.,* Կարսի խնդիրը և նրա շուրջ ծավալված պայքարը (1918թ. դեկտեմբեր-1919թ. ապրիլ), Բանբեր Երևանի համալսարանի, Երևան 2004, թիվ 3 (114):
15. Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ: 1918-1920թթ., Ա.Վիրաբյանի խմբագրությամբ, Երևան, 2010, էջ 147:
16. *Զոհրաբյան Է.,* Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները» (1918թ. դեկտեմբեր-1920թ. ապրիլ), Երևան, 2002:
17. *Պետրոսյան Գ.,* Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ (1918-1920թթ.), Երևան, 2011:
18. *Завриев Д.С.,* К новейшей истории северо-восточных вилаетов Турции, Тбилиси, 1947, стр. 75.
19. *Деникин А.И.,* Очерки русской смуты, в 3 книгах, книга 3, т. 4, т. 5, вооруженные силы Юга России, Москва, 2003, стр. 211.
20. *Урутадзе Г.И.,* Образование и консолидация Грузинской Демократической Республики, Forschung und Materialen, Mьnchen, 1956, folge 1, s. 86-87.

ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԵՎ ԱՐԴԱՀԱՆԻ ՇՈՒՐՋ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ (1919Թ. ՀՈՒՆՎԱՐ-ԱՊՐԻԼ)

Շիրակ Թորոսյան

Ամփոփագիր

Հայաստանի Առաջին Հանրապետության տարիներին հայ-վրացական հարաբերություններում առկա տարաձայնություններից մեկը վերաբերում էր Արդահանի պատկանելության խնդրին: Արդահանը մերձսևծովյան տարածքներով դեպի Սև ծով դուրս գալու միակ դարպասն էր Հայաստանի համար: Հավակնություն ունենալով Արդահանի հանդեպ՝ Վրաստանի մենշևիկյան կառավարությունը ձգտում էր Հայաստանը

տարանցիկ կախվածության մեջ պահել՝ նրան զրկելով դեպի ծով ելքից: 1919թ. հունվարի 8-ին անգլիական օկուպացիոն իշխանությունները Կարսի մարզը հանձնեցին Հայաստանի Հանրապետությանը: Այնուամենայնիվ, շատ չանցած նրանք փոխեցին իրենց որոշումը և հունվարի 21-ին այն թողեցին այսպես կոչված Հարավարևմտյան կովկասյան հանրապետության շուրջի ժամանակավոր կառավարության վերահսկողության ներքո: Դա կապված էր այն բանի հետ, որպեսզի թույլ չտրվի Ռուսաստանին (Դենիկինի Կամավորական բանակին) ամրանալ տարածաշրջանում: Եվ քանի որ շուրջն սանձարձակ և ռուսամետ դիրքորոշում էր որդեգրել, անգլիացիները վերանայեցին իրենց որոշումը և ապրիլի 12-ին լուծարեցին շուրջն՝ Կարսը վերադարձնելով Հայաստանին: Ապրիլի 23-24-ին հայկական ադմինիստրացիան և զորքերը մտան Կարս, իսկ վրացական զորքերը գրավեցին Հյուսիսային Արդահանը՝ բրիտանացիների թույլտվությամբ (հյուսիսային Արդահանը և Փոցխովը): Սակայն Վրաստանի մենշևիկյան կառավարությունը հավակնություններ է ներկայացնում նաև Արդահանի հարավային մասի հանդեպ: Այսպիսով, սկիզբ է առնում նոր հակասություն հայ-վրացական հարաբերություններում, որը շարունակվում է մինչև հանրապետությունների կործանումը:

ПРИСОЕДИНЕНИЕ КАРСКОЙ ОБЛАСТИ К АРМЕНИИ И НАЧАЛО АРМЯНО-ГРУЗИНСКИХ РАЗНОГЛАСИЙ ОТНОСИТЕЛЬНО АРДАГАНСКОГО ОКРУГА (ЯНВАРЬ-АПРЕЛЬ 1919Г.)

Ширак Торосян

Резюме

Одной из проблем в армяно-грузинских отношениях в годы существования Первой Республики Армения был спор по поводу принадлежности Ардагана. Ардаган – единственные ворота в Черное море из причерноморских территорий. Претендуя на Ардаган, меньшевистское правительство Грузии стремилось держать в транзитной зависимости Армению, лишая ее выхода к морю. 8 января 1919г. английские оккупационные власти передали Карскую область Республики Армения. Тем не менее вскоре они изменили свое решение и 21 января оставили ее под контролем временного правительства Шуры так называемой самопровозглашенной Юго-Западной Кавказской Республики. Это было связано с тем, чтобы не допустить эскалации роли России (Добровольческой армии Деникина) в регионе. Однако Шура заняла наглую и пророссийскую позицию, и англичане пересмотрели свое решение и 12 апреля распустили Шуру, вернув Карс Армении. 23-24 апреля армянская администрация и войска вошли в Карс, а грузинские войска захватили Северный Ардаган с разрешения британцев (местность Ардаган Ардаганского округа, находящуюся севернее от реки Куры и местность Поцхови). Но меньшевистское правительство Грузии предъявляло притязания также на южную часть Ардагана. Таким образом, это дало начало новому противоречию в армяно-грузинских отношениях, которое продолжилось до падения республики.

UNIFICATION OF KARS REGION WITH ARMENIA AND RISE OF ARMENIAN-GEORGIAN DISCORD ON ARDAHAN (JANUARY-APRIL 1919)

Shirak Torosyan

Resume

In the years of the First Republic of Armenia one of the problems causing discord in Armenian-Georgian relations was the possession of Ardahan. Ardahan was the only access gate of Armenia to Black Sea through nearby territories. Laying claims on Ardahan, the Menshevik government of Georgia strived to keep Armenia in transit dependence by denying it access to the sea. On January 8, 1919 the British occupation authorities made a decision to hand Kars region over to Armenia. However, soon after they changed their decision and on January 21 left it to the control of the so-called South-Western Caucasian Republic Provisional Government Shura. This was done to make sure that Russia (Denikin's Volunteer Army) does not get a hold in the region. The Shura implemented outrageous and pro-Russian policies, so the British revised the decision and on April 12, 1919 dissolved the Shura, and returned Kars region to Armenia. On April 23-24 the Armenian administration and troops entered Kars, whereas with British permission the Georgian troops occupied Northern Ardahan (north of Ardahan and Potskhov). However, the Menshevik government of Georgia laid claims on southern part of Ardahan as well. Thus, a new discord emerged in Armenian-Georgian relations, which continued till the collapse of both republics.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Լևոն Մարգարյան[*]

Բանալի բառեր ՝ քաղաքային միջավայր, հանրային տարածք, քաղաքացիական հասարակություն:

Ներածություն

Հոդվածում ուսումնասիրվում են Հայաստանում քաղաքային միջավայրի փոփոխությունները վերջին տարիների քաղաքացիական շարժումների համատեքստում, հետազոտվում են այդ փոփոխությունների շուրջ քննարկումներն ու առանձնահատկությունները: Հատկապես կարևորում ենք դիտարկումն իրականացնել Հայաստանի քաղաքական կյանքի վերջին փոփոխությունների համատեքստում: Քաղաքային միջավայրի փոփոխությունների շուրջ քննարկումները, պատմամշակութային արժեքների, հանրային տարածքների խնդիրը համակարգված կերպով տեսանելի են դառնում վերջին տարիների փոփոխությունների, մասնավորապես՝ նոր քաղաքական պրակտիկաների՝ քաղաքացիական ակտիվության համատեքստում:

Քաղաքային միջավայրի խնդիրներն ունեն գոյության օբյեկտիվ պատճառներ: Հետխորհրդային քաղաքական, տնտեսական, գաղափարական նոր իրավիճակն իր անդրադարձն էր ունենալու նաև քաղաքային միջավայրի վրա, այդ միջավայրը վերիմաստավորվելու և վերափոխվելու էր ոչ միայն ֆիզիկական, այլև սիմվոլիկ առումով: Ուստի, պարզ է, որ անկախ նրանից, թե հասարակական և քաղաքական ինչ համատեքստեր կառաջանային, խնդիրը կար ի սկզբանե:

Թեմայի ուսումնասիրության նորույթն այն է, որ ակադեմիական և հրապարակախոսական գրականության մեջ քաղաքային միջավայրի, հանրային

[*] ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, ազգագրագետ:

տարածքների մասին հրապարակումները սակավ են և համակարգային չեն: Կան առանձին հրապարակումներ, մասնավորապես՝ Լևոն Աբրահամյանի հոդվածը, որը վերաբերում է Երևանի քաղաքային միջավայրի սիմվոլիկ փոփոխություններին հետխորհրդային շրջանում[1]: Աղասի Թադևոսյանը ևս անդրադարձել է Երևանի քաղաքային միջավայրի խնդիրներին հետխորհրդային զարգացումների համատեքստում[2]: Հայաստանի արվեստաբանական-հրապարակախոսական քննարկումների մակարդակում խնդրի հետ կապված հրապարակումներից նշանակալի է Վարդան Ազատյանի խմբագրությամբ լույս տեսած հանրային ոլորտին առնչվող ժողովածուն [1]: Աշխատանքում հղում է կատարվել նաև մի շարք այլ հեղինակների, որոնք այս կամ այն ձևաչափով փորձել են անդրադառնալ Երևանի քաղաքային միջավայրի խնդիրներին: Այնուամենայնիվ, հաշվի առնելով թեմայի ընտրությունը, մասնավորապես՝ քաղաքային միջավայրի խնդիրները քաղաքական նոր պրակտիկաների տեսանկյունից դիտարկելու փորձը, փորձել ենք ներկայացնել քիչ շոշափված մի թեմա:

Աշխատանքի կիրառական նշանակությունը կապված է վերջինիս արդիականության հետ: Հաշվի առնելով Հայաստանում ինտենսիվ դարձած քաղաքացիական ակտիվությունը, քաղաքային միջավայրի վերջին տարիների խնդիրները՝ հետազոտությունը կարող է դառնալ կիրառական: (Աշխատանքի պատրաստման պահին առնվազն մեկ աղմկահարույց դեպք քաղաքային միջավայրի փոփոխությունների համատեքստում շատ է քննարկվել: Խոսքն Արամի 30 հասցեում գտնվող շենքի քանդման մասին է: Դրան զուգահեռ՝ սկսեց խոսվել նաև Երևանի Փոքր կենտրոնի նմանատիպ այլ շենքերի իրավիճակի և հետագա ճակատագրի մասին:)

Քաղաքային միջավայրի և հանրային տարածքների խնդիրը վերջին տարիների քաղաքացիական ակտիվության համատեքստում դիտարկելիս ի հայտ են գալիս նոր զուգահեռներ: Մասնավորապես, խոսքը *Occupy* շարժման մասին է, որը շատ տեսաբանների կարծիքով՝ սկզբունքային նշանակություն ունի հանրային տարածք հասկացության մերօրյա վերիմաստավորման համատեքստում: Չնայած շարժումը տնտեսական բնույթ ուներ, բայց պրակտի-

[1] *Абрамян Л.,* Ереван: память и забвение в организации пространства постсоветского города // 248 Антропологический форум No1 // http://ecsocman.hse.ru/data/2012/06/22/1259000625/12_abramyan.pdf.
[2] *Թադևոսյան Ա.,* Երևանի քաղաքային մշակույթը. ՎԷՄ Համահայկական հանդես, 2011-1, http://vemjournal.org/?p=202:

կաների առումով ներառում էր նաև տարածքի հանդեպ իրավունքի իրացումը, տարածքի վերակառուցումն ու ինտերպրետացիան: Ռուս հեղինակ Ժելնինան, խոսելով *occupy* շարժման և 2012թ. Ռուսաստանի մայրաքաղաքում ընտրակեղծիքների դեմ կազմակերպվող զանգվածային միջոցառումների մասին, նշում է, որ չնայած երկու դեպքում էլ գործողությունների հիմքերն ու թիրախներն այլ էին, բայց երկուսն էլ շոշափում էին քաղաքային տարածքի հանդեպ իրավունքի խնդիրը[1]: Այս իմաստով պետք է նշել, որ չնայած Հայաստանում սկիզբ առած շարժումներում դժվար է գտնել *occupy* շարժման հետ նույնականանալու որևէ փորձ, բայց միտումների ու ժամանակագրության առումով կան համընկնումներ, ինչը ևս աշխատանքին հաղորդում է հավելյալ կարևորություն՝ տեղի գործընթացները համաշխարհային համատեքստում դիտարկելու առումով ևս:

Մեթոդաբանություն և տեսություն

Հետազոտությունը կատարվել է մի քանի եղանակով՝ խորացված հարցազրույցներ, ներգրավված դիտարկում, ԶԼՄ բովանդակային վերլուծություն: Աշխատանքի ընթացքում անցկացվել է 7 խորացված հարցազրույց ակցիաների մասնակիցների, քննարկումներում ինտեգրված մարդկանց հետ: Առավել քննարկված հարցերն ու իրադարձությունները, որոնք առնչվում էին հանրային տարածքներին, ֆիքսվել են նաև համացանցում, սոցիալական ցանցերում և ԶԼՄ-ում: Քաղաքային միջավայրի փոփոխություններին առնչվող հիմնական ակցիաների և քննարկումների, մասնավորապես Մաշտոցի այգում տեղի ունեցած ակցիայի ընթացքում կատարվել է ներգրավված-մասնակցային դիտարկում:

Քաղաքային միջավայրին վերաբերող մի շարք տեսական մոտեցումներ են ուսումնասիրվել, մասնավորապես՝ Ջեֆ Ուեյնթրաբի մոտեցումը հանրային-մասնավոր բաժանման ու հանրայինի տիպաբանության հետ կապված: Այս տիպաբանությունը, չնայած գրված չէ քաղաքային միջավայրի փոփոխության համատեքստում, բայց շոշափելով հանրային հասկացությունը և տիպաբանելով հասկացության մասին ակադեմիական ու այլ հարթակներում

[1] *Желнина А.,* «Тусовка», креативность и право на город: городское публичное пространство в России до и после протестной волны 2011-2012, http://www.stasisjournal.net/ru/all-issues/23-1-2014-revolyutsii-i-protestnye-dvizheniya/57-tusovka-kreativnost-i-pravo-na-gorod-gorodskoe-publichnoe-prostranstvo-v-rossii-do-i-posle-protestnoj-volny-2011-2012, 2014.

տարածված դիսկուրսները՝ թույլ է տալիս մեր թեմայով հետազոտության ընթացքում որոշակիացնել տեղական դիսկուրսը: Տիպաբանությունը, մասնավորապես, ներկայացված է Ջեֆ Ուեյնթրաբի հեղինակությամբ լույս տեսած հոդվածների ժողովածուի մեջ [2]: Այսպիսով, Ուեյնթրաբն առանձնացնում է հանրայինի ընկալման 4 դիսկուրս.

- Լիբերալ տնտեսական դիսկուրս, որը գերիշխող է այն քննարկումներում, որոնք հիմնվում են *public policy* – հանրային քաղաքականություն տերմինի վրա, և որոնք հանդիպում են ամենօրյա քաղաքական քննարկումներում: Այս դիսկուրսն ի սկզբանե առանձնացվում է հանրայինն ու մասնավորը պետական-ադմինիստրատիվի ու շուկայական-տնտեսականի:
- «Դասական դիսկուրսը», որի ներկայացուցիչներն են Հաբերմասն ու Արենդտը, տեսնում է հանրայինը ոչ միայն իշխանությունից, այլև շուկայից առանձին՝ հենվելով քաղաքացիության և քաղաքական համայնքի հասկացությունների վրա:
- Մարդաբանական կամ դրամատուրգիական հայացք խնդրին, որը տեսնում է հանրայինը որպես բազմադեմ հաղորդակցությունների ոլորտ և փնտրում է եղանակներ՝ ուսումնասիրելու այն մշակութային և դրամատուրգիական ամբողջության մեջ:
- Ֆեմինիստական դիսկուրսը, որը տարբերակում է հանրայինն ու մասնավորը, տնտեսական ու քաղաքական կարգն ընտանիքի համատեքստում:

Դժվար է պատկերացնել որևէ քննարկում, որտեղ հանրային հասկացությանն առնչություն կա, բայց չի խոսվում Հաբերմասի մասին: Պատճառն այն է, որ Հաբերմասն առաջիններից մեկն է, որ հիմնավոր և ծավալուն կերպով անդրադառնում է հանրային ոլորտի խնդիրներին: Նշենք, որ հանրային տարածքներին առնչվող հայաստանյան քննարկումներում և պրակտիկաներում Հաբերմասի մոտեցումն առանձնահատուկ դերակատարում ունի: Հաբերմասը հանրային ոլորտը սահմանում է որպես պետությունից և տնտեսությունից ազատ տարածք, որտեղ ազատ մարդիկ քննարկում են իրենց գաղափարները: «Հանրային ոլորտի կառուցվածքային փոփոխությունները» գրքում Հաբերմասը լայնամասշտաբ քննարկման է դնում հանրային ոլորտի խնդիրը: Նա դա անում է ինչպես պատմական, այնպես էլ ֆենոմենոլոգիական դիտանկյուն ընտրելով:

Հաբերմասը հանրային ոլորտը դիտարկում է քաղաքական համակարգի համատեքստում: Ըստ նրա, ինչքան դեմոկրատական է քաղաքական կարգը, այդքան հանրային ոլորտն ավելի է ընդունակ քաղաքական ոչ ֆորմալ օրակարգ ձևավորել: Նա հանրային տարածքը չի դիտարկում միայն ֆիզիկական իմաստով. հանրայինը, ըստ նրա, պարտադիր չի զբաղեցնում ֆիզիկական տարածք, հանրային ոլորտ են նաև թերթերը, մանիֆեստները [3]: Հանրային ոլորտը տարածք է, որտեղ հավաքվում են առանձին մարդիկ և գեներացնում հասարակության ու պետության միջև խնդիրները. այս իմաստով հանրային տարածքը դառնում է ոչ ֆորմալ տեղ իմաստների փոխանակման համար:

Ըստ Պիեռ Բուրդյեի՝ պայքարը տարածության համար կարող է տեղի ունենալ խմբային մակարդակում, մասնավորապես՝ քաղաքական պայքարի միջոցով, որը զարգանում է սկսած պետական մակարդակից՝ բնակության քաղաքականությամբ, մինչև քաղաքային կառավարման մակարդակը՝ շինարարության կամ հասարակական բնակության վայրի տրամադրման միջոցով [4]:

Տարածքը կարող է լինել նաև վիրտուալ, սոցիալական, և պարտադիր չէ դրա ֆիզիկական ներկայությունը, բայց ցանկացած մեկը, ով հավակնում է սոցիալական հարթության մեջ տարածքի, փորձելու է դա ռեալիզացնել նաև ֆիզիկական իմաստով: Բուրդյեի տեսությունը մեզ օգնում է մի շարք երևույթներ հասկանալու համար դիտանկյուն ստանալ:

Օրինակ, երբ Հայաստանում հայտնվում են սոցիալական նոր դերակատարներ, դրան հաջորդում է նրանց կողմից ֆիզիկական տարածքի զբաղեցման փորձ: Խոսքը մեծ կապիտալի ներկայությունից մինչև մարգինալ խմբերի, ենթամշակույթների մասին է: Հենց այս իմաստով Բուրդյեի սոցիոլոգիան հետաքրքիր է որպես հնարավորություն՝ սրանով փորձել տեսնել հանրային տարածքում ինչ ֆիզիկական տարածքներ կան, և թե ինչպիսին են այդ ֆիզիկական տարածքի սոցիալական անալոգիաները:

Հայաստանում նոր ձևավորվող հասարակական կարգը, որը հաճախ սահմանվում է հետխորհրդային տերմինով, նոր քաղաքական ու տնտեսական փոփոխությունների, կազմավորումների փուլում սկսում է սոցիալական տարածքների սահմանազատման գործընթաց: Ձևավորվում է նոր սոցիալական կմախք գոյություն ունեցող խորհրդային իրականության փոխարեն: Քաղաքային կյանքում դա արտահայտվում է տարածքների հանդեպ իշխանությամբ: Սոցիալական տարածքները, նոր սոցիալական խմբերը խմորումների

ընթացքում սկսում են սահմանել իրենք իրենց՝ զբաղեցնելով նաև նոր ֆիզիկական տարածքներ:

Այս գործընթացը, սակայն, ինչ-որ մի կետում չի սկսվում և մեկ այլ կետում ավարտվում: Այն անընդհատական է, այսինքն՝ միշտ շարունակվում է: Այն շարունակվում է այնքան, որքան շարունակվում են սոցիալական խմորումները, սոցիալական խավերի, նոր խմբերի առաջացումն ու փոխհարաբերությունները:

Բուրդյեի դիտանկյունը մեզ հնարավորություն է տալիս հետևելով Հայաստանում տեղի ունեցող սոցիալական կյանքի կառուցվածքային փոփոխություններին՝ հասկանալ, թե, ըստ այդմ, ինչպես է փոխվել ֆիզիկական տարածքն այդ փոփոխությունների համատեքստում: Հանրային տարածքների տրանսֆորմացիաներն այս դեպքում մեզ համար ոչ թե ճարտարապետական կամ քաղաքաշինական են, այլ մարդաբանական, և սոցիոլոգիական տեսանկյունից են հետաքրքիր: Այս իմաստով Բուրդյեի սոցիալական տարածք-ֆիզիկական տարածք հասկացությունները, դրանց առնչակցությունը մեր թեմայի մեթոդաբանական սահմանումներում առաջնային են:

Մեկ այլ հեղինակ՝ Անրի Լեֆևրը, հանրային տարածքների փոփոխության հետ կապված՝ առաջ է քաշում տարածության փիլիսոփայական ընկալման խնդիրը: Ըստ նրա, առանց նոր տարածքների արտադրության հասարակությունները չեն կարող փոխվել, հասարակության մեջ հայտնվող նոր տարրերը, խավերը, ենթամշակույթները կարող են խոսել իրենց մասին, երբ սեփական տարածքն են արտադրում [5]:

Տարածության արտադրությունը գիտության մեջ նոր ձևակերպումներից է և այս իմաստով որոշակի բարդություններ ունի: Ի վերջո, ցանկացած բան մեծ իմաստով հենց տարածության մեջ է իրեն արտահայտում, բայց սոցիալական գիտություններում տարածության փիլիսոփայությունն առավել կոնկրետ բնորոշում ունի: Լեֆևրի, հետագայում, ինչպես կտեսնենք՝ նաև Բուրդյեի մոտ, տարածության արտադրությունը կամ իրավունքը տարածության հանդեպ ընկալվում է որպես սոցիալական փոփոխությունների օրինաչափ հետևանք:

Լեֆևրն ավելի կոնկրետ օրինակներով է խոսում տարածության արտադրության մասին: Մեզ համար այդ օրինակներից կարևոր է սոցիալական շարժումների մասին հիշատակումը տարածության արտադրության խնդրի

համատեքստում: 20-րդ դ. հայտնվում են սոցիալական շարժումներ, որոնք վերանայում են տարածության արտադրության հեգեմոն՝ կապիտալիստական տեսանկյունը: Նրանք տարածությունն ընկալում են ոչ միայն որպես արտադրության և սպառման միջավայր, այլև տարածության մեջ փորձում են տեղավորել այլ ֆունկցիաներ ևս, մասնավորապես՝ հանրայինի, հրապարակայինի գործառույթները: Սա արտահայտվում է հատկապես Արևմուտքում 20-րդ դ. երկրորդ կեսից ակտիվացած ձախ շարժումների՝ կանաչների, էկոլոգների, սոցիալիստների մոտեցումներում, որոնք փորձում են դասակարգային պայքար մղել տարածության համար [5]:

Լեֆևրի տարածության արտադրության տեսությունը, հատկապես սոցիալական շարժումների դերն ու դրանց հակադրությունը կապիտալիստական հեգեմոն մոտեցման հետ բավական պարզ, հստակ բանաձև է տալիս մեզ՝ փորձելու հասկանալ Հայաստանում տեղի ունեցող իրողությունները: Հայաստանի անկախացման առաջին օրերից սկսած՝ հստակ կարելի էր հետևել տարածքների արտադրության գործընթացում կապիտալի դերի գերակայությանը: Իսկ արդեն հետագայում, սոցիալական շարժումների ակտիվացման ֆոնին, ականատես ենք լինում այդ հակադրությանը, երբ խոշոր կապիտալի շահերն ու սոցիալական շարժումների մոտեցումները բախումների են բերում:

Հետազոտության ընթացքում ուսումնասիրված մեկ այլ հեղինակ է Ռիչարդ Սենեթը: «Հանրային մարդու անկումը» աշխատանքի մեջ նա խոսում է հանրայինի մասին՝ առանձնացնելով այն, որ յուրաքանչյուր մարդ իր մեջ ունի հանրայինի ու մասնավորի շերտեր, որոնք հակասում և հավասարակշռում են իրար: Ըստ այդմ, անկախ մարդու կյանքի մասնավոր հատվածից, մարդն ունի նաև հանրային հատված, որը պատասխանատու է օտարների, ուրիշների հետ շփումների համար: Սենեթն այս հակասությունը դիտարկում է արևմտյան պատմագրության տարբեր փուլերում: Նա հանրայինը սկզբունքորեն չի կապում քաղաքի կենտրոնի հետ և, ի տարբերություն հանրային միջավայրի մասին այլ տեսությունների, հանրայինը չի սահմանում միայն ֆիզիկական ուղենիշներով: Ըստ Սենեթի, հանրայինը հայտնվում է ամենուր, որտեղ կա թելադրված երկխոսությունից ազատ ոլորտ, որի նպատակն է համաձայնության հասնելը [6]:

Քաղաքացիական և քաղաքական նոր պրակտիկաները

Վերջին տարիներին Հայաստանում նկատվում է քաղաքացիական ակտիվության աճ: «Քաղաքացիական հասարակություն», «քաղաքացիական ակտիվիզմ» հասկացությունները հանրային քննարկումներում աստիճանաբար ավելի մեծ տեղ են գտնում:

«Երբ մենք սկսում էինք մեր առաջին ակցիաները, ես դեռ երիտասարդ տղա էի, որին ոչ ոք չգիտեր և լուրջ չէր ընդունում: Այն տերմինները, որոնք մենք օգտագործում էինք՝ օրինականություն, քաղաքային տարածք, ներկայացուցչական դեմոկրատիա և այլն, չինարեն էին հնչում»,- իր առաջին քաղաքացիական գործողությունների մասին այսպես է խոսում մեր զրուցակիցներից Սահրատ Պետրոսյանը[1]: Նա առաջիններից է եղել, որ զբաղվել է Երևանի քաղաքային միջավայրի խնդիրներով, մասնավորապես՝ «Սևան» հյուրանոցի, Բյուզանդի փողոցի տների, օպերայի շրջակայքի նոր սրճարանների հարցերով: 2000-ականներին, սակայն, նմանօրինակ ակտիվություններն աչքի չէին ընկնում հանրային ուշադրությամբ[2]:

Արդեն նշված քաղաքացիական դրսևորումներին կարող ենք ավելացնել նաև Ա1+ հեռուստաալիքի դեմ քաղաքացիական ընդվզման փորձերը, ինչպես նաև «Առագաստ» սրճարանում տեղի ունեցած սպանության հետ կապված հանրային անհանգստությունը[3]: Սակայն այս ակտիվությունները համակարգային բնույթ չստացան: Առավել համակարգային ակտիվություն կարող ենք նկատել «Հիմա», իսկ հետո «Սկսել ա» երիտասարդական շարժումների ժամանակ[4]:

Հայաստանում 2008թ. տեղի ունեցան իրադարձություններ, որոնք փոխեցին երկրի քաղաքական մթնոլորտը: Ինչպես մեր զրուցակիցներն են նշում, 2008-ից հետո նկատելիորեն աճեցին խոսքի ազատությունն ու քաղաքական ակտիվության հանրային ձգտումը: Մյուս կարևոր գործոնը, որի մա-

[1] Դաշտային հետազոտության նյութեր. հարցազրույց Սահրատ Պետրոսյանի հետ:
[2] Սևան հյուրանոց՝ (ան)կենդանի պատմություն
http://www.mediamax.am/am/news/yerevan-XX-century/4682/, 18.04.2012:
[3] Ո՞վ և ինչո՞ւ եթերազրկեց «Ա1+»-ը, http://hetq.am/arm/news/9040/ov-ev-inchu-eterazrkec-a1--y.html , 04.05.2005: // Ո՞վ է սպանել Պողոս Պողոսյանին. ականատեսները լռում են, http://armtimes.com/hy/read/54368, տպագրվել է «Հայկական ժամանակ» օրաթերթի 2001 թվականի սեպտեմբերի 26-ի համարում:
[4] Հիմա քաղաքացիական նախաձեռնության կայք՝ http://qbhima.blogspot.am/, Ալիքը սկսել ա - https://vimeo.com/101392593 («Սկսել ա» շարժման մասին):

սին խոսվում և որի ակտիվությունը ևս համընկնում է 2008-2010թթ. հետ՝ Ֆեյսբուք սոցիալական ցանցն է և ընդհանրապես՝ փոփոխությունները տեխնոլոգիական ոլորտում:

Դաշտային դիտարկումների ընթացքում ֆիքսվել են մի քանի հիմնական մոտեցումներ՝ կապված 2008թ. իրադարձությունների և դրանց ազդեցության հետ.

- 2008-ի իրադարձությունները սոցիալական տարածք ստեղծեցին նախկինում լուսանցքում մնացած խմբերի և անհատների համար, հնարավորություն տվեցին ինքնադրսևորվելու:
- Լևոն Տեր-Պետրոսյանի կողմնակիցները քաղաքացիական ակտիվության ներկայացուցիչների հետ բանավեճերում պնդում էին, որ եթե չլինեին 2008-ի իրադարձությունները, հնարավորություն չէր ստեղծվի քաղաքացիական ակտիվիզմի համար գործողությունների նմանօրինակ ազատության:
- Հանրային քննարկումներում, փորձագիտական մոտեցումներում նկատելի է կոմպրոմիս 2008-ի՝ քաղաքական նոր պրակտիկաների առաջացման համար կատալիզատոր լինելու հարցում[1]:

Արդեն 2008թ. հետո կարող ենք թվարկել Հայաստանում քննարկված, հանրային ուշադրության արժանացած մի շարք քաղաքացիական պրակտիկաներ և նախաձեռնություններ՝ «Ո՛չ օտարալեզու դպրոցներին», «Մոսկվա» կինոթատրոնի ամառային դահլիճի պահպանման համար, «Բանակն իրականում», «Մենք ենք այս քաղաքի տերը», Թեղուտի անտառի ու Թռչկանի ջրվեժի շահագործման դեմ նախաձեռնությունները, Մաշտոցի այգում բուտիկների տեղադրման դեմ սկսված շարժումը, ընդդեմ տրանսպորտի թանկացման, ընդդեմ էլեկտրաէներգիայի թանկացման[2]: Սա քաղաքացիական ակտիվությունների և նախաձեռնությունների ոչ ամբողջական ցանկն է:

[1] Դաշտային հետազոտության նյութեր:

[2] «Ոչ օտարալեզու դպրոցներին», https://www.yerkir.am/news/view/730.html , 08.12.2010 // «Մոսկվա» կինոթատրոնի ամառային դահլիճի պահպանման համար, http://www.azatutyun.am/content/article/1980875.html, 11.03.2010 // «Բանակն իրականում», https://www.facebook.com/groups/armyinreality/ // «Մենք ենք այս քաղաքի տերը», https://www.facebook.com/groups/119537174725392/:

Երևանի քաղաքային միջավայրը՝ հետխորհրդային իրականությանը և առևտրայնացման մարտահրավերներին ընդառաջ

Երևանի հանրային տարածքի և քաղաքային միջավայրի փոփոխություններին վերաբերող խնդիրներից մեկը նոր հետխորհրդային իրականությունն է: Մեր հետազոտության համատեքստում հետխորհրդայինն ունի մի քանի նշանակություն: Գրեթե յուրաքանչյուր քննարկում՝ կապված ժամանակակից Հայաստանի հետ, ինչ-որ կերպ շաղկապվում է հետխորհրդայինի հետ: Եվ խորհրդայինը, որպես խորհրդային շրջանի կենսաձևի մի շարք կողմերի ամբողջություն, արտահայտվում է ոչ միայն մարդկանց, պետության և քաղաքացու հարաբերություններում, այլև ենթադրում է որոշակի նյութական ժառանգություն:

Ինչպես սահմանում է արվեստաբան Անժելա Հարությունյանը, «սովետականի ստվերը ներկա է ոչ միայն գաղափարախոսության և պաշտոնական հռետորաբանության ոլորտում, այլև քաղաքային լանդշաֆտում» [7, էջ 37]: Ցանկացած գաղափարական կամ քաղաքական իրողություն փորձում է ուղիղ կամ անուղղակի կերպով կազմակերպել կամ վերադասավորել քաղաքային միջավայրն իր ներքին ուղենիշներին համաչափ: Այս համատեքստում պարզ է, որ խորհրդային ժառանգությունը չէր կարող չթելադրել որոշակի պայմաններ նաև ԽՍՀՄ փլուզումից հետո:

Հայաստանի անկախության առաջին տարիներին մենք տեսնում ենք խորհրդային ժառանգությանը հակադրվելու միտում: Այնուհետև, երբ այդ քաղաքական ռոմանտիկան ցրվեց, գերակա դերակատար դարձավ կապիտալը, որն էլ սկսեց քաղաքային տարածությունը տեսնել որպես բացառապես եկամտի աղբյուր: Խորհրդային ժառանգությունն այդպիսով չի վերիմաստավորվել: Հրաչ Բայադյանը, խոսելով Օպերայի և բալետի պետական թատրոնի մասին, նշում է, որ Երևանի ինտենսիվ կոմերցիալացման ընթացքում այդ տարածքում հայտնվեցին բազմաթիվ սրճարաններ: Բայադյանի կարծիքով, դա խոսում է այն մասին, որ իշխանությունն օպերայի շրջակայքը չէր դիտարկում որպես մոդեռնացման սիմվոլ, այլ պարզապես ամենահաս սեփականաշնորհման սկզբունքով փորձում է հնարավորինս արագ դրանով գումար վաստակել [8]:

Խորհրդային ժառանգության վերիմաստավորման մեկ այլ մոդել դարձան քաղաքի հայտնի տեղերի անվանափոխումն ու հայկականացումը: Անժելա Հարությունյանը, մասնավորապես, նշում է մի քանի հուշարձանների

մասին, որոնք, կառուցված լինելով խորհրդային շրջանում և խորհրդանշելով «ազգայինը սոցիալիստականի համար» խորհրդային սկզբունքը, հետխորհրդային շրջանում ստացան այլ սիմվոլիկ բովանդակություն: Խոսքը, մասնավորապես Վարդան Մամիկոնյանի արձանի մասին է, որն, օրինակ, արդեն հետագայում հայոց եկեղեցու կողմից դասվեց սրբերի շարքը [7, էջ 39]:

Մի շարք օրինակներով մենք կարող ենք հետևել, թե ինչպես խորհրդային շրջանի հուշարձանները ձեռք էին բերում ուրիշ իմաստներ: Վարդան Մամիկոնյանի արձանն իսկապես դարձավ ազգային սիմվոլ: Սուրբ Վարդանի տոնի կապակցությամբ ամեն տարի մի շարք երիտասարդներ, հատկապես իշխող Հանրապետական կուսակցությունից, դրոշներով և այլ ազգային սիմվոլներով երթ են կազմակերպում դեպի այդ արձանը[1]: Արձանագրվել է, որ արձանի հարևանությամբ ղարաբաղյան հակամարտության հետ կապված ակցիա է կազմակերպել նաև մեկ այլ՝ ազգայնական ուղղվածություն ունեցող Հայազն կուսակցությունը[2]: Մեկ հուշարձանի օրինակով տեսնում ենք, որ խորհրդային շրջանում կառուցված Մամիկոնյանի արձանն ինտերպրետացվում է ազգային սիմվոլի համատեքստում:

Ինչպես նկատել է Գայանե Շագոյանը հետազոտության քննարկումների արդյունքում, Վարդան Մամիկոնյանի արձանը խորհրդային գաղափարախոսության մաս էր [9]: Դերենիկ Դեմիրճյանը «Վարդանանքը» գրել է հայ ժողովրդի ռազմական ոգին Երկրորդ համաշխարհայինի տարիներին բարձրացնելու համար: Քաղաքագետ Ստեփան Դանիելյանը նույնպես նշում է, որ արդեն Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբում խորհրդային իշխանությունը փոխեց հայրենիքի իր կոնցեպտը[3]: Գաղափարախոսությունն արդեն պահանջում էր ոչ թե խորհրդային աշխարհի, այլ կոնկրետ տարածք ունեցող հայրենիքի պաշտպանություն:

5-րդ դարի իրադարձությունների՝ Երևանի միջավայրում սիմվոլիկ արտացոլման մասին իր աշխատանքներից մեկում նշում է նաև Լևոն Աբրահամյանը. «1991թ. ստեղծված հատուկ կոմիտեն՝ վերանվանումների հարցով, հե-

[1] Երիտասարդ հանրապետականները Վարդանանց տոնի մասին, www.youtube.com/watch?v=BZip8n7vWCw, 02.16.2012: // Ազատամարտիկները բողոքի ակցիա են իրականացնում Վարդան Մամիկոնյանի արձանի մոտակայքում, http://www.replik.am/arm/index.php?id=21382, 2013-05-28:

[2] Ցույց Վարդան Մամիկոնյանի արձանի մոտ, http://www.a1plus.am/63406.html, 15.09.2012:

[3] *Դանիելյան Ս.,* Հայրենասիրություն և եկեղեցի, http://www.youtube.com/watch?v=ptjm6rb7f6U, 06.06.2014:

տաքրքրված չէր փոքր պատմական թռիչքներով, այն նայում էր ավելի խորը դեպի արմատներ, ինչի արդյունքում փողոցները, որ ունեին կոմունիստական անվանումներ, ստացան նոր անուններ, մեծամասամբ արտացոլող հայկական մշակույթի Ոսկեդար հանդիսացող 5-րդ դարի իրականության հերոսներին ու իրականությունը»[1]:

Փոփոխությունները, որ տեղի ունեցան Հայաստանում 2000-ականներին, անվանվում են տարբեր տերմիններով, իմաստավորվում են տարբեր կերպ: Բայց Երևանի օրինակով մենք տեսնում ենք, թե ինչպես կապիտալը սկսեց գրավել քաղաքի կենտրոնը: Իսկ ինչո՞ւ հենց Երևանի օրինակով: Առաջին՝ ընդհանրապես քննարկումները հանրային տարածքի հետ կապված ձևավորվել և դիսկուրս են դարձել Երևանում տեղի ունեցող պրակտիկաների հիմքով: Երկրորդ պատճառն այն է, որ Երևանում, մասնավորապես՝ Երևանի կենտրոնում, մենք կարող ենք հատկապես վառ ընդգծված տեսնել քաղաքային միջավայրի փոփոխությունները, որոնք մեզ հետաքրքիր են:

Այդ փոփոխությունները հաջորդեցին 1990-ականների տնտեսական ճգնաժամին: Մասնավորապես, հետխորհրդային Հայաստանի մայրաքաղաքի ճարտարապետական ամենամեծ նախագծերից մեկը՝ Հյուսիսային պողոտան, արվեստաբան, մշակութաբան Վարդան Ջալոյանի բնորոշմամբ՝ կարելի է համարել Երևանի կապիտալիստական վերակառուցման փորձ[2]: Մոտավորապես նույն կերպ է գնահատում իրավիճակը մեր մեկ այլ հարցվող՝ ճարտարապետ Սահրատ Պետրոսյանը. «Հյուսիսային պողոտայի շինարարությունը պայմանավորված էր մեկ մարդու՝ Ռոբերտ Քոչարյանի տնտեսական և քաղաքական հավակնություններով: Սկսվել էր նախընտրական արշավ, կարիք կար ցույց տալ ինչ-որ հակակշիռ բան մյուս թեկնածուի՝ Կարեն Դեմիրճյանի դեմ, որը համարվում է երևանյան մետրոյի և երևանյան խորհրդային ուրիշ նախագծերի նախաձեռնող: Բացի այդ, Հյուսիսային պողոտան դարձավ մեծ ֆինանսական հոսքեր շրջանառելու վայր»[3]:

[1] *Абрамян Л.,* Ереван: память и забвение в организации пространства постсоветского города // Антропологический форум, 2010, No12, с. 249, http://ecsocman.hse.ru/data/2012/06/22/1259000625/12_abramyan.pdf.

[2] *Ջալոյան Վ.,* Քաղաքական նոր սուբյեկտները Հայաստանում և մարտիմեկյան իրադարձությունները, http://www.red-thread.org/dosyalar/site_resim/dergi/pdf/1586442.pdf (Հրապարակման ժամկետը տրված չէ):

[3] Դաշտային հետազոտության նյութեր. հարցազրույց Սահրատ Պետրոսյանի հետ:

«Երևանի ենթակառուցվածքները պատրաստ չէին Հյուսիսային պողոտային: Հյուսիսային պողոտան, եթե ունի էլ որևէ սոցիալական կամ քաղաքային գործառնական նշանակություն, ապա դա օպերայի և Հանրապետության հրապարակները կապելն է: Դա նման էր ցուցադրական քայլի և իհարկե կապիտալ կուտակման, բայց շատ կարճաժամկետ հեռանկարում: Հյուսիսային պողոտայի տները կառուցվում ու վաճառվում էին, վաճառվում էին իշխանության ներկայացուցիչներին, վաճառվում էին ստիպողաբար: Բնակֆոնդի որևէ խնդիր Հյուսիսային պողոտան չէր լուծում»[1]:

Քանդակագործ Սահակ Պողոսյանը 2011թ. Հյուսիսային պողոտայում կազմակերպեց ցուցահանդես «Քաղաք Քո-Չարի» անվամբ[2]: Քոչարին հայտնի հայկական պար է, բացի այդ՝ քանդակագործը փորձել էր այդ անվամբ մատնացույց անել նաև երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանին: Մեզ հետ զրույցում Սահակը պատմեց, որ բացի այս երկու իմաստներից, նա ցանկանում էր ցույց տալ մեկ այլ արմատ, որը ներառված է քոչարի բառի մեջ՝ քո-«չարի»: Ցուցահանդեսի ժամանակ, որը տեղի ունեցավ Հյուսիսային պողոտայի անկյուններից մեկում, ցուցադրվել էին Հյուսիսային պողոտայի շինարարական պաստառների լուսանկարները: Ժամանակի հետ այդ պաստառ-վարագույրները մաս-մաս էին եղել: Պաստառների վրա պատկերված էր կառուցվելիք շենքերի վերջնական տեսքը:

Հյուսիսային պողոտան Երևանի կենտրոնի նոր կոնցեպտով վերակառուցման լավագույն խորհրդանիշներից է: Չնայած Հյուսիսային պողոտայի կառուցմանը զուգահեռ չկային հանրային ակտիվ քննարկումներ, բայց դրա հանձնումից հետո մինչև այժմ Հյուսիսային պողոտան Երևանի քաղաքային խնդիրների շրջանակում ամենաքննարկվողներից է:

Բիզնեսը և կապիտալը որպես սուբյեկտներ դիտարկելը կարևոր է այնքանով, որքանով որ հանրային տարածքներին առնչվող պրակտիկաներում այդ բիզնեսի ուղղակի կամ անուղղակի, հրապարակային կամ կասկածելի ներկայությունը եղել է: Կապիտալն իրացվել է ոչ միայն ինքն իր, այլ պետության, քաղաքային իշխանության, ոստիկանության, մշակույթի նախարարության միջոցով:

[1] Դաշտային հետազոտության նյութեր. հարցազրույց Սահրատ Պետրոսյանի հետ:

[2] Սահակ Պողոսյանը ներկայացնում է «Քո-Չարի» քաղաքը» նախագիծը, https://hetq.am/arm/news/724/sahak-poxosyany-nerkayacnum-eqo-chari-qaxaqy-nakhagitsy.html, 27.04.2011:

Այս ամենի համատեքստում ակնհայտ է, որ կապիտալը, բիզնեսը որպես սուբյեկտ ներկա էին քաղաքային վերակառուցման մեջ: Կապիտալի և դրա կրողների սուբյեկտության հարցը հետաքրքրական է նաև այն համատեքստում, որ ձախ հայացքներ ունեցողները, հղում կատարելով Հաբերմասի տեսությանը, քաղաքացիական քննարկումներում կապիտալը դիտարկում էին որպես հակադիր բևեռ: Եվ այս իմաստով կապիտալ-հանրային հակադրություն էր ստեղծվում քննարկումներում:

Աղասի Թադևոսյանն իր հարցազրույցում մերժում է այն մոտեցումը, թե բիզնեսն ու հանրայինը իրար հակադիր են[1]: Որպես փորձագետ նա գտնում է, որ Հայաստանում գոյություն ունեցող մոդելներից որևէ մեկը չկա, և չկա կարիք գնալու դրանցից մեկին: Որպես երևանցի և քաղաքացի նա կարծում է, որ բիզնեսն ու հանրային տարածքը կարող են լինել մեկտեղված, համաչափ:

«Հայաստանը հարուստ երկիր չէ, առանց բիզնեսի հեռուն գնալ չի կարող: Բիզնեսը շատ բան է որոշում նաև ԱՄՆ-ում: Բայց կա պետության դերի կարևորում: Պետությունը պետք է զբաղվի այդ ամենի մենեջմենթով: Օրինակ, եթե Սամվել Ալեքսանյանն ուզում է վերակառուցել Փակ շուկան ու դարձնել սուպերմարքեթ, խնդրեմ, բայց պետությունը պետք է դնի կոշտ չափորոշիչներ և հետևի դրանց: Փրկությունը միայն կոմպրոմիսի մեջ է: Այդ մոդելը ես շատ լավ տեսել եմ ԱՄՆ-ում, Չիկագոյում, որտեղ մեզ պատմում էին, թե ինչպես է պետությունը զբաղվում բիզնեսի, հանրային բարիքների միջև կոմպրոմիսներ ստեղծելով: Բիզնեսն ինքն իրենով չի կարող ստեղծել կոնցեպտներ, իսկ տարբեր նախաձեռնություններն այդպիսի գործառույթից զրկված են: Երկու կամ երեք տարի առաջ մենք պատվեր ունեինք, փոքր բիզնեսների սեփականատերերը մեզ պատվիրել էին քաղաքում նոր տարածքներ ստեղծել իրենց համար: Մենք կատարեցինք պատվերը, և այն հաջողեց, հնարավոր է՝ առանց հեռացնելու կամ քանդելու ստեղծել նոր տարածքներ: Բայց Հայաստանում բիզնեսը հենվում է արագ եկամուտ ձեռք բերելու վրա»,- ասում է ճարտարապետ Շուռ Դաբավոգը[2]: Վերջինիս մոտեցումներում կարող ենք տեսնել բիզնես-հանրային հակադրության շուրջ ծավալվող քննարկումների մեկ այլ ասպեկտ, որում, ինչպես Աղասի Թադևոսյանի արտահայտած տեսակետի դեպքում, այդ երկու սուբյեկտները միմյանց չեն հակադրվում:

[1] Դաշտային հետազոտության նյութեր. հարցազրույց Աղասի Թադևոսյանի հետ:
[2] Դաշտային հետազոտության նյութեր. հարցազրույց Շուռ Դաբավոգի հետ:

Բիզնեսի և հանրային տարածքների կոմերցիալացման մասին հետաքրքիր էր նաև Մաշտոցի այգու պահպանման համար մղվող ակցիայի սյուժեն: Խոսքը պայմանական օլիգարխի կամ ինչպես ակցիայի ընթացքում էր որոշվել՝ Օլիկ Գարխյանի սիմվոլիկ հուղարկավորության մասին է[1]: Հուղարկավորությունը բեմականացված էր, մահացածի դերում պայմանական օլիգարխ էր, որի աճյունով ակցիայի մասնակիցները շրջեցին քաղաքի կենտրոնով, այնուհետև սիմվոլիկ կերպով թաղեցին նրան:

Օլիգարխների սյուժեն դոմինանտ է հանրային տարածքների դիսկուրսում, քանի որ պետական քաղաքականության դեմ քաղաքացիական բողոքների ընթացքում որպես շահառուներ կոնկրետ տարածքների վերակառուցման հետ կապված՝ ներգրավված են լինում հենց կապիտալ կրող շրջանակներից: Աղասի Թադևոսյանը սա բացատրում է նրանով, որ անկախությունից հետո հենց օլիգարխներն են դարձել առաջինները, որոնք քաղաքային տարածքների և միջավայրի հետ կապված ունեցել են կոնկրետ դիտանկյուն: Ըստ նրա, քաղաքացիական դիսկուրսի ի հայտ գալը, հատկապես հանրային տարածքների հարցերում, դառնում է այլընտրանքային դոմինանտ կապիտալիստական մոտեցմանը:

Քաղաքացիական պրակտիկաները և Մաշտոցի պուրակը

Մաշտոցի այգու իրադարձությունները կարելի է վերագրել Հայաստանում ամենաշատ քննարկված քաղաքական իրողությունների շարքին: Դրանք դարձան քաղաքացիական նախաձեռնություններից ամենաերկարակյացը, հատկապես, եթե հաշվի առնենք, որ տեղի էր ունենում փողոցային ամենօրյա պայքար: Այդ ակցիայի մեկ այլ առանձնահատկություն էր վերջինիս մասնակիցների քաղաքական բազմազանությունը՝ էկոլոգներ, ձախականներ, ազգայնական հայացքների տեր մարդիկ: Եվ ի վերջո, Մաշտոցի պուրակի համար մղվող պայքարը, լինելով հանրային տարածքի համար պայքար, յուրահատուկ էր նրանով, որ դարձավ սեփական խնդիրների քննարկման հանրային հարթակ: Այս ամբողջ բազմազանությունը մեզ ահռելի նյութ է տալիս: Առաջին անգամ մենք ունենք փաստ, որ հանրային տարածքի դիսկուրսը դառնում է հանրային քննարկվող: «Պայքարի առաջին օրերից հետո մեզ մոտ

[1] Մաշտոցի պուրակի շինարարության հետևում կանգնած է Գագիկ Բեգլարյանը, նշում են էկոլոգները, http://arminfo.info/armenian/eco/article/21-02-2012/04-41-00, 21.02.2012 // Օլիկ Գարխյանի թաղում, https://www.youtube.com/watch?v=pFX7uHbhweo, 22.04.2012:

խաղաղ ժամեր էին: Ոստիկանությունը չէր փորձում մեզ վոնդել այգուց, իսկ մենք չգիտեինք ինչ անել, ունեինք շատ ազատ ժամանակ: Այդ ժամանակ մտածեցինք՝ ով ենք մենք, ունենք արդյոք նպատակ, թե ոչ: Սկսեցինք քննարկել մշակութային իրադարձությունների անցկացման գաղափարը և վերջում որոշեցինք ստեղծել ազատ ամբիոն»,- հիշում է մեր զրուցակիցներից մեկը:

«Ամենահաջող քեյսերից մեկը եղել է Մաշտոցի այգու համար մղվող պայքարը: Մենք արդեն փորձառություն ունեինք, ունեցանք նաև տեղ և ժամանակ հայաստանյան իրականության ամենացավոտ կետերի վրա ճնշելու համար: Եվ ես կարծում եմ, որ հաջողությունն այն էր, որ այդ հարցերը սկսեցին քննարկվել»,- նշում է մեկ այլ զրուցակից[1]: Ակցիաների ընթացքում ակտիվ մասնակցություն ունեցավ հայաստանյան հասարակական կազմակերպություններից ՄԻԺԻ-ն (հանրային քննարկումների ընթացքում մասնակցային հետազոտության շրջանակներում մասնակցել է նաև տողերիս հեղինակը):

Մեր զրուցակիցներից Դավիթ Ստեփանյանը, բացի ակցիաներին մասնակցելուց, նաև հանրային տարածքների մասին քննարկումների կազմակերպիչներից էր[2]: Խոսքը հանրային դասախոսությունների մասին է, որոնք ակցիաներին զուգահեռ կազմակերպվում էին Մաշտոցի այգում: Դավիթն է «Հանրային տարածքը Հայաստանում» վավերագրական ֆիլմի ռեժիսորը[3]: Նա հարցազրույցում նշում է, որ ակցիաների ընթացքում ցանկություն է ունեցել եղածը հասկանալ, և հենց դրա համար էլ նախաձեռնվեցին հանրային քննարկումներն ու հանրային դասախոսությունները:

Մաշտոցի այգում մենք ականատես ենք լինում բոլորովին տարբեր հոսքերի և մոտեցումների: Այս տարբերությունն ակնառու է նաև հանրայինի մասին պատկերացումներում: Ակցիայի ամբողջ ընթացքում մենք կարող էինք ֆիքսել մի շարք ազգայնական երանգ կրող պրակտիկաներ: Օրինակ, հայտնվում էին ազգային, էթնիկ պարային խմբեր: Ակցիայի ամենաակտիվ մասնակիցներից Մարիամ Սուխուդյանն ու Եղիա Ներսիսյանը չէին թաքցնում իրենց ազգայնական հայացքները: Ակցիայի մասնակիցների բազմազանությունը, տարբեր քաղաքական հոսանքների և պրակտիկաների առկայությունը, սակայն, այգու ներքին խոհանոցն էին: Հակասությունները չէին խան-

[1] Քաղաքացիական ամբիոն Մաշտոցի այգում. «Հանրային տարածք», http://www.youtube.com/watch?v=0szWi8tzz54, 22.02.2012:

[2] Դաշտային հետազոտության նյութեր. հարցազրույց Դավիթ Ստեփանյանի հետ:

[3] Հանրային ոլորտը Հայաստանում, http://www.youtube.com/watch?v=lXu_f16PIog,. 19.12.2012:

զարում գալ կոմպրոմիսի և պայքարել այգու պահպանման համար: Հանրային ամբիոնի գոյության հետ կապված՝ մասնակից կողմերից առարկություններ չկային, և նույնիսկ հակադիր կարծիքների բախման ու քննարկման հնարավորություն կար:

Մաշտոցի այգու համար մղվող պայքարը դիտարկելով որպես հանրային տարածքներին առնչվող պրակտիկաներ և դիսկուրս ձևավորող իրադարձություններից մեկը՝ կարևորենք այդ դիսկուրսի ևս մեկ նշմարվող սյուժե: Ինչպես վերը նշեցինք, ակցիայի հայտնի մասնակիցներից էր Մարիամ Սուխուդյանը, որն ուներ ընդգծված ազգայնական հռետորաբանություն: Դաշտային հետազոտությունների ընթացքում ֆիքսել ենք մի դրվագ Մարիամի և ակցիայի մասնակիցների մեկի՝ Ծոմակ անունով ակտիվիստի միջև: Քննարկումը սկսվեց նրանից, որ Մարիամն իր ֆեյսբուքյան էջում տրանսվիստիտի հանդեպ հեգնական վերաբերմունք արտահայտող նկար էր տեղադրել[1]: Ծոմակը, որ ձախ և սոցիալիստական հայացքներ ուներ, հետագայում էլ հայտնվել էր Հայաստանում միասեռականության շուրջ քննարկումների կենտրոնում, դեմ էր արտահայտվել լուսանկարին, որի արդյունքում Ֆեյսբուքում մեծ քննարկում էր ծավալվել: Հետագայում, երբ Ծոմակին պատկանող ակումբն այրվեց, նրան աջակցող քաղաքացիներից շատերը հարցադրում էին անում, թե ինչու Մաշտոցի այգու ակցիայի մասնակիցներից շատերը չեն պայքարում նաև ակումբի տիրոջ դեմ սկսված հասարակական տրամադրությունները կանխելու համար: Դաշտային հետազոտությունների ընթացքում հայտնի դարձավ նաև, որ այս հակադրությունը հետագայում կառուցվածքային խնդիրներ առաջացրեց քաղաքացիական մի շարք այլ նախաձեռնություններում:

Մաշտոցի այգում մեկ այլ քննարկվող թեմա էր մարտի 8-ին տեղի ունեցած միջադեպը: Ակցիայի իգական սեռի մասնակիցները, առանց տղամարդ մասնակիցների, մտան այգու պայքարի առիթ հանդիսացող կիսակառույց բուտիկների տարածք: Ոստիկանությունը սկզբում փորձեց դուրս հանել մասնակիցներին: Ոստիկանության բարձրաստիճան ղեկավարներից մեկը կանանց տոնի կապակցությամբ ծաղիկներ գնեց և բաժանեց ակցիայի իգական սեռի մասնակիցներին[2]: Այս միջադեպի հետ կապված՝ հետագա ներքին քննարկումները երկու սյուժեով էին զարգանում: Մեկը՝ կնոջ տրանսֆորմա-

[1] Դաշտային հետազոտության նյութեր:
[2] Մարտի 8-ը Մաշտոցի այգում, https://www.youtube.com/watch?v=Vj6pDVd0VzQ, 08.03.2012:

ցումն ավանդականից դեպի նորարարական, պայքարող, սեփական իրավունքները գիտակցող: Մյուսը՝ ընդհակառակը, կապված ոստիկանության կողմից ծաղիկներ նվիրելու և դրանով իրավիճակային կոմպրոմիսի հասնելու հետ, որը մեկնաբանվում էր պայքարող կնոջն ընդունված գենդերային կարծրատիպերին համապատասխան հանդարտեցնելու հետ:

Հանրային տարածքի հետ կապված քննարկումները Մաշտոցի այգում հատկապես աչքի ընկան Յուրգեն Հաբերմասի՝ հանրայինի հետ կապված մոտեցումների պոպուլյարացմամբ: Քաղաքագետ Ալեքսանդր Իսկանդարյանն այս կապակցությամբ նշել էր, թե երիտասարդական շարժումները Հայաստանում ավանդական ձախականներ չեն (անգլերեն տերմինով՝ *leftness*[1]): Հարցին, թե ինչու հենց ձախական հայացքները դարձան գերիշխող, մեր զրուցակիցներից մեկը նշեց, որ իրադարձությունների ընթացքում կարիք կար որևէ կերպ մեկնաբանել դրանք: Այդ ժամանակ հայտնվեցին մարդիկ, ովքեր սկսեցին սահմանել որոշ հասկացություններ[2]: Մեկ ուրիշ զրուցակից նույնպես նմանատիպ պատճառ բերեց: Նա նշեց, որ կա ինտելեկտուալ և ակտիվ մարդկանց մի խումբ, որոնք իրենց ձախ են համարում և փորձում են տեղի ունեցողը բացատրել ձախ գաղափարախոսության սահմաններում[3]:

Ձախական դիսկուրսի և քաղաքացիական նախաձեռնությունների կապի լավ արտահայտություն էր Լենա Նազարյանի օրինակը, որի մասին խոսեցինք հոդվածի սկզբում: Լենան քաղաքացիական ակտիվությունից հետո գնացել էր սովորելու Ժամանակակից արվեստի ինստիտուտում, որտեղ դասավանդում են ձախական դիսկուրսները համակրող մասնագետներ[4]: Դավիթ Ստեփանյանի ֆիլմում հստակ երևում են ձախական հակումներ այդ ինստիտուտի դասավանդողների շրջանում: Խոսքը, մասնավորապես, Վարդան Ազատյանի, Նազարեթ Կարոյանի մասին է, որոնք ֆիլմում մեծ մասամբ հղում են անում Հաբերմասի տեսությանը՝ մեկնաբանելով հանրային ոլորտի և հանրային տարածքի խնդիրները:

Չնայած ձախական դիսկուրսն ամենավառ ներկայացվածներից մեկն է քաղաքացիական ակցիաներում, հատկապես կապված հանրային տարածքների հետ, սակայն միակը չէ:

[1] *Իսկանդարյան Ա.,* Վերջին քաղաքացիական բողոքները վկայում են ձախ հայացքների ձևավորման մասին, http://www.panarmenian.net/arm/news/115429/, 11.07.2012:
[2] Դաշտային հետազոտության նյութեր. հարցազրույց Դավիթ Ստեփանյանի հետ:
[3] Դաշտային հետազոտության նյութեր. հարցազրույց Ռուզաննա Գրիգորյանի հետ:
[4] Դաշտային հետազոտության նյութեր. հարցազրույց Լենա Նազարյանի հետ:

Անդրադառնանք մեկ այլ սյուժեի: Խոսքը, մասնավորապես, հանրային դատավարությունների մասին է, որոնք, ի տարբերություն ձախական մոտեցումների, արտահայտում էին լրիվ այլ պատկեր[1]: Ակտիվիստներն իրենք էին բեմականացված դատերի ընթացքում ստանձնում պայմանական պաշտոնյաների դերեր՝ ժամանակավորապես իրենց վրա վերցնելով պետության ֆունկցիաներ, ցույց տալով, թե ինչպես պետք է պետությունն աշխատի:

Հանրային դատավարությունների պրակտիկան սկզբունքային հակասության մեջ է հայտնվում ձախական մոտեցումների հետ, մասնավորապես այնպիսի հասկացությունների հարցում, ինչպիսին է իշխանության և պետության, կապիտալի ժխտումը:

Հանրային դատավարությունների ընթացքում նկատվում է, որ, չնայած ընդգծված ընդդիմադիր տրամադրություններին, իշխանության՝ որպես ինստիտուտի, ժխտում չկա, ավելին՝ կա փորձ ցույց տալու, թե ինչպես կարելի է բարելավել այդ ինստիտուտի արդյունավետությունը:

Եզրակացություններ

Այսպիսով, փոփոխությունները ժամանակակից Հայաստանի տնտեսական և քաղաքական կարգում փոփոխություններ մտցրին նաև քաղաքային միջավայրում և հանրային տարածքներում: Խորհրդայինի նյութական ժառանգությունը, նորանկախ երկրի նոր խնդիրները, իշխանությունների քաղաքականությունը, հասարակական տրամադրությունները, փոխազդելով, ստեղծեցին Երևանի նոր քաղաքային տրամաբանությունը, որն էլ, իր հերթին, պայմանավորեց հանրային տարածքի գաղափարը: Անկախության առաջին օրերից արվում են եղածը վերիմաստավորելու փորձեր, որոնք, սակայն, առավել դոմինանտ և ընդունելի դիսկուրսի վերածվելու միտումներ են ցուցաբերում վերջին տարիներին: Կապիտալի կրողները փորձում են Երևանը վերակառուցել կապիտալիզմի էությանը համապատասխան, ինտելեկտուալ շերտը ներկայացնողները և քաղաքացիական նախաձեռնությունները փորձում են վերիմաստավորել և հակազդել դոմինանտ պաշտոնական դիրքորոշմանը: Այս ամենի հակադրության մեջ էլ ձևավորվում է ոչ միայն քաղաքային միջավայրի նյութական, այլև դիսկուրսիվ պատկերը:

[1] Դատում են քաղաքացիները, https://www.youtube.com/watch?v=kji0djd4k8A, 13.03.2012:

Արդեն 2008 թվականից հետո տեսնում ենք ավելի վաղ նկատվող հասարակական միտումների ակտիվացում: Նոր քաղաքացիական պրակտիկաները, նոր տեխնոլոգիաներն ու համացանցը ձևավորում են հայաստանյան քաղաքական և սոցիալական կյանքի նոր շերտ: Այս նոր պրակտիկաներից կարևոր է դառնում հանրային տարածքի գաղափարը: Այս հարցը խնդրահարույց դարձնող հանգամանքներից էին Երևանի վայրի կապիտալացումն ու իշխանության քաղաքականությունը հատկապես Երևանի կենտրոնի ձևափոխման հարցում: Վստահաբար կարելի է ասել, որ քաղաքային միջավայրի մենեջմենթի հարցը երկար ժամանակ կմնա հայաստանյան քաղաքական քննարկումների օրակարգում:

Հանրային տարածքների մասին դիսկուրսը ծնվում է սոցիալական փոփոխությունների ֆոնին: Կան խնդիրներ, կան սոցիալական դերակատարներ, ովքեր ցանկանում են ապրել այլ համակարգում: Դերակատարները սեփական մոտիվացիաներն իրացնում են տարբեր կերպ՝ մասնագիտական, քաղաքացիական, պաշտոնական ուղիներով:

Մայիս, 2016թ.

Աղբյուրներ և գրականություն

1. Հանրային ոլորտ. վիճարկման և փոխըմբռնման միջև, խմբ.՝ Ազատյան Վ., Երևան, 2007:
2. *Weintraub J.*, The theory and politics of the public/private distinction // Public and private in thought and practice. The University of Chicago Press, 1977, pp. 1-42.
3. *Habermas J.,* Between Facts and Norms: Contributions to a Discourse Theory of Law and Democracy. Cambridge: Polity, 1996.
4. *Бурдье* П., Социология социального пространства, Москва, 2007.
5. *Лефевр А.,* Производство пространства, Москва, 2015.
6. *Сеннет Р.,* Падение публичного человека, М., Логос, 2002.
7. *Հարությունյան Ա.,* Պետության սիմվոլները և նարատիվները Երևանի քաղաքային լանդշաֆտում // (Հանրային ոլորտ. Վիճարկման և վերըմբռնման միջև, խմբ.՝ Վ. Ազատյան, Եր., 2007):
8. *Բայադյան Հ.,* Նոր սոցիալական կարգը և փոփոխվող մեդիան (Հանրային ոլորտ. Վիճարկման և վերըմբռնման միջև, խմբ.՝ Վ. Ազատյան, Եր., 2007), էջ 117:
9. *Маргарян Л.,* Дискурс публичного пространтства в Армении. Генезис и особенности, Первый отчет за январь-февраль (HBF), 2014 (из коментариев Гаяне Шагояна).

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Լևոն Մարգարյան

Ամփոփագիր

Վերջին տարիներին Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքում հայտնվում են նոր իրողություններ, որոնք դրսևորվում են հանրային կյանքի տարբեր ոլորտներում, այդ թվում քաղաքային միջավայրում տեղի ունեցող փոփոխություններում: Հետխորհրդային կամ արդի շրջանի Երևանի քաղաքային միջավայրի փոփոխություններն ուղեկցվում են քաղաքական քննարկումներով, քաղաքացիական հասարակության տարբեր դրսևորումներով: Հետխորհրդային նոր տնտեսակարգը, Հայաստանի երրորդ Հանրապետության անցումային քաղաքական իրավիճակն ուղղակիորեն և անուղղակիորեն ազդում կամ պայմանավորում են քաղաքային միջավայրում տեղի ունեցող փոփոխություններն ու դրանց շուրջ քննարկումները:

ИЗМЕНЕНИЯ ГОРОДСКОЙ СРЕДЫ ЕРЕВАНА В КОНТЕКСТЕ НОВЫХ РЕАЛИЙ

Левон Маргарян

Резюме

В последние годы в социальной и политической жизни Армении появляются новые реалии в разных сферах публичной жизни, включая изменения городской среды. Изменения городской среды постсоветского или нынешнего Еревана сопровождаются политическими событиями и разными проявлениями гражданского общества. Новый постсоветский экономический строй, переходная политическая ситуация в Армении непосредственно и косвенно влияют на изменения в городской среде и на дискуссии вокруг этих изменений.

TRANSFORMATIONS OF THE URBAN ENVIRONMENT OF YEREVAN IN THE CONTEXT OF THE NEW REALITIES

Levon Margaryan

Resume

In recent years new processes have emerged in sociopolitical life of Armenia, which reflect in various areas of public life, including the transformations occurring in the urban environment. Transformations of the urban environment in the post-Soviet or modern Yerevan are accompanied by political discussions and different demonstrations of civil society. The new post-Soviet economic system, and the current transitional political situation in Armenia directly and indirectly impact on the transformations in the urban environment and on the discussions around them.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ. ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Աշխեն Բեգլարյան*

Բանալի բառեր՝ ազգային անվտանգություն, քաղաքացիական հասարակություն, ժողովրդավարություն, պետություն, անհատ, ազգային անվտանգության սուբյեկտ:

Ներկայում ժողովրդավարությունն ընկալվում է որպես տարբեր արտաքին և ներքին ուժերի միջև կոնֆլիկտների լուծման համակարգ: Միաժամանակ, գլոբալիզացիայի պայմաններում անվտանգության և ժողովրդավարության առկա հակասությունները սրվում են, երևան են գալիս նոր մարտահրավերներ՝ պահանջելով վերիմաստավորել ազգային անվտանգության պարադիգմը ինչպես պետության, այնպես էլ անհատների և քաղաքացիական հասարակության կողմից: Ժամանակակից ժողովրդավարական պետությունն ազգային անվտանգությունը սահմանում է որպես ռեալ և հնարավոր արտաքին ու ներքին սպառնալիքներից անձի, ընտանիքի, հասարակության ու պետության կենսականորեն կարևոր շահերի պաշտպանվածության վիճակ [1, էջ 180], այսինքն՝ երկրում ապահովված են անձի, հասարակության և պետության իրավունքը, ազատությունը և պաշտպանվածությունը, ինչպես նաև երաշխավորում է նրանց փոխկապված համակարգային զարգացումը: Ահրաժեշտություն է առաջանում սահմանել պետության, քաղաքացիական հասարակության և անհատի փոխհարաբերությունների այն պարամետրերը, որոնք ապահովում են նրանց ներդաշնակ փոխազդեցությունը՝ ապահովելով երկրի անվտանգությունը:

Հ.Քոթանջյանն իր «Հայաստանի ազգային անվտանգության մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում» գրքում քաղաքացիական հասարակությունը սահմանել է

* ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի հայցորդ, ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմի գլխավոր մասնագետ:

հետևյալ կերպ. «Համախումբ պետությունից համեմատաբար մեկուսի կամավոր ընկերակցությունների, որոնք գործում են ինքնագործունեության հիմունքներով: Ներառում է՝ անդամակցություն միություններին և շարժումներին, պատրաստակամություն հանդուրժողաբար վերաբերվելու տարբեր քաղաքական հայացքների, ինչպես նաև քաղաքացիների մասնակցությունը տարբեր միություններին, մարդու քաղաքացիական պատասխանատվությունը հասարակության առջև: Առաջին հերթին պաշտպանում է անձի շահերը, իրավունքներն ու ազատությունները պետության ոտնձգություններից» [1, էջ 180]: Ազգային անվտանգության ոլորտում քաղաքացիական հասարակության գործունեությունն ուսումնասիրողների մի մասն իր հայեցակարգերը ձևավորում է՝ հիմք ընդունելով Ա.Թոքվիլի, Ռ.Պատնեմի և այլ գիտնականների դիրքորոշումները: Իրենց աշխատություններում նրանք ելնում են այն բանից, որ քաղաքացիական հասարակության հիմքն անձն է, որը, հանդիսանալով այս կամ այն խմբի մասը, իր բազմակողմ պահանջմունքները բավարարում է այդ միավորումների, ասոցիացիաների և այլ տիպի կազմակերպությունների միջոցով: Դրա համար քաղաքացիական հասարակությունը հնարավորություն է ստանում ազդել պետության ներսում ժողովրդավարական նորմերի կայացման և տարածման վրա: Նման հասարակության գործունեությունը հիմնված է այնպիսի հասկացությունների վրա, ինչպիսին են վստահությունը, համագործակցությունը, փոխադարձությունը, հանդուրժողականությունը, հանրային փոխօգնությունը, սոցիալական և քաղաքական ակտիվությունը, որոնց ամբողջությունը հանդիսանում է «սոցիալական կապիտալ»՝ նպաստելով անվտանգ և զարգացած ժողովրդավարական հասարակության կայացմանը:

Այդ հարցում մեծ դեր ունեն հասարակական կազմակերպությունները: Հարվարդի Քենեդիի անվան կառավարման դպրոցի դեկան Ժոզեֆ Նայը «NGO-ները փոխում են աշխարհը» հոդվածում գրում է. «Հասարակական կազմակերպությունները նոր նորմեր են զարգացնում, որոնց միջոցով կարողանում են ուղղակիորեն ճնշում գործադրել կառավարությունների, գործարարների վրա, որպեսզի վերջիններս փոխեն իրենց քաղաքական ուղին: Հասարակական կազմակերպությունները նաև կարող են անուղղակիորեն հասարակական կարծիք ձևավորել այն խնդրի շուրջ, թե ինչ փոփոխություններ պետք է անեն կառավարություններն ու գործարարները: Հասարակական կազմակերպություններն, իհարկե, չունեն «կոշտ ուժ» գործադրելու

հնարավորություն, սակայն նրանք հաճախ կիրառում են «փափուկ ուժ», որը ենթադրում է ոչ թե հակադրվելով, այլ գրավելով ցանկալի արդյունքների հնարավորությունը: Եվ քանի դեռ հասարակական կազմակերպությունները համախոհներ ունեն, կառավարությունները ստիպված են հաշվի նստել նրանց հետ»: Նա նաև նշել է, որ կարևոր է, որպեսզի հասարակական կազմակերպություններն անընդմեջ, այլ ոչ թե մի որևէ կարճ ժամանակահատվածում ներգրավված լինեն սեփական երկրի բարեփոխման մեջ [2, էջ 75-77]: Հասարակական կազմակերպություններն ապահովում և խթանում են հանրային կառավարմանն ու տեղի ունեցող գործընթացներին բնակչության քաղաքացիական մասնակցությունը՝ որոշումների ընդունման ժողովրդավարական ընթացակարգերի կատարելագործման ճանապարհով այդ գործում ներգրավելով քաղաքացիների լայն շերտեր [3, c. 290]:

Ազգային անվտանգության ապահովման գործում քաղաքացիական հասարակությունն իրականացնում է մի շարք գործառույթներ, որոնք կարելի է ներկայացնել հետևյալ կերպ: Քաղաքացիական հասարակությունը՝ լայն իմաստով մեկնաբանության պարագայում, երբ նույնացվում է «հասարակությունն ամբողջությամբ» հասկացության հետ, ունի ամփոփող-ինտեգրող բովանդակություն, քանի որ արտահայտում է այնպիսի հիմնարար պայմանների ամբողջությունը, որոնք ուղղակի և անխուսափելիորեն ազդում են ազգային անվտանգության ապահովման վրա:

Քաղաքացիական հասարակությունը կարող է իրականացնել հասարակության կայունության գործառույթ: Հասարակության կայունությունը կապվում է միջին խավի հետ, քանի որ միջին խավի գլխավոր գործառույթը կայունության ապահովումն է: Այդ գործառույթի առկայության հիմնական փաստարկն այն է, որ միջին խավի ներկայացուցիչները ցանկացած հասարակությունում այն սոցիալական ուժն են, որոնք արտացոլում են վերջինիս հավասարակշռության միտումները: Ինչ վերաբերում է հետարդյունաբերական հասարակություններում միջին խավի ծավալներին, ապա ժամանակակից քաղաքակիրթ հասարակության կառուցվածքը մասնագետները պատկերում են մոտավորապես հետևյալ կերպ՝ հարուստները կազմում են հասարակության 5-6%-ը, աղքատները՝ 14-15%-ը, իսկ միջին խավը՝ 80%-ը[1]: Տեսաբաննե-

[1] Տե՛ս *Յու. Մելքումյան*, «Միջին խավը Հայաստանում», էջ 193, http://lraber.asj-oa.am/701/1/18._Melqumyan_-_191.pdf

րի պնդմամբ՝ նման սոցիալական կառուցվածքն ապահովում է հասարակության կայունությունը: Միջին խավը, լինելով հասարակության ամենաստվար հատվածը, հասարակության մեջ կատարում է կայունացնող դեր. մի կողմից՝ կապող օղակ է հասարակության երկու բևեռների՝ հարուստների և աղքատների միջև, իսկ մյուս կողմից՝ ապահովում է վերջիններիս միջև բավարար սոցիալական տարածություն, որպեսզի հասարակությունը խուսափի սոցիալական բախումներից և ճգնաժամերից: Նման իրավիճակը բնորոշ է հետարդյունաբերական բոլոր հասարակություններին [4]:

Ազգային անվտանգության ապահովման համատեքստում քաղաքացիական հասարակությունն իրականացնում է կայունացման գործառույթ ոչ միայն այն պատճառով, որ ուղղակի և անուղղակի կապված է միջին խավի հետ, որը հասարակության սոցիալական կառուցվածքի կայունության հիմքն է, այլ նաև պայմանավորված է նրանով, որ ձևավորում է կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, շարժումներ, որոնք իրենց մասնակցությունն են ունենում հասարակական-քաղաքական կյանքին:

«Քաղաքացիական հասարակություն» հասկացության նեղ ըմբռնումից բխող գործառույթներն այս կամ այն կերպ փոխկապված են պետության հետ: Այդ առումով, ազգային անվտանգության ապահովման հարցում քաղաքացիական հասարակության գործառույթները պայմանավորված են քաղաքացիական հասարակության և պետական կառավարման մարմինների միջև հարաբերություններով, որոնք բազմավեկտոր են:

Ինչպես արդեն նշվել է, ազգային անվտանգության ապահովումը ներառում է միմյանց հետ փոխազդեցության մեջ գտնվող երկու ենթահամակարգ՝ *պետություն և հասարակություն*: Պետական համակարգին տրվում է գլխավոր դերակատարությունը: Այդուհանդերձ, պետության և քաղաքացիական հասարակության ներդրումների հարաբերակցությունն ազգային անվտանգության ամրապնդման հարցում մեծապես կախված է տվյալ երկրի առանձնահատկություններից, ինչպես նաև իրենց առջև դրած խնդիրներից: Այդ պատճառով հետազոտվող հիմնահարցը կարող է դիտարկվել տարբեր հարթություններում:

Մի կողմից՝ քաղաքացիական հասարակության դերն ազգային անվտանգության ապահովման համակարգում հնարավոր է ձևակերպել որպես գոյություն ունեցող և մշտապես ձևավորվող տարբեր մակարդակի հասարա-

կական կառույցների ամբողջություն, որն իրականացնում է ընդհանուր քաղաքացիական անվտանգության գործառույթ, որոնց դերը որոշվում է հետևյալ գործառույթների իրականացման հնարավորությամբ.

- սոցիալական վտանգների և սպառնալիքների աղբյուրների առաջացման նախազգուշացում,
- ճգնաժամային իրավիճակների, կոնֆլիկտների և հակասությունների շուտափույթ նախազգուշացում,
- քաղաքացիների և կազմակերպությունների սահմանադրական իրավունքների և ազատությունների, օրինական շահերի պաշտպանություն,
- հասարակական կարծիքի ձևավորում և դրա վրա ազդեցություն,
- պետական իշխանության մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացում, այդ թվում՝ անվտանգության ոլորտում պետական քաղաքականության իրականացման և որոշումների կայացման նկատմամբ,
- իր անդամների մոբիլիզացում՝ ազդելու անվտանգության ոլորտում խնդիրների լուծման գործընթացի վրա,
- քաղաքացիական գիտակցության զարգացում, սոցիալական համերաշխության և համաձայնության հաստատում,
- քաղաքացիների քաղաքական ակտիվության և իրավական մշակույթի բարձրացում, քաղաքական բազմակարծության զարգացում, մեկ քաղաքական գործչի կողմից պետական իշխանության ուզուրպացման կանխում (մեկ կուսակցության կողմից), հասարակական կարծիքի հիման վրա պետական կառավարման մարմինների կողմից քաղաքականության մշակում և իրականացում, ընտրությունների կազմակերպման և իրականացման վրա հասարակական վերահսկողության զարգացում:

Մյուս կողմից՝ քաղաքացիական հասարակությունն ակտիվորեն ազդում է ազգային անվտանգության ապահովման պետական համակարգի վրա:

Քաղաքացիական հասարակությունն արտահայտում է շահերի խմբեր, որոնք պետք է գիտակցվեն, արտաբերվեն և հասցվեն պետական համապատասխան կառույցներին: Քաղաքացիական հասարակությունն այս պարագայում միջնորդ է հանդիսանում քաղաքացու և պետության միջև: Քաղաքացիական հասարակությունը, իրականացնելով արտաբերման, արտահայտ-

ման (*артикуляция*) գործառույթը, միաժամանակ կուտակում և փոխանցում է իր անդամների շահերի և պահանջմունքների լայն շրջանակ: Այդ շահերն ու պահանջմունքներն այնքան բազմաթիվ, բազմազան և տարբերակված են, որ պետությունն օբյեկտիվորեն չի կարող իմանալ և բավարարել: Դրա հետ կապված՝ քաղաքացիական հասարակությունն ամեն դեպքում տեղեկացնում է պետությանը քաղաքացիների այն շահերի ու պահանջմունքների մասին, որոնք հնարավոր է բավարարել միայն պետության ուժերով, ազդանշանում է հասարակական ոչ բարեկեցիկ կյանքի մասին:

Քաղաքացիներին կոնսոլիդացնելով տարբեր ասոցիացիաների, ոչ կառավարական, ոչ ֆորմալ միավորումների միջոցով՝ քաղաքացիական հասարակությունը խոչընդոտում է նրանց մասնատման, փոխադարձ օտարման գործընթացներին: Առաջարկելով սոցիալական կոոպերացիաների բազմաթիվ ձևեր, խթանելով համընդհանուր նյութական և հոգևոր շահերի վրա հիմնված նոր միավորումների ստեղծումը՝ քաղաքացիական հասարակությունն անհատներին թույլ է տալիս առաջ գնալ սոցիալական ինքնահաստատման ճանապարհով ոչ թե մյուսների նկատմամբ սեփական հակադրության հաշվին, այլ սոցիալական կապերի, գործնական, ստեղծագործական, ընկերական կապերի օգտագործմամբ, որն էլ բավական կարևոր է ազգային անվտանգության ապահովման համար, քանի որ նվազագույնի է հասցնում հասարակության մեջ կոնֆլիկտների ներուժը:

Քաղաքացիական հասարակությունը բազմաթիվ միջոցներով վերահսկողություն է իրականացնում պետության գործունեության նկատմամբ՝ դրանով իսկ կատարելով այն մեխանիզմի դերը, որն ապահովում է հասարակության և պետության ուժերի միջև հավասարակշռությունը: Քաղաքացիական հասարակությունը «զսպումների» և «հակակշիռների» համակարգում կարևոր և գործուն ինստիտուտներից մեկն է քաղաքական իշխանության բացարձակ տիրապետության ձգտման ճանապարհին:

Ընդհանուր համագործակցության, երկխոսության, համաձայնողական խորհրդատվությունների միջոցով քաղաքացիական հասարակությունը ստեղծում և աջակցում է ամբողջ սոցիալական համակարգի ներքին հավասարակշռությանը: Իդեալական ձևում սոցիալական սուբյեկտների՝ անձի, պետության և քաղաքացիական հասարակության միջև պետք է լինի քաղաքակիրթ հարաբերությունների եռամիասնություն: Արդյունքում՝ պետությունն

ու անձը, որոնք ի սկզբանե թվում են անհամատեղելի սոցիալական միավորներ, զարգացած քաղաքացիական հասարակության պայմաններում դառնում են մեկ արժեքավոր մեծություն: Իսկ դա, իր հերթին, նպաստում է ազգային անվտանգության համակարգի ամրապնդմանը:

Անհրաժեշտ է առանձնացնել նաև քաղաքացիական հասարակության ինքնակարգավորման գործառույթը: Քաղաքացիական հասարակությունն ընդունակ է կյանքի կոչել, գործնական դաշտ ներմուծել «ներքևից» առաջացող զանգվածների սոցիալական նախաձեռնությունները և դրանով ապահովել ինքնակարգավորման գործընթացը: Քաղաքացիական հասարակությունն իշխանության կողմից հաստատված ուղղահայաց իշխանական հարաբերությունները լրացնում է հորիզոնական սոցիալական կապերով, որոնք գործառում են ինքնակարգավորման սկզբունքների հիման վրա: Ընդ որում, մի շարք նման նախաձեռնություններ անմիջականորեն ուղղված են ազգային անվտանգության ապահովմանը: Կարևոր է ընդգծել, որ ազգային անվտանգության ապահովման վերոնշյալ ենթահամակարգերը պետք է գործառեն միասնության մեջ՝ միմյանց լրացնելով ներդաշնակ ձևով:

Հետազոտողների մեծամասնության համար քաղաքացիական հասարակության դրական ազդեցությունը միանշանակ է: Միևնույն ժամանակ, կան ուսումնասիրողներ (Թ.Կոզեր, Դ.Ֆերնանդո և Ա.Հեսթոն), որոնք մատնանշում են, որ քաղաքացիական հասարակությունը չի հանդիսանում միանշանակ դրական ինստիտուտ, և այն կարող է ապակառուցողական գործունեություն ծավալել ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից տարբեր քաղաքական խմբավորումների միջոցով, որոնք ձգտում են իրենց շահերն ու պահանջմունքները բավարարել ցանկացած հասանելի եղանակով[1]: Քննադատական դիրքերից խոսելով՝ Հանթինգթոնը նշում է, որ քաղաքականացված սոցիալական ուժերն ունակ են ոչ միայն գերիշխող օրակարգեր ստեղծել, այլև խաթարել քաղաքական կայունությունն ու կառավարության՝ խնդիրներ լուծելու կարողությունը, և գտնում է, որ քաղաքական ինստիտուտները պետք է իշխեն այդ «հում սոցիալական ուժերին» հասարակության կայունությունը պահպանելու համար [5, p. 19]: Հետաքրքիր են նաև Գրամշիի մոտեցումները,

[1] Տե՛ս *Яшина А.В.,* «Гражданское общество как субъект обеспечения национальной безопасности: опыт России и США», грамота, 2012. № 11 (25): в 2-х ч. ч. ii. с. 218-221. issn 1997-292x., www.gramota.net/materials/3/2012/11-2/53.html

որը քաղաքացիական հասարակությունը հասկանում էր ոչ թե ներկայիս հիմնական լիբերալ-դեմոկրատական մոտեցմամբ՝ որպես կամավոր ընկերակցությունների և հասարակական կազմակերպությունների սեկտոր, այլ առաջին հերթին որպես հանրային ոլորտ, որտեղ ընթանում են գաղափարների և համոզմունքների ձևավորում և քաղաքական պայքար դրանց համար[1]: Հետևաբար, քաղաքացիական հասարակության ինստիտուտներն ազդում են երկրում քաղաքականության վրա նաև քաղաքական հարցերում ներգրավված լինելու առումով, և այդ իմաստով պետք է որ ուղղված լինեն նաև հանրության տարբեր շերտերին գաղափարապես գրավելուն:

Ինչպես գրում է Լ.Նիկովսկայան, քաղաքացիական հասարակությունը կառուցվածք է, որը հասարակության մեջ ձևավորվել է որպես պետության հետ փոխհարաբերություններում հետադարձ կապի ինստիտուտ, որպես սոցիալական գործընթացների և դրանց նկատմամբ վերահսկողության ինստիտուտ: Բայց պետության և քաղաքացիական հասարակության փոխհարաբերությունը «մշտապես ստեղծում և վերարտադրում է հակասություն, որը կապված է քաղաքացիական ոլորտում բազմակարծության և պետության ինքնիշխանության հետ» [6, c. 7]: Այդ հակասությունը կարող է արտահայտվել տարբեր ձևերով. համագործակցությունից և երկխոսությունից մինչև բաց կոնֆլիկտներ և «քաղաքացիական անհնազանդություն»: Այն հատկապես մեծանում է ճգնաժամային պայմաններում (պետական, տնտեսական, քաղաքական և այլն), որը տանում է շահերի բախման կտրուկ մեծացման և հասարակության սոցիալական կառուցվածքում առաջացնում է անհավասարակշռություն:

Ժամանակակից հասարակությունում դիտարկվում են մի շարք ճգնաժամային երևույթներ, որոնցից մեկը կոչվում է պետության ճգնաժամ, որը գլոբալ գործընթացների ազդեցությամբ կորցնում է քաղաքացիների անվտանգության ապահովման իր դիրքերը, որի արդյունքում ի հայտ է գալիս քաղաքական ապատիա կամ բնակչության քաղաքացիական անհանդուրժողականություն:

Կ.Մաքֆերսոնը նկարագրել է ժամանակակից քաղաքական իրավիճակը որպես «քաղաքական ընտրախավի և անտարբեր ընտրողների միջև մրցակցության համակարգ» [7, c. 174]: Երբեմն դա առաջ է գալիս հոգուտ այն հակաժողովրդավարական ռադիկալ ուժերի բողոքական քվեարկության

[1] Տե՛ս Gramsci and hegemony, http://www.powercube.net/other-forms-of-power/gramsci-and-hegemony/

սպառնալիքի, որոնք նախկինում հեռացվել են քաղաքականությունից և ցանկանում են վերադարձնել այդ իրավունքը: Ինչպես գրում է *Stratfor* վերլուծականը, մեկ շաբաթվա ընթացքում հազարավոր բողոքի ակցիաներ են իրականացվում աշխարհում[1], որոնց շարքում են կրոնական հիմնադիրների, Ուոլ-սթրիթի գործազուրկների շարժումները: Այդ նախնական «քաղաքացիական խմբերի» շուրջ են աստիճանաբար հավաքվելու ուսանողները, հասարակական կազմակերպությունները, և նրանք հայտնվելու են քաղաքական ուժերի ուշադրության կենտրոնում: Հարկ է նշել, որ հասարակական շարժումները վայելում են հասարակության համակրանքն ու աջակցությունը՝ որպես անշահախնդրորեն հասարակության իրավունքների համար պայքարող և հաղթանակող խմբեր, որոնք ունեն սեփական, երբեմն նոր իշխանություններից հստակորեն տարանջատվող լիդերներ և «անկախ» հեղափոխականի մշտական կարգավիճակ. մենք պայքարում ենք ոչ թե իշխանության դեմ, այլ հասարակության համար...

Է.Գիդենսը հասարակական շարժումները սահմանում է որպես «համընդհանուր շահերի իրականացման կոլեկտիվ փորձ կամ կոլեկտիվ գործողության արդյունքում համընդհանուր նպատակին հասնելու փորձ՝ հաստատված ինստիտուտների շրջանակներից դուրս»: Նա նաև նշում է, որ «հեղափոխությունների տեսությունները և հասարակական շարժումների տեսություններն անխուսափելիորեն հատվում են»:

Ք.Քրաուչը գրում է, որ «եթե հասարակական շարժումները մարդկային զանգվածներում արձագանք են ստանում, ապա այն մեծանում է, քանի որ պահանջները տեղ են գտնում հասարակ մարդկանց մտքերում և խոսակցություններում» [8, c. 192]: Այդ դեպքում պետությունը՝ ի դեմս իշխող քաղաքական ընտրախավի, կոնֆլիկտի մեջ է գտնվում քաղաքացիական խմբերի հետ, որը բերում է պետության և հասարակության ապակայունացմանը: Այն իրավիճակը, երբ պետությունը որոշակի սոցիալական ոլորտներում առկա սոցիալական խնդիրներն ի վիճակի չէ լուծել, այդ գործառույթն ստիպված իր վրա է վերցնում հասարակ քաղաքացին՝ օգտագործելով սեփական անվտանգության ապահովման ագրեսիվ միջոցներ, վտանգելով պետության, հասարակության, անհատի կայունությունը:

[1] Տե՛ս *West B.,* “Protest Movements as Political Strategy”, http://www.stratfor.com/weekly/protestmovements-political-strategy (03.09.2012-ի դրությամբ):

Առկա հիմնախնդիրների լուծմանն ուղղված պետության դիրքի թուլացման վերականգնումը հնարավոր է համագործակցության զարգացման միջոցով: Պետության և հասարակության անվտանգության վրա քաղաքացիական հասարակության ապակառուցողական գործունեությունը հնարավոր է կանխարգելել, որի համար անհրաժեշտ են իշխանության մարմինների հետ քաղաքացիական հասարակության փոխհարաբերության այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք կապահովեն ինչպես սոցիալական հիմնախնդիրների լուծումը, այնպես էլ կնպաստեն պետության, հասարակության, անհատի կայուն զարգացմանը: Սակայն ներկայում նոր մարտահրավերների պայմաններում որոշ պետություններ ձգտում են սահմանափակել հասարակական սեկտորի ակտիվության աճը, մասնավորապես՝ քաղաքացիների և խմբերի գործունեությունը՝ արդյունքում փորձելով վերականգնել անվտանգության ապահովման ավանդական տեղը: Հակառակ տեսակետն է արտահայտում Ր.Որթին, համաձայն որի՝ հասարակությանն անհրաժեշտ է խթանել, որպեսզի վերջինս հետաքրքրվի «պետական գաղտնիքով»՝ երկրի արտաքին քաղաքականության, ռազմամթերքի և այլ հարցերով: Ներքին և արտաքին անվտանգության ոլորտներում պետության գործունեությունը պետք է ներկայացվի հանրությանը, որը կարող է և պետք է կառավարությունից պահանջի բացատրություն, հաշվետվություններ այդ ոլորտներում գործունեության վերաբերյալ [9, p. 10-11]: Քաղաքական որոշումների մշակման և կայացման գործընթացում պետության քաղաքացիների մասնակցության, ինչպես նաև վերահսկողության իրականացման հնարավորությունը հանդիսանում է ժողովրդավարական քաղաքական համակարգի կարևորագույն չափանիշ, ինչն էլ միակ ճանապարհն է՝ խուսափելու պետական ճգնաժամից, հասարակության կազմալուծումից և ժողովրդավարության կործանումից:

Այն պետությունում, որը ձգտում է լինել ժողովրդավարական և ապահովել ազգային անվտանգություն, անհրաժեշտ է պետության քաղաքականության մշակման գործընթացին ներառել քաղաքացիներին՝ չստանալով նրանցից միայն սոցիալական վճարներ և ֆորմալ ընտրություններին մասնակցություն: Այդպիսի մոտեցումը կարող է ձևավորել «անվտանգ պետության» և «անվտանգ անհատի» նոր ձև, որոնք ոչ միայն առավել կայուն կլինեն տարբեր վտանգների և սպառնալիքների նկատմամբ, այլև իրենք միմյանց համար սպառնալիք չեն լինի: Ըստ Ի.Վ. Ռադիկովի՝ պետք են ոչ միայն կայունություն

և կարգ, այլև նախաձեռնող, ստեղծագործող անձ, որը տիրապետում է տեղեկատվության, քաղաքական-կառավարչական հմտությունների, անձնային, մարդասիրական կողմնորոշումների: Հենց այդպիսի անձերից են կախված անվտանգության ձևավորումն ու իրացումը: Անվտանգության հիմնախնդիրն անհատի հիմնախնդիրն է, նրա ընտրությունն է իր, հասարակության, պետության նկատմամբ [10, c. 30-44]: Այդ պատճառով անվտանգության ապահովումը պետք է հանդիսանա անհատի, հասարակության, պետության առաջնային նպատակն ու ներքին պահանջմունքը:

Այս համատեքստում հետաքրքիր է ԱՄՆ փորձը, որը ժողովրդավարության կառուցման և քաղաքացիական հասարակության ձևավորման ոլորտում երկար պատմություն ունի: ԱՄՆ Ազգային անվտանգության ռազմավարության[1] մեջ մանրամասնորեն նկարագրված է քաղաքացիական հասարակության մասնակցությունն ազգային անվտանգության ապահովման գործընթացին: Ներկայում առավել քան 70% քաղաքացիներ մասնակցում են պետության կյանքին տարբեր ոլորտներում՝ հանդիսանալով անվտանգության ապահովման համակարգի լիարժեք սուբյեկտներ[2]: Նրանց լոկալ և գլոբալ մակարդակներում որոշակի լիազորություններ են տրված: Քաղաքացիական հասարակության ինստիտուտները և հասարակական կազմակերպությունները ոչ միայն անվտանգությունն ապահովող մարմիններ են, այլև ազգային անվտանգության նոր քաղաքականության: Քաղաքացիական հասարակության ինստիտուտները, քաղաքացիները ԱՄՆ-ում քաղաքականության լիիրավ սուբյեկտներ են և մասնակցում են քաղաքական ռազմավարություններին: Պաշտպանության նախարարության ստորաբաժանումներում, ռազմական ուղղվածության գիտական հաստատություններում և զինված ուժերում աշխատում են բազմաթիվ քաղաքացիական մասնագետներ: ԱՄՆ վերջին ռազմավարության նորմածությունն այն է, որ վերջինս ուղղված է պետության և քաղաքացիական հասարակության համագործակցության տեխնոլոգիային՝ որպես ազգային անվտանգության ապահովման առավել արդյունավետ մասնակցի, խոշոր պետական կառույցներից բացի: Հատուկ կարևորու-

[1] Տե՛ս National Security Strategy of the USA. May 2010 , http://www.whitehouse.gov/sites/default/files/rss_viewer/national_security_strategy.pdf

[2] *Яшина А.В.,* «Гражданское общество как субъект обеспечения национальной безопасности: опыт России и США», грамота, 2012. № 11 (25): в 2-х ч. ч. ii. с. 218-221. issn 1997-292x., www.gramota.net/materials/3/2012/11-2/53.html

թյուն է տրվում անվտանգության արժեքային հիմքի ձևավորմանը, այդ թվում՝ անվտանգության մշակույթին:

ԵՄ անդամ երկրների իշխանության կառույցներում նույնպես գործում են հատուկ օղակներ, որոնք զբաղվում են քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ կապերով, այդ ասպարեզում տարվող քաղաքականության համակարգմամբ: Օրինակ, Էստոնիայի ներքին գործերի նախարարության տարածաշրջանային հարցերի վարչությունը[1]: Լայնորեն տարածված է քաղաքացիական հասարակության ինստիտուտներ-կառավարություն համագործակցության ապահովումը ժամանակավոր կամ մշտական խորհրդատվական կոմիտեների, խորհրդատվական խորհուրդների, հանձնաժողովների, աշխատանքային խմբերի, ինչպես նաև կլոր սեղանների, համաժողովների և այլնի միջոցով:

Ինչ վերաբերում է ՌԴ փորձին, ապա այնտեղ ՌԴ ազգային անվտանգության ռազմավարության մեջ և անվտանգության մասին օրենքում ամրագրված է, որ քաղաքացիական հասարակությունը պոտենցիալ իրավունք ունի ազդելու ազգային անվտանգության ապահովման վերաբերյալ իշխանության մարմինների կողմից կայացվող որոշումների վրա, սակայն ներկայացված չեն իրավական մեխանիզմները, ինչն էլ բարդացնում է քաղաքացիական նախաձեռնությունների զարգացումը:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության մեջ քաղաքացիական հասարակությանն անդրադարձ է կատարվում հետևյալ դրույթում. Հայաստանի ներքին սպառնալիքներից է ժողովրդավարության արմատավորման ոչ բավարար մակարդակը. անմիջական սպառնալիքներ են՝ մարդու իրավունքների պաշտպանության ոչ լիարժեք համակարգի ձևավորումը, քաղաքացիական հասարակության ոչ բավարար ներգրավվածությունը: Քանի որ քաղաքացիական հասարակության ոչ բավարար ներգրավվածությունը դիտարկվում է որպես վտանգ, հետևաբար՝ քաղաքացիական հասարակության կարևորությունն ընդգծվում է երկրի ներքին անվտանգության ռազմավարության մեջ, որտեղ հատկապես նշվում է, որ քաղաքացիական հասարակության զարգացումը արդյունավետ պետական կառավարման նպատակներից մեկն է, իսկ երկրում ինստիտուցիոնալ բարեփոխումները միտված են որոշումների նախապատրաստման և վերահսկողության գործըն-

[1] Տե՛ս http://www.siseministeerium.ee/29949/, Այցելություն 16.08.2014:

թացներում քաղաքացիական հասարակության դերի բարձրացմանը: Այսինքն՝ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությամբ ամրագրվում է ինչպես պետության քաղաքականության մշակման և իրականացման գործընթացներում քաղաքացիական հասարակության մասնակցությունը, այնպես էլ պետական քաղաքականության նկատմամբ վերջինիս վերահսկողությունը:

ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությամբ պետության արդյունավետ կառավարման գործում կարևորվում է քաղաքացիական հասարակության զարգացումը, ինչպես նաև որոշումների նախապատրաստման և վերահսկողության գործընթացներում քաղաքացիական հասարակության դերի բարձրացումը[1]: Հայաստանում քաղաքացիական հասարակության զարգացման գործընթացում շրջադարձային էր 2008թ., մասնավորապես՝ այդ ժամանակ ակտիվորեն սկսեցին ձևավորվել և նոր թափով զարգանալ քաղաքացիական շարժումներն ու նախաձեռնությունները: Ընդհանուր առմամբ, 2008-2015թթ. ձևավորվել է մոտ 35 հասարակական շարժում:

Հայաստանում հասարակական շարժումների ձևավորմանը նպաստող հիմնական գործոնների շարքում կարելի է առանձնացնել սերնդափոխությունը, նոր տեխնոլոգիաների զարգացումը, գլոբալ միտումները, քաղաքական դաշտի դևալվացիան և այլն: Սերնդափոխության հարցում կարևորվում է հետխորհրդային Հայաստանում ձևավորված նոր սերունդը, որը ձերբազատված է խորհրդային մարդուն բնորոշ մտածողության կարծրատիպերից ու վարքից, տարբեր ակնկալիքներ և ըմբռնումներ ունի պետության և քաղաքացիների հետ նրա փոխհարաբերության մասին:

Հասարակական շարժումների գործունեությունը սկզբնական շրջանում իշխանությունում գտնվող քաղաքական ուժերի կողմից դժկամությամբ ընդունվեց, քանի որ նրանց մեջ տեսնում էին երկրի անվտանգության համար վտանգավոր ուժեր, իսկ ընդդիմադիր դաշտում դերակատարության ձգտող ուժերը նրանցում տեսնում էին մրցակից ուժ:

Տարբեր են գնահատվում փոխհարաբերությունների կառուցման հեռանկարներն ու հնարավորությունները հասարակական շարժումների և իշխող քաղաքական ուժերի միջև: Հարկ է նշել, որ իշխող քաղաքական ուժերի

[1] Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն, որը հավանության է արժանացել ՀՀ նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի 2007թ. հունվարի 26-ի նիստում, http://www.mil.am/media/2015/07/827.pdf

ներկայացուցիչների համար հասարակական շարժումների հետ իրատեսական է երկխոսել, քանի որ նրանք ոչ թե իշխանափոխություն են պահանջում, այլ կոնկրետ հիմնախնդրի լուծում, իսկ կոնկրետ հարցի մեջ զիջման գնալն ավելի ընդունելի է, քան ամբողջությամբ իշխանությունը զիջելը: Այս ամենը նկատելի է նաև պետական պաշտոնյաների դիսկուրսում: Այսպես, ՀՀ վարչապետը 2013թ. հուլիսի 25-ին կայացած կառավարության նիստում նշել է. «…շարժումն ունի սոցիալական բնույթ, սոցիալական համերաշխության, արդարության համար՝ ընդդեմ աղքատության, այսինքն՝ հասկանալի մղումներ են ղեկավարում երիտասարդներին, ովքեր բարձրացնում են այս հարցը: Մենք տեսնում ենք, որ Հայաստանում ձևավորվում է ուժեղ քաղաքացիական հասարակություն, և մենք պարտավոր ենք հաշվի առնել այս իրողությունը պետական որոշումներ կայացնելիս և պետք է շատ ուշադիր լինենք քաղաքացիական հասարակության ձևավորման բոլոր խնդիրների նկատմամբ»[1]:

Պետության և հասարակության առավել լայն և ուղղակի համագործակցության դրսևորումներից մեկը գործադիր իշխանության մարմիններում գործող խորհրդակցական մարմիններն են, որոնք տարբեր երկրներում ունեն տարբեր անվանումներ: «Խորհրդակցական մարմին» հասկացության առավել ընդգրկուն սահմանում է տրված «Ոչ առևտրային իրավունքի միջազգային կենտրոնի» կողմից, ըստ որի՝ դրանք քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ պետական իշխանության համակարգում գործող ամբողջություն են, որոնց պետական մարմինները տալիս են որոշակի լիազորություններ և որոնց հետ քննարկում են քաղաքական որոշումների ընդունումն ու կիրառումը: Անկախ նրանից՝ խորհրդակցական մարմինների ստեղծումը նախաձեռնվել է պետական մարմինների, թե հասարակության կողմից, դրանք պետք է գործեն նորմատիվ ակտի համաձայն: ՀՀ-ում նախարարներին կից գործում են խորհրդակցական մարմիններ, որոնք կոչվում են կոլեգիաներ: Կոլեգիաներն ստեղծվել են ՀՀ կառավարության 2008թ. նոյեմբերի 20-ի 1/147 նիստի արձանագրային որոշման համաձայն՝ ՀՀ նախարարությունների կողմից տարվող քաղաքականությունն առավել թափանցիկ և արդյունավետ իրականացնելու նպատակով՝ ապահովելով ազգային անվտան-

[1] Տե՛ս «Մենք տեսնում ենք, որ Հայաստանում ձևավորվում է ուժեղ քաղաքացիական հասարակություն». ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի ներածական խոսքը ՀՀ կառավարության նիստում, http://gov.am/am/news/item/10574/

գության ռազմավարությամբ ամրագրված համապատասխան դրույթները: Ըստ այդ որոշման՝ կոլեգիաները պարտադիր են բոլոր նախարարությունների դեպքում՝ բացառությամբ պաշտպանության նախարարության, որը կարող է խորհրդակցական մարմին ստեղծել իր հայեցողությամբ: Սակայն, ըստ նախարարությունների պաշտոնական կայքերի[1], ՀՀ 18 նախարարություններում 15 նախարարներին կից գործում են խորհրդակցական մարմիններ, որոնք հիմնականում կոչվում են «կոլեգիա», նաև «ատյան» (ՀՀ Սփյուռքի նախարարություն), «հասարակական խորհուրդ»: 2015թ. ապրիլի տվյալներով՝ որոշ նախարարություններ չեն ստեղծել կոլեգիաներ կամ ստեղծել են, որոնց վերաբերյալ տեղեկատվությունն անհասանելի է:

Որոշ նախարարություններ ստեղծել են լրացուցիչ խորհրդատվական մարմիններ: Այսպես, ՀՀ առողջապահության նախարարի հրամանով 2012թ. օգոստոսին ստեղծվել է ևս մեկ խորհրդատվական մարմին, որը կոչվում է ՀՀ առողջապահության նախարարին կից ՀՀ ԱՆ գիտական խորհուրդ[2], որի նպատակն է նախարարության ռազմավարական ծրագրերում ապահովել գիտահետազոտական հատվածը: Իսկ ՀՀ արդարադատության նախարարությունում ստեղծվել է նաև ՀՀ ԱՆ նախարարին կից քաղաքացիական հասարակության խորհուրդ[3]:

Այսպիսով, որոշ նախարարություններում ձևավորվել և գործում են կոլեգիաներին զուգահեռ հանրային խորհուրդներ և գիտական խորհուրդներ, որոնք կոլեգիաներից տարբերվում են իրենց կազմով, այսինքն՝ ներգրավված են հիմնականում քաղաքացիական հասարակության և գիտական համայնքի ներկայացուցիչներ, խորհուրդների առաքելությունն ու խնդիրներն առավել հստակ են ձևակերպված, իսկ նիստերը գումարվում են ավելի կանոնավոր: Սակայն կոլեգիաների և խորհուրդների գործունեության ընթացքում հնարավոր են գործառույթների կրկնություններ, ձևավորման և գործունեության ոչ թափանցիկ ընթացակարգեր, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ընտրության չափորոշիչների և հաշվետվողականության բացակայություն:

[1] ՀՀ Միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարությունը պաշտոնական կայք չունի, 15.05.2015:

[2] Տե՛ս Գիտական խորհուրդ՝ ՀՀ առողջապահության նախարարին կից, http://www.moh.am/?section=news/open&id=143&nid=1746

[3] ՀՀ արդարադատության նախարարին կից հանրային խորհուրդ, http://www.moj.am/page/576, 02.05.2015:

Չնայած առկա հիմնախնդիրներին, այնուամենայնիվ, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների հավաստմամբ՝ ներկայում համագործակցության ավելի շատ հնարավորություններ կան, քան մոտ տասը տարի առաջ էր, իսկ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետևողական և պրոֆեսիոնալ մոտեցման դեպքում համագործակցությունն առավել հաջողված է:

Տեղական մարմիններն այժմ ակտիվորեն ներգրավվում են քաղաքացիական հասարակության կազմակերպություններին քաղաքականության և ծրագրերի զարգացման ու իրականացման գործընթացներում: Հայաստանում տեղական ինքնակառավարման մարմինը բաղկացած է ավագանուց և համայնքի ղեկավարից: Ավագանու ինստիտուտն այն մարմինն է, որն ապահովում է հանրային մասնակցությունը և ներկայացնում համայնքի ձայնը: Սակայն Հայաստանի շատ համայնքներում, հատկապես գյուղական տարածքներում, այս մարմինը պատշաճ ձևով չի գործում, քանի որ ավագանու անդամների աշխատանքը չի վարձատրվում, և հաճախ ավագանու անդամները «նշանակվում» են համայնքի ղեկավարի կողմից՝ առանց այլընտրանքային թեկնածուների տեղի ունեցող ընտրությունների արդյունքում: Համայնքների մեծամասնությունում համայնքի ղեկավարն իրականում հիմնական որոշումների կայացման մենաշնորհ ունի, իսկ ավագանին չի կատարում իր դերը[1]:

Բացի ավագանու և նրա հանձնաժողովների նիստերի մասնակցությունից՝ տեղական ինքնակառավարման մասին օրենքը սահմանում է հանրային մասնակցության մի քանի այլ հնարավորություններ, ներառյալ հանրային լսումները[2]: Չնայած քաղաքացիների մասնակցությունը պարտադիր դրույթ է տեղական ինքնակառավարման օրենսդրության մեջ, այնուամենայնիվ, հանրային մասնակցությունը հիմնականում սահմանափակվում է հանրության իրազեկմամբ և որոշ դեպքերում՝ քննարկումներով, մինչդեռ որոշումների կայացման գործընթացին մասնակցելու և ազդելու տեսանկյունից դեռևս իրենց զարգացման փուլում են և հիմնականում կախված են տեղական քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ակտիվությունից և կարողություններից[3]:

[1] Տե՛ս ՔՀԿ-ների ներգրավվածությունը քաղաքականության մշակման և իրականացման մոնիթորինգի գործում. կարիքներ և կարողություններ, էջ 51:
[2] Տե՛ս ՀՀ օրենք «Տեղական ինքնակառավարման մասին», հոդ. 33.1:
[3] Տե՛ս CIVICUS Civil Society Index Rapid Assessment: Armenia Country Report, Yerevan, 2014.

Ընդհանուր առմամբ, վերջին 5 տարիների ընթացքում նկատվում են քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մասնակցության ընդլայնում և համայնքային որոշումների կայացման գործընթացում ազդեցության որոշակի աճ: Ավելին, տեղական իշխանությունների կողմից կազմակերպվող՝ ձևական բնույթ կրող քննարկումներից, անձնական կապերի միջոցով լուծվող հարցերից անցում է կատարվում մասնակցության առավել ինստիտուցիոնալ և արդյունավետ մեխանիզմների կիրառման, ինչը դեռևս կատարելագործման կարիք ունի:

Չնայած վերջին տարիներին Հայաստանում ձևավորվել են քաղաքացիական հասարակության կազմակերպություն-պետական իշխանության մարմիններ համագործակցության իրավական դաշտ և ինստիտուցիոնալ մեխանիզմներ, ինչպես նաև զարգանում են քաղաքական երկխոսության կարողությունները, այնուամենայնիվ, կան գործոններ, որոնք ազդում են այդ համագործակցության բնույթի վրա: Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը (ՄԶՄԿ) վերջերս իր զեկույցում եզրակացրել է, որ կառավարության ու քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև համագործակցությունը բավական թույլ է: Ըստ զեկույցի, կառավարության կողմից շատ կազմակերպություններ ընկալվում են որպես շահույթ հետապնդող կազմակերպություններ, որոնք քաղաքականության վրա ներգործելու համար անհրաժեշտ կարողություններ ու հմտություններ չունեն: Եվ վերջապես, կառավարությունը քաղաքացիական հասարակության կազմակերպություններին ավելի շատ ընկալում է որպես սպառնալիք, քան գործընկեր[1]: Մինչդեռ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները շատ դեպքերում հրաժարվում են համագործակցել՝ հիմնավորելով, որ իրենց լեգիտիմացնում են գործող իշխանությունները, նրանց կողմից կայացված որոշումները և մասնակցում են այն վտանգավոր պատրանքի ստեղծմանը, թե նրանք դեմոկրատական են:

Այսպիսով, քաղաքացիական հասարակությունը միանշանակ ազդում է ինչպես առանձին անհատի, այնպես էլ ամբողջ պետության անվտանգության վրա: Ժամանակակից աշխարհում այն հանդիսանում է անվտանգության սուբյեկտ և իր շուրջը ձևավորում նոր սոցիալ-քաղաքական տարածություն՝ պաշտպանելով իր շահերն ու պահանջմունքները: Եթե պետության և քաղա-

[1] Տե՛ս http://www.cdpf.am/file/Armenia+%20(2).pdf, 2014 ՔՀԿ կայունության ցուցանիշ – Հայաստան, հունիս 2015թ., էջ 9-10:

քացիական հասարակության համագործակցությունը խախտված է և չունի հստակ իրավական մեխանիզմ, իսկ նրանց հակասությունը չի լուծվում ժողովրդավարական ինստիտուտների միջոցով, ապա իրավիճակը դուրս է գալիս իրավական դաշտի շրջանակներից և, հետևանքը լինում են բռնի ակցիաները: Պետության և քաղաքացիական հասարակության գործընկերային համագործակցության մոդելի և ժողովրդավարական մեխանիզմների մշակումը կարող է արդյունավետ լուծել ազգային անվտանգության խնդիրներն անհատների և քաղաքացիների տարբեր ձևերի ինքնակազմակերպվող համակարգի միջոցով: Ժողովրդավարական ռեժիմը ենթադրում է սերտ համագործակցություն պետության և քաղաքացիական հասարակության կառույցների միջև՝ որպես ազգային անվտանգության ապահովման գրավական:

ՀՀ-ում տեղի ունեցող հասարակական-քաղաքական գործընթացները թույլ են տալիս եզրակացնել, որ Հայաստանում ձևավորվել և զարգանում է քաղաքացիական հասարակություն, որի կայացումը բավական արդիական է Հայաստանի անվտանգության ապահովման տեսանկյունից, քանի որ ներկա պայմաններում ժողովրդավարություն ձևավորող և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանն ուղղված՝ ռազմավարական բարեփոխումներ իրականացնող երկրում պետական կառավարման արդյունավետության կարևոր նախապայմաններից է որոշումների նախապատրաստման և վերահսկողության գործընթացում քաղաքացիական հասարակության դերի բարձրացումը: Ավելին, վերջին տարիներին նկատելի են հասարակական շարժումների ձևավորման և զարգացման միտումներ, որոնք ազդեցություն են ունենում պետական քաղաքականության իրականացման վրա: Սակայն հարկ է նշել, որ պետական կառավարման մարմիններ-քաղաքացիական հասարակություն համագործակցությունը որևէ ընդհանուր ինստիտուցիոնալ մեխանիզմով կամ ծրագրով չի կարգավորվում, չնայած կան մի շարք քաղաքականություններ, կանոնակարգեր և խորհրդատվական մարմիններ: Պետական կառավարման մարմինների և քաղաքացիական հասարակության միջև համագործակցության իրականացման ամենալուրջ խոչընդոտը փոխադարձ վստահության բացակայությունն է՝ խորացնելով միմյանցից օտարվածությունը, ինչն էլ կարող է բերել հասարակության մեջ կոնֆլիկտների դրսևորման և վնասել երկրի անվտանգությունը:

Դեկտեմբեր, 2015թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Հայկ Քոթանջյան,* «Հայաստանի Ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում», Երևան, 2008, էջ 180:
2. *Վահե Հովհաննիսյան,* «ՀԿ-ներ և հեղափոխություններ», «Վան Արյան», Երևան, 2005, էջ 75-77:
3. *Бондаренко С.,* «Коррумпированные общества», Ростов на Дону, ОАО «Ростиздат», 2002.
4. *Тарусин М.,* «Реальная Россия: Социальная стратификация современного российского общества», *М.*, «Журнал Эксперт», 2006, с. 15.
5. *Huntington S.* (1968) Political Order in Changing Societies, Yale University Press.
6. *Никовская Л.И.,* «Гражданское общество и протесты: что за ними стоит?» // Мониторинг общественного мнения, 2012, № 4 (110).
7. *Макферсон К.,* «Жизнь и времена либеральной демократии», М., Изд. дом Гос. ун-та - Высшей школы экономики, 2011.
8. *Крауч К.,* «Постдемократия», М., Изд. дом Гос. ун-та - Высшей школы экономики, 2010.
9. *Rorty R.,* «Post-Democracy», London Review of Books, 2004, Vol. 26, №. 7.
10. *Радиков И.В.,* Безопасность человека: реальность или фикция? // Безопасность человека в контексте международной политики: вопросы теории и практики: материалы научного семинара, М., Изд. Московского университета, 2011.
11. *Աղասի Թադևոսյան,* «Քաղաքացիական նախաձեռնությունները և նոր տեխնոլոգիաները Հայաստանում», Բաց հասարակության հիմնադրամներ, Երևան, 2013:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ. ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Աշխեն Բեգլարյան

Ամփոփագիր

XXI դարում ազգային անվտանգության ընկալումը ենթարկվել է փոփոխության, ինչի հետևանքով պետությունն այլևս դադարել է դիտարկվել որպես ազգային անվտանգության ապահովման միակ սուբյեկտ: Առաջ է եկել ազգային անվտանգության հարացույցի վերանայման, դրա նոր դերակատարների ազդեցության ուսումնասիրման անհրաժեշտություն: Հոդվածում ներկայացված է քաղաքացիական հասարակության դերն ազգային անվտանգության ապահովման գործում, շոշափվել են նաև Հայաստանում պետություն-քաղաքացիական հասարակություն փոխհարաբերությունների հարցերը, հետևություն է արվել, որ անհրաժեշտ է մշակել պետության և քաղաքացիական հասարակության փոխհարաբերությունների կարգավորման մեխանիզմ կամ ծրագիր:

РОЛЬ ГРАЖДАНСКОГО ОБЩЕСТВА В ОБЕСПЕЧЕНИИ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ: СИТУАЦИЯ В АРМЕНИИ

Ашхен Бегларян

Резюме

В XXI веке восприятие национальной безопасности подверглось изменению, вследствие чего государство перестало рассматриваться как единственный субъект обеспечения национальной безопасности. Возникла необходимость пересмотреть парадигмы национальной безопасности, изучить влияние новых акторов на нее. В статье представлена роль гражданского общества в обеспечении национальной безопасности, а также затронуты вопросы взаимоотношений государства и гражданского общества в Армении, из чего вытекает заключение о том, что необходимо разработать некий механизм или программу для регулирования взаимоотношений государства и гражданского общества.

THE ROLE OF CIVIL SOCIETY IN THE PROCESS OF ENSURING NATIONAL SECURITY: THE SITUATION IN ARMENIA

Ashkhen Beglaryan

Resume

The perception of security has changed in the 21st century, due to which the state is no longer viewed as the sole entity for ensuring the national security. There is a need to revise the national security paradigm and to study the impacts of its new actors. The article presents the role of civil society in ensuring the national security, reviews the issues of government-civil society relationships in Armenia, and makes a conclusion that there is a need to develop a mechanism or program for regulation of relations between the state and civil society.

«21-ՐԴ ԴԱՐ» տեղեկատվական-վերլուծական հանդես
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ 21dar@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 13.06.2016թ.
Թիվ 3 (67), 2016թ.
Տպաքանակը՝ 150:

Թուղթը՝ կավճապատ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 8 մամուլ: Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «ԹԱՍԿ» ՍՊԸ տպարանում